

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК

HERALD
OF SOCIAL SCIENCES

1(667)
ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ
ЯНВАРЬ-АПРЕЛЬ
JANUARY-APRIL

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն/Изд. «Гитутюн» НАН РА/“Gitutyun” Press NAS RA
ԵՐԵՎԱՆ/ԵՐԵՎԱՆ/YEREVAN 2023

ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՄԵՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА
JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ (խմբագրական խորհրդի նախագահ),
ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԺԱՍՄԻՆ
ԴՈՒՄ-ԹՐԱԳՈՒՏ (Ավստրիա), ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ,
ՎԱԶԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ԳԱԳԻԿ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՐԱԶ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Նիդերլանդներ),
ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈԴՆՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ,
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՊԱՏՐԻԿ ՏՈՆԱԴԵԲՅԱՆ (Ֆրանսիա), ՓԻԹԵՐ ՔԱՌԻԻ (ԱՄՆ)

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

ПАВЕЛ АВЕТИСЯН (председатель редколлегии), АРСЕН БОБОХЯН, АРАРАТ АГАСЯН,
ВАРДАН ДЕВРИКЯН, ЖАСМИН ДУМ-ТРАГУТ (Австрия), ГАГИК КАЗИНЯН, ВИКТОР
КАТВАЛЯН, ПИТЕР КАУИ (США), ГРАЧ МАРТИРОСЯН (Нидерланды), АШОТ МЕЛКОНЯН,
ВАЧЕ ОВАКИМЯН, ГЕВОРК ПОГОСЯН, РУБЕН САФРАСТЯН,
ПАТРИК ДОНАБЕДЯН (Франция), ЮРИЙ СУВАРЯН, АЛЬБЕРТ ХАРАТЯН

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**
Responsible secretary **GAYANE HARUTYUNYAN**

Editorial Board

PAVEL AVETISYAN (chairman of the editorial board), ARARAT AGHASYAN, ARSEN
BOBOKHYAN, VARDAN DEVRIKYAN, ALBERT KHARATYAN, VIKTOR KATVALYAN,
VACHE HOVAKIMYAN, GAGIK GHAZINYAN, HRACH MARTIROSYAN (Netherlands),
ASHOT MELKONYAN, GEVORG POGHOSYAN, RUBEN SAFRASTYAN, YURI SUVARYAN,
JASMINE DUM-TRAGUT (Austria), PATRICK DONABEDIAN (France), PETER COWE (USA)

©Լրաբեր հասարակական գիտությունների
©Вестник общественных наук
©Herald of Social Sciences

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռուբեն Ազիզբեկյան – ՌԴ Հայկական սփյուռքի դերը հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման գործում (1991-2008 թթ.).....	9
Հրայր Ճէպէճեան – Քրիստոնեայ ներկայութիւնը Արաբական Ծոցի երկիրներու մէջ. պատմական զարգացումներ, առաքելութիւն եւ մարտահրաւերներ.....	25
Արսեն Արզումանյան – 1395-ը՝ որպէս Ռումինիայի Յաշ քաղաքի հայկական եկեղեցու հիմնադրման տարեթիվ.....	37
Մաջիդ Քարիմի (ԻԻՀ) – Նախիջևանը Բաթումի պայմանագրից և Ա.Օզանյանի ռազմարշավից մինչև «Արասդայանի հանրապետություն»..	49

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Սվետլանա Արզումանյան – Արվեստում հեգնանքի մեթոդի դրսևորումների մասին.....	67
--	----

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Սյուզաննա Եղիազարյան – ՀՀ ուսանողների զբաղվածության և աշխատանքի ապահովման նոր մոդել.....	81
---	----

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Գասպարյան – Եղիշե Չարենցը քաղաքական հալածանքների տարիներին (1935-1936 թվականներ).....	90
Անուշավան Զաքարյան – Ավետիք Իսահակյանի և Դավիթ Անանունի առնչությունների շուրջ.....	106
Մարգարիտա Խաչատրյան – Ամերիկյան իրականությունը Համաստեղի և Արամ Հայկազի ստեղծագործություններում.....	114
Դավիթ Գյուրջինյան – Ավստրոնեգիական (մալայա-պոլինեզյան) լեզուների հայերեն անվանումները. գործածության և կանոնարկման հարցեր.....	125
Սամվել Ռամազյան – Հայերը և Հայաստանը «Քյոռնոլի» էպոսի առաջին հրատարակության և ռուսերեն թարգմանության մեջ.....	148
Լիլիթ Բեքարյան – Հարձակողական դիսկուրսի վերլուծություն սոցցանցերում. հայերենի և անգլերենի օրինակով.....	158
Նաիրա Համբարձումյան – Կանանց ազատագրության հիմնախնդիրները Էլպիս Կեսարացյանի «Իրավունքն ի գործ դնելը յանդգնութիւն չէ» էսսեում.....	170

Բագրատ Ներսիսյան, Աշոտ Մկրյան – Բայաճանցները՝ որպես բառա- կազմական ձևայիններ.....	183
---	-----

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անահիտ Բեքարյան – Իվան (Հովհաննես) Այվազովսկին Սբ Ղազար կղզում....	192
Արփինե Սիմոնյան – Պետրոս Լատինացու Աստվածաշնչի գեղարվես- տական հարդարանքը.....	203
Հայկուշ Սահակյան – Միքայել Արուտչյան. կենսագրական և ստեղծա- գործական ուրվագիծ.....	222
Ռուզաննա Առաքելյան – Հրաչյա Ղափլանյանը՝ որպես դերասան Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում.....	234

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գոհար Ստեփանյան – Տոնը և կոլեկտիվ տրավման. 2021-ի <i>այլ Ամա- նորը</i> հայկական միջավայրում.....	247
Ինեսա Կարապետյան, Արմինե Գաբրիելյան – Կարճաղբյուրի անտիկ շրջանի կարասային թաղումները.....	268
Կարեն Բայրամյան – Աշխարհբեկ Քալանթարի գործունեությունը Հա- յաստանի Առաջին հանրապետության տարիներին.....	281
Գալյա Դավիդովա – Հրավիրատոմսը՝ որպես հարսանիքի վկա (ավան- դույթ և նորույթ).....	292
Հենրիկ Դանիելյան – Օրգովի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի ինագիտական հուշարձանախմբի մշակութային լանդշաֆտը.....	305

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Ալեքսանդր Մանասյան – Արցախ. տեղեկատվական պատերազմում և բանակցային խոսույթում անտեսված փաստարկներ.....	317
---	-----

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ստեփան Ղարիբջանյան – Սենեքերիմ Տեր-Հակոբյան.....	335
---	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արթուր Ավագյան – <i>Արարատ Աղասյան</i> , Արվեստի պատմություն. կերպարվեստ, գիրք երկրորդ.....	350
Ելենա Կորդի – <i>Ն.Ա. Կոզինցևա</i> , Հայերենի անցյալ կատարյալ ժամա- նակը.....	355

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Рубен Азизбемян – Роль армянской диаспоры РФ в деле укрепления армяно-российских отношений (1991-2008 гг.).....	9
Грайр Чебеджян – Христианское присутствие в странах Арабского залива: историческое развитие, миссия и вызовы.....	25
Арсен Арзуманян – 1395-ый год как дата основания армянской церкви румынского города Яш (Яссы).....	37
Маджид Карими (ИРИ) – Нахиджеван с Батумского договора и военной кампании А. Озаняна до «Арасдаянской республики».....	49

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Светлана Арзуманян – О проявлениях метода иронии в искусстве.....	67
--	----

СОЦИОЛОГИЯ

Сюзанна Егиазарян – Новая модель занятости и обеспечения трудоустройства студентов РА.....	81
---	----

ФИЛОЛОГИЯ

Давид Гаспарян – Егише Чаренц в годы политических репрессий (1935-1936 годы).....	90
Анушаван Закарян – О связях Аветика Исаакяна и Давида Анануна.....	106
Маргарита Хачатрян – Американская действительность в произведениях Амастега и Арама Айказа.....	114
Давид Гюрджинян – Армянские названия австронезийских (малайско-полинезийских) языков: вопросы употребления и стандартизации.....	125
Самвел Рамазян – Армяне и Армения в первом издании и русском переводе эпоса «Кероглы».....	148
Лилит Бекарян – Анализ хейтового (оскорбляющего) дискурса в социальных сетях: на примере армянского и английского языков.....	158
Наира Амбарцумян – Проблемы женской эмансипации в эссе Элпис Кесарацян «Внедрение права не является дерзостью».....	170
Баграт Нерсисян, Ашот Мкрян – Глагольные аффиксы как словообразовательные морфемы.....	183

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Анаит Бекарян – Иван (Ованес) Айвазовский на острове Св. Лазаря.....	192
Арпине Симонян – Художественное оформление Библии Петросом Латиниции.....	203
Айкуш Саакян – Микаэл Арутчян: очерк жизни и творчества.....	222
Рузанна Аракелян – Рачья Капланян как актер ереванского Театра юного зрителя.....	234

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Гоар Степанян – Праздник и коллективная травма: <i>другой</i> Новый 2021 год в армянской среде.....	247
Инеса Карапетян, Армине Габриэлян – Кувшинные погребения античного периода в Карцахбюре.....	268
Карен Байрамян – Деятельность Ашхарбека Калантара в годы Первой Республики Армении.....	281
Галя Давидова – Пригласительный билет как свидетель свадьбы (традиция и современность).....	292
Генрих Даниелян – Культурный ландшафт группы памятников Оргова в позднем бронзовом и раннем железном веках.....	305

ОБСУЖДЕНИЯ

Александр Манасян – Арцах: неучтенные аргументы в информационной войне и переговорном дискурсе.....	317
--	-----

ПУБЛИКАЦИИ

Степан Гарибджанян – Сенекерим Тер-Акопян.....	335
---	-----

РЕЦЕНЗИИ

Артур Авагян – Арарат Агасян, История искусства: изобразительное искусство, кн. II.....	350
Елена Корди – Н.А. Козинцева, Армянский перфект.....	355

CONTENT

HISTORY AND POLITICAL SCIENCE

Ruben Azizbekyan – The Role of the Armenian Diaspora of the RF in the Strengthening of Armenian-Russian Relations (1991-2008).....	9
Hrayr Jebejian – The Christian Presence in the Arabian Gulf: Historical Development, Mission and Challenges.....	25
Arsen Arzumanyan – 1395 as the Date of the Establishment of the Armenian Church in Iași, Romania.....	37
Majid Karimi (IRI) – Nakhijevan from the Treaty of Batum and the Military Campaign of A. Ozanian to "Republic of Arasdayan".....	49

PHILOSOPHY AND LAW

Svetlana Arzumanyan – On the Manifestations of the Method of Irony in Art..	67
--	----

SOCIOLOGY

Syuzanna Yeghiazaryan – A New Model of Employment and Job Security for Students of RA.....	81
---	----

PHILOLOGY

David Gasparyan – Egishe Charents in the Years of Political Persecutions (1935-1936 Years).....	90
Anushavan Zakaryan – On the Ties Between Avetik Isahakyan and Davit Ananun.....	106
Margarita Khachatryan – The American Reality in the Writings of Hamastegh and Aram Haykaz.....	114
Davit Gyurjinyan – Armenian Names of the Austronesian (Malay-Polynesian) Languages: Issues of Use and Standardization.....	125
Samvel Ramazyan – Armenians and Armenia in the First Edition and Russian Translation of the Epic "Koroglu".....	148
Lilit Bekaryan – Analyzing Offensive Discourse on Social Media: Armenian and English Examples.....	158
Naira Hambardzumyan – The Issues of Women's Emancipation in Elpis Kesaratsian's Essay "Exercising the Right is not Audacity".....	170
Bagrat Nersisyan, Ashot Mkryan – Verbal Affixes as Word-Formative Morphemes.....	183

CULTURE AND ART HISTORY

Anahit Bekaryan – Ivan (Hovhannes) Aivazovsky on the Island of St. Lazarus.....	192
Arpine Simonyan – The Artistic Decoration of the Bible of Petros Latinatsi.....	203
Haykush Sahakyan – Overview of Michael Arutchian’s Life and Creative Activity.....	222
Ruzanna Arakelyan – Hrachya Ghaplanyan as an Actor in the Theatre of Young Spectator of Yerevan	234

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Gohar Stepanyan – Fest and Collective Trauma: <i>Other</i> New Year 2021 in Armenian Environments.....	247
Inesa Karapetyan, Armine Gabrielyan – The Jar Burials of the Classical Period at Karchaghbyur.....	268
Karen Bayramyan – Activities of Askharhbek Kalantar in the Years of the First Republic of Armenia.....	281
Galya Davidova – Invitation Card as a Witness of Wedding (Tradition and Novelty).....	292
Henrik Danielyan – Cultural Landscape of the Orgov Archaeological Site Cluster during the Late Bronze and Early Iron Ages.....	305

DISCUSSIONS

Alexander Manasyan – Artsakh: Neglected Arguments in Information Warfare and Negotiation Discourse.....	317
--	-----

PUBLICATIONS

Stepan Gharibjanyan – Senekerim Ter-Hakobyan.....	335
--	-----

LITERARY REVIEWS

Artur Avagyan – Ararat Aghasyan, History of Art: Fine Arts, Book 2.....	350
Elena Kordi – N.A. Kozintseva, The Perfect in Armenian.....	355

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՌԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՐԸ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (1991-2008 ԹԹ.)

Ռուբեն Ազիզբեկյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4

Էլ. հասցե՝ r.azizbekyan@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 25.10.2022, գրախոսվել է 14.02.2023, ընդունվել է տպագրության 11.04.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.1-9

Ներածություն

Հայ-ռուսական հարաբերությունների հիմքում ոչ միայն երկու ժողովուրդների բարեկամության բազմադարյան ավանդույթներն են, այլև Ռուսաստանի հայկական համայնքի հզոր ներուժը: Այդ հանգամանքը չէին կարող անտեսել երկու երկրների քաղաքական վերնախավերը. ընդ որում, ՀՀ-ն իր արտաքին քաղաքականության մեջ մշտապես հաշվի է առել աշխարհասփյուռ հայության շահերը, որի զգալի մասը կազմում էր ՌԴ հայկական համայնքը¹, որը ժամանակակից Ռուսաստանում ավանդաբար ընդունված է անվանել Սփյուռք: Դա և՛ գերիշխող ինքնանունն է, և՛ ինքնորոշում, և՛ ընդունող հասարակության կողմից առավել տարածված բնորոշում: Դա վկայում է, որ զանգվածային գիտակցության մեջ այն հանդես է գալիս որպես սոցիալական ամենատարբեր խմբեր ու հասարակության զանազան շերտեր ընդգրկող միասնական մեկ ամբողջություն, որի մեջ միավորվում են և՛ հնաբնակ ռուսաստանցիներ (քաղաքացիությամբ, նախնիների բնակության վաղեմությամբ, մշակույթով, լեզվով), և՛ ոչ վաղուց ՌԴ ներգաղթած ու Հայաստանի հետ սերտորեն կապված նորեկներ: Թեև առաջինները պատմական հայրենիքի վերաբերյալ հիմնականում ունեն բավական վերացական պատկերացում², և նրանցից քչերն են պահպանել հայկական ավանդույթների տարրեր, սակայն դա չի խոչընդոտում, որ նրանք հպարտությամբ խոսեն իրենց նախնիների մշակույթին և պատմությանը հաղորդակից լինելու մասին³: Դա բնորոշ է հայերին, որոնք, անկախ այն բանից, թե աշխարհի որ տարածաշրջանում են և ինչ սոցիալական ծագում ունեն, շարունակում են ապրել որպես միասնական ազգ՝

¹ Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում. հիմնախնդիրներն ու հեռանկարները 2010, 41:

² Дятлов 2007, 15, 18.

³ Дятлов, Мелконян 2009, 76.

պահպանելով ազգային ոգու ամբողջականությունը, յուրօրինակ մշակույթն ու բարոյական հիմքերը: Այս տեսանկյունից էլ հատկանշական է, որ ինչպես ամբողջ աշխարհի, այնպես էլ Ռուսաստանի հայկական սփյուռքի համար Հայաստանը «պատմական հայրենիք» առանցքային հասկացություն է, որի զարգացման և բարգավաճման համար նա ի սպաս է դնում իր ֆինանսատնտեսական, գիտատեխնիկական և կրթամշակութային ներուժը՝ դրանով իսկ նպաստելով նաև հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդմանը:

ՌԴ-ում հայկական սփյուռքի ձևավորման պատմական նախադրյալներն ու առանձնահատկությունները

Հայաստանից դուրս սփռված հայության պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Ռուսաստանը, որտեղ հայերը մշտապես բնակվում են վերջին ավելի քան տասը դարերի ընթացքում և իրենց քանակով գերազանցում են այլ երկրների հայ համայնքներին:

Հայերի և Հին Ռուսիայի փոխառնչությունները հավաստվում են վավերագրերով՝ սկսած X դ. գրավոր աղբյուրներից: Ըստ այդմ՝ հայերը բնակություն են հաստատել Ռուսիայում X-XI դդ., որը հիմնականում բացատրվում է այստեղ քրիստոնեության ընդունմամբ⁴: Ռուսաստանի տարածքում հայերի հետագա ստվարացումը և հայկական բնակավայրերի ու համայնքների հիմնադրումը մեծապես պայմանավորված են տարբեր դարաշրջաններում պատմական որոշակի իրադարձություններով՝ մասնավորապես Հայաստանի դեմ արշավանքներով և հայերի տեղահանություններով, ինչպես նաև հզորացող Ռուսաստանի աշխարհաքաղաքական դերի աճով, որի հարավում իր սահմանների ընդարձակման ռազմաքաղաքական ծրագրերը համահունչ էին թուրքական և պարսկական ծանր տիրապետությունից ազատագրվելու հայերի ձգտումներին: Դա հանգեցրեց հայ-ռուսական կապերի սերտացմանը՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով Ռուսաստանի տարբեր շրջաններում՝ Աստրախանում, Հյուսիսային Կովկասում, Մոսկվայում, Պետերբուրգում, Նոր Նախիջևանում և այլուր, հայկական գաղութների հիմնման և ստվարացման համար:

Ռուսաստանում հայկական համայնքների կազմավորումը շարունակվեց նաև XIX դ. ընթացքում, երբ Արևմտյան Հայաստանում հայերի վիճակի կտրուկ վատթարացմամբ և կոտորածներով պայմանավորված՝ բազմաթիվ արևմտահայ փախստականներ հաստատվեցին Սև ծովի կովկասյան ափի քաղաքներում: Արևմտահայ փախստականների հաջորդ ալիքը Ռուսաստանի հարավում ապաստան գտավ XX դ. ցեղասպանության հետևանքով⁵:

Առաջին աշխարհամարտի, Հայոց ցեղասպանության, 1917 թ. ռուսական հեղափոխության ու նրան հաջորդած քաղաքացիական պատերազմի

⁴ Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.) 2003, 41-47:

⁵ Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները 2010, 157-158:

հետևանքով Ռուսաստանի հայաշատ գաղթօջախները համալրվեցին հայերի նոր զանգվածներով: 1920 թ. Համառուսաստանյան ժողովրդագրական մարդահամարի տվյալներով Ռուսաստանում (առանց ինքնավար միավորումների) արձանագրվեց ավելի քան 137 հազար հայ⁶: Խորհրդային շրջանում Ռուսաստանի տարածքում հայերը հիմնականում հաստատվում էին 1930-1940-ականներին արտաքսվելու հետևանքով (միայն 1949 թ. հունիսին Հայաստանից Ալթայի երկրամաս արտաքսվեց ավելի քան 13 հազար մարդ⁷) կամ էլ մասնագիտության բերումով: Ընդհանուր առմամբ, 69 տարվա ընթացքում՝ 1920-1989 թթ., ՌԽՖՍՀ-ում հայ ազգաբնակչության քանակը գրեթե քառապատկվեց՝ հասնելով ավելի քան 532 հազարի⁸: Սակայն խորհրդային իշխանության տարիներին, ըստ էության, վերացան «գաղութ», «համայնք» հասկացությունները և նրանցում գործող ազգային, հասարակական կազմակերպությունները: Տվյալ ազգությանն առնչվող հարցերով զբաղվում էին համապատասխան միութենական ազգային հանրապետությունները:

ԽՍՀՄ փլուզման նախօրեին Ռուսաստանում բնակվում էր Միության ամբողջ հայ բնակչության 11,5%-ը⁹: Այն հիմնականում 1988-1990 թթ. Ադրբեջանի հայաշատ բնակավայրերում կազմակերպված հայազգի բնակչության ջարդերի և բռնի տեղահանման հետևանքով դեպի Ռուսաստան հայ փախստականների մեծ հոսքի արդյունք էր, որը համալրվում էր սոցիալ-տնտեսական վիճակի կտրուկ վատթարացման պատճառով Վրաստանից արտագաղթած հայերով, ինչպես նաև Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից Հայաստանի նկատմամբ իրականացվող տրանսպորտային և էներգետիկ շրջափակմամբ, Սպիտակի ավերիչ երկրաշարժով, Արցախյան պատերազմի ծավալմամբ պայմանավորված՝ արտագաղթի ճամփան բռնած հայաստանցիներով: Փաստորեն, Խորհրդային Միության գոյության վերջին տարիներին Ռուսաստանը դարձավ հայության արտագաղթի հիմնական ուղղություններից մեկը:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանրագույն իրավիճակի հետևանքով ՀՀ-ից աշխատանքային միգրանտների նոր ահռելի հոսք սկսվեց դեպի ՌԴ: 1997-2006 թթ. ՀՀ-ից արտագաղթել էր 1 մլն մարդ, որից 80%-ը՝ Ռուսաստան¹⁰: Նրանցից շատերի համար ժամանակի ընթացքում Ռուսաստանը աշխատանքայինից վերածվեց մշտական բնակության վայրի: 1998-2002 թթ. հայերի քանակը ՌԴ-ում 532 հազարից հասավ ավելի քան 1 մլն 130 հազարի¹¹: Դրան նպաստեց նաև 2007 թվականից Հայաստանում կիրառում ստացած՝ ՌԴ կառավարության կողմից իրականացվող «Հայրենակիցներ» ծրագիրը, որին

⁶ Բարխուդարյան, Ալեքսանյան 2015, 298:

⁷ Հայոց պատմություն 2016, 64-65:

⁸ Բարխուդարյան, Ալեքսանյան 2015, 320:

⁹ Բարխուդարյան, Ալեքսանյան 2015, 320:

¹⁰ Ноев ковчег 2006, N 14.

¹¹ Население России 2006, 72.

մասնակցած հազարավոր ընտանիքներ տեղափոխվում էին բնակության Ռուսաստանի տարբեր տարածաշրջաններ¹²: Փորձագիտական գնահատականներով՝ 2008 թ. ՌԴ-ում հայերի քանակը ավելի քան 2 մլն էր¹³: Առավելապես դեպի Ռուսաստան զանգվածային արտագաղթը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով, որոնցից էին դեռևս խորհրդային ժամանակաշրջանից այդ երկրին ծանոթ լինելը, ռուսերենի իմացությունը, որը աշխատանքի համեմատաբար հեշտ տեղավորվելու հնարավորություն էր ընձեռում, և թերևս ամենակարևորը՝ երկու պետությունների միջև գործող՝ քաղաքացիների՝ առանց արտոնագրերի այցելությունների կարգը: Հենց միգրացիոն խոչընդոտների առկայության հետևանքով էր, որ դեպի Արևմուտքի երկրներ Հայաստանից արտագաղթողների քանակը զգալիորեն զիջում էր Ռուսաստան մեկնողների քանակին: Հայ միգրանտների համար կարևոր նշանակություն ունեին նաև տարածքային առումով ՌԴ-ի՝ ՀՀ-ին ավելի մոտ լինելն ու ցանկացած ժամանակ անարգել հայրենիք վերադառնալու հնարավորությունը, քանի որ նրանց մի մասի ընտանիքները կամ դրանց որոշ անդամներ մնացել էին Հայաստանում: Այս առումով պակաս դեր չունեին նաև ՌԴ արտագաղթածների սերտ կապերը ՀՀ-ում գտնվող իրենց մյուս հարազատների, ազգականների ու մերձավորների հետ¹⁴:

Քննվող ժամանակահատվածում դեպի Ռուսաստան հայ միգրանտների ծավալուն հոսքերը էապես փոխեցին տեղի հայ ազգաբնակչության սոցիալական կառուցվածքը, քանի որ հնաբնակ հայերն ու նոր ժամանած հայ միգրանտները միմյանցից զգալիորեն տարբերվում էին սոցիալական կարգավիճակներով: Առաջինների մեծ մասը վաղուց հարմարվել և ինտեգրվել էր ռուսական միջավայրին, իրավական ու սոցիալ-տնտեսական առումներով ադապտացված էր և հիմնականում զբաղվում էր մտավոր աշխատանքով: Մինչդեռ 1990-ականներին մասնավորապես սոցիալ-տնտեսական դրդապատճառներով ՌԴ տեղափոխված հայերը բազմաշերտ էին, անկազմակերպ, ցաքուցրիվ և հեռու ավանդական համայնք-սփյուռք բնորոշումից¹⁵: Նրանց զգալի մասը, առավելապես կենտրոնացված լինելով առևտրի, սպասարկման և շինարարության ոլորտներում¹⁶, մեծավ մասամբ քաղաքացիական անորոշ կարգավիճակ, սոցիալ-տնտեսական և այլ բնույթի դժվարություններ ու խնդիրներ ունեցող անձինք էին¹⁷: Հետևաբար ոչ

¹² ԽՍՀՄ նախկին տարածքում իրականացվող «Հայրենակիցներ» ծրագիրը, որը նպատակամիտված էր Ռուսաստանում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, հաստատվել էր ՌԴ նախագահի 2006 թ. հունիսի 22-ի հրամանագրով և ներառում էր խորհրդային Միության նախկին հանրապետություններում ծնված անձանց:

¹³ Дятлов, Мелконян 2009, 103.

¹⁴ Мелконян 2007, 10-11.

¹⁵ Բարխուդարյան, Ալեքսանյան 2015, 383-384:

¹⁶ 1990-ականների հայ էմիգրանտներից շատերը կարողացան ստեղծել ֆինանսական, առևտրական կառույցներ, սակայն նրանք հիմնականում հանդես էին գալիս ոչ այնքան Հայաստանի, որքան Ռուսաստանի հայկական սփյուռքի որոշակի խմբերի տնտեսական շահերի պաշտպանության դիրքերից:

¹⁷ Арутюнян 2001, 3-16.

միշտ էին լիարժեքորեն ընկալում, որ նախկինում միասնական երկրի կազմում գտնվող միութենական հանրապետություններն հետայսու արտասահմանյան պետություններ են: Ներգաղթածների պատկերացմամբ արտասահմանը Ֆրանսիան, Գերմանիան կամ ԱՄՆ-ն են, սակայն ոչ Ռուսաստանը: Նրանք նման ընկալումից մեծ դժվարությամբ էին ձերբազատվում: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն էր ստանում ՌԴ հնաբնակ և նորաբնակ հայության էթնիկ ինքնանույնականացման հարցը¹⁸: Ուստի պատահական չէր, որ սկզբնական շրջանում ՌԴ-ում ստեղծված՝ հայերին միավորող կառույցներն առավելապես կրում էին ադապտացիոն կենտրոնների բնույթ, որի հետևանքով հետին պլան էին մղվում ազգամշակութային և քաղաքական խնդիրները: Բնականաբար, վերոնշյալը բացասաբար էր անդրադառնում Ռուսաստանում դասական առումով ավանդական հայկական սփյուռքի լիարժեք ձևավորման գործընթացի վրա, որը հատուկ էր Արևմուտքի ու մերձավորարևելյան երկրների հայկական սփյուռքներին:

Հայկական համայնքային կառույցների ստեղծումն ու զարգացումը

Ռուսաստանի Դաշնությունում հայերի ինքնակազմակերպման գործընթացը սկզբնավորվեց 1980-ականների երկրորդ կեսին՝ «վերակառուցման» տարիներին: Դրան լուրջ ազդակ հաղորդեց Արցախյան ազգային-ազատագրական շարժման ծավալումը, որին ակտիվ աջակցություն ցուցաբերեց աշխարհասփյուռ ողջ հայությունը: 1988 թ. սկզբին Մոսկվայում ևս տեղի ունեցան բազմամարդ հանրահավաքներ՝ ի պաշտպանություն արցախահայության ինքնորոշման իրավունքի: Դրանց հետևեց նույն թվականի մարտին ՌԴ մայրաքաղաքում առաջին հայկական հասարակական կազմակերպության՝ «Նարաբադ» կոմիտեի ստեղծումը: Դա խթանեց 1980-ական թթ. վերջին Մոսկվայում, Լենինգրադում (Սանկտ Պետերբուրգ), Դոնի Ռոստովում, Կրասնոդարում, Ստավրոպոլում և ՌԴ այլ քաղաքներում հայկական տարատեսակ ազգային կազմակերպությունների ստեղծումը:

ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացին զուգընթաց՝ օրակարգային էր դառնում Ռուսաստանում հայկական ազգային միավորումների համախմբման ու դաշնային մակարդակով համայնքային կազմակերպություն ստեղծելու հարցը: Այդ դժվարին գործընթացին ձեռնամուխ եղան ՌԴ մայրաքաղաքի հայ համայնքի որոշ ներկայացուցիչներ: Դեռևս 1991 թ. նոյեմբերի վերջին ստեղծվեց «Մոսկովյան հայկական համայնք» կազմակերպությունը, սակայն այն 1992 թ. հունիսին տրոհվեց, իսկ դրանից հեռացած անդամները 1993 թ. փետրվարին ստեղծեցին «Մոսկվայի հայ համայնք» անվանումով նոր կառույց: Վերջինս թեև գոյատևեց մինչև 1999 թ. կեսերը, սակայն այդպես էլ չվերածվեց համառուսաստանյան հայկական ազգային համայնքա-

¹⁸ Арутюнян 2011, 143.

յին կառույցի¹⁹: Նման կազմակերպություն ձևավորելու երկու անհաջող փորձ կատարվեց նաև 1993-1994 թթ.: Նախ՝ 1993 թ. հունիսին Ռուսաստանի մայրաքաղաքում հիմնադրվեց «Մոսկովյան հայկական համագումարը», որի հիման վրա նույն տարվա հուլիսին՝ «Միջազգային հայկական համագումարը»: Ապա՝ 1994 թ. նոյեմբերին ստեղծվեց «Ռուս-հայկական նախաձեռնությունների կենտրոն» համառուսաստանյան միջազգային միավորումը, իսկ դեկտեմբերին՝ «Հայկական համաշխարհային համագումարը»²⁰:

Դաշնային մակարդակով հայկական ազգային կառույցների ձևավորման հետ կապված դժվարությունները պայմանավորված էին մի շարք հանգամանքներով, որոնցից թերևս հիմնականը նման նախաձեռնությամբ հանդես եկած առաջնորդների ոչ արդյունավետ գործողություններն էին: Նրանք թեև հիմնականում բիզնես միջավայրի ներկայացուցիչներ էին, սակայն, որպես կանոն, չունեին ինչպես նման կառույցներ հիմնադրելու համար անհրաժեշտ մտահորիզոն, այնպես էլ համապատասխան աշխատանքներ ղեկավարելու կազմակերպչական կամ էլ քաղաքական բավարար փորձ: Դրա հետ մեկտեղ՝ ոչ պաշտոնական առաջնորդների անձնական պատվախնդրական ձգտումները հաճախ երկրորդական պլան էին մղում կազմակերպությունների շահերը: Թեև ձևականորեն որպես կազմակերպության ղեկավար ինստիտուտներ հանդես էին գալիս անհատ պաշտոնական անձինք ու կոլեկտիվ մարմինները, սակայն գործնականում կառույցի կառավարումը, ֆինանսական և նյութական միջոցները կենտրոնացված էին մեկ անձի ձեռքում: Հետևաբար համառուսաստանյան հասարակական կառույցը վերածվում էր հերթական առաջնորդ-գործարարի գրասենյակի, նրա անձնական շահերի, հասարակական-քաղաքական պատվախնդրական ձգտումների բավարարման գրպանային կառույցի²¹:

Այս ամենը հարուցում էր հայ համայնքի զգալի մասի խոր հիասթափությունն ու անվստահությունը տվյալ կազմակերպության և նրա ղեկավարի նկատմամբ, որը, բնականաբար, չէր կարող բացասաբար չանդրադառնալ կառույցի լիարժեք կազմավորման և գոյատևման վրա: Պակաս դեր չէին խաղում նաև հայկական հասարակական կազմակերպություններում և դրանց միջև առկա խոր հակասությունները: Վերոնշյալների հետևանքով հայության զգալի հատվածը աշխատում էր հեռու մնալ համայնքային կառույցների հետ սերտ գործակցությունից: 1990-ական թթ. երկրորդ կեսին Մոսկվայի հայության միայն 13-15%-ն էր շփումներ ունենում հայկական կազմակերպությունների հետ, որոնք հիմնականում տեղի էին ունենում տարաբնույթ միջոցառումների կամ հիշարժան պատմական իրադարձությունների հետ կապված հանդիպումների շրջանակներում²²: Միա-

¹⁹ Долбакян 2010.

²⁰ Բարխուդարյան, Ալեքսանյան 2015, 359-360:

²¹ Сваранц 2009, Ноев ковчег, N 6.

²² Арутюнян 2001, 3-16.

ժամանակ մեր հայրենակիցների ճնշող մեծամասնությունը, զբաղված լինելով ընտանիքի գոյության համար անհրաժեշտ միջոցներ հայթայթելով, բավարարվում էր միայն տոների առիթով եկեղեցի այցելելով:

Հայկական համայնքային կառույցների զարգացման նոր փուլ նշանավորեցին 1996 թ. հունիսին 17-ին Ռուսաստանում ընդունված «Ազգային-մշակութային ինքնավարության մասին» օրենքն²³ ու 1997 թ. օգոստոսի 29-ին ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև ստորագրված «Կամավոր վերաբնակեցման գործընթացի կարգավորման մասին» համաձայնագիրը²⁴, որի շրջանակում 2003 թ. վերջին Երևանում բացվեց միգրացիայի գործերով ՌԴ ՆԳՆ ներկայացուցչությունը²⁵: Դրա շնորհիվ պաշտոնական մակարդակով սկսեցին ծավալվել Ռուսաստան տեղափոխված հայերի կարգավիճակների հստակեցման գործընթացները՝ դրական ազդեցություն ունենալով հայկական համայնքային կառույցների զարգացման վրա: Արդեն 1997 թ. սեպտեմբերին Մոսկվայի հարավարևմտյան վարչական տարածքի հայկական ինքնավարության հիման վրա գրանցվեց համաքաղաքային ազգային ինքնավարությունը: Մայրաքաղաքի մյուս 9 վարչական տարածքներում ևս սկիզբ առավ հայկական ազգային-մշակութային ինքնավարությունների ձևավորման գործընթացը, որոնք 1998 թ. փետրվարին փորձեցին միավորման ճանապարհով ստեղծել համաքաղաքային հայկական կառույց: Սակայն այդ նախաձեռնությունն անհաջողության մատնվեց: Դրանից հետո՝ 1999 թ. սեպտեմբերին, Մոսկվայում ստեղծվեց «Միացում» նոր՝ տարածաշրջանային հասարակական համայնքային կազմակերպությունը, որը, սակայն, 2000 թ. մայիսին վերակազմավորվեց նոր համայնքային կառույցի՝ «Մոսկովյան հայկական համայնք» հին անվանումով²⁶: Ըստ էության, 1990-ական թթ. այդպես էլ չհաջողվեց Ռուսաստանում առանձին-առանձին գործող ու միմյանց հետ ակնհայտ մրցակցության, երբեմն նույնիսկ առճակատման մեջ գտնվող տարատեսակ հայկական համայնքային կառույցները միավորել մեկ միասնական կազմակերպության մեջ:

1999 թ. սեպտեմբերին ՀՀ ղեկավարության նախաձեռնությամբ Երևանում կազմակերպված «Հայաստան-Սփյուռք» առաջին համաժողովից հետո ՌԴ համայնքների ներկայացուցիչներից շատերի մոտ էլ ավելի ամրապնդվեց ռուսահայությունը ներկայացնող միասնական կազմակերպության ստեղծման անհրաժեշտության գաղափարը: Վերջինս կյանքի կոչելու նպատակով 2000 թ. հունվարից մոսկվաբնակ գործարար Ա. Աբրահամյանի նախաձեռնությամբ սկիզբ առավ նման կառույցի ձևավորման գործընթացը, որն ավարտվեց նույն թվականի հունիսին «Ռուսաստանի հայերի միություն» (ՌՀՄ) համառուսաստանյան հասարակական կազմակերպության

²³ <http://www.pravo.gov.ru>

²⁴ ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998 թթ. 2002, 420-422:

²⁵ История дипломатических отношений России и Армении, <https://www.ria.ru/20061030/55242099.html>

²⁶ Բարխուդարյան, Ալեքսանյան 2015, 360-361:

հիմնադրմամբ: Այն ընդգրկում էր արդեն կայացած բազմաթիվ հայկական կազմակերպություններ ՌԴ-ի տարբեր տարածաշրջաններից, միավորում Ռուսաստանի հանրապետություններում, երկրամասերում և մարզերում բացված 64 տարածաշրջանային մասնաճյուղ²⁷: Ի տարբերություն համառուսաստանյան մակարդակի համահայկական կազմակերպությունների ստեղծման նախորդ փորձերի՝ ՌՀՄ-ինը ավելի հաջող էր, քանի որ այն կարողացավ կազմակերպել մի շարք արդյունավետ միջոցառումներ (ռուսաստանյան և միջազգային համաժողովներ), հրատարակել հայ գիտնականների հիմնարար աշխատություններ, ամեն տարի Հայաստանում և Արցախում անցկացնել «ՌՀՄ օրեր», Հայաստանում հիմնել «Լոռի-Վանաձոր» և «Շիրակ-Գյումրի» ստոցիացիաներ, կյանքի կոչել հումանիտար և կրթական ծրագրեր, ձեռնամուխ լինել «Համաշխարհային հայկական կոնգրես» կազմակերպության ստեղծմանը, իրականացնել բարեգործական գործողություններ և այլն: Ըստ այդմ էլ «Ռուսաստանի հայերի միությանը» հաջողվեց զբաղեցնել հայկական հասարակական-քաղաքական գործունեության որմնախորշը, որի շնորհիվ այն թե՛ ՌԴ և թե՛ ՀՀ իշխանությունները սկսեցին դիտարկել որպես Ռուսաստանի բոլոր հայերի ներկայացուցչություն²⁸: Սակայն, չնայած որ ՌՀՄ-ը ՌԴ-ում գործող հայկական համայնքային-հասարակական կազմակերպություններից առավել զանգվածայինն ու ազդեցիկն էր, այդուհանդերձ, այն իր շարքերում չէր միավորում ռուսահայության գերակշիռ հատվածը: Ռուսաստանում գործում էին մեծ ու փոքր տասնյակ հայկական այլ կազմակերպություններ, որոնք, «Ռուսաստանի հայերի միության» հետ գործակցելով կամ առանձին, նույնպես իրականացնում էին նմանօրինակ գործառույթներ և գործունեություն:

Ընդ որում, Ռուսաստանի հայկական սփյուռքի կազմակերպչաբովանդակային գործընթացների ընդհանուր վերլուծությունից բխում էր, որ կենտրոն-տարածաշրջաններ հարաբերակցությունում իրենց գործունեության տևականությամբ և բովանդակությամբ առավել արդյունավետ էին ՌԴ սուբյեկտներում գործող տեղական և տարածաշրջանային համայնքային կառույցները²⁹:

ՌԴ հայկական սփյուռքի գործոնը երկկողմ հարաբերություններում

Քննվող ժամանակաշրջանում Ռուսաստանում հայկական համայնքների գործունեությունը հիմնականում նպատակաուղղված էր հայ ժողովրդի հոգևոր-մշակութային արժեքների, ազգային ավանդույթների, ինքնության պահպանմանը, ինչպես նաև հայրենակիցների իրավունքների պաշտպանության ապահովմանը, Հայաստանի հետ տնտեսական և հումանիտար

²⁷ Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները 2010, 161:

²⁸ Российские армяне 2016, 167, 172.

²⁹ Сваранц 2009, Ноев ковчег, N 6.

կապերի ընդլայնմանը: Միաժամանակ, հայկական սփյուռքի առաջնային խնդիրներից էր ՀՀ-ի և ՌԴ-ի միջև երկկողմ հարաբերությունների զարգացմանն աջակցելը: Վերջինում իրենց զգալի նպաստն ունեին ինչպես հայկական ազգային կազմակերպությունների մեջ միավորված, այնպես էլ դրանցում չներգրավված ՌԴ-ի բարգավաճման գործում մեծ ներդրում ունեցող և այդ երկրի ֆինանսատնտեսական, գիտակրթական, մշակույթի և այլ ոլորտներում առաջատար դիրքեր զբաղեցնող շատ հեղինակավոր հայեր: Նրանց անմիջական ջանքերով իրականացվում էին Հայաստանին սոցիալ-տնտեսական և հումանիտար օժանդակության ծրագրեր, որոնք նպաստում էին ՀՀ-ի և ՌԴ-ի միջև համապարփակ կապերի զարգացմանը, դրանով իսկ նաև երկու երկրների միջև ռազմավարական գործընկերության ամրապնդմանը:

Հատկանշական էր, որ հատկապես ՌՀՄ-ի հիմնադրումից հետո կանոնավոր իրականացվում էին ռուսաստանաբնակ հայ գործարարների այցերը Հայաստան: Կազմակերպվում էին համահայկական տնտեսական համաժողովներ, որոնք նպատակամիտված էին հիմնականում ՌԴ մասնավոր կապիտալի միջոցով ՀՀ տնտեսություն ներդրումային հոսքի ավելացման օժանդակմանը, բիզնես ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: Հետևաբար 2000-ականներին հայ-ռուսական տնտեսական համագործակցության մեջ աստիճանաբար որոշակի տեղ սկսեց զբաղեցնել այսպես կոչված «էթնիկական կապիտալը»: Այն արտահայտվում էր ռուսաստանաբնակ հայ գործարարներին պատկանող ընկերությունների կողմից Հայաստանի շինարարության, ֆինանսաբանկային, էներգետիկ, սպասարկման և այլ ոլորտներում զգալի ներդրումների իրականացմամբ, որը ոչ միայն հանգեցնում էր հանրապետությունում նոր աշխատատեղերի ստեղծման, այլև նպաստում ՀՀ-ի և ՌԴ-ի միջև դաշնակցային հարաբերությունների ամրապնդմանը: Նման ընկերություններից էին Ռուսաստանի գործարար դաշտում բարձր վարկանիշ ունեցող «Տաշիր» առևտրային, անշարժ գույքի ընկերությունների խումբը, «Տրոյկա-Դիալոգ» ներդրումային ընկերությունների խումբը, «ՄոնԱրխ» շինարարական կոնցեռնը, «Սոզլասիե» ՓԲԸ ներդրումային ընկերությունը և այլն: 2000-ականների վերջին Հայաստանում իրականացվող ներդրումային ծրագրերի ասպարեզում Ռուսաստանը զբաղեցնում էր առաջին տեղը, որը բարձր մակարդակի միջպետական հարաբերությունների դրսևորում էր, որում իր լուծման ունեն նաև ՌԴ-ի հայ համայնքը³⁰:

Ռուսաստանի հայկական սփյուռքը զգալի ջանքեր էր գործադրում նաև երկու պետությունների միջև հումանիտար կապերի զարգացմանը նպաստելու ուղղությամբ: 2001 թ. «Ռուսաստանի հայերի միության» նախաձեռնությամբ Երևանում հիմնվեց «Ռուսաց լեզվի զարգացման կենտ-

³⁰ <http://www.azatutyun.am/archive/news/20100212/2031/2031.html?id=2222689>

րոն»³¹, որի նպատակն էր ՀՀ-ում ռուսաց լեզվի տարածմանն ու դասավանդման կատարելագործմանն աջակցելը: Կազմակերպությունն աջակցում էր նաև ՀՀ-ում, Արցախում և ՌԴ-ում երկու ժողովուրդների պատմամշակութային կապերին առնչվող բազմաբնույթ միջոցառումների անցկացմանը, երկուստեք հետաքրքրություն ներկայացնող թեմաներով գիտաժողովների կազմակերպմանը, գիտակրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, խրախուսում էր երկու պետությունների գիտական, կրթական և ստեղծագործական կազմակերպությունների միջև կապերի զարգացմանը: Ստեղծագործական առնչությունները խթանելու, հայ-ռուսական գրական կապերն ամրապնդելու նպատակով ՌՀՄ նախաձեռնությամբ հիմնվել էր «Գրականության համահայկական հիմնադրամ» և այլն³²:

Հումանիտար բնագավառներում ՌԴ հայ համայնքի գործունեությունը չէր շրջանցում նաև սոցիալական ոլորտը: Այսպես, ՌՀՄ-ի՝ Հայաստանում և Արցախում սոցժագրերի իրականացումն ու հայրենակիցներին բազմապիսի օգնության տրամադրումը ներառում էր նաև ՀՀ-ի ռուսական համայնքը, մասնավորապես Լեւոնտոսովո և Ֆիոլետովո գյուղերը:

Ռուսաստանի հայկական սփյուռքի կազմակերպությունները նպաստում էին նաև ՀՀ-ի և ՌԴ-ի տարբեր պետական կառույցների ու գերատեսչությունների միջև հարաբերությունների զարգացմանը: Այս առումով հատկանշական էր, որ «Ռուս-հայկական համագործակցություն» (ՌՀՀ) մոսկովյան տարածաշրջանային հասարակական կազմակերպության գործունեության առանցքային ուղղությունը հանրային դիվանագիտությունն էր, որն առաջին հերթին նպատակամիտված էր Հայաստանի և Ռուսաստանի իշխանության առանձին մարմինների փոխգործակցության և միջխորհրդարանական կապերի զարգացմանը³³: Ըստ այդմ՝ կազմակերպությունը գործնական կապեր էր հաստատել ՌԴ Պետդումայի գրեթե բոլոր ֆրակցիաների հետ: Նրա կազմակերպած հանրային միջոցառումներին հաճախ մասնակցում էին Ռուսաստանի խորհրդարանական կուսակցությունների ներկայացուցիչներ: Նախաձեռնվում էին նաև հայկական զանազան կառույցների երկխոսություններ ռուսաստանյան տարբեր կուսակցությունների հետ:

Երկու երկրների միջև քաղաքական կապերի ամրապնդմանը նպաստելու նպատակով ՌՀՀ-ն ձեռնամուխ եղավ Հայաստանի և Ռուսաստանի փոխհարաբերություններում նոր մշակույթի ներդրմանը՝ միջկուսակցական փոխգործակցության զարգացման խթանմանը: Կազմակերպության նախաձեռնությամբ 2007 թ. հուլիսի 3-ին «Հայ հեղափոխական դաշնակցություն» և «Արդար Ռուսաստան» կուսակցությունների միջև կնքվեց համա-

³¹ Григорян 2018, 91.

³² Բարխուդարյան, Ալեքսանյան 2015, 381:

³³ Российские армяне 2016, 178-182.

գործակցության վերաբերյալ համաձայնագիր, որը նման բնույթի առաջին փաստաթուղթն էր: Վերջինիս օրինակով մեկ տարի հետո՝ 2008 թ. հունվարի 28-ին, «Հայաստանի հանրապետական» և «Միասնական Ռուսաստան» կուսակցությունները ևս ստորագրեցին միջկուսակցական համագործակցության մասին համաձայնագիր³⁴: «Ռուս-հայկական համագործակցություն» կազմակերպությունը փորձագետների մակարդակով ակտիվորեն մասնակցում էր նաև ռուս-հայկական միջխորհրդարանական հանձնաժողովի աշխատանքներին, որի նիստերը տարին մեկ հաջորդաբար գումարվում էին ՌԴ-ում և ՀՀ-ում:

Թեև «Ռուս-հայկական համագործակցությունը» Ռուսաստանի հայկական մյուս կազմակերպություններից առանձնանում էր քաղաքական ներկայացուցչության գործառույթների հոչակմամբ, որը գաղափարապես առնչվում էր սփյուռքի ազգային կուսակցությունների օրակարգին, այդուհանդերձ, ՌԴ-ում գործնականում բացակայում էր դասական իմաստով հայկական սփյուռք հասկացությունը: Դա, մասնավորապես, բացատրվում էր նաև այդ երկրում առկա քաղաքական միջավայրով և դրանով պայմանավորված՝ սփյուռքի հայկական ազգային կուսակցությունների ցանցային կառուցվածքի բացակայությամբ³⁵:

Այսպիսով, թեև քննվող ժամանակափուլում ՌԴ հայ համայնքը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով լիարժեքորեն չէր համապատասխանում դասական հայկական սփյուռքի չափորոշիչներին, ինչը որոշակի դժվարություններ էր առաջացնում նրա կազմակերպչաբովանդակային գործունեության ոլորտում, այդուհանդերձ, այդ համայնքի գրեթե բոլոր կարող ուժերն իրենց ողջ ներուժը ձգտում էին ծառայեցնել ինչպես սեփական պատմական հայրենիքի զարգացմանը, այնպես էլ հայ-ռուսական բազմակողմ կապերի ամրապնդմանը:

Եզրակացություններ

Քննվող ժամանակափուլում ՌԴ-ում հայերի ինքնակազմակերպումը, պայմանավորված պատմական գործոններով, ինչպես նաև ԽՍՀՄ-ին ու Ռուսաստանին հատուկ էթնոքաղաքականության բնույթով, զարգանում էր ուրույն կերպով: Այն զգալիորեն տարբերվում էր նախկին խորհրդային տարածքից դուրս գտնվող երկրներում գործող երկարամյա հայ համայնքային կառույցներից, որոնց օրինակի հիման վրա հայկական սփյուռքը համարվում էր դասական:

Ռուսաստանում հայերի ինքնակազմակերպման գործում օգտագործվող հիմնական ձևաչափը հասարակական կազմակերպություններն էին: Այստեղ գործում էին տարբեր մակարդակների՝ տեղական, տարածաշրջանային բազմաթիվ և մեկ համառուսաստանյան («Ռուսաստանի հայերի

³⁴ Ռուսաստան-Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ 2017, 76-79:

³⁵ Бартумян 2012, 146-151.

միություն») նման հայկական կազմակերպություններ, որոնց գործունեությունը հիմնականում նպատակամիտված էր տեղի հայության ինքնության պահպանմանը, Հայաստանի հետ համապարփակ կապերի ընդլայնմանն ու ՀՀ-ի և ՌԴ-ի միջև երկկողմ հարաբերությունների զարգացմանը: Սակայն, ընդհանուր առմամբ, հայ համայնքի զգալի հատվածը խուսափում էր նշյալ կազմակերպությունների հետ համագործակցությունից³⁶, դրանց հետ շփումներն հիմնականում իրականացնելով հիշարժան պատմական իրադարձություններին նվիրված միջոցառումների, կազմակերպվող համերգների և հանդիպումների շրջանակներում: Դա մեծապես պայմանավորված էր ազգային կառույցների, մասնավորապես դրանց ղեկավարների հանդեպ հայ համայնքի ներկայացուցիչների զգալի մասի մեջ եղած խոր հիասթափությամբ ու անվստահությամբ, որոնք առաջացել էին նշյալ կազմակերպությունների շատ առաջնորդների կողմից տվյալ կառույցներն առավելապես իրենց անձնական շահերին ծառայեցնելու, ինչպես նաև կազմակերպությունների ներսում կամ էլ դրանց միջև գոյություն ունեցող ակնբախ հակասությունների հետևանքով: Պատահական չէր, որ որոշ փորձագետներ ՌԴ-ի հայ համայնքը, չնայած նրա մեծաքանակությանը, համարում էին հայկական սփյուռքի թույլ օղակը³⁷:

Տիրող իրավիճակը բացատրվում էր նաև այն հանգամանքով, որ Ռուսաստանի հայերի մեծ մասը, ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով ներքին սփյուռքից միանգամից վերաձվելով հայկական մեծ սփյուռքի մասերից մեկի, լիովին չէր գիտակցում, որ արդեն գտնվում էր մի նոր ինքնիշխան պետությունում:

Այս ամենը, բնականաբար, բացասաբար էր անդրադառնում ՌԴ հայկական սփյուռքի թե՛ լիարժեք կազմակերպվածության և թե՛ արդյունավետ գործունեության վրա՝ սահմանափակելով նրա հզոր ներուժի առավել արդյունավետ օգտագործման հնարավորությունները հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման գործում: Սակայն, չնայած առկա դժվարություններին, այդուհանդերձ, 1991-2008 թթ. Ռուսաստանի հայկական սփյուռքը հանդես էր գալիս որպես ՀՀ-ն և ՌԴ-ն կապող կարևորագույն օղակ, միջպետական հարաբերությունների մակարդակում երկու երկրների միջև հուսալի «կամուրջ»՝ Ռուսաստանում Հայաստանի և Հայաստանում Ռուսաստանի շահերի պաշտպանության միջոց³⁸:

Գրականություն

Բարխուդարյան Վ.Բ., Ալեքսանյան Հ.Ս. 2015, Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 441 էջ:

³⁶ Նույնիսկ ՌԴ-ում գործող ամենաազդեցիկ և բազմաճյուղ «Ռուսաստանի հայերի միություն» հասարակական կազմակերպության մեջ տեղի հայության զգալի հատվածն ընդգրկված չէր:

³⁷ Алврян 2016, <http://www.yerkramas.org>

³⁸ Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում. հիմնախնդիրներն ու հեռանկարները 2010, 54-55:

- Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.) 2003, եռահատորյակ, հ. առաջին, Սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի հայկական գաղութները, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 531 էջ:
- Հայոց պատմություն 2016, հ. IV, գիրք երկրորդ, նորագույն ժամանակաշրջան (1945-1991 թթ.), Երևան, «Զանգակ», 700 էջ+24 էջ ներդիր:
- Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները 2010, Երևան, ՀՀ սփյուռքի նախարարություն, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 252 էջ:
- ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998 թթ. 2002, «ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր», հրատարակության 1-ին տարի N 2 (2), 12 հունիսի, 601 էջ:
- Ռուսաստան-Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ. պատմական և վավերագրական ցուցահանդեսի գրացուցակ 2017, Մոսկվա, հրատ. նշված չէ, 247 էջ:
- Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում. Հիմնախնդիրներն ու հեռանկարները. Վերլուծական զեկույց 2010, Մոսկվա-Երևան, Եվրասիական հետազոտությունների ինստիտուտ, 134 էջ:
- Алврян А. 2016, Армянская община России-слабое звено Диаспоры, <http://www.erkramas.org>, 30.06.
- Арутюнян Ю.В. 2001, Армяне в Москве (по результатам сравнительного исследования), «СоцИс», N 4, с. 3-16.
- Арутюнян Ю.В. 2011, Об армянской диаспоре в России. Этносоциологическое исследование армян Москвы и Краснодара, Ереван, «Гитутюн», 153 с.
- Вартумян А.А. 2012, Армяне Краснодарского края: утраченная идентичность или приобретенное гражданство? Армяне Юга России: история, культура, общее будущее. Материалы Всероссийской научной конференции. 30 мая-2 июня 2012, г. Ростов-на-Дону, изд. ЮНЦ РАН, с. 146-151.
- Григорян Г. 2018, Гуманитарное измерение армяно-российских отношений, «Россия и новые государства Евразии», N 1(38), с. 82-105.
- Долбакян Э. 2010, Принятие важных решений, затрагивающих интересы всей армянской общины России, не могут быть прерогативой отдельно взятых организаций, «Еркрамас», 1 сентября.
- Дятлов В. 2007, Армяне России: диаспоральные стратегии интеграции. Армянские общины на современном этапе: выживание, перспективы. Материалы научно-практической конференции. 19-20 июня 2007, г. Ереван: Бюллетень научно-образовательного фонда «Нораванк» 20, с. 15-25.
- Дятлов В., Мелконян Э. 2009, Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван, Институт Кавказа, 207 с.
- История дипломатических отношений России и Армении, 30.10.2006 (обновлено 07.06.2008), <https://www.ria.ru/20061030/55242099.html> (10.02.2022).
- Мелконян Э. 2007, Другая диаспора? К характеристике армянских общин на постсоветском пространстве. Армянские общины на современном этапе: выживание, перспективы. Материалы научно-практической конференции. 19-20 июня 2007, г. Ереван. Бюллетень научно-образовательного фонда «Нораванк» 20, с. 8-14.
- Население России 2006, 2003-2004 одиннадцатый-двенадцатый ежегодный демографический доклад, Москва, «Наука», 356 с.
- Ноев ковчег 2006, N 14.
- Российские Армяне. Этносоциологическое исследование 2016, Ереван, «Гитутюн», 304 с.
- Сваранц А. 2009, Армянство России на рубеже веков, «Ноев ковчег», N 6.

<http://www.azatutyun.am/archive/news/20100212/2031/2031.html?id=2222689> (10.02.2022).

<http://www.pravo.gov.ru> (10.02.2022).

ՌԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌԻ ԴԵՐԸ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 1991-2008 ԹԹ.

Ռուբեն Ազիզբեկյան

Ամփոփում

Հայերը պատմական իրադարձությունների որոշակի բերումով, X-XI դդ. սկսած, դարեր շարունակ բնակվել են Ռուսաստանում, որտեղ գրեթե մշտապես աչքի են ընկել տարբեր ոլորտներում ունեցած նշանակալի դերակատարմամբ: Ուստի պատահական չէր, որ ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով անկախություն ձեռք բերած Հայաստանի և Ռուսաստանի միջև հարաբերությունների ամրապնդման գործում իր ներդրումն ուներ նաև ՌԴ հայկական սփյուռքը, որը տեղի խոշոր էթնիկական համայնքներից էր: Վերջինիս ինքնակազմակերպման գործընթացը, բխելով ի հայտ եկած պատմաքաղաքական հանգամանքներից, սկիզբ առավ 1980-ականների վերջից, երբ Ռուսաստանում սկսեցին ձևավորվել և զարգանալ հայկական հասարակական ազգային կազմակերպություններ, որոնք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով տարբերվում էին Արևմուտքում և Արևելքում ավանդաբար գործող դասական հայկական սփյուռքի կառույցներից: Միաժամանակ, ՌԴ-ում նորաստեղծ հայկական ազգային միավորումների ղեկավարների մեծ մասի ակնառու սեփական շահախնդրական դրսևորումների և շատ կազմակերպությունների միջև առկա լարվածության հետևանքով ռուսահայության բացարձակ մեծամասնությունն աշխատում էր հեռու մնալ տվյալ կառույցներին առնչվելուց: Դա խիստ բացասաբար էր անդրադառնում Ռուսաստանում հայ համայնքի կազմակերպչաբովանդակային գործունեության վրա, որը, բնականաբար, սահմանափակում էր նաև հայ-ռուսական հարաբերությունների զարգացմանը լիարժեքորեն աջակցելու նրա հնարավորությունները:

Ելնելով ՌԴ-ում համայնքային կառույցների նկատմամբ վստահության ապահովման, դրանց համախմբման և հայկական միասնական կազմակերպության ստեղծման անհրաժեշտությունից՝ 2000 թ. Մոսկվայում ձևավորվեց «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան միակ կազմակերպությունը, որի մեջ ընդգրկվեցին ՌԴ-ի տարբեր տարածաշրջաններում գործող բազմաթիվ հայկական ազգային միավորումներ: Թեև ՌՀՄ-ն դարձավ ՌԴ-ի ամենազանգվածային և ազդեցիկ հայկական կառույցը, սակայն նրան ևս չհաջողվեց ներառել ռուսահայության զգալի հատված: Այդուհանդերձ, այն, ինչպես նաև Ռուսաստանի մյուս հայկական կազմակերպություններն ու դրանցում չընդգրկված հայազգի հեղինակավոր անձինք, չնայած առկա դժվարություններին, իրենց ողջ ներուժը նպատակամղում էին պատմական հայրենիքի հետ համապարփակ կապերի ամրապնդմանը, դրանով իսկ նաև՝ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև փոխգործակցության խորացմանը գրեթե բոլոր ոլորտներում: Ըստ էության, քննվող ժամանակաշրջանում Ռուսաստանի հայկական սփյուռքը, աստիճանաբար ձեռք բերելով նոր որակ, դարձավ հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման էական գործոն:

Բանալի բառեր՝ ՌԴ հայկական սփյուռք, «Ռուսաստանի հայերի միություն», հայ-ռուսական հարաբերություններ, զանգվածային արտագաղթ, ինքնակազմակերպում, հայկական ազգային կազմակերպություններ, կապերի ամրապնդում:

РОЛЬ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ РФ В ДЕЛЕ УКРЕПЛЕНИЯ АРМЯНО-РОССИЙСКИХ ОТНОШЕНИЙ (1991-2008 ГОДАХ)

Рубен Азизбемян

Резюме

Исторически сложилось так, что, начиная с X-XI веков армяне обосновались в России, где всегда выделялись своей деятельностью в разных областях науки, образования, искусства, экономики и т.д. И не случайно, что после обретения независимости в дело укрепления отношений между Арменией и Россией свою лепту внесла также армянская диаспора, которая была одной из крупнейших этнических общин. Процесс самоорганизации армянской диаспоры в силу исторически сложившихся обстоятельств начался в конце 1980-ых, когда в России стали формироваться армянские общественные национальные организации, в корне отличавшиеся от традиционных армянских классических диаспорических структур на Западе и Востоке. Однако несогласованность действий этих союзов, трения между ними препятствовали организационной деятельности армянской общины.

Исходя из необходимости обеспечения доверия РФ к земляческим союзам, с целью их сплочения и необходимости создания единой армянской организации в 2000 году в Москве сформировался «Союз армян России», куда вошли действующие в разных регионах России многие армянские национальные объединения. Хотя САР стал самой авторитетной и влиятельной армянской структурой, но и он не смог вовлечь в свои ряды большую часть армян России. Тем не менее, как САР, так и другие армянские организации и не вовлеченные в них авторитетные армяне, несмотря на трудности, направили весь свой потенциал на всестороннюю связь с исторической родиной, тем самым углубляя также межгосударственные отношения между РА и РФ во многих областях. По сути, в исследуемые годы армянская диаспора России, постепенно обретая новые качества, стала действенным фактором укрепления армяно-российских отношений.

Ключевые слова – Армянская диаспора РФ, «Союз армян России», армяно-российские отношения, массовая эмиграция, самоорганизация, армянские национальные организации, укрепление связей.

THE ROLE OF THE ARMENIAN DIASPORA OF THE RF IN THE STRENGTHENING OF ARMENIAN-RUSSIAN RELATIONS (1991-2008)

Ruben Azizbekyan

Abstract

The Armenians due to certain historical events lived in Russia since the X-XI centuries, where they have almost always been distinguished by their significant role in various fields. Therefore, it was no coincidence that the Armenian diaspora of the Russian Federation, which was one of the largest and fast-growing local ethnic communities, contributed to the strengthening of relations between Armenia and Russia, which gained independence after the collapse of the USSR. The process of self-organization of the latter started from the emerging historical and political circumstances at the end of the 1980s when Armenian non-governmental national organizations began to form and develop in Russia, which differed from the classical Armenian diaspora structures traditionally operating in the West and the East for objective and subjective reasons. At the same time, due to the prominent self-interested manifestations of most of the leaders of the newly created Armenian national associations in Russia and the existing tension between many organizations, the majority of Russian Armenians tried to stay away from dealing with these structures. It had a very negative impact on the organizational activities of the Armenian community in Russia, which naturally limited its opportunities to fully support the development of Armenian-Russian relations.

Based on the need to ensure trust in community structures in the Russian Federation, their consolidation, and the creation of a unified Armenian organization, in 2000 the only pan-Russian organization "Union of Armenians of Russia" was formed in Moscow, which included many Armenian national associations operating in different regions of the Russian Federation. Although the UAR became the most massive and influential Armenian structure in the Russian Federation, it failed to include a significant part of Russian Armenians. However, it, as well as other Armenian organizations of Russia and the Armenian dignitaries not included in them, despite the existing difficulties, focused all their potential to strengthen comprehensive ties with the historical homeland, thereby also deepening the interaction between RA and Russia in almost all fields. During the review period, the Armenian Diaspora of Russia gradually acquired a new quality that became a significant factor in strengthening Armenian-Russian relations.

Key words – Armenian diaspora of the Russian Federation, "Union of Armenians of Russia", Armenian-Russian relations, mass emigration, self-organization, Armenian national organizations, strengthening of ties.

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՐԱՔԱԿԱՆ ԾՈՅԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ. ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ, ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐՏԱՀՐԱԷՐՆԵՐ

Հրայր Ճէպէճեան

Աստուածաբանութեան դոկտոր
Արաբական Ծոցի երկիրներու Աստուածաշունչի երկիրներու ընդհանուր քարտուղար
Andrea Karkavitsa 5, Anglantzia, 2109, Nicosia, Cyprus
Էլ. հասցե՝ hrayr.jebajian@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 07.09.2022, գրախոսվել է 07.09.2022, ընդունվել է տպագրության 11.04.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.1-25

Յառաջաբան

Արաբական-Պարսից Ծոցը կը գտնուի Ասիոյ արեւմտեան շրջանի, Իրանի եւ Արաբական թերակղզիի միջեւ եւ Հնդկական ովկիանոսի երկայնքով¹: Բնակիչները արաբներ են, որոնց արմատները ծնունդ առած են հին ժամանակներէ: Արաբերէնը պաշտօնական լեզուն է, բայց իւրաքանչիւր Ծոցի երկիր ունի իր բարբառը որ կրնայ տարբերիլ մէկը միւսէն: Իսլամական ներխուժումէն ետք, Քե եօթերորդ դարուն, բոլոր այս երկիրները ընդունեցին իսլամական կրօնքը:

Արաբական Ծոցի երկիրները կը կազմեն Պահրէյնի Թագաւորութիւնը, Քուեյթ, Օմանի Սուլթանութիւնը, Քաթար, Սէուտական Արաբիոյ Թագաւորութիւնը, Արաբական Միացեալ Էմիրութիւնները եւ Եմէնը: Առաջին վեց երկիրները միասին կը կազմեն Ծոցի երկիրներու Համագործակցութեան Խորհուրդը, որ հիմնուած է 1981 թուականին, Ապու Տապիի մէջ: Խորհուրդին նպատակն է խաղաղութիւն, համերաշխութիւն եւ ապահովութիւն յառաջացնել շրջանին մէջեւ զարգացնել տնտեսական կապերը իրար միջեւ: Պէտք է ընդունիլ, թէ Ծոցի Խորհուրդը սկսած է դառնալ կարեւոր միաւոր Արաբական աշխարհի մէջ եւ նաեւ միջազգային հարթակներու վրայ: Այդ ներկայիս հիմնական դեր ստանձնած է քաղաքական կեանքի մէջ եւ այս տեղական թէ միջազգային յարաբերութիւններու մէջ²:

Քրիստոնեայ ներկայութիւնը՝ պատմական զարգացումներ

Քրիստոնեայ ներկայութիւնը տարածաշրջանին մէջ սկսած է զարգանալ Քե չորրորդ դարէն ետք: Եթէ նոյնիսկ պատմութեան որոշ ժամանակահատուածէ մը ետք չէ զարգացած, բայց քրիստոնեայ եկեղեցին մնացած է հոգեւոր եւ մշակութային կռուան Ծոցի այս տարածաշրջանին մէջ եւ մինչեւ այսօր:

¹ United Nations Group of Experts on Geographical names, Working Paper no 61, 23rd session, Vienna, 28 March - 4 April 2006, 1 (accessed October 9, 2010).

² Gulf Cooperation Council – German Federal Foreign Office (accessed August 31, 2012).

Սուրիանի աղբիւրներ Արեւելքի եկեղեցիի, որ նաեւ կը կոչուի Նեսթորական եկեղեցի, կը մատնանշէ վանքերու ներկայութիւնը չորրորդ դարու կէսերէն սկսեալ: Այս վանքերը կը գտնուէին հիւսիս արեւելեան շրջաններուն մէջ, որ ներկայ օրերու Պահրէյնը եւ Քաթարն է: Անոնք կը կոչուէին *Պէթ Քաթարիէ*³: Քե 325 թուին կայացած Նիկիոյ ժողովին, ուր 300 արքեպիսկոպոսներ մասնակցած են՝ երեքը եկած էին *Պէթ Քաթարիէ*, որ այդ ժամանակներու ամենէն հին եկեղեցական թեմերէն մին էր Արեւելեան Արաբական եկեղեցիին: Ներկայ օրերուն այս շրջանները կը կոչուին Օման, Քաթար եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններ⁴: Պատմական արձանագրութիւնները եւ տուեալները նոյնպէս կը վկայեն, թէ քրիստոնեայ ներկայութիւնը մնացած է աշխուժ նոյնիսկ իսլամական ներխուժումէն ետք՝ Քե 629 թուականէն անդին⁵:

Քանի մը տեսութիւններ կան, թէ ինչպէս քրիստոնեայ ներկայութիւնը սկսած է Շոցի երկիրներու մէջ:

Քրիստոնեայ արաբներ եւ ցեղախումբեր հասած են Շոցի երկիրները, որոնք լաւ յարաբերութիւններու մէջ էին քրիստոնեայ հաւաքականութիւններու հետ Ալ Հիրա շրջանին մէջ՝ կեդրոնական Իրաք, ինչպէս նաեւ Պահրէյնի եւ հիւսիս-արեւելքի շրջաններու մէջ հաստատուած Ապտըլ Քայս հաւաքականութիւններու հետ⁶:

Տուեալներ նաեւ կը վկայեն, թէ քրիստոնեայ ներկայութիւնը տարածուեցաւ Նեսթորական եկեղեցիի աւետարանչական արշաւներու որպէս հետեանք, որ բաժնուած մէկ մասնիկն էր հինգերորդ դարու Արեւմտեան Սուրիանի Ճաքոպայթ եկեղեցիին: Պատմագէտներ նաեւ կը վկայեն, թէ Նեսթորական եկեղեցին հալածանքներու ենթարկուած է Պարսկաստանի Շափուր Բ.ի կողմէ ինչ որ պատճառ եղած է, որ քրիստոնեաները հասնին Շոցի երկիրները⁷: 1992 տարուան ընթացքին երբ եկեղեցական վանք մը յայտնաբերուեցաւ Պանի Եաս կղզիին մէջ՝ Ապու Տապի, ուր փաստուեցաւ թէ քրիստոնեաներ ապրած էին այս շրջաններուն մէջ Քե արդէն վաղ վեցերորդ դարուն⁸:

Հնագէտեր Քրիստոնեայ ձկնորսներու հետքեր գտած են Պահրէյնի շրջակայքը, որոնք զբաղուած եղած են պեղումներ կատարելով, մարգրիտներ գտնելու նպատակով՝ Քե 835ին. Արձանագրութիւններ գտնուած են Մարի հայրապետական արխիւներէն, Քե 9րդ դարուն, որոնք կը վկայեն Քրիստոնեայ ներկայութեան մասին Պահրէյնի եւ Եամամայի շրջաններուն մէջ այդ ժամանակահատուածի ընթացքին եւ որոնք վայելած են տեղացի առաջնորդներու եւ ղեկավարներու բարեացակամ վերաբերմունքը⁹:

³ Sayegh 2004, 107.

⁴ Sayegh 2004, 38.

⁵ Carter 2008, 71.

⁶ Potts 1990, 242.

⁷ Potts 1990, 242.

⁸ King 1997, 221.

⁹ Fiey 1979, 211-216.

Իսլամական տիրապետութենէն ետք, պատմութեան արձանագրութիւնները կը վկայեն, թէ քրիստոնեայ ներկայութիւնը շարունակուեցաւ մինչեւ իններորդ դար: Հոս կը յիշատակուի, թէ քրիստոնեաներ եւ իսլամներ միասին ապրեցան համերաշխօրէն: Նոյնիսկ կան տուեալներ, թէ եկեղեցիի սպանալիքը եւ վտանգը աւելի շատ ներքին էր քան արտաքին: Պատմական տուեալներ կը խօսին եօթներորդ եւ ութերորդ դարերուն երբ հիմնուած է *Ալ Քուսու* եկեղեցին իսլամ հաաքականութեան հանդուրժողութեան որպէս արդիւնք¹⁰: *Ալ Խարք* վանքի յիշատակարաններուն մէջ արձանագրուած է Տիմոթէոս Ա.ի աշխուժ գործունէութիւնը, եւ Արեւելքի եկեղեցիին համար այդ տարիները նկատուած են որպէս ոսկեայ տարիներ¹¹:

Քրիստոնեայ եկեղեցիին ճակատագիրը եւ անհետացումը

Երկու հիմնական տարբերակներ կան քրիստոնեայ եկեղեցիին ճակատագրին եւ անհետացումին առնչութեամբ Քե իններորդ դարէն ետք¹²:

Առաջինը կը հիմնաւորէ, թէ հալածանքը ամբողջութեամբ անհետացուց Արեւելքի եկեղեցին Ծոցի երկիրներէն: Այս մտածողութեան պատկանողները կը հիմնաւորեն իրենց տեսութիւնը Մուհամէտ Մարքարէի մահուան անկողինին վրայ իր արտասանած խօսքերը. «Բոլոր Ծոցի տարածաշրջանին մէջ ուրիշ կրօնք մը պէտք չէ գոյութիւն ունենայ»¹³: Կարելի է չէ հիմնաւորել այս տեսակէտ-թեզը: Այս ժամանակահատուածին քրիստոնեաներ եւ հրեաներ փոքրամասնութեան կարգավիճակ ունէին, եւ տուգանք պարտադրուած էր անոնց վրայ, *Ճիզա*: Պատմական վկայութիւններու մէջ չիկայ որեւէ յիշատակութիւն, թէ քրիստոնեաներ ենթարկուած են սպաննութեան կամ տեղահանումի¹⁴:

Երկրորդ տեսակէտը կ'ըսէ, թէ Արեւելեան եկեղեցիի անհետացումը առնչուած է Բիզանդական աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան պարտադրանքներուն եւ բանավեճերուն հետ, ուր արաբ մտաւորական եւ կրօնական առաջնորդներ մեկուսացուեցան եւ պատճառ դարձան եկեղեցիին տկարացումին եւ անհետացումին¹⁵: Այս իմաստով, կրօնափոխութիւնը աւելի շիտակ փաստարկ եղած է, երբ քրիստոնեաներ «յոգնած քրիստոնեայ վարդապետութեան եւ աստուածաբանական բանավեճերէ՝ իսլամ կրօնքը աւելի նպատակայարմար տեսած են»:

Տնտեսական պատճառները եւ անոնց շարժառիթները պէտք է նկատի առնել նաեւ, ուր քրիստոնեաներ կրօնափոխ ըլլալով եւ իսլամական կրօնքը ընդունելով անոնք աւելի դիւրին եւ ազատ վաճառականական յարաբերութիւններ մշակած են¹⁶:

¹⁰ Beaucamp 2008, 106.

¹¹ Baumer 2006, 156.

¹² Thompson 2011, 60.

¹³ Thompson 2011, 60.

¹⁴ Thompson 2011, 60.

¹⁵ Thompson 2011, 60.

¹⁶ Thompson 2011, 60.

Քրիստոնեայ եկեղեցիին վերակազմաւորումը Ծոցի տարածաշրջանին մէջ

Քրիստոնեայ ներկայութիւնը դարձեալ մուսք գործեց Ծոցի տարածաշրջանին մէջ 1497 թուականներուն փորթութալական գաղութատիրութեան օրերուն, որ սկսաւ երբ Վասքո Տի Կամա Փորթութալէն հասաւ Ծոցի շրջանները: Փորթութալցիք, որոնք զօրաւոր հակա-իսլամ տրամադրութիւններով լեցուած էին՝ ապրելով արաբական ներխուժումը եւ տիրապետութիւնը երոպայի մէջ, գրաւեցին շրջանը եւ հիմնեցին պարիսպներ Օմանի եւ Պահրէյնի մէջ եւ Հորմուզի մէջ շինեցին կայան մը Ծոցի պարսկական մասին մէջ¹⁷:

Կը յիշատակուին նաեւ բռնարարքներ փորթութալական գաղութատիրութեան օրերուն տեղացի արաբներու վրայ¹⁸: Փորթութալցիներուն հետ մուսք գործեց կաթողիկէ Գարմէլիթ միսիոնարական առաքելութիւնը: Անոր յաջորդեց Հոլանտական Բարեկարգեալ-Բողոքական եկեղեցին երբ հիմնուեցաւ Հոլանտական-Հնդկական արեւելեան ընկերութիւնը 1602 թուականին:

Անգլիական գաղութատիրութիւնը սկսաւ 1600 տարիներուն Կարմիր Ծովու, Արաբական Թերակղզիի, Իրաքի եւ Իրանի մէջ, երբ հիմնուեցաւ Արեւելեան Հնդկական ընկերութիւնը: Անգլիացիք, որպէսզի պահպանեն իրենց հաղորդակցութիւնները, կործանեցին Հորմուզի կայանը պարսկական մասին մէջ 1622 տարիներէն սկսեալ եւ սկսաւ մրցակցութիւնը ֆրանսական ընկերութեան հետ, որ կայք ունէր արեւելեան Հնդկաստանի մէջ: Ֆրանսական մրցակցութիւնը անգլիացիներու եւ հոլանտացիներու հետ ծայր տուաւ աշխուժ միսիոնարական գործունէութեան կաթողիկէ եկեղեցիին կողմէ¹⁹:

Ամերիկեան Արաբական Միսիոնարութիւնը, որ բողոքական կազմակերպութիւն մըն է եւ որ գործեց Ծոցի եւ հարաւային Իրաքի մէջ, հիմնուեցաւ 1889 տարիին: 1894 տարին Ամերիկայի Բարեկարգեալ եկեղեցին ստանձնեց այս միսիոնարական կազմակերպութիւնը, որ գործեց մինչեւ 1973²⁰: Այս կազմակերպութիւնը Պահրէյնի մէջ հիմնեց հիւանդանոց եւ մանչերու դպրոցներ 1905 թ.ին: Կազմակերպութիւնը հիմնեց առաջին սարքային հիւանդանոցը Քուէյթի մէջ 1913-ին: Այս կազմակերպութեան հիմնած շատ մը հիմնարկները տակաւին կը շարունակուին Քուէյթի, Պահրէյնի եւ Օմանի մէջ նոյնիսկ երբ կազմակերպութիւնը լուծուեցաւ եւ կասեցուց իր գործունէութիւնները 1973-ին²¹:

Ալ Թամիմի միսիոնարական եւ եկեղեցական առաքելութիւններուն մասին կ'ըսէ. «Աւետարանի քարոզչութիւնը Ծոցի երկիրներու մէջ արդիւնք չտուաւ քանի տեղացի քրիստոնեայ հաւաքականութիւն մը չի կազմուեցաւ»: Ասով հանդերձ, քրիստոնեայ առաքելութիւնը իր կարելոր հիմքերը դրաւ Ծոցի երկիրներուն մէջ յաջորդող տարիներուն եւ մինչեւ այսօր եւ կը ծառայէ որպէս հոգեւոր, եկեղեցական եւ ընկերային հենարան մեծ թիւով օտարազգի

¹⁷ Scudder 1998, 9-10.

¹⁸ Scudder 1998, 9-10.

¹⁹ Scudder 1998, 9-10.

²⁰ Scudder 1998, 195.

²¹ Scudder 1998, 195

մարդոց, որոնք աշխատանքային մտահոգութիւններէ մեկնելով հաստատուած են Ծոցի տարածաշրջանին մէջ: Իրականութիւն է, սակայն, որ միսիոնարական առաքելութիւնը չի կրցաւ կազմել նոր քրիստոնեաներ տեղացի ժողովուրդին մէջ²²:

Եթէ մէկ հիմնական պատճառ կարելի չէ գտնել այս ձախողութեան համար, Ագուտըր կը հիմնաւորէ, թէ միսիոնարական կազմակերպութիւններու յաջողութիւնը պէտք է տեսնել այլ գրաւականներու մէջ: Այսինքն, քրիստոնեայ միսիոնարները կրցան սիրաշահիլ տեղացիներու բարեկամութիւնը, որոնք ընդունեցին զիրենք, եւ այս պատճառ եղաւ որ յարաբերութիւն մը ստեղծուի, որ հիմնուած է հանդուրժողականութեան եւ գոյակեցութեան տրամադրութեամբ: Այս իմաստով, միսիոնարներու առաքելութիւնը ցոյց տուաւ քրիստոնէական մարդասիրական հոգիին ընկալումը²³:

Քրիստոնէական ներկայութիւնը Արաբական Միացեալ Էմիրութիւններուն մէջ

Արեւմտեան քրիստոնէութիւնը մուտք գործեց Արաբական Միացեալ Էմիրութիւնները փորթութալցիներու հետ 1506-ին: Արաբական մտածողութեան մէջ յիշատակուած էր տակաւին քրիստոնեաներու՝ իսլամներու հանդէպ անմարդկային վերաբերմունքը եւ սպաննութիւնները՝ փորթութալական գաղութատիրութեան օրերուն: Անգլիական գաղութատիրութեան ժամանակ պայմանները փոխուեցան, որովհետեւ եղան անգլիացի կառավարիչներ, որոնք նկատուեցան որպէս հաղորդակցութեան եւ համակեցութեան կամուրջներ ստեղծող, ինչ որ տեղացիներու կողմէ դրական կերպով ընդունուեցաւ²⁴:

Պատմութիւնը կը յիշատակէ երկու գործունէութիւններ, որոնք դրական ներդրում ունեցան քրիստոնեայ ներկայութեան ընդունման Արաբական Միացեալ Էմիրութիւններուն մէջ:

Առաջինը՝ Արաբական Միսիոնարական Առաքելութիւնը որ 1889 տարիներէն սկսեալ բժշկական եւ կրթական լայնածաւալ գործեր տարած է: Հոս կը յիշատակուի Ալ Այնի *Ուլասիս* հիւանդանոցը, որ հիմնուած է 1960 թ.ին, որուն բժշկական աշխատակազմի նուիրական ծառայութիւնը մեծապէս գնահատանքի արժանացած է տեղացիներուն կողմէ: Երկրորդը Շէյխ Չայէտ Ալ Նահեանի քաղաքական առաջնորդութիւնն է: Ան առաջին եւ հիմնադիր նախագահն է Արաբական Միացեալ Էմիրութիւններու: Քրիստոնեայ ներկայութեան անդրադառնալով ան կ'ըսէ. «Միասին եկէք հիմնենք զօրաւոր կռուան մը եւ օժանդակենք մեր եղբայրներուն (ակնարկը քրիստոնեաներուն համար է - Հ.Ճ.) եւ միասին աշխատինք դէպի խաղաղութիւն»²⁵: Եթէ այս յայտարարութիւնը լման կրօնական ազատութիւն չի տար քրիստոնեաներուն բայց ցունիշ է հանդուրժողականութեան, յարգանքի եւ համագործակցութեան:

²² Al Tamimi 1982, 237.

²³ Scudder 1998, 417-418.

²⁴ Hawley 1970, 126.

²⁵ Thompson 2011, 31.

Միսիոնարական շարժումը յաջողեցաւ բժշկական եւ կրթական մեծ ծառայութիւններ իրականացնել, բայց կարելի չէրաւ կրօնափոխութիւն յառաջացնել տեղացի իսլամներուն մէջ: Թոմսընը, որ Անկլիքան եկեղեցական մըն է, կ'ըսէ. «Արաբները հաւատացին, թէ քրիստոնեայ դառնալով կրնան արմատախիլ ըլլալ իրենց հաւաքականութիւններէն եւ հեռանալ իրենց հաւատարմութիւններէն»²⁶:

Աւետարանական եկեղեցին հիմնուեցաւ Տուպայի մէջ 1962-ին եւ 1966-ին Ապու Տապիի մէջ: Աւետարանական եկեղեցիին մէջ կը հիւրընկալուին մեծ թիւով եկեղեցական խմբակցութիւններ, որոնք պետական ճանաչում չունին եւ իրենց եկեղեցական պաշտամունքները կ'ունենան աւետարանական եկեղեցիին հովանիին տակ, որ պետական ճանաչում ունի: Անկլիքան եկեղեցին հիմնուեցաւ Ապու Տապիի մէջ 1965-ին եւ Շարժա-Տուպայի մէջ 1970-ին²⁷:

Կաթողիկէ Գաբուշին միաբանութիւնը հիմը դրաւ կաթողիկէ եկեղեցիին 1965-ին: Կաթողիկէ եկեղեցին հինգ դպրոցներ ունի Էմիրութիւններուն մէջ, ուր քրիստոնէական դաստիարակութիւն կը դասաւանդուի քրիստոնեայ աշակերտներուն: 2007-ին Վատիկանը եւ Էմիրութիւնները հիմնեցին միջպետական եւ դիւանագիտական յարաբերութիւններ:

Հայկական եկեղեցին՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, Շարժայի մէջ հիմնուած է 1998-ին եւ Ապու Տապիի մէջ 2014-ին Սրբոց Նահատակաց անունով:

Հնդիկ հաւաքականութիւնը ամենէն մեծն է Էմիրութիւններուն մէջ: Եկեղեցական համակարգը Էմիրութիւններուն մէջ կը բաղկանայ տարբեր լեզուական եւ մշակութային համայնքներէ եւ յարանուանութիւններէ: Ըստ պետական արձանագրութիւններու աւելի քան 160 ազգութիւններ կ'ապրին Էմիրութիւններուն մէջ: Յատկանշական երեւոյթ է, որ Էմիրութիւններու պետական վարչամեքենային մէջ ներառուած է «Յանդուրժողականութեան նախարարութիւն»ը:

Քրիստոնէական ներկայութիւնը Քուէյթի մէջ

Քուէյթի քրիստոնեայ հաւաքականութեան յատկանիշներէն մին է տեղական Քուէյթի քրիստոնեայ համայնքը՝ թիւով 300: Անոնց արմատները եկած են Թուրքիայէն եւ հաստատուած Քուէյթ 20-րդ դարու սկիզբը:

Կաթողիկէ եկեղեցին հիմնուած է 1948-ին, եւ Վատիկան Քուէյթի հետ դիւանագիտական կապեր հաստատեց 1996-ին: Ամերիկեան Արաբական Միսիոնարական կազմակերպութիւնը հիմնած է երկրին մէջ առաջին հիւանդանոցը 1913-ին, առական սեռին համար եւ 1919-ին՝ իգական սեռին համար: 1913-ին անոնք նաեւ հիմնեցին տղոց համար դպրոց մը: Շատ մը քուէյթի բարձրաստիճան ղեկավարներ շրջանաւարտ եղած են այս դպրոցէն:

Հայկական եկեղեցին Քուէյթի մէջ՝ Սրբոց Վարդանանց, հիմնուած է 1962-ին եւ հայկական վարժարանը՝ 1961-ին²⁸:

²⁶ Thompson 2011, 31.

²⁷ Thompson 2011, 8.

²⁸ Alian 2015.

Քրիստոնէական ներկայութիւնը Պահրէյնի մէջ

Պահրէյնի մէջ կ'ապրի մօտաւորապէս 500 տեղացի քրիստոնէայ համայնք մը, որ պետական ճանաչում ունի եւ ներկայացուցիչ մը խորհրդարանին մէջ: 1901-ին միսիոնարութիւնը հիմը դրած է հիւանդանոցի մը, որ մինչեւ այսօր կը գործէ որպէս քրիստոնէական հաստատութիւն եւ կը համարուի Պահրէյնի լաւագոյն հիւանդանոցներէն մէկը: Նոյնպէս առաջին դպրոցը հիմնուած է 1906-ին միսիոնարութիւններու կողմէ²⁹:

Քրիստոնէական ներկայութիւնը Քաթարի մէջ

Քաթարի մէջ քրիստոնէայ ներկայութիւնը ունի անկէ Նոր պատմութիւն: 2008-ին կաթողիկէ եկեղեցին հիմը դրաւ առաջին եկեղեցաշէնքին: Անկլիքան, յոյն օրթոտոքս եւ այլ համայնքներ նոյնպէս ունին իրենց եկեղեցաշէնքերը:

Քրիստոնէական ներկայութիւնը Օմանի մէջ

Օմանի Սուլթանութեան մէջ միսիոնարութիւնը հիմնեց մայրանոց-հիւանդանոց մը 1913-ին եւ երկսեռ դպրոց մը 1939-ին: Այս մայրանոց-հիւանդանոցը եւ դպրոցը պատճառ եղան որ հիմը դրուի տեղական քրիստոնէական եկեղեցիի մը: Սակայն հիւանդանոցին եւ դպրոցին փակումէն ետք տեղական քրիստոնէայ համայնքն ալ լուծեցաւ: Այսօր Օմանի մէջ քրիստոնէայ եկեղեցին օտարազգի է եւ տարբեր համայնքներէ կազմուած³⁰:

Քրիստոնէական ներկայութիւնը Եմէնի մէջ

Եմէնի Ատէն քաղաքին մէջ անգլիական գաղութատիրութեան օրերուն անկէ քան 22 եկեղեցաշէնքեր հիմնուած էին՝ անկլիքան եւ կաթողիկէ: Այսօր եկեղեցաշէնքերը փլատակ վիճակի մէջ են: Քոյր Թերեզայի բարեսիրական կազմակերպութիւնը կը հովանաւորէ երէցներու եւ անկարներու պատսպարան մը Սանաայի, Ատենի եւ Թաաիզի մէջ: Այսօր անոնք տակաւին կը շարունակեն իրենց առաքելութիւնը նոյնիսկ երկրին դժուար պայմաններուն մէջ: Պէտք է նաեւ յիշել, թէ 1998-ին երեք քոյրեր սպաննուեցան այս բարեսիրական կազմակերպութեան անդամներէն, երբ իրենց առաքելութիւնը կը կատարէին: Նոյնանման ճակատագրին ենթարկուեցան Հարաւային Մկրտչական եկեղեցիէն երեք բժիշկեր, որոնք սպաննուեցան Ճիպլայի հիւանդանոցին մէջ, եւ պատճառ եղաւ որ քրիստոնէական այս հիւանդանոցը փակուի:

Քրիստոնէայ ներկայութեան իրողական կարգավիճակը

Ծոցի երկիրներու ներկայի օրէնքը կ'արգիլէ անետարանչութիւնը իսլամական համայնքին մէջ: Քրիստոնէական ներկայութիւնը եթէ բացարձակ ազատութիւններ չունի, բայց կայ հանդուրժողական մթնոլորտ եւ կեցուածք՝ պետական եւ ընկերային շրջանակներու կողմէ: Քրիստոնէական դասական

²⁹ Scudder 1998, 195.

³⁰ Scudder 1998, 175-293.

համայնքներ-եկեղեցիներ՝ կաթողիկէ, անտարանական, առաքելական ու տակաւին, ունին պաշտօնական գրանցում: Պետութիւն-եկեղեցի կապերը ընդհանրապէս փոխադարձ յարգանքի մթնոլորտի մէջ է: Քրիստոնեաներ իրաւունք ունին իրենց եկեղեցական արարողութիւնները եւ գործունէութիւնները ունենալ եկեղեցական շէնքերուն եւ անոնց պատեաններուն մէջ, որոնք տրամադրուած են պետութեան կողմէ:

Աւելի քան 17 Ծոցի քաղաքներու մէջ տրամադրուած են պետական հողաշերտեր ուր աւելի քան 40 եկեղեցաշէնքեր կը գործեն: Քրիստոնեայ եկեղեցին Ծոցի մէջ կը համարուի որպէս «հիւր» եւ այս իմաստով կը «հիւրընկալուի» պետութեան կողմէ: Եկեղեցիները իրենց եկեղեցաշէնքերու սեփականատէրերը չեն, բայց ունին ապահովութիւն, թէ պետութիւնը պիտի չառնէ այս հողերը իրենցմէ: Այս իմաստով քրիստոնեայ եկեղեցիները այս հողաշերտերու վրայ կառուցած են իրենց եկեղեցաշէնքերը³¹: Այս իրավիճակը ստեղծած է մօտիկ գործակցութիւն տարբեր քրիստոնեայ համայնքներու միջեւ: Քաթրին Կրահամ՝ անկլիքան կղերական մը, այս իրավիճակը կը կոչէ. «պարտադրուած համագործակցութիւն»³²:

Քրիստոնեայ ներկայութիւնը արդիւնք է մեծ թիւով օտարներու, որոնք աշխատանքի համար ժամանած են հոն: Օտարազգի անձինք, որոնք կ'ապրին այս երկիրներուն մէջ, չեն կրնար հպատակութիւն ստանալ, նոյնիսկ եթէ անոնք հոն ծնին կամ հոն ապրին 40 կամ 50 տարի:

Ծոցի չորս երկիրներ աշխարհի առաջին չորս դիրքերը կը գրաւեն, որպէս ամէնէն շատ օտարազգի բնակիչներ ունեցող, համեմատաբար իրենց տեղացի ժողովուրդին հետ: Քաթար, Էմիրութիւններ, Քուեյթ եւ Պահրէյն կը գլխատրեն աղիւսակի այս չորս դիրքերը: Օտարազգի այս բնակչութեան մէջ մեծ տեղ կը գրաւեն բանուորները, որոնք կուգան ասիական եւ ամերիկեան ցամաքամասերէն, իգական թէ արական սեռէ: Աւելի քան 15 միլիոն բանուոր կ'ապրի Ծոցի երկիրներուն մէջ: Քրիստոնեայ ներկայութիւնը կը հաշուէ մօտաւորապէս 5 միլիոն: Այս իմաստով Ծոցի քրիստոնեայ համայնքը կը կազմէ երկրորդ խոշորագոյն համայնքը Միջին Արեւելքի մէջ, Եգիպտոսէն ետք:

Հայկական իրականութիւնը Ծոցի երկիրներուն մէջ

Քուեյթի հայկական գողութիւնը կազմակերպուած իրավիճակ ունի իր եկեղեցիով եւ վարչական դրուածքով: Հայ եկեղեցին՝ Սրբոց Վարդանանց, հիմնուած է 1962-ին եւ դպրոցը՝ 1961-ին: Գաղութը ունի իր միութիւնները, որոնց միջոցաւ տեղի կ'ունենան շատ մը գործունէութիւններ: Հայ Առաքելական եկեղեցին կը պատկանի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Քուեյթի Առաջնորդարանը նաեւ կը հոգայ Պահրէյնի եւ Սէուտական Արաբիոյ փոքրաթիւ հայ գողութներու հոգեւոր կարիքները, որոնք եկեղեցական-կազմակերպչական կառոյցներ չունին:

³¹ Casper 2015, 19.

³² Graham 2009, 210.

Արաբական Միացեալ Էմիրութիւններուն մէջ հայ գաղութը ունի երկու եկեղեցի՝ Շարժայի եւ Ապու Տիապիի մէջ: Շարժայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին հիմնուած է 1998-ին իսկ Ապու Տապի՝ Սրբոց Նահատակաց, 2014-ին: Երկու եկեղեցիները կը պատկանին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Շաբաթօրեայ վարժարաններ կը գործեն երկու քաղաղաքներուն մէջ, որպէսզի հայ երեխաներուն եւ պատանիներուն սորվեցնեն հայերէն լեզու, պատմութիւն եւ մշակոյթ: Արաբական Միացեալ Էմիրութիւնները նաեւ կը հոգան Քաթարի փոքրաթիւ գաղութին, որ ունի վարչութիւն մը տնօրինելու համար ազգային կեանքը: Քաթարի մէջ հայ գաղութը չունի եկեղեցաշէնք:

Օմանի Սուլթանութեան մէջ կայ մօտաւորապէս 30-35 հայ՝ ընդհանրապէս Լիբանանէն եւ Հայաստանէն: Ծրագիրներ կը մշակուին որպէսզի Արաբական Միացեալ Էմիրութիւնները օգտակար դառնան Օմանի փոքրաթիւ հայ գաղութի հոգեւոր կարիքներուն:

Հայաստանի Հանրապետութիւնը հաստատած է դիւանագիտական կապեր Քուէյթի, Քաթարի, Արաբական Միացեալ Էմիրութիւններու եւ Օմանի հետ:

Արաբական Ծոցի տարածաշրջանին մէջ կարելի չէ հպատակութիւն ձեռք բերել: Այս իմաստով, գաղութը չի կրնար արմատանալ երկրին մէջ, որպէս տեղացի հաւաքականութիւն: Այս Ծոցի երկիրներու ընդհանուր իրավիճակն է եւ բոլոր օտար ազգութիւններուն համար: Հայկական գաղութներուն մեծ մասը կուգայ Սուրիայէն, Լիբանանէն, Պարսկաստանէն եւ Հայաստանէն: Սուրիահայերը կը կազմեն մեծամասնութիւն: Կան երրորդ ու տակաւին չորրորդ սերունդի հայեր, որոնք Ծոցի երկիրներուն մէջ ծնած են:

Եզրակացութիւններ

Քրիստոնեայ ներկայութիւնը Ծոցի երկիրներու մէջ ունի իւրայատկութիւններ իր նկարագրին եւ դրուածքին մէջ: Ան ներկայութիւն մըն է տարածաշրջանի մը մէջ որ կը համարուի իսլամութեան հիմքը: Եթէ քրիստոնեայ ներկայութիւնը ունի պատմական արմատներ տարածաշրջանին մէջ, այսօր ան ունի հիւրի կարգավիճակ: Եթէ հիւրին կը շնորհուին որոշ ազատութիւններ՝ ապրելու եւ գործելու տարածաշրջանին մէջ, բայց կը մնայ անոր առաքելութիւնը:

Աշխարհ այսօր գրեթէ իր ամբողջութեամբ կ'ապրի Ծոցի տարածաշրջանին մէջ: Այս իրավիճակը առիթ եւ պատեհութիւն է, որ տարբեր մշակոյթներ իրենց այլազանութեամբ քով-քովի գալով ապրին միասին եւ հասկնան, յարգեն եւ ընդունին «ուրիշ»ը: Ուրիշը որ տարբեր է, բայց եւ նոյնքան արժէք է, որ կրնայ իր ներդրումը ունենալ մարդկային կեանքի եւ քաղաքակրթութեան սատարումին:

Եթէ քրիստոնեայ եկեղեցին օտարազգի է, բայց եկեղեցի է եւ ունի իր առաքելութիւնը, որ չի սահմանափակուիր ազգութեան պիտակով: Ծոցի երկիրներուն մէջ քրիստոնեայ ներկայութիւնը պատմութեան առանցքին կրցած է ցոյց տալ, թէ ունեցած է իր ներդրումը տարածաշրջանին մէջ գոյակեցութեան եւ համերաշխութեան տարածումին ի խնդիր: Միջհամայնքային եւ միջկրօնական երկխօսութիւնը եւ համակեցութիւնը կարեւոր գրաւական է

համերաշխութեան եւ խաղաղութեան համար: Այս իմաստով քրիստոնեայ եկեղեցին իր տարբեր համայնքներով, մշակոյթներով եւ լեզուներով լաւապէս կը սատարէ այս համակեցութեան առաքելութեան:

Քրիստոնեայ ներկայութիւնը եւ առաքելութիւնը կարելի չէ թիւի ու հաշուարկի արժէքափերով վերլուծել եւ անոր ներդրումը գնահատել: Քրիստոնեական առաքելութիւնը կեանք է, որ կը սատարէ մարդկային կեանքի մէջ արժէքի գնահատականը եւ կերտումը այս անհատական եւ հաւաքական իրականութիւններու համար: Այս իմաստով, Ծոցի երկիրներու քրիստոնեական առաքելութիւնը ունի մեծ ներդրում եւ նպաստ ի խնդիր համամարդկային կեանքի բարօրութեան: Անոր ներկայութիւնը կրնայ ծառայել որպէս մէկ լաւ օրինակ եւ ապրող վկայութիւն, ի խնդիր մարդկութեան կեանքի բարելաւումին եւ յառաջխաղացքին:

Գրականություն

- Al Tamimi 1982, *At-tabshir fi mintaqat-il-halijil-arabi: dirasah fi ittarikhil- ijtimia I wa issiyasi* (Evangelism in the Region of the Arabian Gulf: A study in Social and Political History). Kuwait: Sharikat-il-Kazimah li in-Nashrwa it-Tarjamahwa it-Tawzi, 270 p.
- Alian H. 2015, *Christians in Kuwait*, Kuwait, ZatSalasel, 350 p.
- Baumer C. 2006, *The Church of the East. An Illustrated History of Assyrian Christianity*, London, Tauris, 352 p.
- Beaucamp R.C. 2008, *L'evache Nestorian de Masmahigdansl'archipel d'al-Bahrayn*, BB 2 (1983): 186-18, in R.A. Carter, "Christianity in the Gulf during the First Centuries of Islam", *Arabian Archaeology and Epigraphy*, N 19, p. 71-108.
- Casper J. 2015, *Why Christianity is Surging in the Heart of Islam*, *Christianity Today*, N 59/7 (11 September, p. 19-23.
- Carter R.A. 2008, *Christianity in the Gulf during the Frst Centuries of Islam*, *Arabian Archaeology and Epigraphy*, N 19, p. 71-108.
- Fiey J.M. 1979, *Communautes syriaques en Iran et Irak des origins a 1552*, London, Variorum Reprints, 382 p.
- Graham C. 2009, *The Gulf Church, Migrant Workers and Muslim Society*, Extensive Survey Independently Printed, 210 p.
- Gulf Cooperation Council – German Federal Foreign Office (accessed August 31, 2012).
- Hawley D. 1970, *The Trucial States*, London, George and Unwin, 379 p.
- King G.R.D. 1997, *A Nestorian Monastic Settlement on the Island of Sir Bani Yas, Abu Dhabi, a Preliminary Report*, *Bulletin of the School of Oriental and African Studies*, N 60, p. 221-235.
- Potts D.T. 1990, *The Arabian Gulf in Antiquity: From Alexander to the Coming of Islam*, vol. 2, Oxford, Clarendon Press, 369 p.
- Sayegh F.AI. 2004, *Post 9/11 Changes in the Gulf: The Case of the UAE*, *Middle East Policy* 111, no. 2, p. 107-124.
- Scudder L. 1998, *The Arabian Mission's Story: In Search of Abraham's Other Son*. Grand Rapids, MI, Eerdmans, 578 p.
- Thompson A. 2011, *Christianity in the UAE: Culture and Heritage*. Dubai: Motivate Publishing, United Nations Group of Experts on Geographical names, Working Paper no 61, 23rd Session, Vienna, 28 March - 4 April 2006, 1 (accessed October 9, 2010).

**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՐԱՔԱԿԱՆ ԾՈՅԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ.
ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ, ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐՏԱՀՐԱԽԵՐՆԵՐ**

Հրայր Ճէպէճեան

Ամփոփում

Այս ուսումնասիրութիւնը կը ներկայացնէ Քրիստոնեայ ներկայութիւնը Արաքական Ծոցի տարածաշրջանի մէջ վաղ ժամանակներէն սկսած եւ մինչեւ այսօր: Կայ հանգրուանային զարգացումները մինչեւ իսլամական ներխուժումը տարածաշրջանին մէջ Քե 629՝ ապա իններորդ դարէն սկսեալ անոր անհետացումը եւ դարձեալ Քրիստոնեայ եկեղեցիի վերակազմակերպումը փորթուգալական եւ անգլիական գաղութատիրութիւններու ընթացքին եւ Ամերիկեան միտնարական կազմակերպութեան ծառայութիւնները 1894 տարուընէ սկսեալ: Ուսումնասիրութիւնը կընդգրկէ ներկայ օրերու իրավիճակը եւ քրիստոնէական ներկայութեան խմբաւորումները՝ բաղկացած տարբեր մշակոյթներէ եւ ազգութիւններէ եւ անոնց դերը եւ մասնակցութիւնը միջկրօնական եւ միջհամայնքային գոյակեցութեան եւ համերաշխութիւն եւ հանդուրժողականութիւն ստեղծելու տրամադրութեամբ եւ տեսլականով: Ուսումնասիրութիւնը նաեւ կ'ակնարկէ հայկական իրականութեանը մասին այս երկիրներու մէջ:

Բանալի բառեր՝ Քրիստոնեայ, Ծոցի երկիրներ, Պահրէյն, Քուէյթ, Օման, Քաթար, Արաքական Միացեալ Էմիրութիւններ:

**ХРИСТИАНСКОЕ ПРИСУТСТВИЕ В СТРАНАХ АРАБСКОГО ЗАЛИВА:
ИСТОРИЧЕСКОЕ РАЗВИТИЕ, МИССИЯ И ВЫЗОВЫ**

Грайр Чебебян

Резюме

Христианское присутствие в странах Аравийского/Персидского залива восходит к IV веку нашей эры и имеет место и в наши дни. Оно было активным на протяжении многих лет, до тех пор, пока ислам как религия не проник в регион в 629 году н.э. Однако, сохранив активность в исламскую эпоху – до IX века, оно полностью угасло. Следует отметить, что христианская церковь возродилась в регионе в период португальской и британской колонизации, а также благодаря усилиям Американской миссии начиная с 1894 года и далее. На сегодняшний день в регионе имеется множество этнических и церковных деноминаций, в том числе армянских. Межкультурные и межконфессиональные отношения помогают создать платформу для сотрудничества и взаимопонимания между различными общинами.

Ключевые слова – христианин, страны Персидского залива, Бахрейн, Кувейт, Оман, Катар, ОАЭ.

THE CHRISTIAN PRESENCE IN THE ARABIAN GULF: HISTORICAL DEVELOPMENT, MISSION AND CHALLENGES

Hrayr Jebejian

Abstract

This academic paper highlights the Christian presence in the Arabian/Persian Gulf starting with AD 4th century and until today. The Christian presence remained active over the years until Islam invaded the region in AD 629 and the whole peninsula embraced the new religion. The Christian presence remained active during the Islamic era and until the 9th century, when it disappeared completely. The study will show how the Christian presence was reorganized in the region during the Portuguese and the British colonial times and the important work that the Mission of Arabia provided as early as the year 1894 and onwards. The study also reflects on the Christian presence today and the many ethnic and church denominations that are living and ministering in the region. The paper highlights the importance of inter-cultural and the inter-faith relations and dialogue that is going on and how the latter is helping to create a platform of cooperation and understanding among different communities. The paper also reflects on the Armenian presence in the region.

Key words – The Christian, Persian Gulf countries, Bahrain, Kuwait, Oman, Qatar, UAE.

1395-Ը՝ ՈՐՊԵՍ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՅԱՇ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎ

Արսեն Արզումանյան

Քաղաքական գիտությունների դոկտոր
Ռումինիայի Հայոց Միություն, «Արարատ» ամսագիր
Էլ. հասցե՝ arzumanyan.arsen@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 10.02.2022, գրախոսվել է 09.02.2023, ընդունվել է տպագրության 11.04.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.1-37

Ներածություն

Հայկական գաղթօջախների շարքում ռումինական քաղաքներն իրենց ուրույն տեղն ունեն։ Հստակ հայտնի չէ, թե այսօրվա Ռումինիայի հյուսիս-արևելյան տարածաշրջանի հայ համայնքները որ դարում են ձևավորվել, սակայն առնվազն XIV դարում համայնքներ էին գործում մի շարք բնակավայրերում (Սուչավա, Սիրետ, Բոտոշան, Յաշ, Ռոման)։ Հայերի ներկայության խոսուն վկայությունը հայկական եկեղեցիների առկայությունն է այդ բնակավայրերում, որոնցից Յաշ քաղաքում հայկական եկեղեցու կառուցման տարեթվի վերաբերյալ երկար ժամանակ տեղի ունեցող քննարկումները չեն դադարել ռումինական և ռումինահայ գիտական շրջանակներում։ Բանն այն է, որ եկեղեցու ամենահին արձանագրության վրա կարմիրով ավելացված 1395-ի հավաստի լինելու վերաբերյալ բազմաթիվ փաստեր կան, որոնք նախկինում ամբողջապես չեն ուսումնասիրվել։ 1395-ը՝ որպես Յաշի հայկական եկեղեցու թվագրման տարեթիվ, շատ կարևոր է հենց այդ քաղաքի պատմության համար, քանի որ այդպիսով Յաշ քաղաքի գոյության ամենահին իրողությունը կապվում է հայկական եկեղեցու հետ։ Սույն աշխատանքի նպատակն է փաստարկել այն պնդումը, որ 1395-ը Յաշի հայկական եկեղեցու կառուցման իրական տարեթիվն է։

Յաշի հայկական եկեղեցու երկու արձանագրությունները

Ռումինիայի խոշորագույն քաղաքներից Յաշի հայկական հետքերի մեծ մասը քաղաքի կենտրոնում է՝ նախկին Հայկական թաղամասում, որի զարդը Սբ Աստվածածին եկեղեցին է։ Ըստ եկեղեցու պատի մեջ պարփակված արձանագրության՝ այն կառուցվել է 1395 թ. Տեր Հակոբի, մահուտի¹ Մարգարի և Գրիգորի կողմից.

«Ողորմութամբ Աստուծոյ հիմնարկեցաւ տաճար Սբ. Աստուածածնա ջանեով Տր Յակոբին մի Մարգարին և Գր... 1395»:

Դարերի ընթացքում տարբեր հանգամանքների բերումով եկեղեցին մեծ վնասներ է կրել և պարբերաբար վերակառուցվել։ Հետևաբար, 1395 թվա-

¹ Այսպես էին անվանում Երուսաղեմ ուխտի գնացած քրիստոնյաներին։

կանը, որպես եկեղեցու թվագրման տարի, կարող է վերաբերել բացառապես եկեղեցու հիմքերին կամ նույնիսկ այսօրվա եկեղեցու տեղում կառուցված ավելի հին եկեղեցուն: Ակնհայտ է, որ միայն հնագիտական աշխատանքները կարող են հստակ պարզել, թե բերված տարբերակներից որն է իրականությանը համապատասխանում:

Հատկանշական է, որ արձանագրության վերջում կարմիր գույնով նշված 1395-ը ակնհայտորեն ավելացվել է հետագայում, ինչը պատճառ է դարձել, որ ուսումնասիրողները քննեն եկեղեցու՝ 1395 թ. կառուցված լինելու ճշմարտացիությունը: Ռումինացի պատմաբաններ Դան Բըդըրըն (1893-1968) և Յոան Կապրոշու (1934-2021) արժանահավատ են համարում այն իրողությունը, որ կարմիրով «1395» ավելացնողները ճշմարտությունը խեղաթյուրելու նպատակ չեն ունեցել. *«Անվիճելի փաստ է, որ XIV դարի կեսերին Յաշում հաստատվել է հզոր հայկական գաղութ: [...] Ոչ միայն հավանական է, այլև պարզապես անհնար է, որ ինչ-որ վայրում հայերը դարերով մնային առանց եկեղեցու: [...] Արձանագրությանն ավելացնելը միտում է ունեցել ճշմարտությունն ամրապնդելու, այլ ոչ թե սուրն առաջ մղելու»*²:

Ռումինացի պատմաբան Ն.Ա. Բոգդանը (1858-1939), համադրելով ձեռքի տակ եղած բոլոր փաստերը, ընդունում է 1395 թ. կառուցման տարբերակը և մատնանշում. *«Չնայած ոմանք վիճարկում են այս հարցը՝ հայկական եկեղեցու կառուցման տարեթիվը՝ Բ.հ. 1395 թ., հստակ է, քանի որ չենք տեսնում և ոչ էլ հասկանում այն դրդապատճառը, թե ինչու պետք է եկեղեցու այն ժամանակվա հավատացյալները ջանք թափեին կեղծելու այսպիսի մի տարեթիվ, որովհետև, ինչպես ցույց են տալիս ժամանակագիրներն ու մեզ հայրնի փաստաթղթերն ու այլ աղբյուրները, ոչ մի իմաստ չկար, որ կստիպեին հայերին կատարել մի արարք, որից նրանք գործնականում ոչ մի օգուտ չէին ունենա»*³:

Որոշ փաստեր վերլուծելով՝ կտեսնենք, որ 1395 թվականը իրոք արժանահավատ է: Պարզապես պետք է համադրել ռումիններեն և հատկապես հայերեն աղբյուրները, ինչը չի հանդիպում մինչև հիմա այս հարցի վերաբերյալ հրապարակված որևէ ուսումնասիրության մեջ: Եկեղեցու հարավային մուտքի դռան վերևի հատվածում քարե մեծ արձանագրություն կա 1803 թ. եկեղեցին հիմնովին վերանորոգելու մասին, որտեղ որպես 1395 թ. եկեղեցու կառուցողներ են նշվում եկեղեցական Խաչիկը, սսեցի տեր Հակոբը, ջուղայեցի մահտեսի Մարգարը և մահտեսի Գրիգորը. *«1395. Շնորհոք եւ ողորմութեամբն Աստուծոյ հիմնարկեցաւ Եաշու Սուրբ Աստուածածնայ եկեղեցին ձեռամբ եկեղեցական Խաչգոյին եւ Սիսիեանցի Տէր Յակոբին, Զուղայեցի մահտեսի Մարգարին եւ մահտեսի Գրիգորին: ԹՎ. Հայոց ՊՃԽԴ: Եւ այժմ վերանորոգեցաւ ի ձեռն բարեպաշտօն իշխանաց եւ համայն ժողովրդոց աշխատանքօք և ծախիւքն ի թուականին Փրկչին 1803-ին»*:

² Բըդըրըն, Կապրոշու 1974, 45, 47:

³ Բոգդան 1913, 238:

Բացի այն հնագույն արձանագրությունից, որի վրա կարմիրով ավելացված էր «1395» թվականը՝ 1803 թ. դրությամբ գոյություն ուներ առնվազն մեկ այլ փաստ, որը վկայում էր եկեղեցու՝ 1395 թ. կառուցված լինելու մասին: Բանն այն է, որ 1803 թ. արձանագրության մեջ եկեղեցին կառուցողների վերաբերյալ ավելի շատ տվյալներ կան. նախ՝ ավելացված է եկեղեցական հաջիկի անունը, այնուհետև ավելացված են Տեր Հակոբի՝ Սիս քաղաքից և մահտեսի Մարգարի՝ Ջուղա քաղաքից լինելը, ինչպես նաև Գրիգորի անվան դիմաց նույնպես նշված է «մահտեսի»: Ուստի, հաշվի առնելով այն փաստը, որ եկեղեցին կառուցողների վերաբերյալ ավելի շատ տեղեկություն կա 1803 թ. արձանագրության մեջ՝ ակնհայտ է դառնում, որ դրա հեղինակը տիրապետել է գրավոր փոխանցված հստակ տեղեկության, քանի որ եկեղեցին վերանորոգողները, բնականաբար, անհիմն լրացուցիչ տվյալներ չէին կարող ավելացնել: Դժվար է ասել՝ այդ գրավոր տեղեկությունը քարե արձանագրություն է եղել, թե որևէ ձեռագիր կամ պաշտոնական փաստաթուղթ, սակայն մի բան հստակ է, որ այդպիսի մանրամասներով տեղեկությունը բանավոր կերպով չէր կարող փոխանցվել շուրջ 400 տարի:

Ինչ վերաբերում է կարմիրով «1395» ավելացված արձանագրությանը, ապա այս հարցում որոշակի հստակություն է մտցնում Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, պատմաբան, բանասեր և երաժշտագետ Մինաս Բժշկյանը (1777-1851), որը 1808 թ. սկսած՝ ճանապարհորդություն է կատարել արևելաեվրոպական հայ համայնքներով և չափազանց արժեքավոր տեղեկություններ հայտնել դրանց վերաբերյալ: Մասնավորապես, 1803 թ. եկեղեցու վերանորոգումից ընդամենը հինգ տարի անց Յաշով անցնելիս նա գրում է, որ եկեղեցին կառուցվել է 400 տարի առաջ, և ավելացնում. «Պատմեցին մեզ, թե ի ժամանակի նորոգութեան եկեղեցույն ի կամարի անդ գտին վեմ մի փորագրեալ 400ամօք առաջ»⁴: Այսինքն՝ խոսքն այն հնագույն քարե արձանագրության մասին է, որը, փաստորեն, գտնվել է եկեղեցու «կամարից այն կողմ» 1803 թ. վերանորոգման ընթացքում:

Հարց է ծագում՝ ե՞րբ է այդ քարե արձանագրության վրա կարմիրով ավելացվել 1395 թվականը: Ամենայն հավանականությամբ, հենց այդ՝ 1803 թ. էլ այն ավելացրել են՝ ըստ վերակառուցողների ունեցած հավաստի գրավոր տեղեկության, որի մասին խոսեցինք: Այս վարկածը շատ ավելի արժանահավատ է, քանի որ ավելի վաղ գրված լինելու դեպքում թվանշանների փոխարեն վստահաբար պետք է օգտագործվեին հայերեն մեծատառերն իրենց թվային արժեքներով և, սովորույթի համաձայն, ներկայացվեին՝ ըստ հայ եկեղեցական տոմարի, ինչպես մյուս հին եկեղեցական արձանագրությունների դեպքում:

⁴ Բժշկյան 1830, 207-208:

Դ. Բըղըրըուն և Յ. Կապրոշուն ընդգծում են, որ կարմիրով ավելացված թվականը չէր կարող գրված լինել համաձայն այն ժամանակ Մոլդովայում⁵ օգտագործվող օրացույցի, քանի որ 1395-ը կհամապատասխաներ մ.թ.ա. 4113-ին, ինչը լիովին անհեթեթ է⁶:

Այնուամենայնիվ, չպետք է անտեսել նաև այն ուշագրավ փաստը, որ արձանագրության քարն ամբողջական է, այսինքն՝ դրա վերջում տրամաբանորեն պետք է տարեթիվ լիներ: Միաժամանակ, հնարավոր է, որ այդ տարեթիվը ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով ջնջվել է կամ դժվարընթեռնելի դարձել: Չբացառենք նաև այն վարկածը, որ այն իսկապես չի եղել մինչև 1803 թ., իսկ կառուցման տարեթիվը՝ հայերեն տառերով, գրված է եղել մեկ այլ տեղում:

Համադրելով վերոնշյալ փաստերն ու փաստարկները՝ տրամաբանորեն հանգում ենք այն եզրակացության, որ 1395-ը եկեղեցու կառուցման ճշգրիտ տարեթիվն է, առավել ևս, որ այդ ժամանակահատվածի մի քանի փաստաթղթերում, որոնց մասին կխոսենք ստորև, նշվում է մոլդովական տարբեր քաղաքներում հայկական եկեղեցիների մասին, որոնցից մեկը, վստահաբար, գործել է Յաշում:

1395-ի՝ որպես հայկական եկեղեցու թվագրման տարեթվի հավաստի լինելու այլ փաստարկներ

Ինչպես գրում է XVIII դ. առաջին կեսին Կամենիցի (այսօրվա Ուկրաինայի Կամենեց-Պոդոլսկ քաղաքը) հայկական եկեղեցու ավագ քահանա Ստեփանոս Ստեփանյանը, 1398 թ. մարտի 25-ի Կամենիցի Սբ. Նիկողայոս եկեղեցու կառուցման մագաղաթյա կոնդակում հիշատակվում է Հովհաննես Եպիսկոպոսը՝ նշվելով որպես «արքեպիսկոպոս Ընուզաց⁷ և Օլախաց⁸ աշխարհի»⁹:

1401 թ. հուլիսի 30-ին արձակած հրովարտակով Ալեքսանդրու Բարի իշխանը Սուչավայում¹⁰ հիմնեց հայկական եպիսկոպոսություն, որին պետք է ենթարկվեին Մոլդովայի հայկական բոլոր եկեղեցիները: Մինչ այդ Մոլդովայի հայերը ենթարկվում էին Լվովի հայկական եպիսկոպոսությանը: Այսպես, 1384 թ. հրովարտակով Պետրու Մուշատ իշխանը (1375-1391) Մոլդովայի հայերին ենթարկում է Լվովի հայկական եպիսկոպոսությանը¹¹: Այնու-

⁵ Նախկին Մոլդովայի իշխանապետությունն ընդգրկում էր այսօրվա Ռումինիայի արևելյան ութ մարզ (այդ թվում՝ Յաշ մարզը), Մոլդովայի Հանրապետությունը և Ուկրաինայի որոշ տարածքներ:

⁶ Բըղըրըուն, Կապրոշու 1974, 47:

⁷ «Ընուզաց աշխարհը» Լվովն ու իր շրջաններն էին:

⁸ Հայերեն բազմաթիվ փաստաթղթերում Մոլդովան ունեցել է մի շարք անվանումներ. *Պուլ-տանիա կամ Բոգդանիա*՝ Բոգդան 1-ին իշխանի (1359-1365) անունով կամ *Օլախաց երկիր*, այսինքն՝ այն շրջանը, որտեղ ապրում էին օլախները կամ վլախները, որն ընդգրկում էր բոլոր ռումինաբնակ շրջանները:

⁹ Քաղուածք ժամանակագրութեան Տ. Սո. Ստեփանեան Աագերիցու Կամենիցայ 1896, 131, 134:

¹⁰ Սուչավան Մոլդովայի իշխանապետության մայրաքաղաքն էր 1388-1564 թթ.:

¹¹ Սիրունի 1936, 72 (հմմտ. Baracz 1869, 55):

ամենայնիվ, Մոլդովայում հայոց թեմի հաստատվելուց հետո էլ դեռ երկար ժամանակ զգացվում էր Լվովի ազդեցությունը:

Հարկ է նկատել, որ 1401 թ. հրովարտակը բացառիկ նշանակություն ունի ռումինահայ համայնքի պատմության մեջ: Ահա մեկ հատված այդ հրովարտակից. «Այսպիսով, մենք հանձնեցինք հայկական եկեղեցիներն ու դրանց քահանաներին հայ եպիսկոպոս Օհանեսին [Հովհաննեսին]: Մեր ողջ երկրում նա իշխանություն կունենա հայերի վրա իր եպիսկոպոսական իրավունքով: Նրան [եպիսկոպոսական] աթոռ տվեցինք Սուչավայում՝ մեր բերդաքաղաքում: Հայերի՝ նրան պատվելը կհամարվի պատվել մեզ մեր երկրում՝ Մոլդովայում, իսկ ով չի լսի նրան, մենք կպատժենք նրա [Հովհաննեսի] ձեռքով»¹²:

Ամենայն հավանականությամբ, Մոլդովայում հայ հոգևորականները գործունեություն են ծավալել շատ ավելի վաղ ժամանակներից՝ գրեթե համայնքների ձևավորմանը զուգահեռ: Ի դեպ, այս փաստաթուղթը գտել էր ռումինացի պատմաբան և բանասեր Պետրե Պանաիտեսկուն (1900-1967) Լվովի հայոց եպիսկոպոսարանի արխիվներում և 1934 թ. այն հրապարակել:

Հաջորդ կարևոր փաստաթուղթը 1409 թ. հունիսի 26-ին Հակոբ Գ Սսեցի կաթողիկոսի (1404-1411) կոնդակն է, որում նշվում են Հովհաննես եպիսկոպոսի անունը և, ի թիվս այլ բնակավայրերի, Սուչավայի (Չեչով), Սիրետի (Սերաթ) և Մոլդովայի (Վախագ երկիր) այլ հայկական թեմեր¹³:

Այս համատեքստում առանձնահատուկ ուշադրության են արժանի մինչև 1395-ը գրված երկու փաստաթուղթ, որոնցում խոսվում է Հովհաննես եպիսկոպոսի և Մոլդովայում հայկական եկեղեցիների գոյության մասին: Ըստ 1379 թ. փաստաթղթի՝ Հովհաննես եպիսկոպոսն ուներ «Լեհաստանի և Մոլդովայի հայերի եպիսկոպոս» և «Ռուսական երկրի (Ուկրաինա) և Մոլդովական երկրի արքեպիսկոպոս» տիտղոսները¹⁴: 1388 թ. Թեոդորոս Բ Կիլիկեցի կաթողիկոսի (1382-1392) կոնդակում գրված էին ճիշտ նույն տեղանունները, որոնք երկու տասնամյակ անց նշվելու էին Հակոբ Գ Սսեցու կոնդակում¹⁵:

Այսպիսով, վերոնշյալ փաստաթղթերում ուղղակիորեն խոսվում է Մոլդովայում մի քանի հայկական եկեղեցիների գոյության մասին: Առանցքային նշանակություն ունի այն փաստը, որ 1388 և 1409 թթ. կոնդակներում նշվում են «Սիրետի, Սուչավայի և Մոլդովացիների երկրի» եկեղեցիները: Դա նշանակում է, որ բացի այդ երկու քաղաքներից՝ ևս մի քանի հայկական եկեղեցի է եղել Մոլդովայի տարբեր բնակավայրերում, իսկ ըստ մեզ հասած տե-

¹² Պանաիտեսկու 1934, 45-46:

¹³ «Յակովբ Գ Կաթողիկոս. – ՊԾԸ = 1410. Յունիս 26.» 1896, 221: Վերնագրում սխալմամբ գրված է 1410 թ., որը հետագայում օգտագործել են նաև այլ ուսումնասիրողներ: Իրականում պետք է լինի 1409. նախ՝ ՊԾԸ = 858+551=1409, ապա նաև կոնդակի վերջում (էջ 224) ոչ միայն նշվում է «Հայոց ՊԾԸ ամին», այլև «ի մարմնով ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, Ռ-ԴԺԺ ամին: Եւ ի սրբոյն Գրիգորէ՝ ՌճԹ ամին»: Երկու դեպքում էլ՝ Ռ-ԴԺԹ թե ՌճԹ, ստացվում է 1409 թվականը:

¹⁴ Ժամկոչյան 2015, 256:

¹⁵ Կոնդակ Թեոդորոսի կաթողիկոսի 1896, 9:

ղեկությունների՝ այդ եկեղեցիները պետք է լինեին առնվազն Բոտոշանում, Ռոմանում և Յաշում: Ավելին, 1379 և 1388 թթ. փաստաթղթերն այս համատեքստում ուսումնասիրելու շնորհիվ կարող ենք եզրակացնել, որ Յաշում հայկական եկեղեցի եղել է նույնիսկ մինչև 1395 թ.:

Սույն հինգ փաստաթղթերը, բնականաբար, նույնպես կարևոր ապացույց են այն փաստարկի, որ առնվազն XIV դ. վերջից Յաշում արդեն իսկ գոյություն ուներ հայկական եկեղեցի: Ընդ որում՝ այդ պնդումն ապացուցող փաստերը սրանով չեն ավարտվում:

1351 թ. Ղրիմում Կարապետ քահանայի ձեռքով գրված (ի հիշատակ Գրիգոր սարկավազի ծնողների ընդօրինակած Ավետարանի երկրորդ հիշատակարանում ներկայացվող) ծանոթագրությունից տեղեկանում ենք, որ 1451 թ. հայ եղբայրներ Հակոբշան և Առյուծը այն նվիրել են Յաշի հայկական եկեղեցուն. «Յիշեցէք զվերջին ստացող սուրբ Աւետարանիս զՅակոբշան, և զեղբայրն իւր զԱռիւծն, և զծնողսն իւրեանց, որ ստացան զսա ի հալալ արդեանց իւրեանց, և ետուն յիշատակ ի յԱսն (Եաշ), Ս. Աստուածածին. և մի՛ որ իշխեսցէ հանել զսուրբ աւետարանս ի Ս. Աստուածածին (դրանէն), ոչ իմոց և ոչ օտարաց...: Գր. ի Թվ. Զ»:

Ռումինացի պատմաբան Դան Սիմոնեսկուն (1902-1993) գրում է, որ եղբայրներն այդպիսի նվեր չէին անի Յաշի հայկական եկեղեցուն, եթե այն բավական հայտնի չլիներ և չվայելեր իրենց վստահությունն ու հարգանքը. «[Եկեղեցին] չէր կարող ունենալ այս համբավը, եթե ընդունենք դրա կառուցումը հենց 1451 թվականին: Հետևաբար, այն պետք է ունենար մի քանի տասնամյակի հնություն, մշակութային և կրոնական ավանդույթ, որպեսզի վստահեին իրենց [եղբայրների] նվերի օգտագործումն ու պահպանումը: 50 տարվա ժամանակահատվածը (1395-ին միայն հիմքն էր դրվել) բավական էր հայ հավաքացյալների աչքերում այս հարցում հանգիստ լինելու համար, որպեսզի նրանք կարողանան իրենց նվերը մատուցել եկեղեցուն»¹⁶:

Այդ Ավետարանը (578 էջ, չափսը՝ 28x17x8 սմ) դարեր շարունակ գտնվել է Յաշում և միայն XX դարում է տեղափոխվել Բուխարեստ ու մինչ օրս գտնվում է քաղաքի եկեղեցուն կից «Վիկտորյա և Հովսեփի Դուղյան» գրադարան-թանգարանում: Պատմաբան Լևոն Բաբայանը նշում է, որ 1900-ականների վերջին¹⁷ իր այցելության ժամանակ Ավետարանը գտնվել է Յաշի Ազգային հոգաբարձության անդամ Գրիգոր Բույուկլիուի (նաև՝ Բըրլյյան կամ Բույուկլյան) մոտ: «Մենք չկարողացանք անձամբ տեսնել այդ թանկարժեք Ավետարանը Բույուկլիուի՝ քաղաքից բացակա լինելու պատճառով», - գրում է Բաբայանը¹⁸:

Նույն ժամանակահատվածում Յաշի հայկական եկեղեցին ևս մեկ արժեքավոր նվեր է ստացել՝ եպիսկոպոս Նիկողայոսի (Նիկոֆոս կամ Նիկու-

¹⁶ Սիմոնեսկու 1941, 347-348:

¹⁷ Լ. Բաբայանը գրում է, որ Բույուկլիայի և Մոլդովայի հայաբնակ վայրերն այցելել և ուսումնասիրություններ է կատարել 1907 և 1909 թթ. (Բաբայան 1911, 147):

¹⁸ Բաբայան 1911, 226:

լաե) ընդօրինակած մի «Ճաշոց», որը նա գրել է 1459-1460 թթ. Չետատեա Ալըը քաղաքում և նվիրել Յաշի Սբ Աստվածածին եկեղեցուն: Նրան օգնել են Վարդապետ Հակոբը, որը ձևավորել է թուղթը, Հակոբ քահանան, որը տողերն է գծել և Վարդապետ Ստեփանոսը, որը ծաղկել է «Ճաշոցը»: Ահա այդ «Ճաշոցի» հիշատակարանից երկու կարճ հատված. «Յիշեսցիք և զերկու եղբարսն՝ զՊեպրոս և զՊաղոս՝ իրեանց ընտանեալք, որ կերակրալք և ընթելեալք սպասատրեցին և ասացէք Աստուած-ողորմի...» (Հիշեք նաև երկու եղբայրներին՝ Պետրոսին և Պողոսին, իրենց ընտանիքների հետ, որոնք մեզ ապահովեցին ուտելիքով և խմիչքով, և աղոթեք, որ Աստված ողորմի նրանց):

*«Իսկ աւարտումն եղև սըմին [Եվ սրա ավարտը եղավ]
Առ ի կողմանս հիւսիսային [Հյուսիսային կողմերում],
Յերկիր Սպեւիան վոյվոդային [Շպեֆան իշխանի երկրում]
Եւ յԱխքերման քաղաք նորին [Նրա Աքքերման¹⁹ քաղաքում]:
Իսկ ի տումար Մեծաց Հային [Հայոց Մեծ տումարի]
Իննհարիւր ինն թվին [Ինը հարյուր ինը թվին],
Եւ ի յամսեանն յունվարի [Եվ հունվար ամսվա]*

Յերկուան եղև աւարտ սորին... [Երկուսին եղավ ավարտը սրա]»²⁰:

Ռումինահայ պատմաբան, հայրենադարձված Սուրեն Քոլանջյանը (1923-2006) գրում է, որ Ռումինիայի հայ համայնքը, ի թիվս 41 այլ ձեռագրերի, այս Ճաշոցը նվիրել է Երևանի Մատենադարանին²¹: ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի կողմից հրապարակված հիշատակարանների համապատասխան հատորում ներկայացված ծանոթագրության համաձայն՝ այս նվիրատվությունը կատարվել է 1954 թ.²²:

1987 թ. հոկտեմբերի 1-ին Յաշի Ա.Դ. Քսենոպոլի անվան պատմության և հնագիտության ինստիտուտին ուղղած նամակում Ս. Քոլանջյանը, բացի վերոնշյալ «Ճաշոցից», խոսում է եկեղեցու մեկ այլ եզակի արձանագրությունից և նշում, որ անգամ մեծ հայագետ, ռումինահայ համայնքի պատմությունն ուսումնասիրած Հակոբ Զոլոյան Սիրունին (1890-1973) և Յաշի պատմությունը մանրամասն ուսումնասիրած ռումինացի պատմաբաններ Ն.Ա. Բոգդանը և Յ. Կապրոշուն չեն գրել այդ մասին:

Խոսքը եկեղեցու հարավային գավթի պատի մեջ տեղադրված 1456 թ. արձանագրության մասին է՝ կենտրոնում մեծ խաչով, որի տակ գրված է. «Սուրբ Նշանս Բարեխոսե Հակոբ Նահատակին», իսկ խաչի երկու կողմերում՝ «Թվ.» և «ՋԵ», այսինքն՝ 905 (=1456) թվական: Քոլանջյանը նշում է, որ Յաշի հայտնի հայազգի Բույուկլիու ընտանիքից մնացած թղթերում, որոնք սրբությամբ պահում է ընտանիքի վերջին ժառանգներից ֆրանսերենի մասնագետ տիկին Մ. Դելեանուն, գտել է Գրիգոր Մ. Բույուկլիուի կողմից

¹⁹ Չետատեա Ալըը քաղաքի նախկին անվանումը:

²⁰ Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1451-1480 թթ.) 1958, 150-152:

²¹ Քոլանջյան 1956, 225:

²² Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1451-1480 թթ.) 1958, 152:

արված մի գրառում՝ «ԶԵ = 1456»²³: Տեսականորեն, այդ արձանագրությունը կարող է վերաբերել եկեղեցու հիմնադիրներից տեր Հակոբին, որը կարող էր երիտասարդ տարիքում նշանակված լինել Յաշի հայկական եկեղեցու քահանա և այնտեղ ծառայած լինել ավելի քան վեց տասնամյակ: Առանց այլ փաստերի՝ դժվար է պնդել այդ վարկածը. մեզ մնում է բավարարվել այն իրողությամբ, որ այդ արժեքավոր արձանագրությունն այսօր գտնվում է նշված տեղում և հասանելի է այցելուներին:

Այս ամենով հանդերձ, առաջին հայացքից մի փոքր տարօրինակ կարող է թվալ XVI դ. մի փաստաթուղթ: 1467 թ. Արիստակես Բ Աթոռակալ կաթողիկոսը (1465-1469) եպիսկոպոս է նշանակում Խաչատուրին, նստավայրը՝ Լվով, և նրա իրավասությանն է հանձնում մի քանի բնակավայր, այդ թվում՝ Սուչավան («Սեչով»), Սիրետը («Սերաթ») և Բոտոշանը («Պոթիշան»)՝²⁴: Նշված քաղաքների շարքում Յաշը բացակայում է, սակայն, ամենայն հավանականությամբ, այդ ժամանակ Յաշն առանձին եպիսկոպոս ուներ, ինչպես հետագայում է եղել մի քանի անգամ: Չի բացառվում նաև այն, որ քաղաքի անվան բացակայությունը պայմանավորված լիներ այլ հանգամանքներով, առավել ևս, որ այդ ցուցակում Ռուման քաղաքը նույնպես բացակայում է, մինչդեռ այնտեղ հայկական մեծ համայնք կար և գործող հայկական եկեղեցի:

Ռումինական պատմագրության մեջ Յաշ քաղաքի վերաբերյալ ամենահին գրավոր վկայությունը 1408 թ. հոկտեմբերի 6-ի փաստաթուղթն է, որով Ալեքսանդրու Բարի իշխանը բարելավեց առևտրային պայմանները Լվովի վաճառականների համար՝ նրանց իրավիրելով Յաշ և մոլդովական այլ քաղաքներ²⁵: Ռումինացի պատմաբան և թանգարանագետ Սորին Իֆտիմին (1965-2021), վկայակոչելով ռումինացի հայտնի պատմաբան և հայագետ Ն. Յորգայի (1871-1940) ուսումնասիրությունը Լվովի և ռումինական իշխանապետությունների միջև առևտրի վերաբերյալ, պնդում է, որ այդ փաստաթուղթը կապված է Մոլդովայի և Լեհաստանի հայկական համայնքների հետ. *«Թվացյալ, այդ արդյունությունն արվել էր լեհ վաճառականների համար: Իրականում, սակայն, այդ արդյունությունից օգտվողները հիմնականում Լվովի հայ վաճառականներն էին, որոնք ստեղծել էին շատ բարեկեցիկ քաղաքային համայնք և գրեթե մենաշնորհ ունեին Արևելքի հետ Լեհաստանի առևտրային գործերում»*²⁶:

Այնուամենայնիվ, ռումինական գիտական շրջանակներում տարածված է այն պնդումը, որ քաղաքն ավելի հին է, և որպես ապացույց է բերվում 1395 թ. կառուցված հայկական եկեղեցին:

²³ Անդրոնիկ 1992, 6:

²⁴ Արիստակես Կաթողիկոս 1896, 225: Չնայած վերնագրում նշված «1457-1460» տարեթվերին՝ հայկական պատմագրությունում, որպես կոնդակի տարեթիվ, օգտագործվում է միայն 1467-ը:

²⁵ Կապրոշու, Ջահարյուկ 1999, 1:

²⁶ Իֆտիմի 2014, 255:

Յաշի Սբ Աստվածածին եկեղեցին 2015 թ. ընդգրկվել է Յաշի մարզի պատմական հուշարձանների ցանկում և ունի IS-II-m-B-03713 կոդը, ըստ որի՝ եկեղեցին կառուցված է 1803 թ.: Այդուհանդերձ, անվիճելի է այն փաստը, որ եկեղեցին շատ ավելի հին է: Թեև հստակ չգիտենք, թե եկեղեցու այսօրվա կառույցը որքանով է առնչվում 1395 թ. շենքի հետ, սակայն կարող ենք փաստել, որ նշված 1803 թվականը ոչ մի դեպքում չպետք է վերաբերի եկեղեցու կառուցմանը, այլ՝ ավելի հինը վերանորոգելուն, ինչպես գրված է 1803 թ. արձանագրության մեջ (որը պարունակում է նաև 1395 թվականը):

Ռումինացի հայտնի պատմաբան և հոգևորական Մելքիսեդեկ Շտեֆընսկուն (1823-1892), որը 1879-1892 թթ. եղել է Ռումանի եպիսկոպոսը, 1882 թ. Մոլդովայի հայկական եկեղեցիների արձանագրություններին վերաբերող իր հոդվածում գրում է, որ հայերը, որպես առևտրականներ, մշտապես հաստատվել են առևտրական նշանակություն ունեցող քաղաքներում. *«Եթե հայերը հաստատվել են Յաշում XIV դարի վերջում ու այնպեղ եկեղեցի կառուցել, ապա այդ վայրում արդեն իսկ պետք է գոյություն ունենար առևտրային նշանակության առնվազն մի փոքր քաղաք»*²⁷:

Այս պնդումը բավական արժանահավատ է և տրամաբանական: Նշանակում է՝ XIV դարում Յաշում պետք է նաև ռումինական եկեղեցի լիներ: Չի բացառվում, որ մի օր ի հայտ կգա արխիվային մի փաստաթուղթ կամ արձանագրություն, որը կհաստատի ռումինական կամ հայկական եկեղեցու գոյությունը մինչև 1395 թ.:

Եզրակացություններ

Այսպիսով, 1395-ը՝ որպես Յաշի հայկական եկեղեցու թվագրման տարեթիվ, ապացուցվում է՝

ա) եկեղեցու երկու արձանագրությունների համեմատությամբ, որը ցույց է տալիս, որ 1803 թ. եկեղեցու վերանորոգողները հստակ տվյալներ են ունեցել 1395 թ. եկեղեցու կառուցման և դրա հիմնադիրների մասին,

բ) 1379, 1388, 1398 և 1409 թթ. կոնդակներով, որոնցում խոսվում է Մոլդովայում հայկական եկեղեցիների գոյության մասին: Ավելին, դրանցից երկուսից եզրակացնում ենք, որ, բացի Սուջավայի և Սիրետի եկեղեցիներից, մի քանի հայկական եկեղեցիներ կային նաև Մոլդովայի այլ բնակավայրերում, որոնք կարող էին լինել առնվազն Բոտոշանը, Ռոմանը և Յաշը,

գ) Սուջավայում հայկական եպիսկոպոսության հիմնումով՝ ըստ Ալեքսանդր Բարի իշխանի 1401 թ. հրովարտակի, որում նշվում է Մոլդովայում մի քանի հայկական եկեղեցիների գոյությունը,

դ) Թանկարժեք Ավետարանի և Ճաշոցի՝ համապատասխանաբար 1451 և 1460 թթ. նվիրատվություններով Յաշի հայկական եկեղեցուն, ինչպես նաև

²⁷ Շտեֆընսկուն 1882, 71:

1456 թ. մի արձանագրության գոյությամբ՝ նվիրված Հակոբ նահատակին, որը, հավանաբար, Ս. Հակոբ եկեղեցու նույնանուն հիմնադիրն է (տե՛ր Հակոբ),

ե) Հայ պատմիչ Մ. Բժշկյանի 1808 թ. վկայություններով. նա առաջինն է խոսել հնագույն արձանագրության հայտնաբերման մասին: Այս թեմայով ռումինացի անվանի պատմիչների աշխատությունները ևս արժեքավոր են, որոնք ընդունում են Յաշում հայկական եկեղեցու առկայությունը XIV դարում և, ընդհանուր առմամբ, բավական հավանական են համարում, որ եկեղեցին կառուցվել է 1395 թ.:

Գրականություն

Անդրոնիկ Ա. 1992, Յաշի հայկական եկեղեցու 1456 թ. արձանագրությունը, Բուխարեստ, Արարատ, N 7, էջ 6:

Արիստակես Կաթողիկոս – 1457-1460 (Ձեռնադրեալ եպիսկոպոս զԽաչատուր վարդապետ՝ առաքել առ Լեւհահայս) 1896, Կամենից, տարեգիրք, Վենետիկ, Ս. Ղազար, էջ 225-227:

Բաբայեան Լ. 1911, Հայերը Մոլդավիայում եւ Բուքովինայում, Թիֆլիս, «Էլեկտրաշարժ», 227 էջ: Բըղըրըու Դ., Կապրոշու Յ. 1974, Հին շինությունների Յաշը (մինչև 1821 թ.), Յաշ, «Դեմիորգ», 404 էջ:

Բժշկեան Մ. 1830, Ճանապարհորդութիւն ի Լեւհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, Ս. Ղազար, 424 էջ:

Բոգդան Ն.Ա. 1913, Յաշ քաղաքը (պատմական և սոցիալական մենագրություն), Յաշ, «Տեխնոպրես», 525 էջ:

Ժամկոչյան Է. 2015, Բուխարեստի հայկական տաճարը, Բուխարեստ, «Արարատ», 651 էջ:

Իֆտիմի Ս. 2014, Ուսումնասիրություններ Յաշի եկեղեցիների պատմության վերաբերյալ, Յաշ, «Դոքսոլոցիա», 324 էջ:

Կապրոշու Յ., Ջահարյուկ Պ. 1999, Յաշ քաղաքի պատմությանը վերաբերող փաստաթղթեր, հ. 1, Յաշ, «Դոսոֆտեյ», 703 էջ:

Կոնդակ Թեոդորոսի կաթողիկոսի 1896, Կամենից, տարեգիրք, Վենետիկ, Ս. Ղազար, էջ 9-13: Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1451-1480 թթ.) 1958, հ. Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 150-152:

Յակովբ Գ Կաթողիկոս. – ՊԾԸ = 1410. Յունիս 26 1896, Կամենից, տարեգիրք, Վենետիկ, Ս. Ղազար, էջ 221-224:

Շտեֆընեսկու Մ. 1882, Մոլդովայի հայկական եկեղեցիների արձանագրությունները, Ռումինական ակադեմիայի տարեգրություն, հ. 5, Բուխարեստ, Ռումինական ակադեմիա, էջ 67-71:

Պանաիտեսկու Պ.Պ. 1934, Ալեքսանդրու Բարիի հրովարտակը Սուչավայի հայկական եպիսկոպոսության մասին (1401 թ. հուլիսի 30), Ռումինական պատմական հանդես, N 4, Բուխարեստ, էջ 44-56:

Սիմոնեսկու Դ. 1941, Յաշի հայկական Ավետարանը (1351), Բուխարեստ, Կարպաց, «Անի», էջ 337-348:

Սիրունի Հ.Ջ. 1936, Հայերի ժամանակագրությունը ռումինական իշխանապետություններում. մաս 2-րդ (14-րդ դար), հ. 2, ապրիլ, Բուխարեստ, Կարպաց, «Անի», էջ 65-74:

Քաղուաճք ժամանակագրութեան Տ. Ստ. Ստեփանեան աւագերիցու Կամենիցայ 1896, Ալիշան Ղ. (խմբ.), Կամենից, տարեգիրք, Վենետիկ, Ս. Ղազար, էջ 131-146:

Քոլանջյան Ս. 1956, Ռումինահայերի արժեքավոր նվերը Հայաստանի Մատենադարանին, Բանբեր Մատենադարանի, N 3, Երևան, էջ 219-230:

1395-Ը՝ ՈՐՊԵՍ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՅԱՇ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎ

Արսեն Արզումանյան

Ամփոփում

Արդյո՞ք *բայակազմություն* ասելով՝ հեղինակը հասկանում է *բառակազմություն*, ասել է թե՛ արդի հայերենի կրավորական սեռը, մի կողմից, բառակազմական (դերիվացիոն) կարգ է, քանի որ *-վ-* ածանցով է բաղադրվում, իսկ ածանցները բառակազմական ձևույթներ են և, մյուս կողմից՝ շարահյուսական, քանի որ իր արտահայտությունն է գտնում բառակապակցության և նախադասության մեջ: Սակայն, ինչպես հայտնի է, արևելահայ քերականագիտությունը բայի սեռը ավանդաբար դիտում է որպես զուտ ձևաբանական կարգ, այն դեպքում, երբ, ինչպես տեսնում ենք, գործ չունենք ոչ մի կարգի ձևակազմության հետ²⁴: Այս ամենով հանդերձ՝ զարմանալին այն է, որ Է. Աղայանն ածանցների մասին խոսելիս հաճախ կիրառում է կա՛մ դրանց չեզոք բնորոշումը՝ *ձևույթ*, կա՛մ օգտագործում *մասնիկ* անվանումը՝ կրկնելով նախորդների «փորձը», ինչը, կարծում ենք, միանգամայն մերժելի է:

Է. Աղայանի գործածած *բայակազմություն* եզրույթը, եթե նույնիսկ ոչ ամբողջությամբ է *բառակազմության* հետ առնչվում, ապա անգամ այդ պարագային հեղինակը հստակորեն նշում է. «...կրավորական սեռի քերականական իմաստն արտահայտվում է *ոչ թե ձևակազմության* (ընդգծումը մերն է – Ա.Մ.), այլ բայակազմության միջոցով»²⁵: Այսինքն՝ լեզվաբանը կրավորական բայերը բառակազմությամբ կերտված բայեր է դիտում:

*-վ-*ով կազմված բայն անշուշտ նոր բառ է, քանի որ ունի բառային ինքնուրույն իմաստ, անկախ գործածություն և շարահյուսական գործառույթ բառակապակցության կամ նախադասության մեջ²⁶:

Ասվածն ապացուցելու համար դիտարկենք հետևյալ նախադասությունները՝ *Բանակը հաղթեց* և *Բանակը հաղթվեց*: Մի՞թե այս երկու ասույթներում *հաղթեց* և *հաղթվեց* նույն բառիմաստն ունեն: Կամ՝ *Հանցագործն արդարացավ* և *Հանցագործն արդարացվեց*: Անշուշտ, ո՛չ, քանի որ *բանակը* և *հանցագործը* ենթակաների կատարած գործողությունները համեմատվող օրինակներում տարբեր են: Նշանակում է, որ դրանք տարբեր բառեր են և ոչ թե նույն բայի տարբեր ձևերը:

²³ Աղայան 1967, 318-319:

²⁴ Հմմտ. Ներսիսյան 2005, 68-46:

²⁵ Աղայան 1967, 319:

²⁶ Հմմտ. Պետրոսյան, Գալստյան, Ղարաբյուրյան 1975, «Բառ» բառահոդված, 52:

Նույնն է և պատճառական բայերի պարագային (հմմտ. *Տղան պարեց – Տղան պարեցրեց/պարել տվեց*):

Այն պատճառաբանությունը, թե քերականական կարգն ինքնին ենթադրում է բառաձևերի առկայություն, բնական հարց է առաջացնում. մի՞թե բայի կերպը քերականական կարգ չէ (անկախ լեզվաբանի ունեցած կերպի ըմբռնումից), որը, ըստ է. Աղայանի, բառակազմությամբ է առաջանում: Եթե այդպես է, ուրեմն ինչո՞ւ սեռի կարգը չի կարող բառակազմությամբ ստեղծվել:

Թերևս արժե զուգահեռ անցկացնել ուրիշ լեզուների հետ, որտեղ սեռը բառակազմական (դերիվացիոն) կարգ է և ոչ թե ձևաբանական, ինչպես ռուսերենում (развлекать – развлекаться), որտեղ նույնպես կրավորական սեռի բայը բառակազմական արտահայտություն ունի. ստեղծվում է սեռանիշ վերջածանցով:

Սոսկածանցների առնչությամբ, կարծում ենք, միանգամայն ընդունելի է Ա. Աբրահամյանի մոտեցումը (որին հետևում է Նվարդ Պառնասյանը²⁷), ըստ որի՝ -ն-, -չ-ն բայակազմական (*հաս-հասնել, փախ-փախչել*), իսկ -են-, -ան-ը բաղադրական-բառակազմական ածանցներ են (*վախ-վախենալ, քար-քարանալ*):

Այսպես կոչված բազմապատկական ածանցները նույնպես նոր բառեր են ստեղծում, ոչ թե բառաձևեր: Այդ ածանցների միջոցով չի արտահայտվում գործողության կատարման բազմապատկական կերպ, քանի որ ինչպես Գ. Զահուկյանն է մեկնաբանում, կերպն ունի երկու դրսևորում միայն՝ կատարյալ-անկատար²⁸: Կերպը քերականական կարգ է և բառակազմության հետ ուղղակի առնչություն չունի: Միակին և բազմակին, միակատարն ու բազմակատարը տարբեր գործողություններ են, հետևաբար՝ նոր բառեր: Դա երևում է և՛ ածանցական (*գլուխը կոտրել* և ոչ՝ *կոտրարել, մալը ծակել* և ոչ՝ *ծակոտել*), և՛ արմատի կրկնությամբ կազմությունների մեջ (*Մարգիկը վազեց* և ոչ՝ *վազվզեց, Գինին թափեց* և ոչ՝ *թափթփեց*): Օրինակներից պարզ է դառնում, որ այդ բայերը տարբեր բառեր են, ունեն տարբեր բառիմաստներ և բառաձևային հարաբերության մեջ չեն կարող գտնվել:

Եզրակացություններ

Հետազոտելով քննության առնված թեման և համադրելով մասնագիտական առկա մոտեցումները՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

ա. «Բաղադրական» անվանումը, որ համապատասխանում է սոսկածանցներին, ավելի նպատակահարմար և բնորոշիչ է, քանի որ այս տեսակի ածանցներն առաջին հերթին ունեն բաղադրական գործառույթ:

բ. Արևելահայ քերականագիտության մեջ իշխող տեսակետի համաձայն՝ կրավորական -վ- ածանցը բառակազմական ձևույթ չի համարվում այն հիմնական պատճառաբանությամբ, թե քերականական կարգն ինքնին ենթադրում է բառաձևերի առկայություն: Սակայն որոշ դեպքերում, խախտելով այդ նույն սկզբունքը, արևելահայ լեզվաբանները կերպը, որ քերականական

²⁷ Հմմտ. Աբրահամյան, Պառնասյան, Օհանյան 1974, 251-258:

²⁸ Զահուկյան 1969, 229-237, հմմտ. Զահուկյան 1974, 249-256:

կարգ է, համարում են բառակազմությամբ առաջացած: Կարելի է հետևություն անել, որ հիշյալ պատճառաբանությունը միանշանակ չէ. կրավորական սեռի բայը բառակազմական արտահայտություն ունի, քանի որ կազմվում է սեռանիշ ածանցով:

գ. Այսպես կոչված սոսկական, բազմապատկական, պատճառական և կրավորական ածանցներով կազմված բայերը նոր բառեր են՝ բառիմաստի փոփոխությամբ՝ հավելումով, հետևաբար բայաժանցները բառակազմական ձևույթներ են:

Գրականություն

Աբեղյան Մ.Խ. 1965, Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք», 699 էջ:

Աղայան Է.Բ. 1967, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 401 էջ:

Աբրահամյան Ա.Ա. 1953, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 441 էջ:

Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ. 1974, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ձևաբանություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 588 էջ:

Հարությունյան Հ.Ա. 1983, Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, ԵՊՀ հրատ., 336 էջ:

Մկրեան Ա. 2022, Դերբայ. բա՞ռ, թե՞ բառածեւ, Հայկազեան հայագիտական հանդէս, N 42/2, Պէյրոս, էջ 199-210:

Ներսիսյան Բ. 2005 (հոդվածի հեղինակի ազգանունը հրատարակչական սխալի հետևանքով տպագրվել է *Ասապրյան*), Մեկ անգամ ևս բայասեռի կարգի մասին, Կանթեղ 3: Գիտական հոդվածների ժողովածու, գք. 3(24), Երևան, էջ 68-76:

Պետրոսյան Հ.Զ., Գալստյան Ս.Ա., Ղարաբյուրյան Թ.Ա. 1975, Լեզվաբանական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 316 էջ:

Պետրոսյան Հ.Զ. 1987, Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան», 686 էջ:

Ջահուկյան Գ.Բ. 1969, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, «Միտք», 292 էջ:

Ջահուկյան Գ.Բ. 1974, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 588 էջ:

ԲԱՅԱԺԱՆՑՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՁԵՎՈՒՅԹՆԵՐ

Բագրատ Ներսիսյան, Աշոտ Մկրյան

Ամփոփում

Արևելահայ քերականագիտության մեջ ածանցավոր բայերի վերաբերյալ մեկնաբանությունները բավական հակասական են. բայաժանցները դիտարկվում են մե՛րթ բառակազմության, մե՛րթ ձևակազմության շրջանակներում (արևելահայ լեզվաբանները բայաժանցների մասին խոսելիս հաճախ կիրառում են կա՛մ դրանց չեզոք բնորոշումը՝ «ձևույթ», կա՛մ օգտագործում են «մասնիկ» անվանումը՝ չիստակեցնելով՝ բայաժանցները բառակազմակա՞ն, թե՞ ձևակազմական միավորներ են): Այդ իսկ պատճառով խնդիր է առաջանում բառի և բառածկի որոշման ու տարբերակման հարցում:

Քննվող թեմայի վերաբերյալ մասնագիտական տեսակետների վերլուծությունն ու համադրումը, ինչպես նաև ուսումնասիրության շրջանակում տրված օրինակները

հիմք են տալիս եզրակացնելու, որ այսպես կոչված սոսկական, բազմապատկական, պատճառական և կրավորական ածանցներով կազմված բայերը նոր բառեր են, հետևաբար բայաձանցները բառակազմական ձևույթներ են:

Բանալի բառեր՝ բայաձանցներ, արևելահայ քերականագիտություն, բառակազմություն, ձևակազմություն, ձևույթ, բառ, բառաձև:

ГЛАГОЛЬНЫЕ АФФИКСЫ КАК СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ МОРФЕМЫ

Баграт Нерсисян, Ашот Мкрян

Резюме

В восточноармянской лингвистике толкования вопроса об аффиксальных глаголах противоречивы: глагольные аффиксы рассматриваются в рамках словообразования или формообразования (говоря о глаголах, восточноармянские лингвисты часто используют либо их нейтральное обозначение – «морфема», либо определение «частица», не уточняя, являются ли глаголы словообразовательными или формообразующими единицами). Именно поэтому встает вопрос об определении и дифференциации слова и словоформы.

Анализ и сопоставление разных точек зрения лингвистов, а также приведенные примеры дают основание утверждать, что глаголы, образованные так называемыми глагольными, итеративными, каузативными и страдательными аффиксами, представляют собой новые слова, следовательно, перечисленные аффиксы являются словообразовательными.

Ключевые слова – глагольные аффиксы, восточноармянская лингвистика, словообразование, формообразование, морфема, слово, словоформа.

VERBAL AFFIXES AS WORD-FORMATIVE MORPHEMES

Bagrat Nersisyan, Ashot Mkryan

Abstract

In Eastern Armenian grammars, there is little uniformity of commentary on affixal verbs: verbal affixes are treated under the rubric of either word-building or form-building (Eastern Armenian linguists talking about verbal affixes often use the neutral definition "morpheme", or "particle" without specifying whether verbal affixes are lexical or morphological units). This makes it essential that word and word-form should be defined and differentiated in plainer terms.

The literature on the topic reviewed in this article and the examples examined in this study reveal that verbs formed from verbal, iterative, causative, and passive affixes are new words and that verbal affixes should be treated as word-formative morphemes.

Key words – verbal affixes, Eastern Armenian linguistics, word-building, word-formation, form-building, morpheme, word, word-form.

ИВАН (ОВАНЕС) АЙВАЗОВСКИЙ НА ОСТРОВЕ СВ. ЛАЗАРЯ

Анаит Бекарян

Кандидат филологических наук, старший научный сотрудник

Института искусств НАН РА

РА, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4

Эл. адрес: abekaryan@mail.ru

Статья представлена 07.09.2022, рецензирована 01.03.2023, принята к публикации 11.04.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.1-192

Имя его возвеличивалось не годами, а по дням и по часам.
...слава не могла угнаться за ним, ибо он всегда опережал ее.
Александр Цатурян¹

Вступление

Жизни и творчеству великого сына армянского народа, всемирно прославленного мариниста Ивана (Ованеса) Айвазовского посвящен целый ряд исследований, как в виде монографий², так и множества публикаций в армянской и зарубежной печати. В связи со 115-ой годовщиной со дня смерти Айвазовского даже написана пьеса в четырех действиях³. Наша статья посвящена выявлению связей И. Айвазовского с мхитаристами, недостаточно (а порой ошибочно) освещенными в армянской периодике.

Как известно, в июле 1840 г. Петербургская Императорская Академия художеств послала пятерых художников, в их числе и И. Айвазовского, окончивших Академию с золотой медалью, за границу для дальнейшего совершенствования мастерства⁴. Итак, И. Айвазовский, уже приобретший в Российской империи славу многообещающего художника, уехал в Италию вместе со своим однокурсником и ближайшим другом Василием Штернбергом (1818-1845). Об этом периоде своей деятельности сам Айвазовский позднее подробно написал в автобиографических воспоминаниях, которые еще в конце XIX в. были опубликованы на страницах исто-

¹ Շառնիքյան 1900:

² Айвазовский 1967, Барсамов 1967, Саргсян 2010, Хачатрян 2008.

³ Айрапетян 2015.

⁴ Айвазовский 1967, 42.

рического ежемесячника «Русская старина»⁵, а также изданы отдельной книгой⁶. В ежемесячнике не упоминается имя автора статей, однако по мнению исследователей, и среди них большого знатока творчества Айвазовского Николая Собко (1851-1906) и художника-искусствоведа, биографа И. Айвазовского Николая Барсамова (1892-1976), их автором является русский филолог и историк Петр Каратыгин (1832-1888).

Айвазовский на острове Св. Лазаря

Молодые художники Айвазовский и Штернберг, следуя через Берлин, Дрезден, Вену и Триест, в августе 1840 г. прибыли в Венецию. Позднее Айвазовский рассказывал своему первому биографу Н. Кузьмину: «Первым городом в Италии, который я посетил, была, конечно, Венеция. После скучных Берлина, Дрездена, Триеста она несказанно нравилась мне. Развенчанная царица морей, спящая непробудным сном на берегу чудесного своего залива, очаровала меня»⁷. Заметим, что Венеция пленяла очень многих, в том числе и великого английского поэта Джорджа Гордона Байрона (1788-1824). Как пишет Байрон в письме от 25-го ноября 1816 г.: «Венеция понравилась мне так, как я и ожидал, а мои ожидания были велики. Это одно из тех мест, которое... околдовало меня более всего»⁸.

Очевидно, Айвазовский свое ознакомление с Италией начал с Венеции, поскольку его старший брат, 28-летний Габриел, которого художник не видел 14 лет, являлся членом ордена мхитаристской конгрегации.

Благодаря брату состоялось знакомство И. Айвазовского с мхитаристами, которые, по меткому определению известного армянского писателя и историка Лео (Аракел Бабаханян, 1860-1932), создали на острове «маленькую, миниатюрную Армению, родину не руин и рабства, а родину книг»⁹.

Уже в XVIII в. монастырь мхитаристов стал важнейшим центром арменоведения, хранителем нашей культуры и литературы. О проникнутой преданностью и любовью к своему народу научной деятельности ученых-монахов свидетельствуют не только представители армянской культуры (Лео, Раффи, Микаел Налбандян, Аршак Чопанян и др.), но и многие иностранные политические деятели, историки, лингвисты, литературные критики и писатели, которые высоко ценили научно-просветительские

⁵ См. Иван Константинович Айвазовский и его художественная XLII-летняя деятельность: 1836-1878, 423-436.

⁶ См. Кузьмин 1901.

⁷ Кузьмин 1901, 23.

⁸ The Letters of George Gordon 1933, 167.

⁹ Ltn 1973, 503:

труды мхитаристов¹⁰. А в период, когда в Венеции была приостановлена деятельность всех иных конфессий, императорским указом Наполеона от 17-го августа 1810 г. ордену мхитаристов было разрешено продолжить свою деятельность как академическому учреждению¹¹.

Габриел Айвазян (Айвазовский, 1812-1880) ознакомил брата с деятельностью конгрегации, показал ему великолепную библиотеку, которая больше походила на музей, где хранились богато украшенные молитвенники, папирусы, древнеармянские рукописи с высокохудожественными миниатюрами, старинные монеты, статуэтки и т.д. И. Айвазовский увидел «комнату Байрона», где поэт беседовал с отцами церкви, знакомился с многовековой армянской культурой и литературой, изучал армянский язык, а также выполнил ряд переводов из армянских летописей. Братья Айвазовские посетили также достопримечательности острова. Общение И. Айвазовского с братом и другими членами монашеской братии вызвало незабываемые чувства в сердце художника, вдохнув в него новые силы и послужив импульсом к творческим свершениям. И. Айвазовский, глубоко впечатленный и окрыленный часами, проведенными в этом очаге армянской культуры, возвращался в Венецию. Ряд авторов утверждают, что И. Айвазовскому позволено было ночевать на острове¹². Однако, учитывая строгие правила отцов церкви, подобное едва ли могло соответствовать действительности. Мы разделяем точку зрения известного искусствоведа М. Саргсяна (1914-1995), автора работ об И. Айвазовском, согласно которой «светским посетителям там ночевать запрещалось»¹³.

Начиная с 1840 г. «в архивных документах монастыря периодически появляются записи об И. Айвазовском»¹⁴. В дальнейшем они были собраны, изучены и в кратком виде опубликованы в ежемесячнике «Базмавеп»¹⁵ армянским музыковедом, членом ордена, редактором «Базмавеп»-а с 1921 по 1927 гг. Гевондом Таяном (1884-1968) в статье под заглавием «Архив мхитаристов острова Св. Лазаря о победах мариниста И. Айвазовского». И как явствует из опубликованного здесь письма архиепископа С. Сомаяна (1776-1846) от 25-го августа 1840 г., по всей вероятности, именно в этот день И. Айвазовский впервые посетил остров

¹⁰ См. Curzon 1972, Langlois 1899, Веселовский 1972.

¹¹ Копию приказа см. в нашей книге «Байрон и армянская действительность» 2013, 280, а также «Армения в судьбе Джорджа Байрона» 2023, 191.

¹² Вагнер 1970, 89.

¹³ Саргсян 2010, 44.

¹⁴ Տալիշի 1937, 308:

¹⁵ Տալիշի 1937, 305-316:

Св. Лазаря: «Сегодня в монастырь приехал Ованес, младший брат нашего о. Габриела...»¹⁶.

В дальнейшем И. Айвазовский не раз посещал «маленькую Армению». Благодаря этим посещениям он ближе познакомился с историей и культурой своего народа. В богатой библиотеке конгрегации, которой в свое время был пленен и восхищен Джордж Байрон, молодой художник впервые увидел жемчужины армянской миниатюры, которыми были украшены средневековые рукописи. Помимо этого, «его поразили древние армянские манускрипты. Их к 1816 г. в библиотеке мхитаристов насчитывалось уже больше тысячи»¹⁷.

Старший брат И. Айвазовского, историограф, переводчик, педагог, архиепископ Габриел Айвазян первоначальное образование получил в приходской школе в Феодосии, затем их отец, Константин Айвазян (Гайвазовский), по свидетельству И. Айвазовского, не имея средств для оплаты дальнейшего обучения сына в соответствующем учебном заведении¹⁸, отвез маленького Габриела в Карасубазар на учебу к известному в Крыму своей плодотворной научно-просветительской деятельностью, пользующемуся большим авторитетом и уважением члену ордена мхитаристов, архимандриту Минасу Бжишкяну (1777-1851). Спустя два года, в 1826 г., 14-летний Габриел был послан на остров Св. Лазаря для учебы в школе ордена мхитаристов. По окончании учебы Г. Айвазян стал членом ордена и был посвящен в сан архимандрита.

В первый же день встречи с братом Иван Айвазовский передал ему просьбу родителей: изыскать малейшую возможность для поездки в Крым и встречи с ними. С этой просьбой художник обратился и к отцам-мхитаристам. Как отмечает С. Сомаян в своем письме М. Бжишкяну от 15-го сентября 1840 г., «Ованес непрестанно увещевал своего брата и настоятельно упрашивал нас отпустить Габриела на время домой повидаться с семьей, бесконечно тоскующей по нему»¹⁹. Однако в этот период Габриел Айвазян был единственным в монастыре опытным лингвистом и готовил к изданию труды Минаса Бжишкяна. Возможность посетить родину появилась лишь летом 1842 г., когда Габриелу, наконец, удалось увидеться с родными и близкими. После недолгого пребывания на родине он вернулся на остров Св. Лазаря и занялся плодотворной литературно-педагогической деятельностью. Г. Айвазян в совершенстве владел рядом языков: древнееврейским, греческим, латинским, арабским, итальян-

¹⁶ Տալիան 1937, 308:

¹⁷ Бакши 1996, 158.

¹⁸ См. Русская старина 1878, 433.

¹⁹ Տալիան 1937, 310:

янским, французским, турецким и т.д. Можно с уверенностью утверждать, что в 1842-1848 гг. Г. Айвазян был самым деятельным членом ордена. В эти годы он преподавал в гимназии Рафаелян в Венеции, в 1843 г. основал и до 1848 г. являлся редактором ежемесячника «Базма-веп». Велики его заслуги в изданиях мхитаристов за этот период.

Именно Г. Айвазян убедил 24-летнего Ивана (Ованеса) Айвазовского написать широко известную картину «Хаос. Сотворение мира» и преподнести римскому папе Григорию XVI (1765-1846), наградившему молодого художника золотой медалью, которой редко удостоивались представители светского общества. В этой связи находившаяся в Италии русская творческая интеллигенция устроила торжественный вечер в честь художника, на котором Николай Гоголь (1809-1852), обращаясь к Айвазовскому, с юмором воскликнул: «Исполать тебя, Ваня! Пришел маленький человек, с берегов далекой Невы в Рим и сразу поднес «Хаос» в Ватикане»²⁰. Позднее эту картину папа Лев XIII (1810-1903) подарил ордену мхитаристов, в картинной галерее которого она хранится по сей день. В 2017 г. в связи с 200-летием со дня рождения И. Айвазовского картина экспонировалась в Национальной галерее Армении.

Следует отметить, что с деятельностью Г. Айвазяна связано процветание и парижской гимназии Мурадян в 1848-1852 гг., куда армяне диаспоры, последователи основанной апостолами Фаддеем и Варфоломеем Армянской апостольской церкви, посылали учиться своих сыновей. Не ставя различий между учениками, Г. Айвазян «без исключения принимал в училище армян-католиков и не-католиков» и в процессе преподавания «уделял равное внимание и исконной армянской вере, и католицизму»²¹. Однако позднее аббат ордена мхитаристов, епископ Геворг Юрмюзян (1797-1876) под давлением Рима потребовал от Г. Айвазяна либо исключить из гимназии учеников, исповедующих армяно-григорианскую веру, либо заставить их принять католичество. Несмотря на то, что в это время из 60 учеников лишь 10 были приверженцами национальной веры, Г. Айвазян отказался выполнить это несправедливое требование и в 1855 г. покинул гимназию.

И. Айвазовский, приехавший в Италию многообещающим художником, вернулся оттуда удостоенным громкой славы известным маринистом, получившим благодаря своим полотнам всеобщее признание в Европе. В годы пребывания в Италии между И. Айвазовским и мхитаристами установились самые теплые отношения. Айвазовский создал кар-

²⁰ Кузьмин 1901, 28.

²¹ Քաղաքացի 2012, 24:

тину «Отцы-мхитаристы на острове Св. Лазаря» (1843), а также подарил ордену полотно «Неаполитанский маяк» (1842), которое автор написал на острове Св. Лазаря всего за шесть часов²². В связи с этим ценным подношением С. Сомальян 3-го сентября 1842 г. послал И. Айвазовскому благодарственное письмо, в котором, в частности, сказано: «Милостивый государь, принося в дар нашей обители новое воплощение твоей гениальности, ты обязываешь нас и наших преемников, имея пред глазами это бессмертное произведение, вечно помнить твою любовь и честь, оказанную нам.

Посему прошу принять эти благодарственные слова от имени нашей обители с той же сердечной искренностью, с какой они написаны, знай, что мы всегда будем гордиться твоим талантом, честностью и дружбой»²³.

Заметим, что письма С. Сомальяна, адресованные И. Айвазовскому и М. Бжишкяну (без указания имен получателя), с некоторыми искажениями опубликованы в претенциозно озаглавленном авторитетном сборнике «Айвазовский: документы и материалы» (см. с. 66 и 322)²⁴.

Иван Айвазовский неоднократно изображал Венецию, остров Св. Лазаря и мхитаристов. Так, например, в 1842 г. он пишет картины «Венеция» и «Залив», в 1843 г. – «Армяне-мхитаристы на острове Св. Лазаря» и «Гондольер на море ночью», в 1844 г. – «Венецианская лагуна с островами» и «Морской вид с часовней на берегу», в 1847 г. – «Лунная ночь. Вид Венеции с острова Св. Лазаря», в 1860 г. – «Байрон в Венеции», в 1873 г. – «Венеция. Закат», в 1883 г. – портрет брата, архиепископа Габриела Айвазяна, в 1899 г. – «Посещение Байроном мхитаристов на острове Св. Лазаря» и др. полотна.

Обратимся к мотивам и истории создания картин «Армяне-мхитаристы на острове Св. Лазаря» и «Посещение Байроном мхитаристов на острове Св. Лазаря», хранящихся в Национальной галерее Армении.

Картина «Армяне-мхитаристы на острове Св. Лазаря» (в книге М. Саргсяна она озаглавлена «Монахи в Венеции при закате солнца»), по всей вероятности, является первым произведением молодого художника на армянскую тему. На картине изображен залив при закате солнца, а на

²² Սուրբ Ղազար Մարտիրոս Միլիարդեան Միլիարդեան 1966, 43: В монографию М. Саргсяна вкралась неточность: эта работа названа «Венецианский маяк».

²³ Տալան 1937, 311, 312:

²⁴ Саргсян 2010, 56. К сожалению, в примечаниях к сборнику составители указали в качестве первоисточника этих писем «Базмавеп», 1929 и «Базмавеп», 1927, с. 308-309, между тем как в названных номерах нет ни слова об этом. Оба вышеупомянутых письма впервые были опубликованы Г. Таяном в декабрьском номере «Базмавеп»-а за 1937 г. (см. с. 309, 311 и 312). Мы бы не упомянули об этой ошибке, если бы она не тиражировалась. К примеру, она присутствует и в монографии М. Саргсяна, одного из составителей сборника.

берегу – несколько монахов мхитаристского ордена. Чуть поодаль, в тихих водах скользит маленькая лодочка, а вдали виднеется Венеция. В центре композиции, на скалистом берегу, Айвазовский поместил довольно объемистую книгу в красном переплете, указывающую на то, что члены конгрегации являются не только представителями духовенства, но и тружениками на ниве просвещения, превратившими свою обитель в крупный научный центр, содействующий развитию национальной культуры. Известные армянские искусствоведы Минас Саргсян и Шаген Хачатрян (1934-2021) полагают, что на картине изображен исключительный по своей ценности двухтомный «Новый словарь армянского языка», изданный мхитаристами в 1836-1837 гг. Полагаем, художник не ставил себе целью изобразить какой-либо определенный труд, изданный мхитаристами, т.е. словарь не служил ему, так сказать, «натурой». На самом деле книга здесь имеет символическое значение, представляя, как справедливо отмечает М. Саргсян, «широкую научно-литературную деятельность ученых отцов Ордена. Подготовленные ими роскошные издания художественной, исторической, языковедческой и переводной литературы имели не только национальное значение, но и внесли значительный вклад в историю всемирной литературы, имели большой общественный резонанс»²⁵.

Согласно М. Саргсяну и Ш. Хачатряну, на переднем плане слева изображены лексикограф, переводчик Сукиас Сомальян и Габриел Айвазян, что вполне естественно и понятно. Во-первых, в эти годы архиепископ С. Сомальян уже был аббатом ордена, во-вторых, И. Айвазовский именно к нему обращался с просьбой позволить брату временный отъезд на родину для встречи с родителями, и, наконец, молодой художник всегда встречал самый теплый и ласковый прием со стороны аббата. Следовательно, Айвазовский в первую очередь должен был запечатлеть портреты С. Сомальяна и своего брата. Справа на картине, по Ш. Хачатряну, изображен соавтор армянского словаря, лингвист, переводчик Мкртыч Авгерян (1762-1854) (у М. Саргсяна об этом ничего не сказано).

В картине «Посещение Байроном мхитаристов на острове Св. Лазаря» И. Айвазовский изобразил сцену радушной встречи Дж. Байрона мхитаристской братией во главе с Гевондом Алишаном (1820-1901). Надо отметить, что Байрон посетил остров задолго до рождения Г. Алишана, однако, как справедливо замечает Шаген Хачатрян, «художник преднамеренно изобразил славного сына армянского народа, ученого и поэта Гевонда Алишана»²⁶. Художник хотел «сплотить в одном произведении

²⁵ Саргсян 2010, 62.

²⁶ Խաչատրյան 2014, Новое время, 14 сентября, 2017, 7:

представителей разных поколений, выразить свои личные свободолюбивые устремления»²⁷, поскольку «армянский народ из поколения в поколение (не только в байроновский период) мечтал об освобождении родины и закалял в себе дух патриотизма. Алишан является символом этого духа и потому был включен в замысел Айвазовского»²⁸. На переднем плане изображены также учитель Байрона Арутюн Авгерян и аббат Сукиас Сомалян.

Что же побудило И. Айвазовского создать это полотно? Свободолюбивый дух английского поэта, непосредственного участника борьбы за освобождение угнетенных народов, был созвучен чаяниям армянских поэтов и художников, а последнее десятилетие XIX века ознаменовалось трагическими событиями в Западной Армении и Османской империи, где имело место истребление армянского населения, уничтожение армянских духовных центров и очагов культуры, а на Кавказе подвергались гонениям деятели культуры и национально-освободительного движения. И вполне естественен отклик армянских поэтов и художников на эти ужасающие события, произведения которых стали отражением их душевных переживаний, тягостных размышлений и настроений. Так, в эти годы великий певец «армянской скорби» Ованес Туманян (1869-1923) создает *Израиль* (1890), *Христос в пустыне* (1892), *Байрону* (1896), *Песнь беженца* (1896), *Из псалмов печали* (1898), *Скиталец я, сестра* (1902), *Армянская скорбь* (1903) и ряд других, столь же печальных и одновременно вольнолюбивых стихотворений, а великий маринист Иван Айвазовский в эти же годы пишет ряд картин на армянскую тему: «Крещение армянского народа. Григорий Просветитель. IV в.» (1892), «Католикос Хримян Айрик в окрестностях Эчмиадзина» (1895), «Клятва перед Аварайрской битвой. Полководец Вардан Мамиконян. V в.» (1896), «Избиение армян в Трапезунде в 1895 г.» (1896), «Армян погружают на корабли» (1897), «Тихая ночь. Армян сбрасывают в море с турецких кораблей» (1897) и др.

Заключение

В целом, в последние годы своей жизни большой патриот и гуманист И. Айвазовский отразил свое душевное состояние и внутренний мир, тяжелые переживания и свободолюбивые устремления не только в полотнах, посвященных трагедии армянского народа, но и в созданных в эти годы таких значительных, исполненных мятежного духа произведениях как «Буря на море» (1895), «Ливень в Судак» (1897), «Наполеон на ост-

²⁷ Новое время, 14 сентября, 2017, 7.

²⁸ Խաչատրյան 2014, 94:

рове Св. Елены» (1898), «Среди волн» (1898), «Буря у берегов Одессы» (1898), «В шторм» (1899), «Ураган на море» (1899), «Взрыв турецкого корабля» (1900) и др. И потому не случаен в этом ряду образ великого певца свободы Джорджа Гордона Байрона, благодаря ученым-монахам мхитаристской конгрегации питавшего особую любовь и уважение к армянскому народу и его богатой культуре. Байрон также сыграл большую роль в ознакомлении европейцев с армянской культурой.

Хотелось бы добавить, что если сегодня обе вышеупомянутые прекрасные картины И. Айвазовского (и не только эти) являются собственностью Армении и украшают нашу Национальную галерею, то этим мы всецело обязаны преданному труженику армянского искусства, заслуженному деятелю искусств Шагену Хачатрян, усилиями которого эти картины попали в Ереван (первая – из Ульяновского музея, а вторая – из музея искусств Гruzии).

Следует также упомянуть о довольно богатой коллекции армянской живописи в картинной галерее ордена мхитаристов. Так, в армянском отделе галереи представлены около 100 произведений армянских художников, в их числе творения И. Айвазовского, Эдгара Шайна, Вардана Махояна, Геворга Башинджагяна, Фаноса Терлемезяна, Мартироса Сарьяна, Ерванда Кочара, сестер Мариам и Ерануи Асламязян, Григора Ханджяна и др. В картинной галерее ордена хранятся 14 картин И. Айвазовского. Помимо уже упомянутых полотен «Хаос. Сотворение мира» и «Неаполитанский маяк», в галерее также находятся «Морской пейзаж» (1874), «Кораблекрушение в Северном море» (1875), «Беспокойное море» (1877), «Кораблекрушение» (1880), «Гора Арарат» (1885) и другие произведения художника.

В заключение хотелось бы привести слова известного художника, писателя и общественного деятеля Геворга Башинджагяна (1857-1925), давшего высокую оценку творчеству своего старшего собрата по искусству: «Ованес Айвазовский подобен необыкновенному блестящему светилу, взошедшему на мрачный небосвод армянской действительности и исчезнувшему после восьмидесяти трех лет сияния, оставив за собой столь яркий след, которым вечно должен гордиться каждый армянин»²⁹.

Литература

Բաշինջաղյան Գ. 1900, Հովհաննես Այվազովսկի, Մշակ, մայիս 30, N 97:

Լեո 1973, Երկերի ժողովածու, տաս հատորով, երրորդ հատոր, գիրք երկրորդ, Երեվան, «Հայաստան», 638 էջ:

Խաչատրյան Շ. 2014, Թանգարանի զինվորը, Երևան, «Փրինթինգ», 288 էջ:

²⁹ Մշակ 1900, N 97:

- Շատուրյան Ա. 1900, Ծովի կախարդը. Այվազովսկու յիշատակին, Մշակ, 02 մայիսի, N 79:
Սուրբ Ղազար Մայրավանք Մխիթարեան Միաբանության 1966, Վենետիկ, Ս. Ղազար, 165 էջ:
- Տայեան Հ.Ղ. 1937, Ս. Ղազարու Մխիթարեան Դիանը ծովանկարիչ Յ. Այվազովսկիի յաղթանակներու մասին, «Բազմավեպ», թիվ 12, էջ 308, 310:
- Քարամեանց Նիկ. 2012, Լուսավորութեան առաքեալը, Գաբրիել արքեպիսկոպոս Այվազեան /Այվազովսկի/ Ընտրանի, Երևան, «Տիգրան Մեծ», 163 էջ:
- Айвазовский 1967, Документы и материалы, Ереван, «Айастан», 405 с.
- Айрапетян С. 2015, Айвазовский, Ереван, «Гитутюн», 81 с.
- Бакши К. 1996, Воскрешение Святого Лазаря, Москва, «Эксмо», 218 с.
- Барсамов Н. 1967, Иван Константинович Айвазовский, Москва, «Знание», 23 с.
- Вагнер Л., Григорович Н. 1970, И.К. Айвазовский, Москва, «Искусство», 264 с.
- Веселовский Ю. 1972, Очерки армянской литературы, истории и культуры, Ереван, «Айастан», 504 с.
- Иван Константинович Айвазовский и его художественная XLII-летняя деятельность. 1836-1878. 1878, «Русская старина», т. XXII, N 5-8, с. 423-436.
- Кузьмин Н. 1901, Воспоминания о профессоре И.К. Айвазовском, С.-Петербург, Типо-литография и новопечатня В.В. Комарова, 115 с.
- Русская старина 1878, т. XXII, N 5-8, с. 433.
- Саргсян М. 2010, Жизнь великого мариниста: Иван Константинович Айвазовский, «Коктебель», 383 с.
- Хачатрян Ш. 2008, Айвазовский: апостол мира и гуманизма (К 190-летию со дня рождения художника, Ереван, «Принтинфо», 80 с.
- Curzon Armenia: 1854 a year at Erzroom, and on the Frontiers of Russia, Turkey, and Persia, London, John Murray, 253 p.
- The Letters of George Gordon 6th Lord Byron, 1933 selected by R.G. Howarth, with an introduction by Andre' Maurois, London-Toronto-New York, 167 p.
- Moore Th. 1908, The Life, Letters and Journals of Lord Byron, London, John Murray, 337 p.

ԻՎԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ) ԱՅՎԱԶՈՎՍԿԻՆ ՍԲ ՂԱԶԱՐ ԿՂԶՈՒՄ

Անահիտ Բեքարյան

Ամփոփում

1840 թ. հուլիսին Պետերբուրգի գեղարվեստի կայսերական ակադեմիան ոսկե մեդալով ավարտած Հովհաննես Այվազովսկուն գործուղում են արտասահման՝ գեղարվեստի բնագավառում կատարելագործվելու: Այվազովսկին իր ընկերոջ՝ Վասիլի Շտերնբերգի (1818-1845) հետ մեկնում է Իտալիա: Առաջին քաղաքը, ուր ուղևորվում են նրանք, Վենետիկն էր: Այստեղ ապրում են Վենետիկից ոչ հեռու գտնվող Սուրբ Ղազար կղզի, որտեղ ապրում և աշխատում էր Հովհաննես Այվազովսկու եղբայրը՝ հայ պատմագիր, թարգմանիչ, մանկավարժ, արքեպիսկոպոս Գաբրիել Այվազյանը (1812-1860): Վերջինս եղբորը ծանոթացնում է Մխիթարյան միաբանության գործունեությանը: Դրա շնորհիվ են ստեղծվում «Մխիթարյան հայրերը Սուրբ Ղազար կղզում» (1843) «Բայրոնի այցը Մխիթարյաններին Սբ Ղազար կղզի» (1899) կտավները: Վենետիկի Մխիթարյան միաբանության պատկերասրահում պահպանվում և ցուցադրվում է Հովհաննես Այվազովսկու 14 նկար:

Բանալի բառեր՝ Հովհաննես Այվազովսկի, Գաբրիել Այվազյան, Մխիթարյան միաբանություն, Վենետիկ, Բայրոն, Իտալիա, Սուրբ Ղազար կղզի:

ИВАН (ОВАНЕС) АЙВАЗОВСКИЙ НА ОСТРОВЕ СВ. ЛАЗАРЯ

Анаит Бекарян

Резюме

В июле 1840 г. Петербургская Императорская академия художеств послала пятерых художников, в их числе и Ивана Айвазовского, окончивших Академию с золотой медалью, за границу для дальнейшего совершенствования мастерства. Вместе с ним в Италию отправился его друг Василий Штернберг (1818-1845). Вначале они посетили Венецию, затем – остров Св. Лазаря, где жил и работал брат Айвазовского – армянский историограф, переводчик, педагог – архиепископ Габриел Айвазян (1812-1860). Последний познакомил своего брата с деятельностью и членами Мхитаристской конгрегации. Впоследствии великий маринист создал полотна «Армяне-мхитаристы на острове Св. Лазаря» (1843 г.) и «Посещение Байроном мхитаристов на острове Св. Лазаря (1899 г.). В галерее Венецианской конгрегации мхитаристов хранятся 14 картин Айвазовского, часть которых демонстрируется посетителям.

Ключевые слова – Ованес Айвазовский, Габриел Айвазян, Мхитаристская конгрегация, Венеция, Байрон, Италия, о. Святого Лазаря.

IVAN (HOVHANNES) AIVAZOVSKY ON THE ISLAND OF ST. LAZARUS

Anahit Bekaryan

Abstract

In July 1840, Hovhannes Aivazovsky was sent on internship abroad by the Imperial Academy of Arts in St. Petersburg. As he left for Italy with his friend Vasily Shternberg (1818-1845), the first city they visited was Venice, where H. Aivazovsky's brother Gabriel Aivazyan (1812-1860), a historian, educator, translator and an archbishop, lived and worked in the Mechitarist Congregation on the island of St. Lazarus. Gabriel introduced the artist to the activities of the Mechitarist Congregation. Impressed by the work done by the Mechitarists, H. Aivazovsky painted "The Armenian Mechitarist fathers on St. Lazare island" (1843) and "Byron's visit to the Mechitarist Congregation on the island of St. Lazare in Venice" (1899). The picture gallery of Mechitarist Congregation houses 14 paintings by H. Aivazovsky.

Key words – Hovhannes Aivazovsky, Gabriel Aivazyan, Mechitarist Congregation, Venice, Byron, Italy, St. Lazarus Island.

ՊԵՏՐՈՍ ԼԱՏԻՆԱՑՈՒ ԱՍՏՎԱԾԱՇՆՁԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ

Արփինե Սիմոնյան

Արվեստագիտության թեկնածու
«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մաշտոցի 53
Էլ. հասցե՝ arpine.simonya.90@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 20.01.2022, գրախոսվել է 14.03.2023, ընդունվել է տպագրության 11.04.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.1-203

Ներածություն

Թուրքիայի հայկական գաղթօջախներում XVII-XVIII դդ. գործում էին Կոստանդնուպոլսի և Ջմյուռնիայի տպագրական օջախները: Կոստանդնուպոլսի հայկական տպագրության օջախը սկզբնավորվել է XVI դարում: Վենետիկից հետո այդ քաղաքը առաջինն էր, որտեղ տպագրվեց հայերեն գիրք: Կոստանդնուպոլսում հիշյալ դարի երկրորդ կեսից հիմնվում է հայկական տպարան, որի հիմնադիրը՝ Աբգար Դպիրը կամ Աբգար Թոխատեցին, Հակոբ Մեղապարտից հետո հայկական տպագրության սկզբնավորման պատմության մեջ համարվում էր երկրորդ նշանավոր դեմքը:

Կոստանդնուպոլսում 1700-ական թթ. բացվում է մի տպարան Ոսկան Երևանցու տառերով ու պատկերներով: Ըստ Թեոդիկի՝ Լիվոռնոյից այս տպարանը տեղափոխել են Կոստանդնուպոլիս՝ պահպանելով նույնիսկ տպարանի անունը. «Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգիս Ջորավար»: Դա է վկայում նաև գերմանացի հայագետ Շրոդերը¹ (Schröder): Սա Ոսկան Երևանցու տպարանի մի փոքրիկ մասն էր, որ, բերելով Կոստանդնուպոլիս, շարունակում է իր բազմավաստակ վարպետի գործունեությունը:

«Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգիս Ջորավար» տպարանը Կոստանդնուպոլսում տպագրում է հետևյալ գրքերը. **Խաչատուր Էրզրումեցու «Համառոտ մեկնութիւն երգոյ երգոցն Սողոմոնի»**, **Թովմա Գեմբացու «Յաղագս համահեղինմանն Քրիստոսի»**, **«Մեկնութիւն յայտնութեան»** և **«Գիրք մտածական աղօթից, բանալի ջերմեռանդակերպ»**: Ա. Ղազիկյանը նշում է նաև **«Հանդերձ Աստուծով, գիրք յայբութենից»** և **Քյոմուրճյան Կոմիտասի «Որանաւորք»** հրատարակությունները²: «Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգիս Ջորավար» տպարանից այլ հրատարակություններ մեզ հայտնի չեն:

¹ Թեոդիկ ՌՅԿԱ (1912), 56:

² Կորկոտյան 1964, 61-62:

Պետրոս Լատինացու հրատարակությունները

Կոստանդնուպոլսի Պեկոլլի թաղամասում 1705 թ. հրատարակվում է հայատառ երկրորդ տպագիր «Աստվածաշունչ» մատյանը: Տպագրիչն է Ոսկան Երևանցու աշակերտ Պետրոս Լատինացին: Վերջինիս ջանքերով էլ հավանաբար Ոսկանյան տպարանի գույքը տեղափոխվել էր Կոստանդնուպոլիս: Պետրոս Լատինացու և նրա հրատարակությունների մասին տեղեկությունները սակավ են: Ըստ Հ. Զոհրաբյանի՝ Պետրոս Լատինացին Ոսկան Երևանցու ազգականն էր և աշակերտը³: Տպագրիչը Աստվածաշնչի հիշատակարանում գրում է. «Ի յօրինակս հնոյ տպեցեալ, լուսաւոր հոգի Ոսկան վարդապետի Լադինացոյ Պետրոսի ի մայրաքաղաքն Ստամպոլ. Ղալաթիայ, ի թաղն Պէկոլլի կոչեցեալ»: Լատինացու տպարանից լույս են տեսնում Ստեփանոս Լեհացու թարգմանությամբ «**Քուրաստան աղոթից**»-ը, «**Գիրք տոմարաց**»-ը՝ հրատարակված 1709 թ., և «**Արենի Ժամագիրք**»-ը՝ տպագրված 1712 թ.⁴: Հետագայում Լատինացու անունը տպարանի հրատարակած գրքերի վրա չի հիշատակվում, միայն նշվում է որ տպագրվել է «ի թաղն Պէկոլլի»:

Այն հարցը, թե Ոսկանյան տառերը կարող էին հասած լինել Կոստանդնուպոլիս, անկասկած է, իսկ այն, թե քանի տպարան ստեղծվեց Կոստանդնուպոլսում՝ մե՞կ, թե՞ երկու, պարզ չէ, քանի որ «Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգիս Զորավար» տպարանի և «Պէկոլլի» տպարանի տպագրությունները իրար շատ նման են: Ասել, որ այս երկու տպարանները նույնն են, չենք կարող, քանի որ առաջին տպարանի գործունեության շրջանում բոլորովին չի հիշատակվել Պետրոս Լատինացու անունը, և անգամ չգիտենք էլ թե Կոստանդնուպոլսի որ թաղամասում է գործել տպարանը: Հաստատ է միայն այն, որ Ոսկանյան տառերը և փորագրապատկերների տպատախտակները եկել են Կոստանդնուպոլիս, նրանց հիման վրա գործել է տպարան, և հետագայում էլ նրա տառերն ու տպատախտակները բազմիցս օգտագործվել են Կոստանդնուպոլսի այլ տպագրիչների հրատարակություններում⁵: Պետրոս Լատինացու տպարանը գործել է մինչև 1712 թ.:

Լատինացու հրատարակությունների մեջ իր կարևորությամբ և գեղարվեստական հարդարանքով առանձնանում է 1705 թ. հրատարակած պատկերազարդ **Աստվածաշունչը**, որը, սակայն, իր շքեղությամբ և գեղարվեստական ձևավորմամբ զիջում է Ոսկանյան Աստվածաշնչին⁶: Այն բաղկացած է Հին և Նոր Կտակարաններից և բնագրային առումով Ոսկանյան Աստվածաշնչի կրկնությունն է:

³ Տերյան Վ. վարդապետ 1960, 13:

⁴ Թէօփիկ ՌՅԿԱ (1912), 60:

⁵ Կորկոսյան 1964, 61-62:

⁶ Առաջին հայատառ տպագիր Աստվածաշունչը հրատարակվել է Ամստերդամի «Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգիս Զորավար» տպարանում 1666-1668 թթ.: Տպագրիչն է Ոսկան Երևանցին:

Այժմ անդրադառնանք Պետրոս Լատինացու **Աստվածաշնչի գեղարվեստական հարդարանքին**:

Փորագիր զարդանախշեր

Պատկերազարդման առումով ուշագրավ են Աստվածաշնչում առկա բազում **փորագիր զարդանախշերը**: Վերջիններիս կապը ձեռագրարվեստի զարդարուն տարրերի հետ տակավին սերտ է, սակայն կան նաև այնպիսիք, որոնք բնորոշ են միայն գրքարվեստին: Ինչպես Ոսկանյան Աստվածաշնչում, այնպես էլ իր հրատարակությունում Պետրոս Լատինացին խուսափել է զարդանախշերի և զարդագրերի անհարկի օգտագործումից՝ նախապատվությունը տալով եվրոպական գրքարվեստի սկզբունքներին:

Աստվածաշնչի **տիպոգրաֆերը** կրում է XVI-XVII դդ. արևմտաեվրոպական տպագիր գրքերում կիրառվող դասականության և բարոկկո ոճի տիպոգրաֆերների ազդեցությունը: Ամբողջ էջը վերցված է ուղղանկյուն շրջանակի մեջ, որի հորիզոնական և ուղղահայաց գոտիները հարդարված են բուսական և ծաղկային տարրերով: Բուսածաղկային հենքի մեջ պատկերված է ուղղահայաց, կիսակլոր և հորիզոնական սրածայր թևերով խաչ, որը հիմքում ևս կրում է խաչի ուրվագիծ (նկ. 1):

Աստվածաշնչում օգտագործված **ճակատագրողները կիսախորանի կամ առավել հաճախ ուղղանկյուն գլխազարդի** տեսքով են: Ճակատագրողի ողջ դաշտը զարդանախշ է: Դրանք հիմնականում կազմված են բուսական ու երկրաչափական հյուսածո զարդաձևերից: Կիսախորան-ճակատագրողների համեմատության ժամանակ նկատվում է կապը հայ միջնադարյան մանրանկարչության հետ: Բարդ ոճավորված, աստիճանավոր բացվածքի տակ գրված է համապատասխան գլխի խորագիրը, հաճախ հանդիպում են նաև սափորով ծաղիկներ (նկ. 2): Կիսախորանների ներսում հիմնականում օգտագործված են հյուսվածքազարդեր, բուսական և երկրաչափական (հատվող քառանկյուններ, շեղանկյուններ) տարրեր: Ինչպես Ոսկան Երևանցու, այնպես էլ Լատինացու Աստվածաշնչում կիսախորանների, զարդագրերի համար նախօրինակ են ծառայել Կիլիկյան Հայաստանի Հեթում Բ թագավորի պատվերով 1295 թ. գրված ձեռագիր Աստվածաշնչի զարդանախշերը (ՄՄ N 180): Կիսախորանների վերին հատվածներում, ինչպես հայերեն ձեռագիր մատյաններում, հանդիպում են բուսատարրերից կազմված անկյունազարդեր և միջնազարդ (նկ. 2):

Հետաքրքիր են նաև Աստվածաշնչի **զարդագրերը**: Ա տառի ձևավորումն արված է երեք նապաստակ հիշեցնող կենդանագրով (նկ. 3), Ե տառի հարդարումը արված է վիշապ-թռչուն-ձուկ համադրությամբ (նկ. 3), իսկ Օ տառինը գրեթե միշտ միահյուսված թռչունների զարդագիր է (նկ. 3): Նման

կենդանագիր և թռչնագիր զարդագրեր հայկական մանրանկարչության մեջ հանդիպում ենք գրեթե բոլոր մանրանկարչական դպրոցներում:

Արվեստաբանական առումով ուշագրավ են նաև Աստվածաշնչում կիրառված **վերջնագարդերը**, որոնք բաժանվում են երկու խմբի՝ **պարզ և շքեղ: Շքեղ վերջնագարդերի** հայկական միջնադարյան մանրանկարչության մեջ նույնպես չենք հանդիպում: Դրանք մի դեպքում բուսական փարթամ նախշերից, ծաղիկներից ու կոկոններից կազմված եռանկյունաձև զարդեր են (նկ. 4), մեկ այլ դեպքում շքեղ վերջնագարդը նրբահյուս բուսական հենքի մեջ պատկերված ուղղահայաց, կիսակլոր և հորիզոնական սրածայր թևերով խաչ է՝ զուգակցված բուսական-ծաղկային տարրերով, որը հիմքում ևս կրում է խաչի ուրվագիծը (նկ. 5):

Վերջնագարդերն ըստ երևույթին ծագում են Արևմուտքից, քանի որ հայկական ձեռագրերում բնագիրն ավարտվում էր ոչ թե բուսական նախշով, այլ դասավորվում էր երկրաչափական պատկերի, երբեմն խաչի տեսքով⁷: Բուսական զարդանախշերը ծուլված են նախշագարդ տպատախտակներից, որոնք կարելի է գործածել առանձին կամ միացված վիճակում, որպեսզի ստացվեն առավել մեծ զարդեր:

Լատինացու Աստվածաշնչի պատկերազարդման հարդարանքի առանձնահատկությունների քննությամբ պարզ է դառնում, որ խորանների, գլխազարդերի, զարդագրերի վրա զգալի է հայկական միջնադարյան մանրանկարչության անմիջական ազդեցությունը: Ինչ վերաբերում է տիտղոսաթերթի, վերջնագարդերի ձևավորմանը, ապա կարող ենք ասել, որ դրա համար հիմք են հանդիսացել XVI-XVII դդ. արևմտաեվրոպական տպագիր գրքերի զարդանախշերը:

Թեմատիկ փորագրապատկերներ

Ի տարբերություն Ոսկանյան Աստվածաշնչի, որը ուշագրավ օրինակ է նախ և առաջ օգտագործված պատկերների հարստությամբ, որոնց քանակը Հին Կտակարանում 51 է, իսկ Նոր Կտակարանում՝ 107, Պետրոս Լատինացու Աստվածաշունչը գրեթե զուրկ է թեմատիկ փորագրանկարներից, որոնք հիմնականում բնագրին համադրված տեսարաններ են՝ դրված գլուխներից առաջ կամ վերջում: Գրեթե չեն հանդիպում էջով մեկ արված պատկերներ: Փորագրանկարները պատրաստված են երկայնակի փայտի փորագրման կամ քսիլոգրաֆիայի (հունարեն՝ τό ξύλον-փայտ և γράφω-գրում եմ, նկարում եմ բառերից) տեխնիկայով, որով և պայմանավորված են պատկերների ոճական առանձնահատկությունները: Պ. Լատինացին իր Աստվածաշնչում օգտագործել է Ոսկանյան Աստվածաշնչի փորագրանկարների տպատախտակները, որոնց հեղինակն է ծագումով գերմանացի, Հոլանդիայում գործունեություն

⁷ Казарян, Манукян 1991, 15.

ծավալած Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերը (1581-1658 թթ.): Վերջինիս փորագրանկարների համար նախօրինակ են հանդիսացել XV-XVII դդ. եվրոպական ամենահայտնի նկարիչների ու փորագրիչների աշխատանքները: Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերը կրկնօրինակել է Աբրահամ Բլոմարտի (Abraham Bloemaert⁸, 1564-1651 թթ.), Մարտին վան Հեմսկերկի (Maarten van Heemskerck⁹, 1498-1574 թթ.), Ալբրեխտ Դյուրերի, Լուկաս վան Լեյդենի (Lucas van Leyden, 1494-1533 թթ.), Հենդրիկ Գոլցիուսի (Hendrick Goltzius (1558-1617 թթ.), Հանս Հոլբեյնի (Hans Holbein, 1497-1543 թթ.) ստեղծագործությունները: Վան Ջիխեմի փորագրապատկերների մի մասն էլ Հիերոնիմուս Ջերոմ կան Ջերոմ Նադալի (Jerome Nadal, 1507-1580 թթ.) կազմած «**Պատկերազարդ Ավետարանից**» արված անմիջական կրկնօրինակներ են¹⁰:

Լատինացու Աստվածաշնչում առկա են Հին և Նոր Կտակարանների մի շարք թեմատիկ փորագրապատկերներ: Անդրադառնանք դրանց պատկերագրական, ոճական առանձնահատկություններին, տպատախտակների նախօրինակներին՝ փորձելով ընդհանրություններ գտնել այդ պատկերների և հայ ուշմիջնադարյան արվեստի ստեղծագործությունների միջև:

Հիսուս Քրիստոսի ազգաբանությունը կամ Հեսսեի ծառը

Մատթեոսի Ավետարանի սկզբում՝ էջի վերին հատվածում, որտեղ հայկական ձեռագրերում շքեղ կիսախորան է լինում, այստեղ խորանային ոճի մի շրջանակ է, որի ներսում զետեղված է Հիսուս Քրիստոսի ազգաբանությունը խորհրդանշող Հեսսեի ծառը («Հեսսեի որթատունկ»), քանի որ Մատթեոսի Ավետարանը սկսվում է Քրիստոսի ծննդաբանությամբ (նկ. 6):

Այս փորագրանկարի համար հիմք է ծառայել Հիերոնիմուս Վիերիքսի (Hieronymus Wierix. 1553-1619 թթ.) ստեղծագործությունը (նկ. 7), որն էլ իր հերթին ազդվել է հոլանդացի մեկ այլ փորագրիչ Հանս Բոլից¹¹ (Hans Bol, 1534-1593 թթ.): Հեսսեի ծառի պատկերագրությունը Քրիստոսի ծննդաբանությունն է՝ վերցված Արևմուտքից¹²: Սիրարփի Տեր-Ներսեսյանը հայ մանրանկարչության մեջ զատորոշել է Հեսսեի ծառի պատկերագրության երկու ձև: Առաջինում ծառն ավարտվում է Քրիստոսի պատկերով, իսկ երկրորդում՝ Տիրամոր և մանուկ Հիսուսի կերպարով¹³: Տոհմածառի ներքևում՝ հենակի վրա (ըստ նախօրինակի՝ քար է), գլուխը ձեռքին հենած, պատմուճան հագած,

⁸ Ժամանակի հայտնի նիդերլանդացի նկարիչ (1564-1651 թթ.). նրա կտավների հիման վրա ստեղծվել են փայտի և մետաղի մի շարք փորագրանկարներ:

⁹ Dictionnaire critique et documentaire des peintres, sculpteurs, dessinateurs et graveurs de tous les temps et de tous les pays par un groupe d'écrivains spécialistes français et étrangers by E. Benezit 1976, 603.

¹⁰ Ենոքյան 2016, 79.

¹¹ Ֆլամանդացի գեղանկարիչ, փորագրիչ, մանրանկարիչ:

¹² Schiller 1971, 16-17, fig. 25.

¹³ Der Nersessian 1993, 100-111.

հանդարտ պառկած է տոհմի նախահայրը՝ Դավիթ թագավորի հայրը՝ Հեսսեն¹⁴։ Հեսսեի պատկերման նման ձևը քիչ է հանդիպում պատկերագրության մեջ, քանի որ վերջինս հիմնականում պատկերվում է աչքերը փակ, քնած։ Ծառի վեց ճյուղերի և տերևների վրա Քրիստոսի չորսական նախահայրերն են՝ թագակիր, գավազանները ձեռքներին։ Ըստ Գ. Շիլլերի՝ քնած Հեսսեի պատկերագրական տարբերակը կարող է վերցված լինել Հովսեփի երազը ներկայացնող հուշարձաններից¹⁵։ Փորագրանկարում մի կողմից շեշտադրվում է թագավորական ծագման գաղափարը, մյուս կողմից տոհմաձառը հաստատում է Եսայի մարգարեի խոսքը, թե Հեսսեի ժառանգներից է ծնվելու Մեսիան՝ Օծյալ Փրկիչը¹⁶։ Ծառի վերևում՝ քնարած փառապսակի մեջ, Տիրամայրն է՝ մանուկ Հիսուսը գրկին։ Փորագրիչը մանրամասն պատկերել է նախահայրերից յուրաքանչյուրի դեմքը, թագերը, ձեռքերի դիրքը։ Հեսսեի ծառի հիմքում ընկած է նախահոր գաղափարը՝ քրիստոնեական մշակմամբ։ Նրանից սերում է տոհմի պատկերը ներկայացնող ճյուղավորված ծառը, որի ճյուղերին նստած են այդ նախնու հաջորդները, իսկ գագաթին նախամոր հաջորդն է՝ Մարիամը։ Սա բիբլիական կենաց ծառն է, որը փոխառնված է հեթանոսությունից և մշակված է համաձայն նոր գաղափարախոսության։ Քրիստոսի տոհմաձառը ներկայացնող այս տեսարանն առավել տարածված է եղել արևմտաեվրոպական արվեստում՝ մասնավորապես ռոմանական և գոթական շրջանների մանրանկարչության մեջ¹⁷, որտեղից էլ հավանաբար անցել է տպագիր գրքին։ Քրիստոֆել վան Զիխեմի այս փորագրապատկերը հետագայում գրեթե նույնությամբ իր արտացոլումը ստացավ նաև հայ ուշմիջնադարյան մանրանկարչության մեջ։

Համբարձում (Մարկոս ԺԶ. 19-20, Ղուկաս ԻԴ. 50-52, Գործք առաքելոց Ա. 9-11)

Հարությունից հետո քառասուն օր երկրի վրա մնալով՝ Հիսուսը Ձիթենյաց լեռան վրա իր վերջին պատգամները, հորդորներն ու օրհնությունը փոխանցեց աշակերտներին, այնուհետև համբարձվեց երկինք և նստեց Հոր աջ կողմում։ Արևելաքրիստոնեական արվեստում Քրիստոսը դիմահայաց է պատկերվում՝ փառապսակի (մանդորլա) մեջ, որը պահում են հրեշտակները, իսկ Արևմուտքում պատկերվում է նաև կիսադեմով։ Վերածննդի շրջանի ստեղծագործություններում նա աստիճանաբար անհետանում է, երևում են միայն ոտքերը։ Համբարձման հորինվածքը երկու մասի է բաժանվում՝ վերին և ստորին։ Վերին շերտը երկնայինն է, իսկ ստորինը՝ երկրայինը։

¹⁴ Մնացականյան 1955, 637:


¹⁵ Schiller 1971, 16-17, fig. 25.

¹⁶ Ղարբինյան, Սահակյան 2018, 159:

¹⁷ Ross 1996, 248-249.



Նկ. 1. Տիտղոսաթերթ, Պետրոս Լատինացու Աստվածաշունչ, 1705 թ.



Նկ. 2. Կիսախորան, Պետրոս Լատինացու Աստվածաշունչ, 1705 թ.



Նկ. 2. Կիսախորաններ, ՄՍՈ 180, Աստվածաշունչ, 1295 թ., Կիլիկիա



Նկ. 3. Զարդագրեր, Պետրոս Լատինացու Աստվածաշունչ, 1705 թ.



Նկ. 4. Շքեղ վերջնազարդեր, Պետրոս Լատինացու Աստվածաշունչ, 1705 թ.



Նկ. 5. վերջնազարդեր, Պետրոս Լատինացու Աստվածաշունչ, 1705 թ.

Թեմատիկ փորագրապատկերներ




Նկ. 6. Քրիստոսի ծննդաբանությունը կամ Հեսսեի ծառը, հեղ. Քրիստոֆել վան Զիխեմ, Պետրոս Լատինացու Աստվածաշունչ, 1705 թ.



Նկ. 7. Քրիստոսի ծննդաբանությունը կամ Հեսսեի ծառը, հեղ. Հիերոնիմուս Վիերիքս, Հանս Բոլի բնօրինակի, մինչև 1619 թ.



Նկ. 8. Համբարձում, հեղ. Քրիստոֆել վան Զիխեմ, Պետրոս Լատինացու Աստվածաշունչ, 1705 թ.



Նկ. 9. Համբարձում, Զերոմ Նադալ, Պատկերազարդ Ավետարան (Անտվերպեն, 1593 թ.)



Նկ. 10. Համբարձում, ՄՄ N 980



Նկ. 11. Եկեղեցին՝ որպես ընտրյալների բազմություն, հեղ. Քրիստոֆել վան Չիխենմ, Լատինացու Աստվածաշունչ, 1705 թ.



Նկ. 12. Եկեղեցին՝ որպես ընտրյալների բազմություն, հեղ. Ալբրեխտ Դյուրեր, «Հայտնություն» շարքից, 1497-1498 թթ.



Նկ. 13. Եկեղեցին՝ որպես ընտրյալների բազմություն, հեղ. Յոհան Սադելեր Ավագ, «Հայտնություն» շարքից, 1497-1498 թթ.



Նկ. 14. Մատթեոս ավետարանիչ, հեղ. Պետրոս Լատինացի, Աստվածաշունչ, 1705 թ.



Նկ. 15. Մարկոս ավետարանիչ, հեղ. Պետրոս Լատինացի, Աստվածաշունչ, 1705 թ.



Նկ. 16. Ղուկաս ավետարանիչ, հեղ. Պետրոս Լատինացի, Աստվածաշունչ, 1705 թ.



Նկ. 17. Հովհաննես ավետարանիչ, հեղ. Պետրոս Լատինացի, Աստվածաշունչ, 1705 թ.



Նկ. 18 ա, բ, գ. Մատթեոս, Մարկոս, Ղուկաս ավետարանիչներ, հեղ. Քրիստոֆել վան Զիխեն, Ոսկանյան Աստվածաշունչ, 1666 թ., **դ.** Սուրբ Ավգուստին Երանելի, հեղ. Էգիդիուս Ջադելեր Երկրորդի «Եկեղեցու չորս հայրեր» շարքից, մինչև 1628 թ.

Լատինացու Աստվածաշնչում Համբարձման տեսարանը ներկայացնում է Արևմուտքում տարածված ձևը՝ երաժշտական գործիքներ նվագող՝ փառաբանող հրեշտակներով (նկ. 8): Քրիստոֆել վան Զիխենը այս տեսարանը նույնությամբ կրկնօրինակել է Ջերոմ Նադալի «Պատկերազարդ Ավետարանի» համանուն փորագրանկարից (նկ. 9): Ամպերի գալարվող ծվենների միջոցով փորագրիչը հստակ բաժանել է երկրային և երկնային գոտիները: Երկնային գոտու կենտրոնում՝ նշաձև փառապսակի մեջ, պատկերված է Քրիստոսը՝ հայացքն ուղղած վեր, ձեռքերը տարածած երկնքում: Քրիստոսի հագուստի խոշոր ու ծանր ծալքերն ասես ծածանվում են քամուց՝ շարժում և էպիկականություն հաղորդելով նրա կերպարին: Փառապսակը շրջապատված է Քրիստոսին երկնային արքայություն ուղեկցող բազմաթիվ քերովքներով: Քրիստոսի կերպարը երկու կողմից շրջապատել են նրա գալուստը փառաբանող հրեշտակները, որոնք երաժշտական գործիքներ՝ հավանաբար փող են փչում: Փառաբանող հրեշտակների պատկերումը բնորոշ է նաև Քրիստոսի երկրորդ Գալստյան և Ահեղ դատաստան տեսարանների պատկերագրությանը: Հրեշտակներից ներքև նշմարվում են ձեռքերը դեպի Քրիստոսը պարզած մի քանի մարդկային կերպարներ, որոնք արդարների դասն են ներկայացնում¹⁸: Միջնադարյան պատկերագրության համաձայն՝ երկրային գոտու կենտրոնում հաճախ պատկերվում էր Տիրամայրը, որը փորագրանկարում բացակայում է: Տիրամոր փոխարեն պատկերված է երկու հրեշտակ: Ներքևում՝ գետնին, առաքյալների խումբն է: Հրեշտակների մասին խոսվում է Գործք Առաքելոցում¹⁹: Նրանք համարվում են երկնքի և երկրի միջև կապող օղակը: Հրեշտակներն իրենց ձեռքի շարժումներով առաքյալներին հուշում են, որ Տերը երկինք է բարձրացել: Նրանցից մեկը ձեռքը դեպի վեր շարժումով ցույց է տալիս համբարձվող Քրիստոսին, իսկ մյուսը կանգնեցնում է ապշահար առաքյալներին: Առաքյալների թիվը կարող է 11 լինել (առանց Հուդայի) կամ 12 (Պողոսի հետ), բայց այստեղ պատկերված են 13-ը: Ըստ երևույթին, պատկերված են Պողոսը և Հուդայի փոխարեն ընտրված Մատթիան: Գետնին նշմարվում են Քրիստոսի ոտքերի հպումից առաջացած հետքեր, որը հազվադեպ է Համբարձման տեսարանի պատկերներում: Քրիստոֆել վան Զիխենի փորագրանկարում աշակերտների դեմքերն ավելի ընդհանրացված են, չունեն կերպարային, դիմանկարային տարբերակում՝ ի տարբերություն Յոհաննես Վիերիքսի ստեղծագործության, որտեղ ցայտուն ներկայացված են աշակերտների տարիքային տարբերությունը, զգացմունքների արտահայտությունը: Համբարձման պատկերագրությունն ունի երկու մեկնաբանություն՝ պատմական, Նոր կտակարանի հետևողությամբ, երբ Քրիստոսը պատկերվում է վերևում, իսկ առաքյալները՝ ներքևում, և

¹⁸ Ղարիբյան, Սահակյան 2018, 399:

¹⁹ Холл 1996, 296.

խորհրդանշական, երբ առաքյալների կենտրոնում Տիրամայրն է: Մայր եկեղեցին և նրա հիմնադրումը խորհրդանշող Տիրամայրը բացակայում են փորագրանկարում:

Հետագայում Համբարձման այս պատկերը կրկնօրինակել են նաև հայ մանրանկարիչները: Հայ միջնադարյան մանրանկարչության մեջ Համբարձման նման մեկնաբանումը քիչ է հանդիպում: Սովորաբար պատկերվում է Տիրամայրը՝ շրջապատված առաքյալներով, իսկ հրեշտակների առկայությունը զուտ եվրոպական ազդեցություն է: **ՄՄ N 980** ճաշոցում Համբարձումը մեկնաբանված է ճիշտ նույն կերպ, ինչպես փորագրանկարում (նկ. 10):

Եկեղեցին՝ որպես ընտրյալների բազմություն (Հայտնություն Է. 9-17)

Հովհաննես ավետարանչի «**Հայտնության**» գրքի նկարագրողումներից Աստվածաշնչում զետեղված է միայն վերը նշված փորագրանկարը:

«Եւ յետ այսորիկ տեսի եւ ահա ժողովուրդ բազում, որ ոչ գոյր թիւ, յամենայն ազգաց, եւ յամենայն ցեղից, եւ յամենայն լեզուաց, եւ յամենայն ժողովուրդոց, որք կային առաջի աթոռոյն եւ առաջի Գառինն, արկեալ զհրեամբք հանդերձս սպիտակս, եւ ունէին ի ձեռինս իւրեանց արմաւենիս. եւ ծայնիւ մեծաւ ասէին. «Փրկութիւն Աստուծոյ մերոյ որ նստի յաթոռ Գառին» (Է. 9-10):

Փորագրանկարի ստեղծման համար (նկ. 11) հիմք են ծառայել թե՛ Ալբրեխտ Դյուրերի (նկ. 12) և թե՛ Յոհան Սադելեր Ավագի (նկ. 13) փորագրությունները: Այն բաժանված է երկու հատվածի: Վերին հատվածում՝ երկնակամարի կենտրոնում, ծիածանի կիսաշրջանի վրա, աթոռին բազմած, պատկերված է Հայր Աստված՝ շրջապատված երկարագգեստ քսանչորս երեցներով: Հայր Աստծո վերևում յոթ ճրագակալներ են, որոնց վերևում խաչակիր հրեշտակն է՝ գալարակը ձեռքին: Երեցներից ոմանք քնար են նվագում, ոմանք էլ ձեռքերում ճրագ են պահում: Աստծո փառապսակը շրջապատված է քերովքների, սերովքների և հրեշտակների պատկերներով: Փորագրանկարի կենտրոնում՝ փառապսակի մեջ, Աստծո գառն է՝ խաչվառը ձեռքին: Փառապսակը շրջապատել է արդարների բազմությունը՝ սպիտակ զգեստներով, ձեռքներին՝ արմավենու ճյուղեր: Վերջիններս երկրպագում են գառանը: Հովհաննեսը պատկերված է Գառան դիմաց՝ ծնրադիր, կարծես երկխոսության մեջ լինի երեցների հետ: Վերին հատվածի չորս անկյուններում ավետարանիչներին խորհրդանշող քառակերպ էակները պահել են բացված Ավետարանները, որոնց վրա, ըստ Սադելերի նախօրինակի, եկեղեցական կամ հոգևոր երգեր են գրված: Հովանդացի և գերմանացի վարպետները հրեշտակների ձեռքերում հաճախ երաժշտական գործիքներ և նոտաներ են պատկերում: Այդ գրառումների վրա վերարտադրվում են իրական երաժշտական ստեղծագործություններ: Նոտաները, որոնք բռնել են քառակերպ էակները, քառաձայն հիմներ են: Նման նոտաների պատկերման լավագույն վարպետ-

ներից են նիդերլանդացի փորագրիչներ Յոհան ավագ Սադելերը և Մարտին դը Վուսը: Վերջիններիս նոտաները ճշգրիտ փոխանցում են "Gloria in Excelsis" կոչվող մեղեդին²⁰: Այս գրություններից մեկի վրա փորագրիչը վերարտադրել է իր փակագիր ստորագրությունը՝ CVS: Փորագրանկարը հագեցած է կերպարներով. կարծես մեկը մյուսի վրա պատկերված լինեն: Տեսարանում առկա են հայելային և շրջանաձև հորինվածքային լուծումները:

Փորագրանկարն իր արտացոլումն է ստացել XVII-XVIII դդ. հայ մանրանկարչության, հատկապես աստվածաշնչյան պատկերազարդման մեջ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Հայտնության նկարազարդումների համար նախօրինակ են եղել միայն եվրոպական փորագրանկարները, իսկ հայ գրքարվեստում մինչև XVII դարը դրանք գրեթե բացակայել են:

Փորագրանկարների շարքում իրենց պատկերագրությամբ և կատարողական վարպետությամբ առանձնանում են նաև չորս ավետարանիչների պատկերները:

Նոր Կտակարանի առաջին չորս գրքերը ավետարաններն են, որտեղ Հիսուս Քրիստոսի ծննդյան, մկրտության և քարոզչության, բժշկությունների և հրաշքների, խաչելության և հարության պատմություններն են՝ գրված առաքյալների կամ նրանց հաջորդների կողմից: Ավետարան բառը հունարեն **Էվանգելիոն** (*εὐαγγέλιον*) բառի թարգմանությունն է՝ բարի լուր: Ավետարանիչները Քրիստոսի այն առաքյալներից և նրանց հետևորդներից էին, որոնք ոչ միայն խոսքով ավետարանեցին ժողովուրդներին, այլև գրեցին ավետարանները: Մատթեոսն ու Հովհաննեսը, ըստ ավանդության, եղել են Հիսուս Քրիստոսի 12 աշակերտներից, իսկ Մարկոսն ու Ղուկասը՝ 72 աշակերտներից, որոնց Հիսուսն ընտրել էր խաչելությունից մեկ տարի առաջ:

Արևմտյան արվեստում չորս ավետարանիչները նույնացվել են Ընդհանրական եկեղեցու վարդապետներ Ամբրոսիոսի, Հիերոնիմոսի, Օգոստինոսի և Գրիգոր Մեծի հետ: Չորս ավետարանիչների խորհրդանիշների համակարգը ստեղծողներն են Հիերոնիմոսը (342-410 թթ.) և Եպիփան Կիպրացին (315-403 թթ.): Մատթեոսը պատկերվել է մարդու կամ հրեշտակի տեսքով, Մարկոսը՝ առյուծի, Ղուկասը՝ ցուլի, Հովհաննեսը՝ արծվի: Այս կենդանիները կոչվում են նաև «Հայտնության կենդանիներ» և պատկերվել են նաև փառապսակով, որը վկայում է նրանց աստվածային բնույթի մասին²¹:

Եվրոպական գրքարվեստում, սկսած XVI դարից, ավետարանիչներին սկսում են պատկերել մի փոքր այլ կերպ: Չորս պատկերներն ընդգրկում են շրջանակների մեջ և զույգ-զույգ տեղադրում թերթի ամբողջ մակերեսին՝ մինչև գոտկատեղը, սեղանի կամ գրակալի առջև նստած²²: Նման ձևով են

²⁰ Майкапар 2001, 47-48.

²¹ Հարությունյան, Սիմոնյան 2016, 22:

²² Ղարիբյան, Սահակյան 2018, 155:

պատկերված Լատինացու Աստվածաշնչում զետեղված՝ ավետարանիչների փորագրապատկերները: Այստեղ, ի տարբերություն Ոսկանյան Աստվածաշնչի, որտեղ ավետարանիչների պատկերները տեղադրված են մեկ էջի վրա, յուրաքանչյուր Ավետարանի գլուխ սկսվում է համապատասխան ավետարանչի դիմանկարով, ինչպես և ընդունված էր հայկական մանրանկարչության մեջ: Նրանց անունների լատիներեն մակագրությունները մնացել են փորագրատախտակի վրա, իսկ ներքևում կապգրով ավելացվել է հայերենը: Եթե հայկական արվեստում ավետարանիչները պատկերված են ճարտարապետական հենքի ներքո՝ գրակալների առջև, ապա այստեղ կա նկատելի տարբերություն. ավետարանիչները պատկերված են բարոկկո ժամանակաշրջանին բնորոշ սենյակային միջավայրում՝ նստած, լուսապսակով և ճառագայթներով պսակված, յուրաքանչյուրն իր խորհրդանշանի հետ, երեք քառորդ դիրքով: Վերջիններիս պատկերների ստեղծման համար ոգեշնչման աղբյուր են հանդիսացել Զիխեմի համանուն փորագրապատկերները, որն էլ իր հերթին ազդվել է Հենդրիկ Գուլցիուսի ստեղծագործություններից, որտեղ ցայտուն արտահայտված է Տիցիանի արվեստի ազդեցությունը (1593 թ., պահվում է Ռոտերդամի Բոյմանս վան Բեյնինգենի (Boymans van Beuningen) թանգարանում)²³: Հ. Հունգերն ու Կ. Վեսսելը Մատթեոսին և Ղուկասին դասում են «գրող», Մարկոսին՝ «գրքով» ավետարանիչների և Հովհաննեսին՝ «թելադրող» խմբին²⁴: Իսկ Ա.Մ. Ֆրենդը միջնադարյան ավետարանիչների դիմանկարները բաժանում է երկու հիմնական խմբի՝ կանգնած և նստած²⁵: Ֆրենդը, Վայցմանը և Բուխթալը ցույց են տալիս, որ ավետարանիչների բյուզանդական նկարները ծագում են անտիկ օրինակներից²⁶: Այդ պատկերները ստեղծվել են Էվրիպիդեսին, Սոֆոկլեսին և փիլիսոփաներ Պլատոնին, Արիստոտելին, Զենոնին պատկերող հելլենիստական շրջանի արձանների հիման վրա²⁷: Ըստ արևմտյան ավանդույթի, ավետարանիչների պատկերները բավական ազատ են, օժտված հեղինակի ժամանակաշրջանին բնորոշ որոշ գծերով, մասնավորապես նկատի ունենք հանդերձանքը, դիմագծերը, դիրքը: Յուրաքանչյուր ավետարանիչ պատկերված է համապատասխան խորհրդանշանով: Մարկոսը, Մատթեոսը և Ղուկասը ծերունիների տեսքով են: Մատթեոս ավետարանչի խորհրդանիշը հանդիսացող հրեշտակը պատկերված է գալարակը ձեռքին, որի վրա նշված է Քրիստոֆել վան Զիխեմի ստորագրությունը (CVS) (նկ. 14): Մարկոս ավետարանիչը պատկերված է Ավետարանը գրելիս (նկ. 15), Ղուկասը՝ խորհելիս (նկ. 16): Ղուկասի հետևում

²³ Reznicek 1993, 215.

²⁴ Mathews, Sanjian 1991, 177-178.

²⁵ Friend 1927, 123-124.

²⁶ Ղազարյան 83:

²⁷ Չուգասյան 1986, 33:

պատկերված է Տիրամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին: Ըստ հռոմեական ավանդության՝ Ղուկաս ավետարանիչն առաջինն է նկարել Տիրամորը մանկան հետ: Հովհաննես ավետարանիչը, որը Տիրոջ սիրելի աշակերտն էր, ի տարբերություն մյուսների, երիտասարդ է (նկ. 17): Այս փորագրանկարը հավանաբար համարվում է Լատինացու հեղինակային փորագրությունը, քանի որ իր պատկերագրությամբ կտրուկ տարբերվում է վերը նկարագրվածներից: Ավետարանիչը այստեղ պատկերված է պարեգոտով՝ Ավետարանը գրելիս: Պատկերի վերին աջ անկյունում նշմարվում է Հայտնության Տիրամոր կերպարը՝ մահիկի վրա կանգնած:

Ղուկաս ավետարանիչի փորագրանկարը սերտ աղերսներ ունի ֆլամանդացի գեղանկարիչ Էգիդիուս Ջադելեր Երկրորդի (Aegidius Sadeler II, 1570-1629 թթ.)՝ Սուրբ Օգոստինոս Երանելուն պատկերող դիմանկարի հետ («Եկեղեցու չորս հայրերը» շարքից, նկ. 18 դ): Էգիդիուս Ջադելեր Երկրորդն էլ վերը նշված դիմանկարն ստեղծել է ֆլամանդացի փորագրիչ, գեղանկարիչ Պիտեր դե Վիտտե Ավագի (Peter de Witte, 1548-1628 թթ.) աշխատանքի հիման վրա:

Չորս ավետարանիչների պատկերները թեև կարելի է համարել Լատինացու հեղինակային ստեղծագործությունները, այնուամենայնիվ, վերջիններս ստեղծելու համար հիմք են դարձել Ոսկանյան Աստվածաշնչի համանուն փորագրապատկերների տպատախտակները (նկ. 18 ա, բ, գ), որոնց համեմատ Լատինացու փորագրանկարները թույլ են տեսնիկական վարպետության և հուզական հագեցվածության տեսանկյունից:

Աստվածաշնչում արտացոլում են ստացել նաև հինկտակարանյան մի շարք տեսարաններ: Ծննդոց գրքի սկզբում Արարչագործության վեց օրերը ներկայացնող վեց փորագրանկարներն են: Հին Կտակարանի Ծննդոց գրքին առնչվող փորագրանկարները պատկերված են Ծննդոց գրքի նախադրության հիման վրա: Առաջին երկու պատկերները ներկայացված են գրեթե նույն պատկերագրությամբ: Հայր Աստված պատկերված է երկնքում ճախրելիս: Երրորդ փորագրանկարում բուսականության ստեղծման տեսարանն է: Վերջին երկուսն արտացոլում են Ադամի և Եվայի արարման, Ադամը և Եվան դրախտում, կենդանիների անվանակոչության տեսարանները: Հին Կտակարանի Ելից գիրքը սկսվում է Մովսեսի ծնունդը և վառվող, բայց չայրվող թուփը (անկեզ մորենին) պատկերող, բնագրի հետ համադրված փորագրապատկերներով:

Եզրակացություններ

Թեև երկու Աստվածաշնչում (Ոսկանյան և Պետրոս Լատինացու հրատարակությունները) հիմնականում ներկայացված է փորագրապատկերների

միևնույն պատկերագրությունը, բայց և այնպես դրանք տարբերվում են կերպարների փոփոխված մեկնաբանմամբ և կատարողական վարպետությամբ:

Ոսկան Երևանցու հրատարակությունից հետո Աստվածաշունչը երկրորդ անգամ հրատարակեց Պետրոս Լատինացին: Թեև այն մեծավ մասամբ Ոսկանյան Աստվածաշնչի կրկնությունն էր թե՛ բնագրային, թե՛ գեղարվեստական հարդարանքի տեսանկյունից, այնուամենայնիվ, կարևոր քայլ էր հայ գրատպության զարգացման գործում:

Գրականություն

- Ենոքյան Ա. 2016, Ոսկան Երևանցու տպագիր գրքերի պատկերագրությունը և դրա ազդեցությունը հայ գրքարվեստում, Ոսկան Երևանցի. Ճամփորդություն հայ տպագրության քառուղիներով գիտաժողովի նյութերից, Երևան, Մատենադարան, էջ 77-84:
- Թեօդիկ ՌՅԿԱ (1912), Տիպ ու տառ, «Գիր»-ին ծագման եւ միջազգային ու հայկական տպագրութեան վրայ ձգուած ակնարկ մը, Կոստանդնուպոլիս, տպ. Վ. և Հ. Ներսեսեան, 93 էջ+Ա-Ը:
- Կորկոտյան Բ. 1964, Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում, Երևան, «Ա.Հ.», 154 էջ:
- Հարությունյան Ա., Սիմոնյան Ա. 2016, Զորավոր Ավետարանը, Երևան, «Նահապետ», 63 էջ:
- Ղազարյան Վ. 1978, Ավետարանիչների պատկերագրությունը 16-րդ դարի Կիլիկյան մանրանկարչության մեջ, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում: Զեկուցումների ժողովածու, հ. 4, Երևան, 12-18 սեպտեմբերի, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., էջ 82-94:
- Ղարբինյան Ն., Սահակյան Ա. 2018, Ոսկանյան Աստվածաշնչի պատկերագրությունը. Եվրոպական արվեստի զուգահեռներով, Երևան, «Անտարես», 511 էջ:
- Մնացականյան Ա. 1955, Հայկական զարդարվեստ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 660 էջ, 1120 նկ.+ներդիր:
- Զուգասզյան Լ. 1986, Գրիգոր Ծաղկող, Երևան, ԵՊՀ հրատ., 157 էջ:
- Վ. Տերյան վարդապետ 1960, Աստվածաշնչի հայերեն տպագրության պատմությունից, Էջմիածին, ՌԹ., էջ 13-26:
- Казарян В., Манукян С. 1991, Матенадаран. Армянская рукописная книга VI-XIV вв., т. I, Москва, «Книга», 284 с.
- Майкапар А. 2001, Новый Завет в искусстве, Москва, «Крон пресс», 352 с.
- Холл Д. 1996, Словарь сюжетов и символов в искусстве, Москва, «Пресс», 656 с.
- Der Nersessian S. 1993, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, vol. I, Dumbarton Oaks Research Library and Collection, Washington, 198 p.
- Dictionnaire critique et documentaire des peintres, sculpteurs, dessinateurs et graveurs de tous les temps et de tous les pays par un groupe d'écrivains spécialistes français et étrangers by E. Benezit 1976, Paris, 603 p.
- Mathews T., Sanjian A. 1991, Armenian Gospel Iconography, The Tradition of the Glajor Gospel, Washington, The Stinehour Press Lunenburg, 440 p.
- Reznicek E. 1993, Drawings by Hendrick Goltzius, Thirty Years Later: Master Drawings, Autumn, vol. 311, N 3, p. 215-278.
- Ross L. 1996, Medieval Art: A Topical Dictionary, London, Greenwood Press, 293 p.

Schiller G. 1971, Iconography of Christian Art, vol. I, London Lund Humphries Publishers Ltd, 474 p.

ՊԵՏՐՈՍ ԼԱՏԻՆԱՅՈՒ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ

Արփինե Սիմոնյան

Ամփոփում

Կոստանդնուպոլսում 1705 թ. հրատարակվում է հայատառ երկրորդ տպագիր «Աստվածաշունչ» մատյանը: Տպագրիչն էր Ոսկան Երևանցու աշակերտ Պետրոս Լատինացին: Վերջինիս ջանքերով էլ հավանաբար Ոսկանյան տպարանի գույքը տեղափոխվել էր Կոստանդնուպոլիս: Լատինացու հրատարակությունները սակավ են, որոնց մեջ իր կարևորությամբ և գեղարվեստական հարդարանքով առանձնանում է 1705 թ. պատկերազարդ Աստվածաշունչը: Այն բաղկացած է Հին և Նոր Կտակարաններից և բնագրային առումով Ոսկանյան Աստվածաշնչի կրկնությունն է: Լատինացու Աստվածաշնչի գեղարվեստական ձևավորումը բաղկացած է փորագիր զարդանախշերից, ինչպես նաև թեմատիկ, բնագրի հետ համադրված փորագրապատկերներից: Զարդանախշերի կապը ձեռագրարվեստի զարդարուն տարրերի հետ տակավին սերտ է, սակայն այդ ամենի հետ կան նաև այնպիսիք, որոնք բնորոշ են միայն եվրոպական գրքարվեստի սկզբունքներին: Ինչ վերաբերում է թեմատիկ փորագրապատկերներին, ապա դրանց ստեղծման համար հիմք են ծառայել Ոսկան Երևանցու Աստվածաշնչում զետեղված Հին և Նոր Կտակարանների փորագրապատկերների տպատախտակները, որոնց հեղինակն է ծագումով գերմանացի, Հոլանդիայում իր գործունեությունը ծավալած փորագրիչ-նկարիչ Քրիստոֆել վան Զիխենը: Պետրոս Լատինացու Աստվածաշունչը թեև մեծավ մասամբ Ոսկանյան Աստվածաշնչի կրկնությունն էր թե՛ բնագրային, թե՛ գեղարվեստական հարդարանքի տեսանկյունից, այնուամենայնիվ, կարևոր քայլ էր հայ գրատպության զարգացման գործում:

Բանալի բառեր՝ Պետրոս Լատինացի, Աստվածաշունչ, Ոսկան Երևանցի, փորագրապատկեր, տպագիր գիրք, Քրիստոֆել վան Զիխեն, մանրանկար:

ХУДОЖЕСТВЕННОЕ ОФОРМЛЕНИЕ БИБЛИИ ПЕТРОСОМ ЛАТИНАЦИ

Арпи́не Симо́нян

Резюме

В 1705 г. в Константинополе учеником Воскана Ереванци – Петросом Латинаци была издана вторая армяноязычная «Библия». Вероятно, именно благодаря усилиям Петроса Латинаци весь инвентарь типографии Восканян был перевезен в Константинополь. Издания, осуществленные Петросом Латинаци, немногочисленны, среди них по своей важности и художественному оформлению можно выделить вышеупомянутую красочно иллюстрированную Библию с Ветхим и

Новым Заветом, являвшую собой переиздание Библии Восканян. Художественное оформление Библии Латинаци включает в себя гравированные декоративные элементы, равно как и соответствующие оригиналу тематические гравюры. Очевидна связь между орнаментальными элементами издания и элементами декора, которые присутствуют в рукописном искусстве, но вместе с тем есть и такие орнаментальные узоры, которые характерны лишь для европейского книжного искусства. Что же касается тематических гравюр, то основой для их создания послужили печатные платы Библии Воскана Ереванци, автором которых является немецкий гравировщик – художник Кристоффель ван Зихем, развернувший деятельность в Голландии. Хотя это издание в целом является переизданием изданной Восканом Ереванци Библии как с точки зрения оригинального текста, так и художественного оформления, но в то же время оно явилось важным шагом в развитии армянского книгопечатания.

Ключевые слова – Петрос Латинаци, Библия, Воскан Ереванци, гравюра, печатная книга, Кристоффель ван Зихем, миниатюра.

THE ARTISTIC DECORATION OF THE BIBLE OF PETROS LATINATSI

Arpine Simonyan

Abstract

The second Armenian printed Bible was published by Petros Latinatsi, Voskan Yerevantsi's pupil in 1705 in Constantinople. Due to the latter's efforts, the property of the Voskanian printing house was probably moved to Constantinople. The editions of Latinatsi are scarce, among which the illustrated Bible published in 1705 stands out with its richness and artistic decoration. It consists of the Old and New Testaments and is a replica of the original Voskanian Bible. The artistic decoration of the Latinatsi's Bible consists of engraved ornaments, and thematic engravings combined with the original. The connection of ornaments with the decorative elements of manuscript art is still close, but with all that there are those which are characteristic only of the principles of European book art. As for the thematic engravings, the basis for their creation was the printing boards of the Old and New Testament engravings in the Bible of Voskan Yerevantsi, which were created by Christopher van Sichem the Younger, a German-born engraver and painter based in the Netherlands. Although Latinatsi's edition was largely a duplication of the Voskanian Bible, both in terms of original and artistic decoration, it was nevertheless an important step in the development of Armenian typography.

Key words – Petros Latinatsi, Bible, Voskan Erevantsi, engraving, printed book, Christoffel van Sichem, miniature.

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՈՒՏՅԱՆ. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

Հայկուշ Սահակյան

Հայաստանի ազգային պատկերասրահի հայկական գեղանկարչության բաժնի վարիչ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ

ՀՀ, Երևան, Արամի 1

Էլ. հասցե՝ haykouhie.sahakyan@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 13.05.2022, գրախոսվել է 17.05.2022, ընդունվել է տպագրության 11.04.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.1-222

Ներածություն

Հայ գեղանկարիչ, գրաֆիկ, թատրոնի և կինոյի նկարիչ, գրքի և պլակատի ձևավորող Միքայել Արուտչյանը (1897-1961) թողել է հարուստ ժառանգություն: Ժամանակի հեղափոխական գաղափարներով խանդավառ, ակտիվ հասարակական գործիչ և ստեղծագործական որոնումների ու խիզախումների ճամփան բռնած Արուտչյանի ներդրումը մեծ է հատկապես թատերական ձևավորումների, գրքային և պլակատային գրաֆիկայի ասպարեզում. նրա շնորհիվ հայկական բեմանկարչությունը դրվեց պրոֆեսիոնալ հիմքերի վրա, իսկ գրքի ձևավորման հայ բազմադարյան ավանդույթները հարստացան և նոր որակ ստացան: Ցավոք, արվեստագետի հարուստ ժառանգությունը մինչ օրս չի ներկայացվել համահավաք հրատարակությամբ: Այս առումով հատկապես արժեքավոր են Նազելի Մազմանյանի կազմած կատալոգը, Վիլիելմ Մաթևոսյանի՝ Արուտչյանի գրքային նկարազարդումներին նվիրված ուսումնասիրությունը և թատերագետ Լևոն Խալաթյանի՝ բեմանկարչության վերաբերյալ հոդվածները, որոնք աղբյուրագիտական նյութ են տրամադրում հետազոտությունների համար: Ընդհանրական գծերով ներկայացնենք Մ. Արուտչյանի կյանքն ու գործունեությունը արվեստի տարբեր բնագավառներում, որոնք լրացված են նորահայտ տվյալներով: Ուսումնասիրությունը կատարվել է ըստ մասնագիտական գրականության, պարբերական մամուլի և ՀԱԱ-ի, ՀԱՊ-ի, ԳԱԹ-ի, Սարատովի պետական արխիվի, Բեռլինի Հումբոլդտի անվ. համալսարանի արխիվային փաստաթղթերի ու գեղարվեստական նյութերի:

Կյանքը և գործունեությունը

Մ. Արուտչյանը ծնվել է 1897 թվականին Շուշիում¹: Սովորել է Բաքվի արական գիմնազիայում (1916), այնուհետև իրավաբանական կրթություն է

¹ Տվյալները ներկայացված են ըստ Միքայել Արուտչյանի ծեռագիր կենսագրականի: ՀԱՊ, ՀՁԳԲ ֆոնդ 32, թա. 1, ի 125 և ԳԱԹ-ի Դանիել Դզնունու ֆոնդում պահվող մեքենագիր նյութերի N 22:

ստացել Մոսկվայում: Նա ստեղծագործական ասպարեզ է մտել մի ժամանակաշրջանում, երբ 1917 թվականի հեղափոխությունից և Առաջին աշխարհամարտից հետո հետզհետե սկսում է առաջին պլան մղվել նոր ձևավորվող սոցիալիստական մշակույթը՝ էապես փոխելով գեղարվեստական կյանքի բազմագույն համայնապատկերը: Ինչպես առաջադեմ շատ արվեստագետներ, Արուտչյանը ևս անվերապահորեն ընդունեց Հոկտեմբերյան հեղափոխությունը՝ ակտիվորեն մասնակցելով հասարակական և գեղարվեստական կյանքի նորացմանը: 1918-ին Արուտչյանը տեղափոխվում է Սարատով և անմիջապես ներգրավվում տեղի մշակութային անցուդարձին²: Այստեղ նա սովորում է գեղարվեստատեսիկական ազատ արվեստանոցներում (ВХУТЕМАС)՝ նկարիչներ Ալեքսեյ Կրավչենկոյի և Ալեքսանդր Սավինովի մոտ, միաժամանակ համագործակցում է արվեստի պարբերականների հետ³, որտեղ տպագրվում էին նրա բանաստեղծություններն ու հոդվածները: Սարատովյան շրջանից մեզ հասել են Մ. Արուտչյանի սակավաթիվ գործեր՝ մի քանի գրաֆիկական աշխատանքներ և թատերական էսքիզներ: 1919 թվականին նկարիչը աշխատում է Սարատովի սատիրայի և կոմեդիայի թատրոնում⁴, որտեղ սերտորեն համագործակցում է անվանի ռեժիսոր Աբրամ Ռոոմի հետ, ստեղծում թատրոնի խորհրդանիշը, ինչպես նաև դեկորացիաների և հագուստների էսքիզներ՝ Ա. Պուշկինի «Հեքիաթ տերտերի և նրա Բալդի ծառայի մասին» և Ֆրանսուա Բագենի «Փաստաբան Պատլեն» (նկ. 1) ներկայացումների համար, որոնք այժմ պահվում են Սարատովի Ռադիշևսկի անվան կերպարվեստի թանգարանում:

1919 թ. վերջին Արուտչյանը որպես նկարիչ ընդգրկվում է Կարմիր բանակի հեծելազորային կորպուսում, որի ղեկավարը Հայկ Բժշկյանցն (Գայ) էր, մասնակցում է ցարիցիսյան, հյուսիսկովկասյան մարտերին՝ հասնելով մինչև Լեհաստան: 1921-24 թթ. Արուտչյանն իր կրթությունը շարունակում է Բեռլինի Ֆրիդրիխ Վիլիելմ (այժմ՝ Հումբոլդտի) համալսարանի իրավաբանության բաժնում⁵, որպես Անդրկովկասի ժողկոմխորհի կրթաթոշակառու: Ինչպես նշված է նկարչի ինքնակենսագրականում, Բեռլինում նա հաճախել է նաև Գեղարվեստի ակադեմիա՝ որպես ազատ ունկնդիր: 1925 թ. Արուտչ-

² «Михаил Аветович Арутчев, действительно состоит на службе в Провинциальном управлении Саратовского Отдела Искусств в качестве инструктора-заведующего секцией национальных меньшинств, что надлежащими подписями и приложением печати Провинциального управления удостоверяется. Зав. провинц. Управлением Н. Иванов», ГАСО, ф. 494, оп. 1, ед. хр. 189.

³ 1918-1919 թթ. Արուտչյանն աշխատակցել է Սարատովում լույս տեսնող «Художественные известия» և «Горнило» պարբերականներին:

⁴ Թատրոնը հիմնադրվել է հայտնի կինոռեժիսոր Աբրամ Ռոոմի ջանքերով, որն էլ եղել է առաջին բեմադրությունների ռեժիսորը և կրում էր «Театр лубочной драмы и комедии, сатиры, кукол и петрушки» անվանումը:

⁵ Տվյալները ճշտվել են ըստ Հումբոլդտի համալսարանի արխիվի, ավարտական վկայականում վերջին դասախոսությունը թվագրված է 1925-ի ապրիլի 20-ով:

յանը մեկնում է Փարիզ և մեկ տարի ուսանում Կոլառոսսի ակադեմիայում⁶։ Նույն թվականի վերջին Արուստյանը հաստատվում է Երևանում⁷։ Հայաստան տեղափոխված այլ արվեստագետների հետ նա մշակութային և հասարակական ակտիվ գործունեություն է ծավալում՝ ի նպաստ հայրենի երկրի վերակառուցման, և անմիջապես ներգրավվում է պարբերական մամուլի ոլորտ՝ աշխատակցելով «Խորհրդային Հայաստան», «Կարմիր մոծակ», «Հայաստանի աշխատավորուհի» և այլ պարբերականների։ Նկարչի գործունեությունն աստիճանաբար ընդլայնվում է՝ ներառելով պլակատի, մատենանկարչության, թատրոնի, օպերայի, բալետի, կինոյի, միջազգային ցուցահանդեսների տաղավարների և ինտերիերի ձևավորման ասպարեզները։ Հայ մշակույթի զարգացումը թևակոխում է մի նոր փուլ. արդյունաբերության ու տնտեսության զարգացման արագ տեմպերն արվեստում ձևավորում են նոր ժանրեր ու թեմաներ, մեծ կարևորություն է ստանում գրաֆիկան՝ մասնավորապես պլակատը։ Ժողովրդական շքերթներն ու լայնամասշտաբ միջոցառումները պահանջում էին գեղարվեստական ձևավորում, որով զբաղվում էին պրոֆեսիոնալ նկարիչները։ 1927 թ. Մոսկվայում որոշում է ընդունվում Հայաստանում Հեղափոխական Ռուսաստանի նկարիչների միավորման մասնաճյուղ՝ «Հայկական AXPP» բացելու վերաբերյալ (1928-ից՝ Հեղափոխության նկարիչների միավորում), որի հիմնադիրներն էին Կերպարվեստի աշխատողների ընկերության կազմից դուրս եկած արվեստագետներ Գ. Գյուրջյանը, Ա. Սարգսյանը, Մ. Արուստյանը, Վ. Գայֆեճյանը, Ա. Ուրարտուն և Ս. Թարյանը⁸։ Արուստյանն անդամակցում է նաև Ռուսաստանում հիմնադրված ճարտարապետական ՎՕՊՐԱ⁹ խմբավորման հայկական մասնաճյուղ ՕՊՐԱ-ին¹⁰ (Организация пролетарских архитекторов՝ Պրոլետարական ճարտարապետների կազմակերպություն)։ Ճարտարապետ Կարո Հալաբյանի ղեկավարությամբ 1929-ին ստեղծվում է «Հայպետարոյեկտ» բյուրոն, որի գլխավոր նկարիչ է նշանակվում Մ. Արուստյանը (1929-1931)։ Հայտնի են ինտերիերի հարդարման նրա հեղինակած մի շարք նախագծեր։


⁶ Իտալացի քանդակագործ Ֆիլիպպո Կոլառոսսիի հիմնած ակադեմիան գործել է Փարիզում 1870-1930-ականներին։ Այստեղ ուսանել են մի շարք հայտնի արվեստագետներ՝ Ալֆոնս Մոլիսան, Կամիլլա Կլոդելը, Ամեդեո Մոդիլիանին, Մաքսիմիլիան Վոլոշինը և այլք։ Ցավոք, ակադեմիայի արխիվները չեն պահպանվել, և անհնար է որևէ տեղեկություն քաղել Միքայել Արուստյանի մասին։

⁷ Արուստյանին Ֆրանսիայից արտաքսել են Սովետական Անդրկովկասի ուսանողների միության շրջանակում ակտիվ քաղաքական գործունեության պատճառով։ ԳԱԹ, Դ. Դզնունու ֆոնդ, N 17։

⁸ Տե՛ս Աղասյան, Հակոբյան, Հասրաթյան, Ղազարյան 2009, 342։

⁹ ՎՕՊՐԱ (Всероссийское общество (Всесоюзное объединение) пролетарских архитекторов) հիմնադրվել է 1929 թվականին՝ Մոսկվայում։ Խմբավորումը, որն իր մասնաճյուղերն ուներ ԽՍՀՄ տարբեր երկրներում, գործեց մինչև 1932 թվականը։

¹⁰ ՕՊՐԱ-ի ստեղծման ակունքներում կանգնած էին ճարտարապետներ Կ. Հալաբյանը, Մ. Մազմանյանը, Գ. Քոչարը։ 1929-30-ական թթ. նրանք նախագծել են նոր տիպի կառույցներ՝ բանվորական ակումբներ, վարչական շենքեր ու գործարաններ, գյուղերի և բանավանների հատակագծեր։



Նկ. 1. «Փաստաբան Պատլեն» ներկայացում, 1918, Սարատովի Ա. Ռադիշևի անվան կերպարվեստի թանգարան



Նկ. 2. «Թափառնիկոս» օպերայի դեկորացիայի էսքիզ, 1938, ՀԱՊ



Նկ. 3. Էսքիզ «Պեպո» ֆիլմի համար, ԳԱԹ



Նկ. 4. Զգեստի էսքիզ «Հյուսիսային ծիածան» ֆիլմի համար, 1958, ԳԱԹ

Նկ. 5. Ա. Արենդսեն «Միայնակ աշուն» գրքի շապիկը, 1914



Նկ. 6. Մ. Սերվանտեսի «Դոն Կիխոտ» վեպի նկարազարդում (ֆրոնտիսպիս). Սերվանտեսի դիմանկարը, 1934, ՀԱՊ

Նկ. 7. Ամսագրի շապիկը, Սարատով, 1918



Հեղափոխության տասնամյակի առթիվ 1930 թ. բացված ցուցահանդեսում, ի թիվս տարբեր նկարիչների ստեղծագործությունների, այս բյուրոն¹¹ ներկայացնում է բնակելի, հասարակական, գործարանային շենքերի և ներքին հարդարման ու սարքավորումների նախագծեր¹²: Պահպանվել են Երևանի շինարարների ակումբի¹³ համար Մ. Արուտչյանի նախագծով պատրաստված կահույքի լուսանկարները¹⁴: Հաստոցային գեղանկարչությամբ Արուտչյանը քիչ է զբաղվել՝ հայտնի են Ազգային պատկերասրահում պահվող երկու յուղաներկ աշխատանքներ («Մաուզերիստներ», «Դիլիջանի բնանկար»):

Հայրենական պատերազմի առաջին իսկ ամիսներին նկարիչը զորակոչվում է ռազմաճակատ, սակայն շուտով վերադառնում է և նշանակվում Մոսկվայի շրջաններից մեկի, այնուհետև՝ Բաքվի լուսաբողարկման գլխավոր նկարիչ¹⁵: 1942 թ. նա գործունեությունը շարունակում է արդեն Երևանում:

Թատրոն, օպերա, բալետ

Թատրոնում Արուտչյանի տաղանդը դրսևորվում է լիարժեք: Հայաստանում հաստատվելու առաջին տարիներից նա սկսում է աշխատել բեմական ձևավորումների վրա. 1928 թ. նշանակվում է Առաջին պետթատրոնի գլխավոր նկարիչ (մինչև 1937 թ.) և, համագործակցելով հայկական ռեժիսորական արվեստի ռահիվիրաներ Լևոն Քալանթարի, Արշակ Բուրջալյանի, Արմեն Գուլակյանի և այլոց հետ, ձևավորում տասնյակ ներկայացումներ: Այդ համագործակցությունը շարունակվում է նաև Օպերայի և բալետի թատրոնում:

1930-50-ական թվականները վստահաբար համարվում են Մ. Արուտչյանի ստեղծագործական ամենաբեղուն տարիները: Կոթողային մի շարք բեմադրություններ հայկական թատրոնի փառավոր էջերից են նաև Արուտչյանի շնորհիվ՝ Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար», Պ. Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնությունը», Ու. Շեքսպիրի «Մակբեթ», «Օթելլո», Մ. Լերմոնտովի «Դիմակահանդես», Գ. Ֆիգերյեդոյի «Եզովպոս», Մ. Ջանանի «Շահնամե» և շատ այլ ներկայացումներ Առաջին պետթատրոնի և այլ բեմերում: Արգասաբեր էր նաև աշխատանքը Օպերայի և բալետի թատրոնում, որտեղ գլխավոր նկարիչի պաշտոնում նա աշխատել է 1937-40 թթ: Առաջին աշխատանքն այստեղ Մ. Սարյանի համահեղինակությամբ «Ալմաստ» օպերայի հայկական անդրանիկ բեմադրությունն էր, որով 1933 թ. բացվում է Ալ. Սպենդիարյանի ան-

¹¹ Բյուրոյի ներկայացուցչական կազմը հետևյալն էր՝ Ա. Ահարոնյան, Կ. Հալաբյան, Մ. Մազմանյան, Հ. Մարգարյան, Ս. Սաֆարյան, Գ. Քոչար, Մ. Արուտչյան:

¹² Կատալոգ X ամյակի կերպարվեստի ցուցահանդեսի: 1-ին օլիմպիադա: 1920-1930, 1930, 18-19:

¹³ 1929 թվականին կառուցված Շինարարների ակումբի հեղինակները Միքայել Մազմանյանը, Կարո Հալաբյանը և Գևորգ Քոչարն են: Այն ներկայիս Սրանիսլավսկու անվան ռուսական թատրոնն է, որտեղ մինչև օպերայի շենքի կառուցվելը տեղի էին ունենում օպերային թատրոնի ներկայացումները:

¹⁴ ОПРА Армении 1931, 54.

¹⁵ Մազմանյան 1984, 21:

վան օպերայի և բալետի թատրոնը: Հետագայում հաջորդում են Զ. Վերդիի «Ռիգոլետտո», Ժ. Բիզեի «Կարմեն», Լեոնկավալլոյի «Պայացներ», Զ. Պուչչի-նիի «Տոսկա», Ա. Այվազյանի «Թափառնիկոս» (նկ. 2), Զ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Պ. Չայկովսկու «Պիկովայա դամա», Բ. Ասաֆևի «Կովկասի գերին» բեմադրությունները և շատ այլ օպերաներ ու բալետներ:

Արուտչյանի ձևավորումներով են բեմադրվել նաև մի շարք պիեսներ Երևանի Ա. Միկոյանի անվան պատանի հանդիսատեսի, Լենինականի Ա. Մռավյանի անվան պետական դրամատիկական, Երևանի Կ. Ստանիսլավսկու անվան, Բաքվի Հայկական պետական դրամատիկական, Բաքվի Մ. Ախունդովի անվան, Մոսկվայի Մոսսովետի անվան պետական ակադեմիական և շատ այլ թատրոններում:

Արուտչյանի աշխատանքներն իրավամբ բեմանկարչության լավագույն նմուշներից են: Նա առաջինն էր, որ շարունակեց Յակոբովի ներմուծած բեմական մակետների միջոցով աշխատելու ավանդույթը՝ հայկական բեմանկարչությունը դնելով պրոֆեսիոնալ հիմքերի վրա:

Կինո

1923 թ. նորաստեղծ Հայպետկինոն Համո Բեկնազարյանի ղեկավարությամբ սերտորեն համագործակցում է արդեն իսկ մեծ համբավ վայելող Պետ-թատրոնի ռեժիսորական և դերասանական կազմի հետ: Մ. Արուտչյանը 1927-29 թթ. աշխատում է Պետկինոյում՝ որպես գլխավոր նկարիչ¹⁶: Նրա հեղինակած դեկորացիաներով ու էսքիզներով են ստեղծվել «Զարե» (1926), «Խաս-փուշ» (1927), «Հաշիմ» (1928), «Պեպո» (1935) (նկ. 3), «Դավիթ Բեկ» (1943), «Հյուսիսային ծիածան» (1960) (նկ. 4) և այլ ֆիլմեր, որոնց էսքիզներից շատերը ցայսօր չեն հրապարակվել: Նկարահանումների ընթացքում նա աշխատել է ռեժիսորներ Համո Բեկնազարյանի, Արտաշես Հայ-Արտյանի և Հայկինոյի սիրված դերասաններ Հրաչյա Ներսիսյանի, Ավետ Ավետիսյանի, Վարդուհի Վարդերեսյանի, Տատյանա Մախմուրյանի, Դավիթ Մալյանի և այլոց հետ: Արուտչյանը ստեղծել է նաև «Զարե» ֆիլմի կինոպլակատը, որի էսքիզները պահվում են ՀԱՊ-ում և Մոսկվայի Արևելքի ժողովուրդների թանգարանում:

Գրքային ձևավորումներ

Այս ուսումնասիրության շրջանակում հայտնաբերվեց ռուսական Արծաթե դարի պոետ Ալեքսանդր Արենդսենի «Միայնակ աշուն» բանաստեղծական ժողովածուի (1914 թ., Խարկով) շապիկը, որը, ամենայն հավանականությամբ, Միքայել Արուտչյանի ամենավաղ աշխատանքներից է: Այն սիմետրիկ գծային հորինվածք է՝ ռուսական մոդեռնին բնորոշ ոճավորմամբ, որտեղ

¹⁶ Մազմանյան 1984, 20:

օգտագործված են բուսածաղկային մոտիվներ և մարդկային ֆիգուրներ, ստորին աջ անկյունում կա ռուսերեն ստորագրություն՝ «М. АРУТЧЕВЪ. 1914» (նկ. 5): Արդեն Հայաստանում՝ Ե. Չարենցի հրավերով Հայպետհրատի գեղարվեստական բաժնում, Մ. Սարյանի, Հ. Կոջոյանի, Տ. Խաչվանքյանի և այլոց հետ Արուտչյանը ձևավորել է հայ, ռուս և եվրոպացի հեղինակների երկեր: Նրա բարձրարժեք պատկերազարդումներով են լույս տեսել Հ. Թումանյանի «Քաջ Նազար»-ը (1931), Մ. Սալտիկով-Շչեդրինի «Մի քաղաքի պատմություն»-ը (1933), Ե. Չարենցի «Երկիր Նաիրի»-ն (1934), Մ. Սերվանտեսի «Դոն Կիխոտ»-ը (1934), Ա. Պուշկինի «Կապիտանի աղջիկը»-ը (1936), «Եվգենի Օնեգին»-ը (1949), Վոլտերի «Ընտիր երկեր»-ը (1958) և այլ գրական կորթոններ: Արուտչյանի թատերային մտածողությունն ու գրական ստեղծագործության պատկերային մեկնաբանման մեծ վարպետությունը դրսևորվել են գրքային գրաֆիկայի բնագավառում: Ինչպես իր բեմանկարչական գործերում, նա հարազատ է մնացել այդ երկերում նկարագրվող պատմական ժամանակաշրջանին, աշխարհագրական, ազգային ու կենցաղային միջավայրին, դրանց գեղարվեստագաղափարական բովանդակությանը, հեղինակի աշխարհայացքին ու ստեղծագործական մեթոդին՝ բոլոր դեպքերում մնալով իբրև հայ նկարիչ և տալով ազգային-հայկական որոշակի դեմք ունեցող գրքային գրաֆիկայի բարձրակարգ նմուշներ¹⁷:

Մ. Արուտչյանի հոդվածները

Մ. Արուտչյանը հանդես է եկել նաև որպես տեսաբան-քննադատ: Դեռևս ուսանողական տարիներին նա թղթակցել է Սարատովում լույս տեսնող պարբերականներին, կատարել ամսագրերի ձևավորումներ (նկ. 7), տպագրել բանաստեղծություններ ու հոդվածներ՝ Михаил Ар. կամ М. Ар. ծածկանուններով: Մասնավորաբար՝ Սարատովի մամուլում հեղափոխության հորեյանական տոնակատարությունների վերաբերյալ տպագրվել է «Художественные итоги» հոդվածը, որտեղ նա խոսում է քաղաքի տոնական հարդարանքի, տեղադրված քանդակների մասին: Անդրադառնալով Չերնիշևսկու և Ռադիշևսկի քանդակների լուծումներին՝ նա շեշտում է գեղարվեստական ստեղծագործության համամասնությունների ներդաշնակության կարևորությունը՝ օրինակներ բերելով համաշխարհային կերպարվեստից: «Երբ մեր օրերում զանգվածային գեղարվեստական կրթության հարցը դարձել է հանապազօրյա խնդիր, Ռադիշևսկի հուշարձանի նման երևույթները, որոնք կապ չունեն արվեստի հետ, կարող են թյուր կերպով մեկնաբանվել և ամեն դեպքում քիչ բան կտան զանգվածների մտքին և սրտին, որոնք հետաքրքրությամբ սպասում են արվեստի նոր բացահայտումներին»¹⁸: Հատկապես ուշագրավ է «Соборное

¹⁷ Մաթևոսյան 2002, 141-142:

¹⁸ Художественные итоги, Художественные известия 1918, N 17, Михаил Ар., 4-5.

действие» հոդվածը, որը փոքր-ինչ իդեալականացված ներկայացնում է նոր հասարակության՝ թատրոնին առաջադրած պահանջները: Այս տարիներին «Художественные известия» պարբերականում տպագրվել են նաև Արուստյանի գրած բանաստեղծությունն¹⁹ ու արձակ էսսեն²⁰: Այս նորահայտ հոդվածները թույլ են տալիս նկարչի վաղ շրջանի գործունեության ուշագրավ դրվագներ բացահայտել և ծանոթանալ այն գաղափարներին, որոնց հիման վրա ձևավորվել են նրա գեղարվեստական հայացքները:

Խորհրդահայ իրականության մեջ առանձնակի ուշադրության է արժանի նրա «Թանգարանային շինարարության ժամանակակից պրինցիպները եւ ՀԽՍՀ պետական թանգարանը» հոդվածը²¹: Այստեղ և հաջորդ համարում տպագրված ակնարկում²² նա անդրադառնում է թանգարանի առջև դրված խնդիրներին, մշտական ցուցադրության կազմակերպման սկզբունքներին և քննության է առնում կերպարվեստի հավաքածուն: Արուստյանի այս հոդվածները մեծ արձագանք ստացան «Նորք» պարբերականի էջերում՝ վերածվելով վիճաբանության Մ. Արուստյանի և թանգարանի գեղարվեստական բաժնի վարիչ, հետագայում՝ տնօրեն, արվեստաբան Ռուբեն Դրամբյանի միջև²³: Ներկայացնելով ՀԽՍՀ պետական թանգարանի վիճակը՝ նկարիչն առաջարկում էր մի շարք փոփոխություններ. կերպարվեստի ցուցադրությունը կազմակերպել այնպես, որ հնարավոր լինի ընկալել «պատմական պրոցեսի դիալեկտիկան» և ոչ թե տուրք տալ միայն «զուտ էսթետիկական» սկզբունքներին: Նա կարևորում էր նաև դասախոսարանների՝ «լեկտորիաների» ստեղծումը, որը կօգներ հասարակությանն առավել պատրաստված հաճախել թանգարաններ:

1932 թվականին լույս տեսած «Հոկտեմբեր-նոյեմբեր» տարեգրքում տպագրվել է Մ. Արուստյանի «Կերպարվեստը Խորհրդային Հայաստանում» հոդվածը, որտեղ նա ներկայացնում է դարասկզբի հայկական կերպարվեստի ընդհանուր պատկերը, արվեստագետներին և նրանց առջև դրված խնդիրները:

Արուստյանը մասնակցել է հայաստանյան և միջազգային ցուցահանդեսներին, զբաղվել է համամիութենական պատկերահանդեսների տաղավարների ձևավորումներով: Հայաստանում իր աշխատանքներն առաջին անգամ ներկայացրել է Կերպարվեստի աշխատողների ընկերության գրաֆիկական առաջին ցուցահանդեսին (1926 թ.): Նկարիչը հեղինակություն է վայելել նաև Ռուսաստանում. մասնակցել է 1927 թ. Մոսկվայում ԽՍՀՄ ժողովուրդների

¹⁹ Художественные известия 1918, N 12, Михаил Ар., Грядущий день, 5.

²⁰ Художественные известия 1918, N 9, Михаил Ар., Город, 6.

²¹ Արուստյան 1926, 210-216:

²² Արուստյան 1927, 235-242:

²³ Դրամբյան 1927, 243-256:

ցուցահանդեսին՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության 10-ամյակին, 1939 թ. Մոսկվայում հայկական մշակույթի տասնօրյակին, որի միջոցառումների շրջանակներում ընդգրկված էր նաև Հ. Ստեփանյանի «Լուսաբացին» օպերան՝ նկարչի ձևավորումներով, որի համար նա պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: Նույն թվականին նկարչի աշխատանքները ներկայացվել են Նյու-Յորքում բացված համաշխարհային ցուցահանդեսում: 1949-1954 թթ. Արուտչյանը նշանակվել է Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի (ВДНХ) Հայկական ՍՍՀ տաղավարի գլխավոր նկարիչ:

1960-ին արվեստագետն իր ընտանիքով հաստատվում է Մոսկվայում, համագործակցում Մոսսովետի անվան թատրոնի հետ՝ ձևավորելով Գ. Տեր-Գրիգորյանի «Վերջին մեխակներ» պիեսը: 1961 թ. Արուտչյանը կնքում է մահկանացուն՝ անավարտ թողնելով Ս. Միխալկովի «Զգույշ եղեք, տերևաթափ է» ներկայացման աշխատանքը, որն ավարտում է որդին:

Մ. Արուտչյանը բազմաթեղուն գործունեության համար արժանացել է պարգևների, 1935 թ. նրան շնորհվել է վաստակավոր գործչի, 1958-ին՝ ՀՍՍՀ ժողովրդական նկարչի կոչում: Նրա ստեղծագործությունները պահվում են ՀԱՊ-ում, ԳԱԹ-ում, Ե. Չարենցի տուն-թանգարանում, Մոսկվայի Ա. Բախրուշինի անվան թատերական թանգարանում, Արևելքի ժողովուրդների թանգարանում, Գրականության և արվեստի ռուսական պետական արխիվում և մասնավոր հավաքածուներում:

Եզրակացություններ

Միքայել Արուտչյանը XX դարի առաջին կեսի հայ կերպարվեստի դիմագիծը ձևավորող արվեստագետներից է: Թատերական ուրույն մտածողությամբ օժտված այս նկարչի ավանդը մեծ է գրքային և պլակատային գրաֆիկայի, բեմանկարչության, կինոնկարչության ասպարեզներում: Ուշագրավ են նրա տեսական և քննադատական հոդվածները, որոնք արտացոլում են դարասկզբին արվեստի առջև դրված խնդիրները, կարևորում ժողովրդական լայն զանգվածների գեղարվեստական կրթությունն ու արծարծում մի շարք թանգարանագիտական հարցեր:

Գրականություն

Աղայան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ. 2009, Հայ արվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 576 էջ:

Արուտչյան Մ. 1926, Թանգարանային շինարարության ժամանակակից պրինցիպները եւ ՀԽՍՀ պետական թանգարանը, Նորք, թիվ 2:

Արուտչյան Մ. 1927, ՀԽՍՀ Պետական թանգարանի գեղարվեստական բաժնի մասին, Նորք, թիվ 1:

ԳԱԹ, Դանիել Դզնունու ֆոնդ, N 16:

Դրամբյան Ռ. 1927, Սկզբո՛ւնք, թե՛ անսկզբունքայնություն, Նորք, թիվ 1:

ՀԱՊ, ՀԶԳԲ, Միքայել Արուտչյանի ֆոնդ, ի. 125:

Կատալոգ X ամյակի կերպարվեստի ցուցահանդեսի: 1-ին օլիմպիադա: 1920-1930, 1930
Երևան, տպարան Հայպոլիգրաֆի, 20 էջ:

Մազմանյան Ն. 1984, Միքայել Արուտչյան, Կատալոգ, Երևան, ՀՍՍՀ հրատարակչություն-
ների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի N 1 տպա-
րան, 136 էջ:

Մաթևոսյան Վ. 2002, Երեք կիսադեմ, Երևան, «Սարգիս Խաչենց», 213 էջ:

Госархив Саратовской области, ф. 494, оп. 1, ед. хр. 189, с. 1.

ОПРА Армении 1931, Мебель клуба строителей в Эривани. Художник М. Арутюнян, «Со-
ветская архитектура», N 3, Москва, Государственное технико-теоретическое изда-
тельство, с. 69.

Художественные известия 1918, Саратов, N 6, 7, 8, 9, 12, 17.

Համառոտագրություններ

ՀԱԱ - Հայաստանի ազգային արխիվ

ՀԱՊ - Հայաստանի ազգային պատկերասրահ

ԳԱԹ - Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան

ՀԶԳԲ - Հուշածեղագրային բաժին

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՈՒՇՅԱՆ. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

Հայկուշ Սահակյան

Ամփոփում

Միքայել Արուտչյանի ժառանգությունը հնարավորություն է ընձեռում առնչվելու գեղարվեստական հոսանքների հետ, որոնք անցյալ դարի առաջին տասնամյակ-
ներին թափանցեցին հայկական մշակույթ: Նկարիչն աշխատել է ամենատարբեր
ոլորտներում՝ հաստոցային գեղանկարչություն, գրքային և պլակատային գրաֆիկա,
բեմանկարչություն, կինոնկարչություն, հեղինակել է մի շարք հոդվածներ, զբաղվել է
հասարակական գործունեությամբ: Մեծ է արվեստագետի ներդրումը հատկապես
թատերական ձևավորումների և գրքային գրաֆիկայի ասպարեզում. նրա շնորհիվ
հայկական բեմանկարչությունը դրվեց պրոֆեսիոնալ հիմքերի վրա, իսկ գրքի ձևա-
վորման հայ բազմադարյան ավանդույթները հարստացան և նոր որակ ստացան:

Բանալի բառեր՝ Միքայել Արուտչյան, հայկական կերպարվեստ, սովետական
արվեստ, բեմանկարչություն, կինոնկարչություն, գրքային գրաֆիկա, պլակատ:

МИКАЭЛ АРУТЧЬЯН: ОЧЕРК ЖИЗНИ И ТВОРЧЕСТВА

Айкуш Саакян

Резюме

Творческое наследие Микаэла Арутчьяна дает возможность соприкоснуться с художественными течениями, проникшими в армянскую культуру в первые десятилетия прошлого века. Художник работал в различных сферах изобразительного искусства – станковая живопись, книжная графика, плакат, сценография, кинематография, писал статьи, занимался общественной деятельностью. Он внес большой вклад в развитие армянского искусства, в частности, в сценическое оформление и книжную графику. Благодаря Арутчьяну армянское театральное декорационное искусство обрело профессиональную основу, а многовековые традиции армянского книжного искусства обогатились новыми качествами.

Ключевые слова – Микаэл Арутчьян, армянское искусство, советское искусство, сценография, художник кино, книжная графика, плакат.

OVERVIEW OF MICHAEL ARUTCHIAN'S LIFE AND CREATIVE ACTIVITY

Haykush Sahakyan

Abstract

Legacy of Michael Arutchian allows to associate it with art trends that penetrated into Armenian culture in the first decades of the previous century. The artist worked in various spheres: easel painting, book and poster graphics, scenography, cinematography. He was an author of numerous articles and being active in public activities. The artist had a great contribution especially to theatrical decorations and book graphics. Thanks to him, Armenian scenography developed on a professional basis, and the centuries-old Armenian traditions of book illustration were enriched and acquired a new quality.

Key words – Michael Arutchyan, Armenian art, Soviet art, scenography, cinematography, book illustrator, poster.

ՀՐԱԶՅԱ ՂԱՓԼԱՆՅԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԴԵՐԱՍԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏԱՆԻ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Ռուզաննա Առաքելյան

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, արվեստի պատմության և
տեսության ամբիոնի հայցորդ

ՀՀ, Երևան, Ամիրյան 26

Էլ. հասցե՝ ruzanna.aragelyan@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 14.09.2021, գրախոսվել է 25.10.2021, ընդունվել է տպագրության 11.04.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.1-234

Ներածություն

Բեմադրիչ Հրաչյա Ղափլանյանը թատրոն է մտել նախ որպես դերասան, սակայն պետք է նշել, որ նրա դերակատարումները մասնագիտական քննության չեն արժանացել: Մամուլի սակավաթիվ հրապարակումներում և Սաբիր Ռիզակի՝ Հրաչյա Ղափլանյանին նվիրված մենագրության մեջ վերջինիս դերասանական նկարագիրը դրական գույներով է ներկայացված: Այսօր թե՛ բուհի ընդունելության ծրագրում և թե՛ ներկայիս թատերական երիտասարդության լայն շրջանում նա հայտնի է և դիտարկվում է որպես բեմադրիչ: Մինչդեռ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում (այդ տարիներին կոչվել է Անաստաս Միկոյանի անունով, այսուհետև՝ ՊՀԹ) Ղափլանյանը նախ և առաջ եղել է սիրված դերասան: Նրա անունը, որպես դերասան, մեկ ու կես տասնամյակ (1939-1953 թթ.) հիշատակվում է թատրոնի պատմության էջերում:

Ղափլանյանն իր դերասանական ուղին սկսում է 1935 թվականին՝ Լեւոնիականի Ա. Մոսկովանի անվ. թատրոնի՝ Վարդան Աճեմյանի բեմադրություններում իրեն հասակակից պատանի հերոսների մի քանի դերակատարմամբ: Երեք տարի անց նա ՊՀԹ-ում է՝ այդուհետև կյանքը կապելով թատրոնի հետ:

Հրաչյա Ղափլանյանի առաջին և մինչպատերազմյան շրջանի դերակատարումները

Նկարագրելով Հր. Ղափլանյանի դերակատարումները՝ Հենրիկ Հովհաննիսյանը Ղափլանյանին համարում է իր պատանեկության շրջանի սիրելի դերասաններից մեկը. «Արագաշարժ ու թեթև, սրամիտ, ֆրազը շատ հստակ դահլիճ ուղարկող դերասան: Խոսքին թռիչք էր տալիս: Նրա խոսքը չէր կարող չլսվել և հիշվում էր: Թեթև էր խոսքը և հստակ: Դավիթ Կոպերֆիլդը դրամատիկորեն հուզող դերակատարում էր, հուզող, իսկապե՛ս, Սերգեյ Տյուլենինը համակրելի էր, սրամիտ վերին աստիճանի: Տրուֆալդինոն՝ արագաշարժ էր, ճկուն, ճարպիկ, մի տիրոջ տնից մյուսի դուռը վազող: Պոտովում էր բեմում՝ ափսե՛ն ձեռքին, և տանում էր մե՛կ այստեղ, մե՛կ այնտեղ: Վերին

աստիճանի դինամիկ, շա՛տ թեթև և դարձյալ խոսքը՝ ականջումդ նստող¹։ Այս դիպուկ բնութագրման շնորհիվ աչքիդ առջև հառնում է առանձնահատուկ դերասանական հմայքով երիտասարդ դերասանը։

Քննության առնելով Հր. Ղափլանյանին որպես դերասան՝ փաստում ենք, որ նրա որոշ դերակատարումներ, հատկապես առաջին շրջանի, չեն լուսաբանվել, իսկ մյուսները որոշ արձագանք են ստացել։ ՊՀԹ-ում նորեկ դերասանի առաջին իսկ դերակատարումը՝ Աղքատ տղա (Ս. Միխալկով «Թոմ Կենտի», ռեժ.՝ Ա. Աղասյան, 1938 թ.), գրավոր անդրադարձի չի արժանացել, չեն պահպանվել լուսանկարներ նրա մասնակցությամբ տեսարաններից։

Այս շրջանի էպիզոդային դերակատարումներն ասես հնարավորություն էին դերասանի ընդունակությունները զարգացնելու։ Դրանցից էր Ռուբիկը Բագրատ Միրաքյանի «Անվեհերներ» պիեսի բեմադրությունում (ռեժ.՝ Ա. Մարտիրոսյան, 1939 թ.)։ Ռուբիկի և թե հաջորդ՝ Գիքորի (Գ. Գաբրիելյան, ըստ Հ. Թումանյանի համանուն պատմվածքի, ռեժ.՝ Ա. Աղասյան, 1939 թ.) դերակատարումների մասին թատրոնի պատմության էջերում տեղեկություններ չենք գտնում, սակայն դրանք օգնել են Ղափլանյան դերասանի հնարավորությունների բացահայտմանը։ Ղափլանյանը հանդես է եկել նաև Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթի բեմադրությունում՝ վանականի դերում (ռեժ.՝ Ս. Քոչարյան, 1940 թ.)։ Այս մասին ևս գրավոր տեղեկություն չկա։ Խորհրդային հայտնի գրող Ի. Շտոկի «Տուն համար 5» պիեսը բեմադրվել է Ռուսաստանի մի շարք թատրոններում։ Այն նաև եղել է ՊՀԹ-ի խաղացանկում (1940 թ., բեմ.՝ Ա. Աղասյան)։ Ներկայացման միակ թատերախոսականում² հոդվածագիրը, հպանցիկ անդրադառնալով մի շարք դերակատարումների, այդ թվում՝ Ղափլանյանի Նիկիտա Բասիլովին, նշում է, որ այն ստացված է։

Չարլզ Դիկենսի «Դավիթ Կոպերֆիլդը» (բեմականացումը՝ Լևոն Հարութի, բեմ.՝ Տ. Շամիրխանյան, 1941 թ.) բեմադրության մեջ Ղափլանյանը սկզբում հանդես է գալիս կազմակերպված, կարեկից ու համարձակ Ջեյմսի դերում, ապա նաև՝ Դավթի։ Թատրոնը, բեմ բերելով դիկենսյան այս հերոսին, ի ցույց է դրել դժվար կացության և դաժան դաստիարակության մեջ մեծացող փոքրիկ տղայի կյանքը, որը, լավ ու վատ իրադարձություններ շրջանցելով, դառնում է գրող։ Ներկայացման մասին միակ հակիրճ՝ Հովհ. Ղազանջյանի թատերախոսականում Ղափլանյանի այս երկու դերերի մասին խոսք չկա³։

Անարձագանք է մնացել Անդերսենի «Ձյունե թագուհին» հեքիաթի հիման վրա Շվարցի համանուն պիեսի բեմադրությունը (ռեժ.՝ Ս. Քոչարյան, 1941 թ.) ևս, որտեղ Ղափլանյանը կատարում էր պատանի Քեյի դերը։

¹ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Հովհաննիսյանի հետ զրույցից։

² Ղազանջյան 1940, 4։

³ Հմմտ. Երևանի Հ. Ղափլանյանի անվ. դրամատիկական թատրոնի արխիվ, Ղազանջյան 1941, 4։

Հայրենական պատերազմի տագնապալի օրերին թատրոնը բեմադրում է Ա. Բրուշտեյնի «Մարտական օրեր» պիեսը (ռեժ.՝ Ա. Աղասյան, 1941 թ.): Ղափլանյանն այս բեմադրությանը մասնակցել է Մինկայի դերով:

Ա. Աղասյանի այդ օրերի ներկայացումներից հաջորդի՝ «Կամոյի» մեջ (Մ. Քոչարյան, ռեժ.՝ Ա. Աղասյան, 1941 թ.) Հ. Ղափլանյանը ներկայացել է Կամոյի ընդհատակյա խմբի համարձակ և հումորով Գոգիի դերում: Բեմադրության վերլուծությունից⁴ տեղեկանում ենք, որ այն ռեժիսորական վճիռների և դերակատարման առումով համարվել է թատրոնի ձեռքբերումներից: Թատերախոս Հրայր Հովակիմյանը, հավանություն տալով Հր. Ղափլանյանի Գոգիին, նաև առաջարկել է կերպարը ներկայացնել առավել ծանրաբարո՝ առանց հումորային տարրերի. «դերասանն ավելորդ կոմիզմ է մտցնում խաղի մեջ և զգալիորեն թուլացնում է կերպարը»⁵:

Պիոներ պատանիներ Միտյայի (Հ. Բեյլերյան, «Հայրենիքի համար», ռեժ.՝ Ա. Աղասյան, 1941 թ.) և Գրիշկունի (Ա. Շալքոն, «Թիկունքում», ռեժ.՝ Ս. Քոչարյան, 1942 թ.) դերակատարումների մասին, բացի ընդհանուր դրական գնահատանքից, այլ կարծիքի մամուլում չենք հանդիպում:

Հետպատերազմյան շրջանի դերակատարումները

Պատերազմի ավարտից հետո Ղափլանյանը, վերադառնալով ռազմաճակատից, շարունակում է դերասանի գործունեությունը:

Թատրոնի խաղացանկում գերիշխող հետպատերազմյան պիեսների կողքին, Շեքսպիրի ծննդյան 380-ամյակին նվիրված համամիութենական փառատոնին ընդառաջ, 1944 թվականին բեմադրության է պատրաստվում «Ամառային գիշերվա երազը» կատակերգությունը: Թատերախոսը⁶ նշում է, որ Տիգրան Շամիրխանյանը պիեսը բեմադրել է որպես հեքիաթ, որպես հանդես: Ղափլանյանը հանդես է եկել Փուճ (կամ Փուջ) ոգու աշխույժ կերպարով:

Վերա Պանովայի «Աղջիկներ» (ռեժ.՝ Ա. Աղասյան, 1946 թ.) պիեսը Հայրենական պատերազմի տարիներին ռազմաճակատում գտնվող իրենց հոր նամակին սպասող, առանց մայր մնացած աղջիկների մասին է, նրանց կամքի ուժի մասին: Ճակատագրի կամոք կարեկից Տոմկա ու Նինա քույրերի տանը հայտնվող մարդիկ պատերազմի բռնված անցած մարդիկ են: Անդրեյը փողոցի կյանքով անցած, ցնցոտակիր տղա է և մրսած ու սոված գոյություն է քարշ տալիս: Պսկովում ծնողների՝ ֆաշիստներին զոհ դառնալուն պես փոխվում է պատանի Անդրյուշայի կյանքը: Վերարկու ու փող գողացող պատանին ժամանակ անց գիտակցում է իր սխալն ու դարձի գալիս: Այս կերպարի հավաստի դերակատարումով է ներկայացել երիտասարդ Ղափլանյանը:

Մայրուգինի «Հին բարեկամներ» (ռեժ.՝ Ս. Քոչարյան, 1946 թ.) ստեղծագործությունը շրջել է Միության բեմերով: Հերոսները ավարտական դասա-

⁴ Հմմտ. Հովակիմյան 1941, 3:

⁵ Հովակիմյան 1941, 3:

⁶ Հմմտ. Արաքսյան 1944, 108:

րանի դպրոցականներ են: Նրանք պատերազմի օրերին հաճախ հավաքվում են տարեդարձի սեղանի շուրջ, և հենց այդ հանդիպումներում էլ բացահայտվում են նրանց բնավորությունները: Կենսախինդ, սրամիտ և կատակախոս Սենկայի կերպարի համար ռեժիսոր Ս. Քոչարյանը նախատեսել է երկու դերակատար՝ Է. Մուրադյանին (Սենկա) և Ղափլանյանին:

Օլեգը (Ս. Միխալկով «Հատուկ առաջադրանք», ռեժ.⁷ Ա. Աղասյան, 1947 թ.) Ղափլանյանի ամենակարևոր դերակատարումներից է: ՊԸԹ-ն հաճախ է անդրադարձել այս հեղինակին, հայ պատանի հանդիսատեսի միխալկովյան սիրելի հերոսներին: Ներկայացված են երկու թշնամի ջոկատներ, որոնց զինվորները խաղ-կռվով տարված պատանիներն են: Իրական պայքարի ու մարտերի նմանակում է ստեղծվել: Բեմադրությունը քիչ է լուսաբանված: Դինամիկ ու հետաքրքիր գործողություններից զատ՝ ներկայացման մեջ եղել են նաև որոշ ձգձգված դրվագներ: Հոլակիմյանի թատերախոսականում դերակատարման մասին կարդում ենք. «Նա ճշգրտորեն դրսևորում է արագաշարժ, անհամբեր և միշտ շտապող պատանու բնավորության գծերը»⁷: Սաբիր Ռիզակը գրում է. «Բեմի վրա անկեղծ կատարման, ավելի ճիշտ՝ Օլեգ-Ղափլանյանի ներկայության շնորհիվ մանկական այդ խաղը վերածվում էր պատերազմական «ճշմարիտ» իրադարձությունների: Այնպես բնական ու անմիջական էին Օլեգի արարքներն ու ապրումները, որ հանդիսականը մոռանում էր, թե խաղ է իր տեսածը»⁸:

Հաշվի առնելով խաղի նման բնույթագրումները՝ կարող ենք ասել, որ երիտասարդ դերասանը հմտորեն ու համոզիչ է ներկայացրել աշխույժ պատանի Օլեգին:

Վ. Կատակի «Գնդի որդին» վիպակի հիման վրա Ա. Աղասյանի 1947 թ.-ի համանուն բեմադրությունում Վանյա Սոլնցևի կերպավորումը համարվել է ղափլանյանական լավագույն դերակատարումներից: Դերասանը կարողացել է գտնել հավաստի արտահայտչաձևեր. «Նրա ստեղծած Վանյան մարդկային է, կենդանի, հոգով մաքուր ու անաղարտ, և որ ամենից կարևորն է, նրա յուրաքանչյուր շարժումից, խոսքից, անգամ ոչ այնքան էական ռեպլիկից զգացվում է, որ նա արժանի է շրջապատի խանդակաթ վերաբերմունքին ու վստահությանը»⁹:

Երիտասարդ դերասանը մասնակից և ականատես էր պատերազմի արհավիրքներին: Գուցե հենց դա էր խթանել նրա կերպարի ապրումները այդքան համոզիչ արտահայտելուն. «Դերասանը խորապես գիտակցում է, թե ինքն ինչ է խաղում»¹⁰: Հիացական կարծիքների կողքին առկա են նաև Ա. Արաքսմանյանի որոշ դիտողություններ. «Վանյայի ու պատանի կազակ Վոդնեսենսկու տեսարանում, միակողմանի է, երբ ցույց է տրվում Վանյայի

⁷ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի գրադարանի մամուլի բաժին (այսուհետև՝ ԵԹԿԴԻ-ի գրադարանի մամուլի բաժին), Հոլակիմյան 1947, 15 մարտի:

⁸ Ռիզակ 1969, 11:

⁹ ԵԹԿԴԻ-ի գրադարանի մամուլի բաժին, Աղաբաբյան Ա., Դավթյան Վ. 1 մայիսի:

¹⁰ ԳԱԹ, Հրաչյա Ղափլանյանի ֆոնդ, N 468:

միայն զարմանքն ու հիացումը: Անտեսված է Վանյային բնորոշ պատանեկան որոշ ինքնասիրությունը և հպարտությունը մեկ կողմից, մյուս կողմից՝ ընկույզի խաղով Վոզնեսենսկու կողմնացույցը սեփականացնելու խորամանկությունը»¹¹:

Երբ բեմ բարձրացավ Շայբոնի «Երջանիկ սերունդ» պիեսը (բեմ.՝ Ս. Շամիրխանյան, 1947 թ.), մամուլի էջերում խոսվեց թատրոնի համար ստեղծվող պիեսների երևան գալու մասին: Նրանց համար կարևոր էր նաև թեմայի ընտրությունը՝ արհեստագործական ուսումնարանի պատերից ներս ընթացող կյանքը: Սերունդ, որն իր աշխատանքով երջանիկ է ու երջանկացնում է:

Թատերախոս Հովակիմյանը Գուրգենիկի դերակատարումը դրվատանքի է արժանացրել. «Ներկայացման հաջողությունը զգալի չափով պայմանավորված է երիտասարդ, շնորհալի դերասան Հ. Ղափլանյանի (Գուրգենիկ) աշխույժ և կենսուրախ դերակատարումով»¹²: Ներկայացնելով կերպարի իր պատկերացումը՝ Ղափլանյանը նշել է հերոսի բոլոր օրինակելի կողմերը, ընդգծել, որ ցանկացել է հանդիսատեսը տեսնի հենց այն Գուրգենիկին, որին որ դերասանն ինքն է պատկերացրել¹³:

Ըստ Ա. Արաքսմանյանի՝ դերասանը լրացրել, ամբողջացրել է կերպարը. «Ճուտիկի դերը հարստացրել է իր ստեղծագործական սուր մտքով, երևակայությամբ և ֆորմայի զգացումով»¹⁴: Իր միտքը շարունակելով՝ հողվածագիրը թվարկում է պատանու արժանիքներն ու հաստատում դերասանի խաղի ստացված լինելը:

Հետպատերազմյան շրջանի ամենաշատ ընթերցվող հեղինակներից է եղել Ալեքսեյ Ֆադեևի «Երիտասարդ գվարդիա» վեպը: Այն բեմականացվել է բեմադրվել է Միության գրեթե բոլոր թատրոններում: Հայ պատանիները այս ստեղծագործության Շամիրխանյանի բեմադրությունը (բեմադր.՝ Ռ. Շիրոյան, Ա. Տեր-Հովնանյան) դիտել են 1947 թ.-ին:

Այս բեմադրության մեջ Սերգեյ Տյուլենինի իր տպավորիչ դերակատարման մասին Ղափլանյանը գրել է. «Երբևէ ես չեմ զգացել այնպիսի ստեղծագործական հուզմունք, ինչպես Տյուլենինի բարդ և պատասխանատու դերը պատրաստելու ընթացքում: Ես աշխատել եմ ցույց տալ պատանի հերոսի խիզախության, անօրինակ քաջության իսկական ակունքը՝ սովետական հայրենասիրությունը, ցույց տալ գիտակցված հերոսականության և ազնիվ ռոմանտիկայի այն գծերը, որոնք այնքան ներդաշնակորեն արտահայտվել են Կրասնոդոնի հերոսներից յուրաքանչյուրի երազանքներում, ձգտումներում ու գործերի մեջ»¹⁵:

Ս. Աղաբաբյանի կարծիքով՝ նա ստեղծված է եղել այդ դերի համար. «Հր. Ղափլանյան-Տյուլենինը քաջ է, ունի բյուրեղյա սիրտ, անշեղ կամք և

¹¹ ԳԱԹ, Հրաչյա Ղափլանյանի ֆոնդ, N 468:

¹² Հովակիմյանը 1947, 3:

¹³ Հմմտ. ԳԱԹ, Հրաչյա Ղափլանյանի ֆոնդ, N 471:

¹⁴ Արաքսման 1947, 4:

¹⁵ ԳԱԹ, Հրաչյա Ղափլանյանի ֆոնդ, N 598:

վճռականություն: Արտիստը գտել է ինքնատիպ արտահայտչական միջոցներ կերպարի ամբողջականացման համար: Նրա ձայնի զարմանալի պարզ ու հասարակ տոնը, անփույթ կեցվածքը, զուսպ շարժումները առանձին փայլ ու գունեղություն են հաղորդում Տյուլենինին»¹⁶:

Միխայլովի «Կարմիր փողկապ» պիեսի բեմադրությունում (ռեժ.՝ Ա. Աղասյան, 1948 թ.) Ղափլանյանը հանդես է եկել Չաշկինի դերով: Հովակիմյանի հոդվածում Ղափլանյանի Չաշկինի մասին կարդում ենք. «Պատանի հանդիսատեսը առանձին ջերմությամբ է ընդունում դերասան Հր. Ղափլանյանին (Չաշկին)»¹⁷:

Այդ շրջանի բեմադրված պիեսներից էր Ղափլանյանի և Ա. Շայբունի (Գասպարյան) համատեղ «Սովորովականները» գործը (1948 թ.): Ղափլանյանը ոչ միայն մասնակցել է պիեսի ստեղծման աշխատանքներին, այլև Շամիրխանյանի ղեկավարությամբ հանդես է եկել որպես ռեժիսոր ու Ռազմիկ Գաբրիելյանի դերակատար: Զոհված գեներալ Գաբրիելյանի որդի Ռազմիկի ու նրա ռազմական ուսումնառության շուրջ հյուսվող իրադարձությունների միջոցով հանդիսատեսին ներկայացվում է հանուն խորհրդային հայրենիքի գաղափարի կրթվող ու մեծացող սերունդ:

Ռազմիկը պատանի է, որ սիրում է կարդալ, ծանոթ է Կոմիտասի ու Սպենդիարյանի ստեղծագործություններին, ջութակ է նվագում, մարտական հնարամտությունների տիրապետում: Պատանին, վիշտը սրտում, երազում է, որ իրենք փորձեն կանխել աշխարհի պատերազմներն ու կորուստները: Կերպարը զարգանում է սկզբում ռազմաճակատից հոր մասին տեղեկության սպասումով և հետզհետե ուսումնական հանձնարարությունների կատարումների մեջ թերանալու միջոցով: Գործողությունը զարգանում է, երբ պատանին տեղեկանում է, որ հայրը զոհվել է: Նա լցվում է վրեժով և ձգտում մեկնել մարտադաշտ, սակայն գեներալ Սվետլովը մեղմում է տղայի ցասումը և խորհուրդ տալիս կատարել հոր կամքը և կրթվել: Հաջորդող տեսարաններում Ռազմիկը ներկայանում է որպես առաջադեմ սան, որն իր մարտական ընկերների հետ արժանանում է «Մարտական դրոշի» և երգվում կրծքով պաշտպանել հայրենիքը: Ղափլանյանի այս դերակատարումը նույնպես դրական արձագանքի է արժանացել: Դերասանը զուսպ արտահայտչամիջոցներով է կերպավորել հերոսին: «Ավանզարդում»¹⁸ թատերախոսները «ջերմ և անմիջական» են որակել նրա խաղաոճը և, վկայակոչելով Ռազմիկի՝ հոր մասին հուշերով տարվելու, կարոտի արտահայտման տեսարանները, գրել. «Ղափլանյանի խաղը հասնում է հուզականության և ի պատիվ դերակատարի, զերծ է հնարավոր մեղդրամատիզմից»: Լ. Հախվերդյանը համակարծիք է. «Դերասանը կարողացել է համոզիչ վերարտադրել իր հերոսի ապրումները, ստեղծել կամքի տեր այդ պատանու կերպարը»¹⁹: Այս համատեքստում անդ-

¹⁶ Աղաբաբյան 1947, 139:

¹⁷ ԳԱԹ, Հրաչյա Ղափլանյանի ֆոնդ, N 474:

¹⁸ Հախվերդյան, Աղաբաբյան 1948, 4:

¹⁹ Հախվերդյան 1952, 4:

րադառնանք նաև Արաքսամանյանի այն տպավորությանը, որ կերպարը հարուցել է կարեկցանք²⁰: Ըստ այդմ՝ եթե դերասանը նպատակ ունենար համակրանք առաջացնելու՝ ավելի կենսական կլիներ:

Միխայիլովի հաջորդ պիեսի՝ «Ես ուզում եմ տուն վերադառնալ» բեմադրության մեջ (ռեժ.՝ Ա. Աղասյան, 1949 թ.) Ղափլանյանը ներկայացրել է համարձակությամբ ու տոկունությամբ աչքի ընկնող Սաշա Բուտոգովին: Թատերախոսականներում խաղը որակվել է համոզիչ, և խրախուսվել է հուզական ու սրտաճմիկ երևալու միտումի բացակայությունը:

Ղափլանյանի մյուս դերը սևամորթ դպրոցական Դիկ Դեմպսեյն է՝ ճնշվող, հալածյալ պատանի, որին սիրում են հասակակից դպրոցական ընկերները: Այս պատանին էլ բոլորի նման խաղում է, սովորում, սիրում է իր ընկերներին: Նրա կերպարը կարեկցանք է առաջացնում հանդիսատեսի մեջ՝ մերժելով խտրականությունը: «Ղափլանյանի Դիկը բողոքող, ըմբոստ խառնվածք է, ճիշտ է, դեռևս ուժեղ չի հնչում նրա ձայնը, բայց հանդիսականը զգում է նրա անընկճելի կամքը, հոգեկան ուժերի մեծ կարողությունը»²¹:

Խորհրդային շրջանի մանկական դրամատուրգ Վալենտինա Լյուբիմովայի «Ձյունիկ» պիեսը շատ է բեմադրվել: 1949 թ.-ին ՊՀԹ-ում Տիգրան Շամիրխանյանի բեմադրությունն էր: Ալ. Մանուկյանը, անդրադառնալով Ղափլանյանի դերակատարմանը, գրում է, որ դա հիմնում պատանիները արտասվել են սևամորթ պատանու տեսարանների ժամանակ: Սակայն նշում է նաև, որ դերասանը որոշ տեսարաններում իր բախումն ու պայքարը վերամբարձ տարրերով է ներկայացրել, որն էլ համոզիչ չի եղել²²: Իսկ Հ. Հովհաննիսյանը հիշում է, որ դերակատարումը պլակատային է եղել և ոչ վերամբարձ²³: Սաբիր Ռիզակը, Մանուկյանի դիտարկմանն անդրադառնալով, գրել է, որ, վերամբարձ վճիռներին զուգահեռ, բեմադրության մեջ տեղ են գտել նաև գրոտեսկային վճիռներ, որոնք լրացրել են իրար. «Ճիշտ է, եթե առանձին-առանձին ու մեկուսացված վերցնենք գրոտեսկի և պաթետիկայի տարրերը, ապա կստացվի ինչ-որ անորոշ ու անհասկանալի մի բան, բայց եթե նկատի առնենք ներկայացման գեղարվեստական կոնցեպցիան, պատկերը կփոխվի»²⁴: Ըստ Ռիզակի՝ ներկայացման ընդհանուր նկարագիրը ամբողջանում է տարբեր ոճային համադրություններով²⁵:

Ղափլանյանի դպրոցական պատանիների դերացանկը համալրել է Լ. Գերասկինայի «Հասունության վկայական» պիեսի բեմադրությունում (ռեժ.՝ Կ. Արզումանյան, 1950 թ.) Լյոնյայի դերը: Լևոն Խալաթյանը դերակատարման մասին գրում է. «Լյոնյա-Ղափլանյանը կենսասեր, հասարակական

²⁰ Հմմտ. Արաքսամանյան 1952, 3:

²¹ Մնացականյան 1949, 2:

²² Հմմտ. ԵԹԿՊԻ-ի գրադարանի մամուլի բաժին, Մանուկյան 1949, N 238:

²³ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Հովհաննիսյանի հետ զրոյցից:

²⁴ Ռիզակ 1969, 21:

²⁵ Ռիզակ 1969, 21:

աշխատանքներին ակտիվորեն մասնակցող պատանի է»²⁶։ Նրա դերի համոզիչ լինելը վկայում է նաև մեկ այլ թատերախոսական. «Լյոնյա Ժարկովը, որ Հր. Ղափլանյանի անկեղծ ու անմիջական կատարմամբ մի կենսունակ պատանի է՝ երկար ժամանակ համառում է օգնություն ցույց տալ ընկերոջը»²⁷։

Ղափլանյանը հեղինակել է նաև պիեսներ։ 1950 թվականին հանդես է եկել արդեն հենց իր հեղինակած հերոսի դերում։ Այդ հերոսը «Ուսուցիչ» պիեսի (բեմ.՝ Տ. Շամիրխանյանի) պատանի Սուրիկն էր։ Ղափլանյանը ճիշտ ճանապարհից շեղվող աշակերտի հետ տարվող աշխատանքների, նրա մեկ այլ ուսուցչի՝ հայրենիքը դաշնակցական տիրապետության ծանր տարիներին լքող Թարյանի հետ զրույցների միջոցով ցույց է տալիս նվիրյալ ուսուցչի կերպարը, ընդգծում սերունդ կրթող մարդու տեսակը։

Հովհաննիսյանը անխոս դերով մասնակցել է ներկայացման բոլոր փորձերին և այս պիեսը համարում է կեղծ պիես։ Անդրադառնալով դերակատարմանը՝ պետք է նշել, որ թատերախոսներն իրենց հրապարակումներում կարծիք են հայտնել, որ Սուրիկի դերակատարումը առավել գունեղ է եղել, քան նրա հեղինակած դերը։ Կարդալով այս պիեսի՝ Ա. Աղասյանի ռադիոնոտաժ տարբերակը²⁸՝ կարծում ենք, որ Ղափլանյանը որպես ռեժիսոր և դերասան ստեղծել է պիեսի ռեժիսորական օրինակ, քան ավարտուն ստեղծագործություն։ Եվ հնարավոր է՝ հենց դա է հիմք հանդիսացել, որ պիեսն ընթերցողները ներկայացումը համարել են առավել գնահատելի։ Համլետ Գալստյանը Ղափլանյանի՝ Սուրիկի դերակատարման մասին գրում է. «Հ. Ղափլանյանը իր շնորհալի, մտածված խաղով կարողացել է մշակել իր կերպարի համար բնութագրական շարժ ու ձև, համոզությամբ վերարտադրել հերոսի շրջադարձը։ Առանձնապես հուզիչ է այն տեսարանը, որտեղ Սուրիկը ռադիոյով ունկնդրում է մոր ելույթը Խաղաղության կողմնակիցների կոնգրեսում»²⁹։

Ժողովրդական արտիստ Գուրգեն Զանիբեկյանը Սուրիկի դերակատարումը համարել է անմիջական. «Նրա Սուրիկը շատ դուրեկան է ու հմայիչ։ Նրա ռեալիստական պարզության հասցրած ինտոնացիաները անկեղծ են։ Հավատում ես այդ Սուրիկին և համոզվում, որ նա կուղղվի»³⁰։

Վերջին դերակատարումները

Յ. Սյուդարի «Տղան Մարսելից» («Խաղաղության աստղ») պիեսի բեմադրությունը (ռեժ.՝ Ա. Աղասյան, 1951 թ.) ֆրանս-ամերիկյան կոնֆլիկտի, հակաֆաշիստական պայքարի ֆոնին ֆրանսիացի դժբախտ պատանիների՝ Խորհրդային Միության երկրների երեխաների կյանքով ապրելու երազանքի ու մղվող պայքարի մասին է։ Ղափլանյանը խաղացել է Ժանի դերը և դրական կարծիքի արժանացել։

²⁶ Խալաթյան 1950, 4։

²⁷ Սարգսյան 1950, 4։

²⁸ ԳԱԹ, Աստղիկ Աղասյանի ֆոնդ, N 12։

²⁹ Գալստյան 1951, 4։

³⁰ Զանիբեկյան 1951, 4։

Հայ արկածային գրականության երախտավոր Վախթանգ Անանյանի «Սևանի ափին» վեպը հայ դպրոցականների սիրելի գիրքն է եղել: Ըստ Օ. Մելիք-Վրթանեսյանի հոդվածի³¹, բեմականացումն իրականացնող Տ. Շամիրխանյանը և Ա. Ղազարյանն ընտրել են վեպի այն ճյուղը, որտեղ հերոսները, գտնելով մեր նախնիների ստեղծած ջրանցքը, ոգևորվում և մտածում են, որ Լճավանը ոռոգելու մեծ հնարավորություն ունեն: Այսինքն՝ վեպի երրորդ մասը: Հոդվածագիրը իր բացասական տպավորություններն է հայտնում բեմադրության մասին (ռեժ.՝ Ա. Աղասյան, 1952 թ.)՝ հիմնական թերությունը բարդելով պիեսի վրա: Նա կարծում է, որ պատանիների կերպարները, նրանց երկխոսությունները չստացված են և զուրկ անանյանական մթնոլորտից:

Կատակասեր, աշխույժ Գրիգորը, որ հաճախ է տարվում որսի թեմայով, կերպավորվել է Ղափլանյանի կողմից: Ներկայացման թատերախոսը գտնում է. «Պիեսի համեմատաբար հաջողված կերպարներից է չարաճճի, սրամիտ Գրիգորի կերպարը, որը ավելի է շահում Հ. Ղափլանյանի կատարմամբ»³²:

Բեմադրելով «Պավլիկ Մորոզովը» (Վ. Գումարյով, 1953 թ.) Ղափլանյանը խիզախ, սկզբունքային հերոս պիոնների է ներկայացրել:

Ներկայացման երկու «պավլիկներն» էլ գրավոր արձագանքի են արժանացել, ընդհանուր հաջողության հետ մեկտեղ եղել են նաև բացթողումներ: Անդրադառնալով Պավլիկի երկու դերակատարների խաղին՝ Օ. Ավետիսյանը գրում է, որ լուսավոր գալիքի մասին երազելու տեսարաններում նրանց չի հաջողվել խորապես ընկղմվել հերոսի ներաշխարհ, և դերակատարները կերպարը նվազ ոգեշնչված ու ռոմանտիկ են ներկայացրել³³:

Ղափլանյանի դերակատարման մասին հակասական կարծիքներ են եղել:

Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ» (ռեժ.՝ Լ. Քալանթար և Ա. Աղասյան, 1953 թ.) պիեսի բեմադրության մեջ Ղափլանյանը խաղացել է Բրիլիանտովի որդի Վանոյի դերը: Հարուստ ու շվայտ ապրելակերպով այս կերպարը մի նոր գույն էր, բացասական դեմք երիտասարդ դերասանի համար: Ներկայացման մասին թատերախոսականում³⁴ նշվում է, որ դերակատարումը «արտահայտչական միջոցների հարստությամբ և գունեղությամբ» է առանձնացել: Նույն տեղում կարդում ենք դերի նկարագրությունը. «Արտիստը գեղարվեստական ցայտուն միջոցներով է ընդգծել հարուստ վաճառականի պորտաբույժ որդու անճարակությունը կյանքի լուրջ հարցերում, կամազրկությունը՝ հոր առաջ, ցինիկությունը՝ ամուսնության և կանանց հետ ունեցած փոխհարաբերություններում, վախը՝ ժառանգությունից զրկվելու հեռանկարից»: Այս վերլուծությունը մեզ համար հասկանալի է դարձնում, որ երիտասարդ դերասանը ի ցույց է դրել իր կերպարի բոլոր շերտերը, ներկայացրել

³¹ Հմմտ. Մելիք-Վրթանեսյան 1952, 3:

³² Մելիք-Վրթանեսյան 1952, 3:

³³ ԵԹԿՊԻ-ի գրադարանի մամուլի բաժին, Հմմտ. Аветисян 1953:

³⁴ Առաքելյան 1954, 4:

նրա տեսակը ամբողջ մանրամասներով: Մ. Շաթիրյանը, հատուկ անդրադառնալով դերասանի մինչ այդ խաղացած պատանիների և Վանոյի տարիքային տարբերությանը, գրում է, որ նա հաջողությամբ է կերպավորել ու հաղթահարել այդ տարբերությունը³⁵:

Ղափլանյանի վերջին դերը Կոստյան էր՝ Վ. Ռոզովի «Կյանքի մի էջը» կատակերգության հերոսը (1953 թ):

Ռոզովի աշխույժ, կենսասեր ու սրամիտ, երբեմն պարծենկոտ, երբեմն ստախոս, երբեմն ամբարտավան, հայր Գորիո կարդացող, բայց փողոցի խոսվածքով Կոստյան հերոս է, որն առօրյա հոգսերում օգնում է ընկերոջը, ուսումնառության մասին իր ճշմարտությամբ վիճում նրա հետ, սիրում աշխատել: Խոսելով Ղափլանյանի Կոստյայի մասին՝ Ս. Ռիզաևը դերակատարումը համարել է ինքնաբերական, սակայն նշել է նաև, որ նա «որոշ հատվածներում շատ է ճգնում աչքի ընկնել»³⁶:

Թատերագետ Լ. Հախվերդյանը Ղափլանյանի դերասանական նկարագիրը ամբողջացնող տողեր է հրապարակել ՊՀԹ-ի քսանամյակին նվիրված կատալոգում. «Այս թատրոնում թերևս ոչ մի դերասան պատանիների կերպարներն այնքան շնորհալի, համոզիչ ու նուրբ հուզականությամբ չի վերարտադրում, որքան Հրաչյա Ղափլանյանը: Նրա ստեղծած պատանիները վերին աստիճանի ճշմարտացի են ու պարզ, օժտված պատանու անկեղծությամբ, անմիջականությամբ ու ջերմությամբ»³⁷:

Եզրակացություններ

Ղափլանյանի ստեղծագործական գործունեության դերասանական շրջանը համընկել է խորհրդային այն ժամանակահատվածի հետ, որին հատուկ էին գաղափարական պարտադրանքն ու անկոնֆլիկտային պիեսները բեմ հանելու պահանջը: Բեմադրվող պիեսների հերոսները հիմնականում խորհրդային մեկ ընդհանուր հայրենիքին իրենց խիզախումով նվիրված պատանի հերոսներ էին կամ խրատող, կրթող, մի տեսակ իմաստնացած տղաներ, որոնք հակադրվում էին իրենց հասակակից մանր-մունր չարություններ անող, անխոհեմ վարքով դպրոցականներին և ի վերջո «դարձի բերում» նրանց: Նման ներկայացումներում դերասանն իրեն վստահված նույնանման կերպարներ ներկայացնելիս կարողացել է ամեն անգամ հետաքրքիր և ինքնատիպ լինել:

Այսպիսով, ի մի բերելով Հրաչյա Ղափլանյանի դերասանական գործունեությունը, կարող ենք եզրակացնել, որ նա շնորհալի և ուշադրության արժանի դերասան է եղել: Ըստ ականատեսների՝ անմոռանալի են նրա՝ պատանիների դերակատարումները՝ արտահայտիչ խաղով, բեմական հմայքով:

³⁵ Шатирян 1953, N 308:

³⁶ ԵԹԿՊԻ-ի գրադարանի մամուլի բաժին, Ռիզաև 1954, 3:

³⁷ Դավթյան 1949, 25:

Գրականություն

- Աղաբաբյան Ս. 1947, «Երիտասարդ գվարդիան» պատանի հանդիսատեսի թատրոնում, Սովետական գրականություն և արվեստ, N 12, Երևան, էջ 139:
- Աղաբաբյան Ս., Դավթյան Վ. 1947, «Գնդի որդին», Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի գրադարանի մամուլի բաժին (այսուհետև՝ ԵԹԿՊԻ-ի գրադարանի մամուլի բաժին), Ավանգարդ, 1 մայիսի, Երևան:
- Առաքելյան Ս. 1954, «Էլի մեկ զոհ», Ավանգարդ, Երևան, N 12, էջ 4:
- Արաքսման Ա. 1944, Շեքսպիրյան երկու ներկայացում, Սովետական գրականություն և արվեստ, N 4-5, Երևան, էջ 108:
- Արաքսման Ա. 1947, «Գնդի որդին» Պատանի հանդիսատեսի թատրոնում, ԳԱԹ, Հրաչյա Ղափլանյանի ֆոնդ, N 468:
- Արաքսման Ա. 1947, «Երջանիկ սերունդ» Գրական թերթ, N 24, Երևան, էջ 4:
- Արաքսմանյան Ա. 1952, «Սովորականներ», Սովետական Հայաստան, N 81, Երևան, էջ 3:
- ԳԱԹ, Հրաչյա Ղափլանյանի ֆոնդ, N 471:
- Գալստյան Հ. 1951, «Ուսուցիչը», Գրական թերթ, N 3, Երևան, էջ 4:
- Դավթյան Մ. 1949, Ա.Ի. Միկոյանի անվան պատանի հանդիսատեսի թատրոն. XX տարի, Երևան, «Հայպոլիգրաֆիկատի Գրքի տուն» տպարան, էջ 48:
- Խալաթյան Լ. 1950, «Հասունության վկայական», Ավանգարդ N 25, Երևան, էջ 4:
- Հախվերդյան Լ. 1952, «Սովորականներ», Գրական թերթ, N 6, Երևան, էջ 4:
- Հախվերդյան Լ., Աղաբաբյան Ս. 1948, «Սովորականներ», Ավանգարդ, N 41, Երևան, էջ 4:
- Հովակիմյան Հ. 1941, «Կամոն» Պատանի հանդիսատեսի թատրոնում, Գրական թերթ, N 32, Երևան, էջ 3:
- Հովակիմյան Հ. 1948, «Կարմիր վզկապ», ԳԱԹ, Հրաչյա Ղափլանյանի ֆոնդ, N 474:
- Հովակիմյան Հ. 1947, Հաջողված ներկայացում, ԵԹԿՊԻ-ի գրադարանի մամուլի բաժին, Ավանգարդ, 15 մարտի, Երևան:
- Հովակիմյան Հ. 1947, Պատանի հանդիսատեսի թատրոնի նոր հաջողությունը, Ավանգարդ, N 46, Երևան, էջ 3:
- Ղազանջյան Հ. 1941, «Դավիթ Կոպալերֆիլդ», Երևանի Հ. Ղափլանյանի անվ. դրամատիկական թատրոնի արխիվ, Ավանգարդ, N 124, Երևան, էջ 4:
- Ղազանջյան Հ., 1940, «Տուն համար 5», Ավանգարդ, N 235, Երևան, էջ 4:
- Ղափլանյան Հ. «Ուսուցիչը», ռադիոմոնտաժ Ա. Աղասյանի, ԳԱԹ, Աստղիկ Աղասյանի ֆոնդ, մեք. 17 թ., N 12:
- Ղափլանյան Հ. 1947, Իմ սիրելի դերը, ԳԱԹ, Հրաչյա Ղափլանյանի ֆոնդ, N 598:
- Մանուկյան Ա. 1949, Ձյունիկ, ԵԹԿՊԻ-ի գրադարանի մամուլի բաժին, Սովետական Հայաստան, N 238, Երևան:
- Մելիք-Վրթանեսյան Օ. 1952, «Սևանի ափին» բեմադրության առթիվ, Գրական թերթ, N 27, Երևան, էջ 3:
- Մնացականյան Վ. 1949, «Ձյունիկ», Գրական թերթ, N 37, Երևան, էջ 2:
- Ջանիբեկյան Գ. 1951, «Ուսուցիչը», Ավանգարդ, N 2, Երևան, էջ 4:
- Ռիզան Ս. 1954, Երիտասարդական երկու ներկայացում, ԵԹԿՊԻ-ի գրադարանի մամուլի բաժին, Սովետական Հայաստան, N 108, Երևան:
- Ռիզան Ս. 1969, Հրաչյա Ղափլանյան, Երևան, «Հայկական թատերական ընկերություն» 232 էջ:
- Սարգսյան Ս. 1950, «Հասունության վկայական», Գրական թերթ, N 12, Երևան, էջ 4:
- Аветисян О. 1953, «Павлик Морозов», Сталинец, Ереван, 14 июля.
- Шатирян М. 1953, Произведение классической драматургии в детском театре, Коммунист, Ереван, N 308, с. 4.

ՀՐԱԶՅԱ ՂԱՓԼԱՆՅԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԴԵՐԱՍԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏԱՆԻ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Ռուզաննա Առաքելյան

Ամփոփում

Հայ թատրոնի պատմության նորագույն շրջանի հայտնի ներկայացուցիչներից է բեմադրիչ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Երևանի դրամատիկական թատրոնի հիմնադիր-գեղարվեստական ղեկավար Հրաչյա Ղափլանյանը, որը հանրությանը քիչ է հայտնի որպես դերասան: Պատանեկան տարիներին ՊՀԹ-ում անցնելով մասնագիտական հասունացման, թատերարվեստի նրբություններին ծանոթանալու շրջանը՝ նա այս թատրոնում դառնում է սիրված դերասան, հետագայում նաև՝ բեմադրիչ:

Ղափլանյանը պատանիների իր դերերը ներկայացրել է համոզիչ ու հավաստի, հուզիչ ու անմիջական արտահայտչամիջոցներով, խորապես ընկալել հասակակից հերոսների ապրումները, ձգտումները, անձնվեր հայրենասիրությունը և հոգեբանական նուրբ մոտեցմամբ, տրամաբանված խաղով հանդես եկել նրանց հատուկ դրամատիկական դժվար շատ հոգեվիճակներում: Դերասանական տպավորիչ խաղն արժանացել է ժամանակի մասնագիտական մամուլի արժանի գնահատականին:

Բանալի բառեր՝ դերասան, Պատանի հանդիսատեսի թատրոն, ներկայացում, դերակատարում, պատանի հերոս, անմիջական խաղ, խորհրդային շրջան:

РАЧЬЯ КАПЛЯНЯН КАК АКТЕР ЕРЕВАНСКОГО ТЕАТРА ЮНОГО ЗРИТЕЛЯ

Рузанна Аракелян

Резюме

Одним из ярчайших представителей в новейшей истории армянского театра является режиссер, народный артист СССР, основатель и художественный руководитель Ереванского драматического театра Грачья Каплянян, который мало известен театральной общественности как актер. Его творческое становление как актера состоялось в стенах Театра юного зрителя, где он постиг тонкости театрального искусства, став любимым артистом, а в дальнейшем и режиссером.

Созданные им образы были правдивы, убедительны, непосредственны. Его игра отличалась тонким психологизмом, умением передать душевные переживания своих героев.

Актерская деятельность Г. Капляняна была удостоена высокой оценки со стороны театроведов.

Ключевые слова – актер, Театр юного зрителя, спектакль, исполнение, юный герой, непосредственная игра, советский период.

HRACHYA GHAPLANYAN AS AN ACTOR IN THE THEATRE OF YOUNG SPECTATOR OF YEREVAN

Ruzanna Arakelyan

Abstract

Hrachya Ghaplanyan, People's Artist of the USSR, is one of the distinguished figures in the modern period of Armenian theatre history. He was the artistic director and the founder of the Yerevan Drama Theatre. He was known as a famous stage director, but he was less known as an actor to the audience. He started his acting creative way at the Yerevan Theatre of Young Spectator. During this period he underwent psychological school, developed and mastered all the stage skills, traditions and standards on his background, meanwhile improving them. He played the characters of young men of his age, so he knew very well psychological peculiarities of the role and presented the true character of a young man, his behavior, feelings, emotions, aspiration, patriotism. His acting on the stage was highly appreciated by the professional theatrical experts of the time.

Key words – actor, Theatre of the Young Spectator, performance, play a role, young hero, true acting, Soviet period.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏՈՆԸ ԵՎ ԿՈՆԵԿՏԻՎ ՏՐԱՎՄԱՆ. 2021-Ի ԱՅԼ ԱՄԱՆՈՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Գոհար Ստեփանյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ gogstep@yahoo.com

Հոդվածը ներկայացվել է 21.12.2021, գրախոսվել է 04.03.2023, ընդունվել է տպագրության 11.04.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.1-247

Ներածություն

Տոնի բնորոշման մեջ տեսաբանները հիմնականում ելնում են առօրյայի հետ հակադրության մեկնակետից¹. տոնն առօրյայի շրջված, թարս պատկերն է: Երբեմն այս բնութագրությունն ավելի է խորացվում, առաջ է քաշվում տոնի և առօրյայի հակադարձ համեմատականության դրույթը². որքան տխուր, ծանր ու դժվարին է առօրյան, այնքան հախտուն, ուրախ է տոնը: Սակայն, հավանաբար, կա առօրյա, որը տեղ չի թողնում տոնականության համար՝ գլխավոր շրջելով ինքնին շրջոնքի մարմնավորում տոնը: Այդպիսին էր պատերազմի և հետպատերազմյան առօրյան Հայաստանում և Արցախում: Անչափելի էին 2020-ի մեր կորուստները, տխրությունն ու իրավիճակի ողբերգականությունը թվում էին անհաղթահարելի՝ պայմանավորված սեպտեմբերի 27-ին սկսված Արցախյան 44-օրյա պատերազմով: Բայց անգամ նման ճգնաժամային իրավիճակում տոնը եկավ օրացույցով, սակայն ոչ տոնականությամբ. հանրային տրամախոսությամբ Ամանորը որակվեց որպես «ամենատխուր Ամանոր», «լուռ Ամանոր»: 2021-ի առաջին տոնն ընթացավ առանց հրավառությունների ծանոթ ձայների, որոնք հատկապես վերջին տարիներին տոնի ակուստիկայի պարտադիր բաղադրիչներն էին: Մարդիկ սա գնահատեցին որպես «գիտակից լռություն»³, «քար լռություն»⁴, իսկ տեղ-տեղ լսվող հատուկեհատ հրավառությունների ձայները հանրային ամոթանքի արժանացան:

¹ Топоров 1992, 329-331.

² Այս դրույթն առաջ է քաշում Լևոն Աբրահամյանը, որին շնորհակալ եմ իր կարծիքն ինձ հայտնելու համար:

³ «Գիտակից լռություն էր: Երևի սենց բաներից ա սկսվում վերափոխումը». կարդում ենք ֆեյսբուքյան մի գրառման մեջ. <https://www.facebook.com/smbat.hakobyan.3/posts/3680424415376268>

⁴ «00:00 Կապանում քար լռություն էր... Բարի գալուստ 2021 թ.» գրառում էր արել մեկը ֆեյսբուքում (Դաշտենց Ա., Ամանորի գիշերը քար լռություն ամբողջ Հայաստանում, <https://hraparak.am/post/3b61b3616f576aafe4de219a678c5a57?fbclid=IwAR0N0cwrVWx3UpIY6nfb0HzCIQrrsAUcINuWg6oLHT53qBfnUf8RLMIEZIs>

Վիզուալ առումով ևս տոնը «լուռ» էր՝ առանց գլխավոր խորհրդանիշի՝ տոնածառի՝ Հանրապետության հրապարակում, առանց մասնավոր տոնածառերի և ամանորյա այլ զարդարանքների ինչպես բնակավայրերի արտաքին ձևավորումներում, հանրային վայրերում, այնպես էլ մասնավոր տներում: Շնորհավորական այցելությունների ծանոթ եռուզեռն իր տեղը զիջեց միայն սակավաթիվ, թերևս ամենապարտադիր այցելություններին: Ամանորի շնորհավորանքները շատերը տաբուացրին, անգամ որոշ մարդիկ, օգտվելով ֆեյսբուքյան հարթակից, հրապարակավ հայտարարեցին, թե չեն շնորհավորելու ոչ մեկին և չեն ընդունելու շնորհավորանքներ, շատերն էլ հրաժարվեցին շնորհավորանք-բարեմաղթանքների վերբալ բանաձևերի առաջին բաղադրիչից՝ շնորհավորանքի խոսքերից՝ պահելով միայն բարեմաղթանքները: Վերջիններն էլ, իհարկե, հաճախ դժվարությամբ էին ձևակերպվում: Այցելությունների նվազումը, շատ դեպքերում՝ գրեթե զրոյացումը հատուկ էին ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական միջավայրերին: Նշենք, որ գյուղերում դրանց ծավալը միշտ էլ ավելի մեծ է եղել՝ պայմանավորված և՛ ավանդականությանն առավել հակվածությամբ, և՛ այցելությունների համայնքային ընդգրկմամբ: Մինչդեռ հենց գյուղական համայնքներում արձանագրվեցին այցելությունների և, առհասարակ, տոնականության գրեթե զրոյացում, հատկապես այն պարագայում, երբ համայնքը զոհ/գերի/անհայտ կորած ուներ պատերազմում:

Վիզուալ «լռությունը» որոշակիորեն տարածվեց նաև Նոր տարվա մյուս կիզակետային տարրի՝ տոնական ուտեստներով սեղանի վրա: Նկատելի էր հատկապես ճոխ և նորաձև ուտեստներից հրաժարումը. մարդիկ ձգտում էին զսպվածություն դրսևորել նաև տոնի համար առանցքային այս բաղադրիչի հարցում:

Անցնող տարվա տոնական ամփոփումները, որոնք վերջերս ավանդույթի են վերածվել ֆեյսբուքյան հարթակում, 2021-ի Ամանորին անձնական ու հանրային վերագնահատումների բնույթ ստացան: Ուշագրավ է, որ երբեմն հենց ուտեստը և տոնական սեղանն ընդհանրապես դարձան նման վերանայումների ու վերագնահատումների վիզուալացման լավագույն միջոցը, տոնական հենց այն բաղադրիչը, որն ամենաշատն էր վերջին տարիներին քննադատվում ճոխության պատճառով: Ֆեյսբուքյան օգտատերերից մեկը հունվարի մեկին ներկայացրել էր իր տոնական սեղանի լուսանկարը. նա, օղու բաժակը ձեռքին, նստած էր սեղանի մոտ, որի վրայի ուտեստի տեսականին կազմում էին մեխերը՝ ափսեի մեջ, ասեղը, մետաղյա ամրակալը, մկրատը, սեղանին դրված էին նաև բմբուլ ու կարմիր թելի կծիկ: Լուսանկարին առընթեր նրա գրառումը «վաստակած Նոր տարվա» մասին արտահայտում էր այն միտքը, որ անհրաժեշտ է ազգովի ճանաչել սեփական արատներն ու սխալները, դրանցից ազատագրվել և ուրիշներին էլ օգնել այդ հարցում⁵:

⁵ <https://www.facebook.com/photo?fbid=3545247765571583&set=a.19483227279837>

Տեղը. տոնը գերեզմանում

Որքան «լուռ» էր տոնը *կյանքի տարածքում*, այնքան «լսելի» էր այն *մահվան տարածքում*: Երևանում այդ տարածքը Եռաբլուր պանթեոնն էր, Ստեփանակերտում՝ Եղբայրական գերեզմանոցը: Արցախյան առաջին և 44-օրյա պատերազմների վավերագրող Սվետլանա Կուլչիցկայան այսպես է նկարագրում 2021-ի Ամանորը Ստեփանակերտում. «*Քառացիորեն ողջ քաղաքն իջել էր Հուշահամալիր, որ հիմնադրվել էր նրանց համար, ովքեր զենքը ձեռքնե-րին պատերազմ գնացին 90-ականներին... Բոլորն իջնում էին ավելի ներքև՝ նոր գերեզմանների մոտ հարգանքի տուրք մատուցելու իրենց որդիներին ու եղբայրներին՝ զոհված արդեն այս պատերազմում՝ անմեղ զոհերին, իրենց հողի պաշտպաններին: Ծաղիկներ դնելուց ու արցունքներ թափելուց հետո, որ հեղեցին Արցախից մնացած հողերում, մայրերը, հայրերը և բոլոր կանայք, դեպի վեր բաց թողեցին լույսեր, որոնք բոլոր զոհվածների հոգիներն են...*»⁶: Հայաստանում ևս շատերը, հատկապես պատերազմում ընկած զինվորների ընտանիքներն ու հարազատները, Նոր տարին դիմավորեցին ոչ թե տանը, ինչպես ավանդաբար, այլ Եռաբլուրում՝ զոհվածների կողքին, նրանց հետ: Մյուսների համար էլ, եթե ոչ Նոր տարին դիմավորելու, ապա գոնե այցելության գլխավոր վայր դարձան Եռաբլուրն ու համայնքային գերեզմանոցները: Ամանորի համերգ-ծրագիրը, որը սովորական Նոր տարիներին նախապես տեսագրվում էր, իսկ կեսգիշերին իր շուրջը հավաքում ընտանիքներին, այս անգամ ուղիղ եթերում էր՝ անմիջապես Եռաբլուրից: Հատուկ ընտրված էին հիմնականում բանակին, զինվորին նվիրված և ուրախության նոտաներ չունեցող երգերը, ինչպես նաև օրորոցայիններ՝ արդիականացնելով քուն-մահ արխաիկ զուգորդումը: Երգիչների ծային միահյուսվեցին սգացողների լացի ու ողբի ծայերը՝ ստեղծելով Ամանորի տոնին ոչ բնորոշ ակուստիկ միջավայր:

Եռաբլուրի Ամանորը վիզուալ առումով ևս տարբերվեց բոլոր Ամանորներից. խոնարհված Եռագույնների դաշտում (այն հատվածը, որտեղ 2020-ի պատերազմի զոհերի գերեզմաններն են) հայտնվեցին փոքրիկ տոնածառեր կամ տոնածառային ատրիբուտներ՝ առանձին խաղալիքներ ու շղթաներ: 2020-ի պատերազմում զոհվածներին մարդիկ բաժին հանեցին իրենց տոնական սեղաններից՝ կոնֆետներ, մրգեր՝ խնձոր, մանդարին, նարինջ, ինչպես և ընկուզեղեն: Դրանք դրվեցին նաև Արցախյան առաջին պատերազմը խորհրդանշող Մոնթեի և Վազգեն Սարգսյանի, ինչպես և 2016-ի Քառօրյա պատերազմի զոհերի շիրիմներին:

Այլ էր նաև Եռաբլուրի Ամանորի բույրը: Ընտանեկան Նոր տարին հաճախ զուգորդվում է բնական եղևնու, մանդարինի, նարնջի կամ մեկ այլ բույրի հետ: 2021-ի Ամանորը խնկաբույր էր. Եռաբլուր պանթեոն տանող ճանապարհից արդեն զգացվում էր գերեզմաններին անվերջ ծխացող խնկի հոտը: Բոլորը՝ ծանոթ թե անծանոթ, խունկ էին ծխում գերեզմանների վրա:

⁶ <https://www.panorama.am/ru/news/2021/01/01/>

Այսպես, ի տարբերություն հանգուցյալներին հատկապես մեծ տոներին մասնակից դարձնելու ավանդույթի՝ 2021-ի Ամանորը կազմակերպվեց ավելի շատ պատերազմում ընկածների համար, որին ողջերը մասնակից դարձան: Մեռածներին ողջերի տոնական կյանքի մեջ ներառելու նորմը հայոց քրիստոնեական ավանդույթում հանգեցրել է տոնի հաջորդ օրվա՝ մեռելոցների պրակտիկային, որոնք ընթանում էին գերեզմանոցներում՝ համատեղ հացկերույթի արարողություններով: Հինգ տաղավար տոներին հաջորդող հիշատակի որոշ օրերի (հատկապես Սուրբ Խաչի) պարագայում այդ նույն մտայնությունը ժամանակի ընթացքում հանգեցրել է առաջնայնությունը հենց հանգուցյալներին տալուն, ընդ որում, տխրությունն ու վիշտն այդ դեպքերում կլանել են տոնական ողջ ուրախությունը: Ամանորը գերեզմանոցում նշելու պրակտիկան ևս նոր չէ: Այն, ըստ ամենայնի, ձևավորվել է խորհրդային շրջանում և երբեմն-երբեմն շարունակվել ընդհուպ մինչև մեր օրերը՝ նոր մահացածներ և, հատկապես, երիտասարդ հանգուցյալներ ունենալու պարագայում: Ընդ որում, տարբեր բնակավայրերում այս պրակտիկան դրսևորվել է տարբեր ժամանակային և մասնակցային ընդգրկմամբ՝ մահից հետո՝ մեկից մինչև տասը և ավելի տարիների կտրվածքով և ներառելով ամենահարազատներից մինչև համայնքի բոլոր ընտանիքներին՝ որպես կանոն, ի դեմս տղամարդկանց: 2000-ականներից սկսած՝ այս պրակտիկան նկատելիորեն տեղի էր տվել, որոշ ընտանիքներ գիտակցված կերպով հրաժարվում էին դրանից՝ այդպիսով ազատելով ընտանիքից դուրս գտնվողներին ևս իրենց միանալու և գերեզմանոցում տոնը նշելու պարտավորությունից⁷: Սակայն, ինչպես ցույց տվեց 2021-ի Ամանորը, աղետներն ամեն անգամ վերականգնում կամ ակտիվացնում են այդ ավանդույթը: Այդպես եղավ 1988-ի երկրաշարժից հետո աղետի գոտում: Ողջերի Ամանորը սկզբունքորեն փոխադրվեց *մահվան տարածք*՝ հանգուցյալների մոտ, իսկ *կյանքի տարածքում* երկար ժամանակ ոչ միայն Ամանորը, այլև տոներն առհասարակ «լուռ» էին: Նույնն ապրվեց 2021-ի Ամանորին: Բայց 1988-ի և հաջորդող տարիների «լուռ Ամանորներն» ավելի շատ տեղայնացված էին, հատուկ՝ աղետի գոտուն և տեղավորվում էին թաղման և հիշատակի ծիսակարգի համատեքստում, մինչդեռ 2021-ի տոնական «լռությունը», նախ, համընդհանուր էր՝ Հայաստանում, Արցախում և Սփյուռքում, և ապա թաղման և հիշատակի համատեքստում ներդրվում են որոշակի քաղաքական, սոցիալական իմաստներ:

Տոնածառ. դնե՛լ, թե չդնե՛լ

XX դարասկզբից ի վեր հայկական միջավայրերում Ամանորի տոնականության կիզակետը դարձել է զարդարված փշատերև ծառը՝ տոնածառը: Ավելին, կարելի է ասել, ձմեռային Ամանորի ավանդույթը զգալի չափով զարգացավ հենց տոնածառի, տոնածառային հանդիսության շնորհիվ: 2020-ի ավարտին հանրային տրամախոսությամբ Նոր տարին նշել-չնշելու հար-

⁷ Ստեփանյան 2020, 233:

ցադրման համատեքստում նախ և առաջ, ակտիվացան տոնաձառ դնել-
չդնելու մասին քննարկումները: Երևանի քաղաքապետարանը դեկտեմբերի
սկզբին արդեն հայտարարեց, որ Հանրապետության հրապարակում չի լինի
տոնաձառ, մայրաքաղաքում չեն լինի տոնական զարդարանքներ⁸: Այլ մար-
զային կենտրոններ ևս հրաժարվեցին Նոր տարվա միջոցառումներից: Տո-
նական հարդարանքի և միջոցառումների համար նախատեսված ծախսերը
կա՛մ չեղարկվեցին, կա՛մ ուղղվեցին պատերազմից տուժած անձանց և զոհ-
վածների ընտանիքներին⁹: Շատերը հրաժարվեցին նաև ընտանեկան տո-
նաձառերից: Իսկ որոշներն էլ հարդարեցին, սակայն դրանք սկզբունքորեն
տարբերվում էին ավանդական տոնաձառերից: Դրանք հիմնականում
մանկահասակ երեխաներ ունեցող ընտանիքներն էին. *նորի* հետ զու-
գորդվող ծմեռային Ամանորը ավանդաբար նախ և առաջ մանուկների տոն
էր, և այդ ընկալումը, կարծում ենք, ընդհանրական բնույթ ունի¹⁰: Երեխանե-
րին իրենց տոնական ուրախությունից զրկելը նույն հանրային տրամախո-
սույթում քննադատվեց հաճախ: Բայց անգամ այն տոնաձառերը, որոնք
դրվեցին *հանուն երեխաների*, ավանդականը չէին. առավել համեստ էին՝
առանց փայլերի, լույսերի կամ խայտաբղետ խաղալիքների: Որոշ ընտանիք-
ներում դրվեցին փոքր՝ հուշանվերային տոնաձառեր: Շատերն էլ արդարաց-
րին տոնաձառի ներկայությունն իրենց տներում՝ դրա բաղադրիչը դարձնելով
հիմնականում Եռագույնը՝ այդպիսով ակտիվացնելով ազգային սիմվոլիկան և
հայրենասիրական տրամադրությունը, իսկ առանձին դեպքերում՝ զոհված
զինվորների լուսանկարները կամ նրանց խորհրդանշող այլ «խաղալիքները»:
Ուշագրավ է, որ երբեմն տոնաձառն արդարացրեց իր ներկայությունը՝ փո-
խելով *ավանդական տոնը*¹¹՝ գլխավոր սենյակից տեղափոխվելով երկրորդա-
կան սենյակներ՝ մի տեսակ թաքուն, գաղտնի մնալով: Արագածոտնի մարզի
Օրգով գյուղում, օրինակ, համայնքում որոշում են կայացնում, որ 2021-ին
տներում տոնաձառեր չեն դնելու, քանզի կյանքի համար մեկամսյա պայ-
քարից հետո մահացել էր պատերազմում վիրավորված համազրուղացի ժամ-
կետային զինծառայողը: Տոնաձառից հրաժարվելու պայմանավորվածու-
թյունը հիմնականում կատարվում է, իսկ տանը փոքր երեխաներ ունենալու
պարագայում, տոնաձառը հարդարվում է «հետևի սենյակում», որի պատու-

⁸ <https://www.civilnet.am/news/2020/12/02/>

⁹ <https://www.civilnet.am/news/2020/12/25/>

¹⁰ Պատերազմների և հետպատերազմյան շրջաններում այս ընկալումը, այնուամենայնիվ, մշտա-
պես դարձել է տոնաձառեր հարդարելու գլխավոր շարժառիթը՝ չնայած համընդհանուր վշտին: Ընդ
որում, սրանում որոշիչ է եղել հատկապես ուսուցիչների դերը: Այսպես, Առաջին աշխարհամարտի տա-
րիներին, Ռուսաստանում հենց ուսուցիչներն ու դաստիարակներն էին պնդում ունենալ տոնաձառեր՝
դրանց հարդարումը արդարացնելով երեխաների տոնական սպասումով. «Նրանք այնքան երկար են
սպասել տոնաձառին, որ նրանց այդ տոնից զրկելը ուղղակի դաժան կլինի», Сальникова 2011, 72:
Ծնողական համայնքի և ուսուցիչների միջև նման տարաձայնություններն ակտիվացան նաև մեր
օրերին, ընդ որում, գոնե դպրոցներում ու մանկապարտեզներում տոնաձառեր ունենալու կարևորու-
թյունը պնդողները միշտ ուսուցիչներն ու դաստիարակներն էին:

հանները ծածկվում են սպիտակ, անթափանց կտորով՝ գաղտնի պահելով տոնական գլխավոր խորհրդանիշը¹¹:

2021-ին տոնաձառը փոխեց իր տեղը ոչ միայն տան ներսում՝ զիջելով պատվավոր տեղը. կենտրոնից՝ գլխավոր սենյակից, տեղափոխվելով հարակից սենյակ, այլև, ինչպես արդեն վերն ակնարկեցինք, տնից դուրս՝ փոխադրվելով *կյանքի տարածքից մահվան և հուշային տարածք*. Եռաբլուր պանթեոնի նոր՝ 2020-ի զոհերի շիրիմների դաշտը բառացիորեն զարդարվեց տոնաձառերով կամ տոնաձառային խաղալիքներով ու շղթաներով: Այնտեղ որոշ տոնաձառեր զարդարվեցին սովորական խաղալիքներով, մյուսները՝ տվյալ զինվորի լուսանկարը կրող մեկ կամ մի քանի խաղալիքներով: Եթե *կյանքի տարածքում* 2021-ի տոնաձառը պահանջում էր որևէ «արդարացում», ապա Եռաբլուրի պարագայում հանրային տրամախոսությամբ տիրում էր լուռ համաձայնությունը: Լռությունը պայմանավորող հիմքերից առաջնայինը թերևս զոհվածի «կարիքները», տվյալ դեպքում նրա՝ տոնի կարիքը բավարարելու մտայնությունն էր («հանգուցյալն է խնդրում»): Այս մտայնության կողքին հանրային դիտանկյունից տոնաձառը *մահվան տարածքում* ընդհանուր առմամբ ընկալվեց որպես տուրք զոհվածներին և այդպիսով արդեն արդարացված համարվեց¹²:

Այդպիսով, զոհվածների տուն-ընտանիքը՝ տոնաձառով, տոնական ուտեստով և ընտանիքի անդամներով 2021-ի Ամանորին տեղափոխվեց Եռաբլուր. այնտեղ էր միայն հնարավոր տան ամբողջական կազմի ապահովումը¹³:

¹¹ Ստեփանյան 2021, ԴԱՆ, Երևան: Քողարկված տոնաձառերի պրակտիկան ևս նորություն չէ: Բոլշևիկյան իշխանությունների ծավալած հակակոռուպցիոնական քաղաքականության շրջանակում Ռուսաստանում 1920-ական թթ. որոշ տներում քողարկվում էին Սուրբ Ծննդյան տոնաձառերը: Բայց եթե դրանք քողարկվում էին *վերևից*՝ իշխանություններից եկող արգելքի պատճառով, ապա 2021-ի Հայաստանում տոնաձառի քողարկումը գալիս էր *ներքևից*՝ համայնքից:

¹² Ի դեպ, զոհված զինվորների հարազատների նման վարքը նախադեպային չէ և, ըստ ամենայնի, հատուկ է ողջերին: Հասկանալի է ռուս էմիգրանտ մի կնոջ օրագրային գրառումը հարազատի գերեզմանին *տոնաձառ հարդարելու* մասին. «Այսօր լույսեր վառեցի գերեզմանի փոքրիկ եղևնու վրա: Տանս այս տարի տոնաձառ չի լինի: Ո՛ր համար այն զարդարեմ»: Думечкина 2002 (էջանշում չկա):

¹³ Ամանորը մեզանում ավանդաբար եղել և առ այսօր էլ մնում է տարվա մեջ այն գլխավոր ափիքներից մեկը (եթե ոչ ամենագլխավորը), որ տուն է բերում ընտանիքի բոլոր անդամներին, քանի որ մշտապես կարևորվել է Նոր տարին ամբողջ ընտանիքով դիմավորելու նորմը՝ ողջ տարին էլ այդպես անցկացնելու ակնկալիքով: 2020-ի պատերազմի զոհերի՝ սահմանային դիրքը *այս ու այն աշխարհների* միջև, նրանց ոչ ողջերի, ոչ էլ դեռևս մեռածների շարքին պատկանելը, ընտանեկան ամբողջական կազմի ապահովումը 2021-ի Ամանորին հնարավոր է դառնում միայն գերեզմանոցում, որը նրանց հարազատների կողմից հաճախ բնորոշվում է որպես «տուն», «միակ տուն»: Ոչ միայն տոնին, այլ նաև առօրյայում Եռաբլուրի/այլ գերեզմանոցների՝ զոհվածների ընտանիքների համար նոր տուն դառնալու ընկալման արտահայտություններ են զոհվածների մայրերի գրառումները. «Սեպտեմբերի 27-ից կանգ առավ իմ ընտանիքի կյանքը, հազարավոր ընտանիքների կյանքը: Իմ ընտանիքում մոռացանք ժպիտն ինչ է, երգ ու պարն ինչ է, մեր ընտանիքում տոնը սուգ դարձավ, իմ ընտանիքում արցունքը ծով դարձավ, մեր ընտանիքի նոր տունը Եռաբլուրը դարձավ...» (զոհված զինվորի մոր ֆեյսբուքյան գրառումից, ներկա պահին հղումը չի գործում): Տուն դարձած Եռաբլուրի ընկալումն ավելի ուժգին է դրսևորվում Արցախից տեղահանվածների խոսքում, որոնց համար իրականում կորսված տան պարագայում Եռաբլուրը ներկայանում է որպես միակ տուն: Ուշագրավ է, որ արդեն 2022-ին Եռաբլուրի շիրիմներից շատերի վրա հայտնվեցին նաև հուշանվերային փոքրիկ տնակներ:

Տոնաձառային այլ պերՖորմանս

Այն, որ տոնաձառերը կրում են տվյալ ժամանակի հետքը, քաջ հայտնի է: Դրանց վրա ազդեցություն են թողել թե՛ տարբեր իրադարձություններ, թե՛ գաղափարախոսություններ. արմատավորվելով ծառերի հնագույն պաշտամունքի պարարտ հողում՝ եղևնու հիմքով տոնաձառի ավանդույթը սկզբնապես ծնունդ առավ հին գերմանական ցեղերի շրջանում նախ որպես Ամանորի, ապա, XVI դ. սկսած՝ որպես Սուրբ ծննդյան խորհրդանիշ¹⁴: Ի սկզբանե համարվելով հեթանոսական խորհրդանիշ՝ այն անընդունելի էր քրիստոնեական եկեղեցու կողմից: XX դարասկզբին հասցրեց դառնալ «կրոնականության» խորհրդանիշ, ստանալ անգամ դասակարգային՝ «բուժական» բնույթ. բուշկիկների իշխանության առաջին շրջանում հակակրոնական և հակաբուժական պայքարի մի բաղադրիչն էլ դարձավ «հակատոնաձառային կամպանիան»¹⁵: 1929-1935 թթ. խորհրդային երկրում տոնաձառը հայտնվեց ընդհատակում և վերականգնվեց արդեն ոչ թե որպես Սուրբ Ծննդի, այլ Նոր տարվա և նույնիսկ՝ *խորհրդային տոնաձառ*¹⁶: Գաղափարախոսական ծանրաբեռնվածությունն իրենց վրա վերցրին տոնաձառի խաղալիքները. միրգ-խաղալիքները, որոնք կապվում էին Դրախտի խնձորների հետ, դարձան կոլտնտեսային առատության ցուցիչները, խաղալիք-երեխաները, որոնք մանուկ Հիուսի կրկնակներն էին, վկայում էին խորհրդային երջանիկ մանուկների մասին, իսկ հնգաթև աստղի, մուրճ ու մանգաղի, տրակտորների ու ինքնաթիռների տեսքով խաղալիքները կոչված էին արտահայտելու խորհրդային տնտեսության զարգացումը 1920-ականներին և 30-ականներին¹⁷: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին խորհրդային տոնաձառերը նկատելիորեն ռազմականացվեցին. խաղալիքների շարքում հայտնվեցին ռազմական տանկերը, ինքնաթիռները, ստալինյան զրահամեքենաները: Տոնաձառի ռազմականացման թեման, ինչպես և կարելի էր սպասել, աշխուժացավ նաև Արցախյան 44-օրյա պատերազմին հաջորդող Ամանորին: Բայց այս անգամ ռազմականացումն իրականացվեց ոչ այնքան ծանոթ՝ ռազմական խաղալիքների միջոցով, որոնք ուղղակի արձագանքն էին արդեն անցյալի ընկալում ունեցող իրադարձությունների, որքան բոլորովին *այլ* տոնաձառով, որն ուղերձ ուներ ապագային: Թվային հարթակը մեր օրերում զինամթերքով ու տարբեր զինատեսակներով այլընտրանքային (ոչ ավանդական՝ փշատերևային հիմքով) տոնաձառեր «հավաքելու» հնարավորություններ է տալիս: Ֆեյսբուքյան տարածքում շատերը դնում էին փամփուշտների ու այլ զինամթերքի պատկերներով հավաքված տոնաձառերի լուսանկարներ, իսկ մի մարդ տար-

¹⁴ Տոնաձառն այնպես է կլանել Ամանորի տոնականությունը, որ թվում է, թե այն միշտ այդ տոնի մասն է կազմել: Սակայն փաստերը վկայում են, որ Եվրոպայում և ապա Ռուսաստանում տոնաձառը Ս. Ծննդի-Նոր տարվա տոնի համընդհանուր խորհրդանիշ դարձավ միայն XIX դ. (Душечкина 2002, Новак 2018):

¹⁵ Душечкина 2002.

¹⁶ Душечкина 2002.

¹⁷ Новак 2018.

բեր իրական զինատեսակներով հավաքած տոնաձառի լուսանկարն էր ներկայացրել՝ հետևյալ գրառմամբ. «Նոր տարին, միևնույն է, գալու է, էս տոնաձառից թող լինի ամեն հայի տանը»: Այսպիսով, տոնաձառը դարձավ, մի կողմից, անցնող աղետալի տարվա ամփոփում, մյուս կողմից, ապագայի անելիքները ազգային մակարդակով կանխորոշելու միջոց:

Համացանցում տարածվող ռազմականացված «տոնաձառի» մեկ այլ, այս դեպքում՝ վերազգային նմուշում էլ տոնաձառի պատկերը «կառուցված էր» վերջին տարիների տարբեր պատերազմները բնորոշող խոշոր պայթյունների դրվագներով: Տոնաձառի պատկերի հիմքում ավանդական նվերների տուփերը, իսկ ծառի ամենաստորին հատվածում՝ մեկ-երկու խաղալիքներով զարդարված եղևնու մի քանի կանաչ ճյուղերը ներկայացնում են պատերազմ չապրած այլ աշխարհը, իսկ արդեն պայթյուններից կազմված «տոնաձառի» հաջորդ շարքերը մարմնավորում են պատերազմով անցած երկրները: Հատկանշական է, որ նրա ստորին՝ ամենածավալային շերտը հատկացված է 44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանի կողմից Արցախի դեմ կիրառված ֆոսֆորային պայթյունի կադրին¹⁸, որին հաջորդում են Սիրիայի, Եմենի, Իրաքի, Լիբիայի, Լիբանանի և Պաղեստինի պատերազմական պայթյունների դրվագները՝ եղևնու բրգաձև կառուցվածքին համապատասխան: Սակայն, ինչ խոսք, 2021-ի տոնաձառերում, ոչ միայն դրանց՝ վերը ներկայացված վիրտուալ, այլև իրական տարբերակներում առավել գերիշխող է ազգային թեմատիկան, իսկ որոշ տարբերակներում էլ տոնաձառը դառնում է այդ երկուսի՝ ազգայինի և ռազմականի միավորման հարթակ:

Ազգային ու ռազմական տրամախոսույթների վիզուալ միահյուսումն է ներկայացնում մանկապարտեզներից (կամ դպրոցներից) մեկում հարդարված տոնաձառը, որի լուսանկարը նախատոնական շրջանում շատ շրջանառվողներից մեկն էր ֆեյսբուքյան ցանցում: Այն, ըստ էության, մարդ-տոնաձառ էր, որ մարմնավորում էր զոհված զինվորների հավաքական կերպարը. եղևնու պատկերը ստացված էր երկու պատերի անկյունում՝ Եռագույնի նեղ ժապավենի միջոցով: Ծառի պատկերի գլխին «դրված» էր զինվորական գլխարկը, պատկերից ներքև՝ հատակին՝ զինվորական «սապոգներն» էին: «Սապոգների» մոտ խաղալիք տանկեր էին, «սապոգներից» դուրս էին գալիս թղթե աղավնիներ՝ միաժամանակ ակտիվացնելով խաղաղության կամ զինվորների՝ աղավնիներ դառնալու¹⁹ տրամախոսույթը: Թղթե աղավնի կար նաև զինվոր-տոնաձառի գլխավերևում՝ ռազմական պատկերանախշով երեք փուլիկների հետ միասին: Զինվոր-տոնաձառից կախված էին ինչպես

¹⁸ 2020 թ. պատերազմի ընթացքում Ադրբեջանի կողմից Արցախում քիմիական զենքի տարրեր պարունակող ֆոսֆորային զինատեսակի կիրառման մասին հաղորդագրություններ հրապարակեցին ՀՀ և Արցախի իշխանությունները, որոնք առ այսօր մնացել են անարձագանք միջազգային հանրության կողմից: Հմմտ. Խաչատրյան 2020:

¹⁹ Զոհվածների հարազատների, հատկապես մայրերի որոշ պատումներում հաճախ է դրսևորվում զոհված որդու՝ աղավնու կերպարով իրենց հայտնվելու մոտիվը: Տե՛ս, օրինակ, «Փաստինֆո» գործակալություն, <https://www.youtube.com/watch?v=Foi5pwlviZs>

սովորական խաղալիքներ, այնպես էլ մահացած զինվորների շրջանաձև կտրվածքով լուսանկարները: Մարդ-տոնաձառերի կերպարները խորթ չեն Ամանորին. իմաստաբանորեն կապված լինելով Տիեզերական ծառի մի տարատեսակ Կենաց ծառի հետ²⁰, տոնաձառը կարող է մոդելավորել նաև աշխարհի անտրոպոմորֆ եռամաս չափումը՝ գլխի, մարմնի և ոտքերի տարանջատմամբ: Այս իմաստով, զինվոր-տոնաձառը նման մոդելավորման իսկական արտահայտություն է, սակայն խնդրահարույց է այն, որ Կենաց ծառ-տոնաձառն այսպիսով դարձել է Մահվան ծառ-(տոնա)ձառ՝ մարմնավորելով զոհված զինվորի: Զինվոր-տոնաձառի այս լուսանկարը ֆեյսբուքյան հարթակում հիմնականում բացասական գնահատականների արժանացավ տոնաձառի՝ մահն ու տխրությունը մարմնավորելու իմաստով, իսկ դրա հարդարված լինելը մանկապարտեզում էլ ավելի սրեց դրա հանդեպ քննադատական վերաբերմունքը:

Մարդկանց (լուսա)նկարներով խաղալիքները նորություն չեն տոնաձառային խաղալիքների տեսականու մեջ: Վերջին տարիներին մեզանում արդիական են դարձել հատկապես երեխաների լուսանկարներով տոնաձառային խաղալիքները տներում, երբեմն նաև մանկապարտեզներում, դպրոցներում: Կոնկրետ մարդկանց պատկերներով խաղալիքներն իրենց առանձնահատուկ տեղն ունեին նաև խորհրդային խաղալիքների մեջ՝ կրելով երկրի կուսակցական ղեկավարների պատկերները. 1937 թ. թողարկվեց խաղալիքների սերիա՝ Կոմկուսի Կենտրոնական կոմիտեի քաղքյուրոյի անդամների դիմանկարներով, ինչպես և մեծ գունդ՝ Մարքսի, Էնգելսի, Լենինի և Ստալինի պատկերներով²¹: Սակայն թվարկվածները չեն առնչվում մահվան և սգի հետ, եթե նույնիսկ դրանք արդեն մեռած մարդկանց նկարներն են, ինչպես խորհրդային խաղալիքների որոշ հերոսների պարագայում: Հետպատերազմյան Հայաստանում և հայկական միջավայրերում տոնաձառային խաղալիքները 44-օրյա պատերազմում զոհված զինվորների լուսանկարներով են կամ պարզապես նրանց լուսանկարներն են, որոնք հայտնվեցին նաև որոշ ընտանեկան տոնաձառերի վրա, նույնիսկ երբ տանը կային երեխաներ: Սակայն դրանք հիմնականում զարդարեցին զինվորների գերեզմանների բնական կամ արհեստական փշատերևները: Տոնաձառային խաղալիքների մյուս՝ ավելի պարզ տարատեսակն էլ կրկին զոհվածներին էր խորհրդանշում, փոխվում էր միայն դրանց արձանագրման ձևը. լուսանկար-արձանագրումներին փոխարինում էին անուն/ազգանուն-ծննդյան/մահվան տարեթվերի արձանագրումները՝ փայտե շրջանակների վրա: ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Գլենդեյլ քաղաքում 2020 թ. ավարտին հայկական մի ընտանիք տան բակում գտնվող փշատերև ծառը յուրօրինակ կերպով էր զարդարել՝ գազաթին

²⁰ Տոնաձառը պտուղներով և մոմերով զարդարելու սովորույթը սկզբնապես հատուկ էր բոլոր ժողովուրդներին, և հենց այս առումով է, որ այն համադրվում է Տիեզերական ծառի տարատեսակ Կենաց ծառի հետ: Տոնաձառի՝ կենացծառային և առհասարակ ծառային համատեքստի մասին տե՛ս Дущечкина 2002:

²¹ Сальникова 2011, 116.

ամրացնելով խաչեր, իսկ ճյուղերից կախելով զինվորների տվյալներով փայտե խաղալիքներ: Առանձնահատուկ ուշադրության է արժանի տոնաձառի մոտ տեղադրված ցուցանակը, որի վրա անգլերենով գրված է հետևյալ բացատրագիրը. «*Հայկական մշակույթում, երբ ընտանիքի անդամը մահանում է տվյալ տարում, ընտանիքը հաճախ նախընտրում է Սուրբ Ծնունդը չգոնել ծառով և զարդերով: Արցախում մղված վերջին պատերազմից հետո մեր ընտանիքը որոշեց այս օրերը նվիրել կորսված կյանքերի համար սգալույն և նրանց հիշատակը վառ պահելուն: Ավելի քան 2500 զինվորներ տվեցին իրենց կյանքը մեր նախնիների հայրենիքը պաշտպանելուն: Այս ծառի վրայի զարդերը ներկայացնում են այն 150 քաղաքի անունները, որոնցից շատերն ընդամենը 18-20 տարեկան էին»²²: Այս բացատրական ցուցանակը, փաստորեն, մեկնաբանում է անսովոր տոնաձառի ներկայությունը՝ հղելով Նոր տարին և Սուրբ Ծնունդը առանց տոնաձառի և զարդերի անցկացնելու հայկական սովորույթին, երբ ընտանիքում նոր հանգուցյալ կա: Հազիվ թե սույն ընտանիքը զոհ ունեցած լիներ 2020-ի պատերազմում, սակայն դա չի խանգարել ցուցանակում շեշտադրել հենց ընտանեկան նորմը: Նույն կերպ, 2021-ի Ամանորին, մարդիկ հրաժարվեցին տոնաձառ հարդարելուց/ավանդական տոնաձառից, ինչպես և տոնից՝ անկախ նրանից՝ իրենց ընտանիքներում ունեի՞ն զոհված, թե՞ ոչ: Իհարկե, ինչպես որպես կանոն լինում է արտակարգ իրավիճակներում (պատերազմ, աղետներ), մեր դեպքում էլ՝ պատերազմի առաջին իսկ օրերից նկատելի դարձավ հանրույթի մոբիլիզացման մեխանիզմի գործադրվելը, որը հանրային տրամախոսությամբ ձևակերպվեց որպես բոլորի՝ «մեկ ընտանիք դառնալ»: Սակայն հետպատերազմյան շրջանում, երբ շատերի համար շուկային զինադադարը սրեց հասարակության պառակտման միտումները, Նոր տարին դարձավ թերևս այն միակ առիթը, որ կրկին միավորեց ազգին որպես «մեկ ընտանիք», երբ մարդիկ, հիմնականում լուռ համաձայնությամբ, միավորվում են՝ տոնի նկատմամբ ընդհանուր վերաբերմունքի և տոնը նշելու միանման ձևերի որդեգրմամբ: Այն դրսևորվում էր զինվորներին առհասարակ, ոչ միայն զոհվածներին, այլև ողջերին՝ որպես սեփական որդիների վերաբերվելու ամենատարբեր արտահայտություններում: Հանրային խոսույթում ինչպես ողջ զինվորներին քաջալերող, այնպես էլ զոհվածների համար վշտակցող գրառումներում ու մեկնաբանություններում նկատելի դարձավ «մեր», «իմ» անձնական դերանունների տարածվածությունը. պատերազմի ծանր օրերին ֆեյսբուքյան հարթակում ժամանակ առ ժամանակ շրջանառվող գրառումներից մեկն օրինակ ասում է. «*Ու կարևոր չէ, որ մայրդ ես չեմ: Դու օրինանքովս պաշտպանված եղիր, Զինվոր իմ տղա*»²³, իսկ Եռաբլուրում նկարահանված տեսանյութում մի կին, հայացքով ցույց տալով նոր զոհվածների շիրիմների դաշտը, հուզված ասում է. «*Ես զոհված որդի**

²² <https://www.facebook.com/arsine.gaprelian/posts/10223801319090849>

²³ <https://www.facebook.com/liana.nersisyan.7/posts/3684410201578152>

չունեմ, բայց... **իմն ա**»²⁴: Այսինքն, ինքնաբերական և խիստ ինտիմ աֆեկտ համարվող սուգը, որը, որպես կանոն, ուղեկցում է միայն հարազատների և շատ մոտ մարդկանց կորստին, մեր դեպքում տարածվում է նաև «մեծ անանուն կոլեկտիվի վրա»: Ըստ Ալեյդա Ամանի, սգի նման *կոլեկտիվացումը* հենց այնպես տեղի չի ունենում. ստանալով տարբեր ծիսական ձևեր և արտահայտություն գտնելով խորհրդանշական գործողություններում՝ սգի աֆեկտը փոխանցվում է ողջ ազգին²⁵: Ընդ որում, սգի և հուշայնացման խորհրդանշական ձևերը, որպես կանոն, թելադրվում կամ գոնե թույլատրվում են հասարակությանը *վերևից*՝ իշխանական շրջանակներից: Մեր դեպքում, կարելի է ասել, ինքնին սոցիալական համախմբման ներուժ ունեցող սուգն ու տրավման իրենց առաջին պերֆորմատիվ արտահայտությունը ստացան համախմբման ներուժ ունեցող մեկ այլ համատեքստում՝ տոնում՝ 2020 թ. նոյեմբերի 9-ի տրավմատիկ զինադադարից²⁶ ընդամենը երկու ամիս անց:

Հայկական ծիսական ավանդույթում կյանքի և ուրախության հետ անմիջականորեն զուգորդվող խորհրդանիշներից հրաժարվելու նորմը հաճախ տարածվում է ոչ միայն հանգուցյալի ընտանիքի, այլ նաև ազգակցական միջավայրի, մտերիմների վրա: 2021-ի հետպատերազմյան Ամանորը, սակայն, որպես մի մեծ ընտանիք միավորեց հայությանը Հայաստանում, Արցախում և Սփյուռքում՝ ստիպելով ոչ միայն պարզապես հարազատ մնալ տոնական խորհրդանիշից հրաժարվելու ավանդական նորմին, այլև հարդարել ավանդական խորհրդանիշը՝ տոնածառը, բոլորովին այլ՝ ոչ *ավանդական* կերպարով՝ զարդարված անծանոթ, բայց արյունակից/հարազատ ընկալվող մարդկանց՝ զոհված զինվորների լուսանկարներով, որոնք կարծես եկան փոխարինելու հիմնականում տան երեխաների լուսանկար-խաղալիքներին: Այս վերջին իմաստով *այլ տոնածառերը* միայն տոնականությունից հրաժարվելու ավանդական նորմին հավատարիմ լինելու մասին չեն, այլ դրանք կոլեկտիվ տրավման արտահայտելու միջոց են դառնում: Նման տոնածառեր դրվեցին հիմնականում մասնավոր տներից դուրս՝ եկեղեցիներում, մանկապարտեզներում, դպրոցներում, հանրային հասանելիություն ունեցող բակերում: Սակայն, եղան դեպքեր, երբ զոհվածները տեղ գտան նաև ընտանեկան տոնածառերի վրա: Ռուսաստանի Նիժնի Նովգորոդ քաղաքում ապրող երիտասարդ մի կին *համակերպվեց* իր մանկահասակ երեխաների հավաքած տոնածառի հետ՝ միայն պատերազմում ընկածների լուսանկարները դրա վրա ունենալու պայմանով²⁷: Ավելին, այս մտադրության իրականացումն էլ նրա համար դարձավ 2021-ի Ամանորի գլխավոր արարողությունը, որն իր հուզա-

²⁴ <https://www.facebook.com/factor.am/posts/915768205636139>

²⁵ Սգի կոլեկտիվացումը որոշիչ դեր է խաղում հատկապես ազգերի ձևավորման շրջանում ազգային ժառանգականության և ընդհանրության հաստատման գործում, տե՛ս Асман 2014, 117:

²⁶ Ուշագրավ է, որ 2020-ի պատերազմի մասին բանավոր պատմություններում բանասացները հաճախ պատերազմի ամենաաղետալի օր են որակում նոյեմբերի 9-ը:

²⁷ Ստեփանյան Գ. 2021, ԴԱՆ, Առցանց հարցազրույց Ռուսաստանի Նիժնի Նովգորոդ քաղաքում բնակվող բանասացի հետ, 15.01.2021:

կանությամբ ծածկում էր ողջ տոնականությունը: Ընտանեկան տոնաձառը զոհվածների լուսանկարներով զարդարելու իր մտադրությունը բացատրելիս նա առանձնացնում է մի քանի հանգուցային կետեր: Նախ, զոհված զինվորները նույնացվում են լույսերի հետ՝ տոնաձառի լուսավոր խաղալիքների և լույսերի նման «իրանք հիմա աստղեր են դառել ու լուսավորում են մեզ» մեկնաբանությամբ²⁸: *Երկրորդ*, ակտիվացվում է ազգի ընտանեկան ընկալումը. կինն իր երկու դպրոցահասակ երեխաներին զինվորների լուսանկարները տոնաձառի վրա ունենալու ցանկությունը բացատրելիս՝ նրանց ներկայացնում է որպես իրենց սրտերում կենդանի ապրող *եղբայրներ*, *քեռիներ* ու *հորեղբայրներ*, որոնք, պետք է ներկա լինեն և ընտանիքի մյուս անդամների հետ *նշեն* տոնը: Նման մեկնությունը արդիականացնում է անձանոթ մարդկանց դիմելաձևերի ընտանեկան համակարգը և ազգի ընտանեկան չափումը²⁹, տուրք տալիս դրանից բխող՝ Նոր տարին ամբողջական ընտանիքով դիմավորելու կայուն ավանդույթին: Միաժամանակ, զոհվածների լուսանկարներով տոնաձառը դառնում է նրանց սխրանքները հիշելու և երախտագիտություն հայտնելու մի ձև, ընդ որում, ինչպես այս, այնպես էլ որոշ այլ տոնաձառերի պարագայում, հերոսների լուսանկարների միջոցով ամփոփվում է Արցախյան պատերազմի բոլոր փուլերի հիշողությունը՝ ներառելով նաև Առաջին ազատամարտը և Ապրիլյան քաոսոյան³⁰:

2021-ի տոնաձառային պերֆորմանսը՝ որպես ինքնաբերական հուշայնացում

Այլ տոնաձառերի հարդարման և դրանց հրապարակայնացման, ինչպես և տոնաձառից ու տոնից հրաժարվելու և գերեզմաններ այցելելու ծիսական վարքը մենք անվանում ենք «պերֆորմանս» կամ «պերֆորմատիվ վարք»՝ նկատի ունենալով դրա հաղորդակցական-ուղերձային բնույթը, որում ուղերձն իրականացվում է գործողությամբ: «Պերֆորմատիվ» բառեզրը կիրառելի է դարձել մարդաբանների և սոցիոլոգների կողմից հենց այս՝ գործողությամբ

²⁸ Հայկական, ինչպես և այլ առասպելաբանություններում մարդու ճակատագիրը կապի մեջ է աստղերի հետ. ամեն մի մարդ ծնվում է իր՝ բարի կամ չար աստղի տակ, իսկ մեռնելուց՝ երկնքից ցուլով վայր է ընկնում նրա աստղը. Հարությունյան 2000, 65: Բերված մեկնաբանության մեջ դրսևորված է մեկ այլ՝ մահվանից հետո աստղ դառնալու պատկերացումը, որն աստղային առասպելների շատ տարածված մոտիվներից մեկն է. Иванов 1991, 116-118, հմմտ. Հայկ նահապետի կապը Օրիոն համաստեղության հետ: Աստղային մոտիվը հատուկ է նաև տոնաձառային համատեքստին, դեռ նախաքրիստոնեական շրջանից վաղվող ճրագները Ամանորի եղևնու պարտադիր զարդարանքներն էին, որոնք քրիստոնեական շրջանում դարձան սուրբծննդյան երկնքի աստղերի մարմնավորումներ (Душечкина 2002): Տեղին է հիշել նաև Հոֆմանի «Մարդուկ-ջարդուկ» հեքիաթից տոնաձառի նկարագրության հետևյալ դրվագը. «Փշատերևի թավ կանաչի մեջ առկայծում և փայլվում են հարյուրավոր փոքրիկ լույսեր՝ ինչպես աստղերը գիշերային երկնքում...»:

²⁹ Խոսակցական լեզվում «ապեր», «քույրիկ», «հուպար», «մորքուր», «հայրիկ», «մայրիկ» դիմելաձևերը դիտարկվում են որպես ազգի «մեծ-ընտանիքային» մոդելավորման արտահայտություն, այս մասին տե՛ս Աբրահամյան 2001, 12-13:

³⁰ Ուշագրավ է, որ նմանատիպ տոնաձառերի վրա որպես Արցախյան առաջին պատերազմի կայուն խորհրդանիշ է ներկայանում Մոնթեն: Եռաբլուրում Ամանորի երթն իր գլխավոր հանգրվաններով՝ 2020-ի և Ապրիլյան քաոսոյայի զոհվածների, Մոնթեի ու Վազգեն Սարգսյանի գերեզմաններով կարծես վիզուալ մոդելավորում է ստացել տոնաձառերի վրա:

արտահայտված ուղերձի իմաստով՝ ի տարբերություն Ջոն Օստինի՝ խոսքային արտահայտությունների դասական տեսության, որտեղ տարբերակվում են հաստատող՝ աշխարհը նկարագրող, և պերֆորմատիվ՝ աշխարհի ստեղծող բանավոր արտահայտությունները: 2021-ի Ամանորը հասարակությանը հնարավորություն տվեց արտահայտելու իր վերաբերմունքը 2020-ի աշնանը 44-օրյա պատերազմում տեղի ունեցածի նկատմամբ՝ ծիսական գործողություններով և խորհրդանշներով դրսևորված ուղերձներով³¹: Այս իմաստով, կարծում եմ, շահեկան է այն պատերազմի պերֆորմատիվ հուշայնացման այլ օրինակների, մասնավորապես 2012-ին Ռուսաստանում սկիզբ առած և ապա հետխորհրդային տարածքի այլ երկրներում, այդ թվում և Հայաստանում որոշակիորեն ծավալված «Անմահ գունդ» երթի հետ համեմատելը, որի նպատակը Երկրորդ համաշխարհային պատերազմի սերնդի մասին անհատական/ընտանեկան հիշողության պահպանումն է. Հաղթանակի տոնի օրն իրականացվող երթի մասնակիցներից յուրաքանչյուրը կրում է իր ազգականի լուսանկարը, իսկ «Անմահ գունդ» շարժման կայքում մարդիկ ներկայացնում են ազգականի մասին իրենց ընտանեկան պատմությունները: Լինելով դարձյալ *ներքևից* եկող նախաձեռնություն (սկիզբ է առել Տոմսկում՝ երկու լրագրողների նախաձեռնությամբ)՝ այն շեշտադրում է, սակայն, ընտանեկան հիշողությունը՝ թոռներ-պապեր կապի ներկայացման միջոցով: Այս նույն իրողության մասին է նաև 2005 թ. Ռուսաստանում սկիզբ առած «Գեորգիյան ժապավեն» ակցիայի հիմնական՝ «Պապիս հաղթանակը իմ հաղթանակն է» լոգունգներից մեկը: Ի տարբերություն մեր տոնածառային պերֆորմանսի, որն ամբողջությամբ ինքնաբերական էր, և, ըստ էության, նույն կամ նման ինքնաբերական արտահայտություններ ունեցավ միմյանցից անկախ մարդկանց տոնական ձևակերպումներում, Հաղթանակի օրվա հետ կապված «Անմահ գնդի» պերֆորմանսը, թեև, կրկին գալիս էր *ներքևից*՝ լրագրողական դաշտից, բայց մասնավոր նախաձեռնություն էր, որը խրախուսվեց ու հաջող կերպով յուրացվեց *վերևից*՝ հետագա տարիներին արդեն հրահանգավորվելով պետական մակարդակով: Իհարկե, երկու տոնական իրողությունները համեմատելի չեն բուն պատմական իրադարձությունից ունեցած իրենց ժամանակային հեռավորությամբ (մի դեպքում խոսքն ընդամենը 50-օրյա, մյուսում՝ ավելի քան 60-ամյա հեռավորության մասին է), սակայն դրանք համեմատելի են որպես համերաշխության ցուցաբերման միջոցներ պատերազմի մասնակիցների հանդեպ, որոնցից մեկը խարսխվում է մասնավոր-ընտանեկան սկզբունքի վրա՝ ուղղորդվելով պետական ինստիտուտների կողմից, մյուսը, միանգամայն ինքնաբերականորեն՝ հիմնվելով *ազգ-ընտանիքի* սկզբունքի վրա: Տեղին է հիշել 2021-ի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանում կազմակերպված երթը՝ ի պատիվ պատերազմում զոհվածների և անհետ կորածների. այն արտաքուստ կրկնում է «Անմահ գունդ» երթը, բայց չունի դրան

³¹ Հուշայնացման տոնական պրակտիկաներում «պերֆորմատիվ» բառեզրի կիրառության իմաստային շրջանակների մասին տե՛ս Архипова и др. 2017, 85-89:

հատուկ պատերազմի հուշայնացման ընտանեկան սկզբունքը. երթի մասնակից զինվորականները՝ Ալիկի և Նրա տիկնոջ առաջնորդությամբ քայլում էին՝ զոհված ադրբեջանցիների լուսանկարներով³²: Ի դեպ, եթե Ռուսաստանում պետական մակարդակով իրականացվող պերֆորմատիվ հուշայնացումները հասարակության մի մասի շրջանում առաջ են բերում բողոք և բոյկոտ, որովհետև դրանց հետևելը դիտվում է համերաշխության արտահայտություն պետության քաղաքականության նկատմամբ³³, ապա մեզանում ամբողջապես ներքևից եկող տոնական պերֆորմատիվ հուշայնացումները՝ սկսած գերեզմանոցային այցերից, վերջացրած *այլ տոնածառերով*, իրենք են որոշակի բողոք կրում: Սրա լավագույն վկայությունը կարող է լինել շատերի չմասնակցելը դեկտեմբերի 19-21-ին պետական մակարդակով երկրում հայտարարված եռօրյա սզին: *Վերևից* իջեցված սզի հրահանգը շատերի կողմից ստորադասվեց *ներքևից* եկող սզի պահանջին՝ նախապատվությունը տալով սզի և տրավմայի հուշայնացման սեփական պերֆորմանսին՝ Ամանորի շրջանակում: Սրան, անշուշտ, նպաստեց նաև հայտարարված սզի ակնհայտ քաղաքականացումը՝ իշխանությունների կողմից սզո երթը սեփական փիառի միջոց դարձնելը, ցույց տալը, որ անգամ պատերազմում կրած պարտությունից հետո, իրենք շարունակում են վայելել ժողովրդի ընդունելությունը, իսկ ընդդիմության կողմից՝ հակառակը վերհանելն ու սուզը իշխանությունների հրաժարականի պահանջի վերածելը: 2021-ի Ամանորը՝ բոլորին միավորելու և նշելու ձևերի հարցում լուռ համաձայնությամբ մեկ անգամ ևս հաստատեց իր՝ հատուկ տոն լինելը՝ վերականգնված նախատոնին առավել մոտ լինելու իմաստով³⁴:

Նոր տարվա՝ բողոքի լիցք կրող սզո պերֆորմանսն այս իմաստով, հնարավոր է, հարում է նաև *ինքնաբուխ հուշայնացմանը*, որի համար ևս որոշիչ է բողոքի տարրը: Ջ. Սանտինոն կարծում է, որ հուշայնացման պրակտիկայի բաղադրիչը դրսևորվում է հենց այն պատճառով, որ հուշայնացման մասնակիցներին հնարավորություն տա ցուցադրելու իրենց վերաբերմունքը սոցիալական սուր խնդիրների հանդեպ: Ճիշտ է, բոլոր ինքնաբուխ հուշահամալիրները դուրս են գերեզմանների տարածքից և, որպես կանոն, կապված են մահվան փաստի կատարման տեղի հետ (հմմտ. խաչերը՝ ավտոճանապարհային վթարների տեղում, ժամանակավոր հուշահամալիրները

³² Ադրբեջանական երթում հղումն «Անմահ գնդին» 44-օրյա պատերազմը Հայրենական պատերազմի լեզվով ներկայացնելու նպատակն ունի, որն ինչպես մեր մասնավոր զրոյցում նկատեց ազգագրագետ Գ. Շաղոյանը, ընդունելի կդարձնե այն և՛ սեփական հասարակության, և՛ Ռուսաստանի համար: Ի դեպ, 2020-ի Արցախյան պատերազմն Ադրբեջանում պաշտոնապես անվանվում է «Հայրենական պատերազմ»:

³³ Ինչպես ցույց են տալիս վերջին տարիների Հաղթանակի տոնի ուսումնասիրությունները, նույն Գեորգիևյան ժապավենը ոմանք Ռուսաստանում ընկալում են որպես համերաշխության ցուցադրություն կովածների, ոմանք էլ՝ այդ խորհրդանիշը ստեղծած պետության քաղաքականության նկատմամբ. ինչն էլ առաջ է բերում տարբեր պերֆորմատիվ վարքեր: Այս մասին տե՛ս Архипова и др. 2017, 92-101: Իսկ այսօր արդեն շատերը Ռուսաստանում հիշողության նման պետական քաղաքականության հետևանք են համարում Ռուս-ուկրաինական պատերազմը՝ սկիզբ առած 2022-ի փետրվարին:

³⁴ Абрамян 1983.

անհատական կամ խմբային մահերի տեղում), սակայն մեր դեպքում սգի գերեզմանոցային պերժորմանսն էլ (այցելություններ, ծաղիկներ, Նոր տարվա սեղանի պարագաներ տանելը, խունկ ծխելը ևն) իր ինքնաբերականությամբ, կարծում ենք, համեմատելի է հուշայնացման այդ ձևերի հետ, եթե նկատի ունենանք, որ Եռաբլուրը պարզ գերեզմանոց չէ, այլ ինքնատիպ հուշահամալիր: Ամանորի այս պերժորմանսում ընդգծված էր նաև ցասումը տեղական *վերևների* (երկրի իշխանությունների) և ընդհանրապես ամբողջ աշխարհի դեմ. հանրային ընկալման մեջ 2020-ի պատերազմում անարդար էր ամեն ինչ՝ հակառակորդի կողմից անընդունելի զինատեսակների, վարձկան ահաբեկիչների ներգրավումից մինչև ազդեցիկ երկրների և միջազգային հանրության 44-օրյա լուծությունը և, իբրև այդ ամենի աղետալի հետևանք, 4000-ից ավելի զոհերը: Ե՛վ բողոքի ներուժով, և՛ գերեզմանոցային տարածքից դուրս գտնվելով, ինքնաբերական հուշայնացմանն է հարում տոնածառային պերժորմանսը հատկապես Սփյուռքում: Համարվում է, որ ինքնաբերական մեմորիալները, որպես հանրային սգի արտահայտություններ, երևան են գալիս այն դեպքերում, երբ մարդիկ չունեն անձնական ծանոթություն մահացողների հետ և նրանց գերեզմաններին այցելության մատչելիություն: Եթե հայաստանցիներն ու արցախցիներն ունեին հանրայնորեն սգալու տեղեր՝ ի դեմս Եռաբլուրի, Եղբայրական գերեզմանոցի և համայնքային գերեզմանոցների, ու դրանում իր որոշիչ դերն էր կատարում և ազգ-ընտանիքի կոնցեպտը (անձնապես չճանաչելը զոհվածին և նրա ընտանիքի անդամներին որևէ կերպ խոչընդոտ չէր նրանց գերեզմաններին այցելելու, խնկարկելու, ծաղիկներ դնելու, լացելու), ապա դրսի հայերը ստեղծում էին հուշայնացման սեփական տարածքները, և ուշագրավ է, որ դրանց մի մասն առնչվում էր անձնական/ընտանեկան տարածքին՝ տանը: Պերժորմատիվ հուշայնացման տարածված ձև է դառնում հրաժարումը տների՝ Նոր տարվա զարդարանքներից և փոխարենը՝ ազգային սիմվոլիկայի կիրառությունը, որը շատ խոսում է դառնում հատկապես այն երկրներում, որոնցում գրեթե պարտադիր են տների արտաքին ձևավորումները տոնին: Հայերի այլ *Ամանորը* այս իմաստով առավել տեսանելի էր ԱՄՆ-ում: Սփյուռքյան հաղորդաշարերից մեկի հեղինակները սա ցույց են տալիս Փասադենայի Սիերա Մադրե թաղամասի օրինակով, որտեղ շքեղորեն զարդարված առանձնատների մեջ նկատելի են միայն հայկական եռագույն դրոշներով զարդարված առանձնատները: Դրանցից մեկի առջև տեղակայված երկու Եռագույններից մեկի վրա կարդում ենք՝ «Հարդարանքի փոխարեն: Ի յիշատակ Արցախի զոհուած զինուորներուն», երկրորդի վրա նույն գրությունն է՝ անգլերենով³⁵: Այսպիսով, մարդիկ, կարելի է ասել, սեփական տունը վերածում էին յուրօրինակ ժամանակավոր (Ամանորի տոնի ժամանակային շրջանակում) ինքնաբերական հուշայնացման տեղի՝ մի դեպքում ուղղակի ծիսական զարդարանքից հրաժարվելով և/կամ այն

³⁵ Chinga Choong-Los Angeles, Christmas / Best places to visit Չինգա Չունգ-Լոս Անջելես, Սուրբ Ծնունդ, <https://www.youtube.com/watch?v=5VbEbmMpu5M>

ազգային/հուշայինով փոխարինելով, մեկ այլ դեպքում *զինվոր-տոնածառ* հարդարելով: Եթե անգամ այդ տոնածառերը դրվում էին տան ներսում, դրանց լուսանկարների կամ տեսապատկերների տարածումը սոցիալական ցանցերում ապահովում էր ինքնաբերական հուշայնացմանը հատուկ հանրայնությունը³⁶: Պատերազմում զոհվածներին նվիրված քաղաքացիական հուշահամալիրների անհատականացումը, նախ և առաջ զոհերի անունների արձանագրմամբ, աշխարհում նկատվող միտում է, որի լավագույն արտահայտությունն է համարվում Վաշինգտոնում Վիետնամի պատերազմին նվիրված հուշահամալիրը՝ գրանիտե սալաքարով՝ վրան գրված պատերազմում ընկած ամերիկացի զինվորների անունները³⁷: Հուշահամալիրում իր տեղը շուտով գտավ նաև ժողովրդական հուշայնացումը. մարդիկ այստեղ թողնում են իրենց հարազատներին ուղղված գրառումներ, ինչպես և նրանց անձնական իրերը: Անձնականացված հուշահամալիրների համանման օրինակներ են նաև Հյուսիսային Իռլանդիայում ոչ պատերազմական, քաղաքացիական և պարտիզանական պայքարի զոհերին նվիրված ժամանակավոր ինքնաբերական սրբավայրերը, որոնք ստեղծվում են զոհերի ընտանիքների ու հարազատների և ոչ թե քաղաքային խորհուրդների կողմից: Մեր *այլ տոնածառերը* պատերազմի անձնականացման մեկ ուրիշ օրինակ են ներկայացնում. այլևայլ ինքնաբերական հուշահամալիրներում դրված լուսանկարները մեր դեպքում հայտնվում են տոնածառին: Բայց եթե վերը բերված ժողովրդական հուշայնացումների հեղինակները բացառապես զոհերի ընտանիքների անդամներն են և հարազատները, ապա մեր տոնածառերի պարագայում՝ անձանոթ մարդիկ, հայեր, որոնք իրենց տունն այսպիսով վերածում են Արցախյան պատերազմում ընկածների հուշայնացման տարածքների:

Եթե *այլ տոնածառերը* պատերազմի ժամանակավոր հուշայնացումներ են, ապա տոնածառային *այլ խաղալիքները* մի մասնավոր դեպքում պատերազմի հուշայնացման տևականություն ունեցող տարածք են ստեղծել տան ներսում: Մոսկվայաբնակ երիտասարդ աղջիկը զինվորների լուսանկար-խաղալիքները եղանուց հավաքելով տեղավորել է իր անձնական ֆոտոալբոմի մեջ, որում սեփական լուսանկարներն իրենց տեղը զիջել են տղաների լուսանկարներին: 2021-ի տոնածառային լուսանկար-խաղալիքները այդպես, ամփոփված ալբոմի մեջ, տոնից դուրս իրենց շուրջը նոր տարածք են ստեղծում՝ մոմով, խաչի պատկերներով լապտերիկով: Այսպիսով, ի տարբերություն սովորական տոնածառային խաղալիքների, որոնք տոնի ավարտին հավաքվում, խնամքով դասավորվում են հատուկ տուփերում և դրվում մի առանձին տեղ, որոնց մասին մարդիկ մոռանում են մինչև հաջորդ Ամանոր, պատերազմում ընկածների տոնածառային լուսանկար-խաղալիքները, արդեն իբրև լուսանկարներ, հայտնվում են ալբոմում, բայց ինչ-որ իմաստով սրբաց-

³⁶ Ինքնաբերական հուշահամալիրներին (որոնք Ջեք Սանտինոն անվանում է *ինքնաբերական սրբավայրեր*) բնորոշ կարևոր կողմերից է դրանց հայտնվելը հանրային տարածքում և հանրային ուշադրություն գրավելը, տե՛ս Santino 2006, 55:

³⁷ Santino 2001, 96-97.

վում են՝ կարծես դառնալով ինքնատիպ սրբապատկերներ՝ տեղ գտնում տան ամենատեսանելի տեղերից մեկում: Այս տարածքը հիշեցնում է զոհվածների տներում հարդարվող անկյունները՝ զոհվածների լուսանկարներով, մոմերով, Հայաստանի և Արցախի պետական դրոշներով, նրանց տրված պարգևներով/մեդալներով, ծաղիկներով ևն: Թե՛ մեկը, թե՛ մյուսը հարում են ժողովրդական քրիստոնեության՝ հայերիս շրջանում տարածված դրսևորումներին՝ մասնավոր տներում հանդիպող *տան սրբերին* կամ *սրբի անկյուններին*, որոնց առջև նույնպես մոմեր են վառվում, աղոթքներ արվում: Գոնե այս մի դեպքում, այսպիսով, մենք ունենք տան տարածքում ժամանակային տևականությամբ տոնաճառային ինքնաբերական հուշայնացման փոխակերպման մի օրինակ, որն իր շուրջը սրբային նոր տարածք է ստեղծում: Ճիշտ է, այն չունի հանրային մատչելիություն, ինչպես *տան սրբերը* կամ էլ ինքնաբերական հուշահամալիրներն ամենուր աշխարհում, սակայն ձայնակցում է Սանտինոյի առաջ քաշած *ինքնաբերական սրբավայրեր* բնորոշմանը, որը նա կիրառում է առհասարակ ինքնաբերական հուշահամալիրների պարագայում³⁸:

Եզրակացություններ

2021-ի Ամանորին հանրույթին միավորելու՝ տոնի հիմնարար հատկանիշներից մեկն իրացվեց տոնականությունից հրաժարվելու եղանակով: Դա դարձավ պատերազմում զոհ ունեցող ընտանիքների հանդեպ համերաշխության ցուցաբերման միջոց: Տոնական պերֆորմանսը նախ և առաջ գերեզմանոցում, իսկ ապա նաև դրանից դուրս, վկայում է սգի արդիականության և դրա՝ դեռևս հիշատակի վերածված չլինելու մասին. զոհված զինվորները դեռևս հանգուցյալներ (առավել ևս՝ նախնիներ) չեն, նրանք *այս ու այն աշխարհների* սահմանում են:

Հետպատերազմյան ծեսում նոր կյանք ստացավ ազգ-ընտանիքի կոնցեպտը: Համերաշխության ցուցաբերման ընդհանուր համատեքստում նկատելի է, թե ինչպես են շեշտադրվում ազգ-պետության ընտանեկան հատկանիշները, որոնք ընդհանրապես բնութագրական են հայ հանրույթի համար: Այն, որ սգի հիմնական ծանրաբեռնվածությունն անցավ թերևս ամենաընտանեկան տոնին՝ Ամանորին, կարելի է պատերազմի և սգի անձնականացման խոսուն վկայություններից մեկը համարել: Մարդիկ իրենց *ընտանեկան տունը* նվիրաբերեցին ազգ-ընտանիքի զոհված անդամներին՝ այդպիսով *ներքևից* իրականացնելով ազգային տրավմայի և սգի անձնականացում/ընտանեկանացում: Իսկ առանձին դեպքերում, հատկապես Սփյուռքում, սեփական տները դարձրեցին հուշայնացման տարածքներ, որոնց վերագրվեցին *հիշողության տեղի* գործառույթներ, ինչպես որ նման գործառույթներ են վերագրվում ինքնաբերական հուշահամալիրներին՝ հավաքված ողբերգական մահվան տեղից դուրս (հմմտ. դեսպանատների տարածքները, որոնց երկրորդում տեղի է ունեցել այս կամ այն ողբերգությունը):

³⁸ Santino 2006, 53.

Համընդհանուր սգի անձնականացման առանցքային արտահայտչամիջոց դարձավ Նոր տարվա տոնաձառային պերֆորմանսը: Հատկապես մասնավոր ընտանեկան տոնաձառերը՝ զինվորների այս կամ այն ներկայությամբ, վերածվեցին զոհվածներին սեփական ընտանեկան կազմի մեջ ներառելու ցուցադրության, այն, ինչ սովորաբար անում է ընտանիքը՝ ներգրավելով իր հանգուցյալ անդամներին՝ հիշատակի ծեսերի միջոցով: Ավելին, դրա շնորհիվ որոշ դեպքերում տոնաձառը մնաց տոնի միակ պերֆորմանսը՝ մինչև անգամ հակադրվելով բուն տոնին. տոնը չարվեց, բայց տոնաձառը զարդարվեց: Եթե տոնական մյուս բաղադրիչների պարագայում (այցելություններ, շնորհավորանքներ, ուտեստ, տոնական հավաքույթներ) պերֆորմատիվ էր արդեն ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելը դրանցից, ապա տոնաձառը դարձավ նոր պերֆորմանս կերտող, որը վերքերի ամոքման և նորի հույսն է արթնացնում (ինքնաբուխ հուշայնացմանը վերագրվող ևս մեկ գործառույթ): Ամռիչ տոնաձառի այլ դրսևորումներ մենք էլի ունենք: Այսպես, 1988-ի Սպիտակի երկրաշարժի ամենահայտնի լուսանկարներից մեկի գլխավոր *հերոսը* հենց փլատակների վրա հավաքված տոնաձառն է՝ շրջապատված երեխաներով, որն իր գունազարդությամբ կարծես հակադրվում է կիսավեր շենքերի, փլատակների անգույն ամայությանը: Իսկ Ստեփանակերտի մանկապարտեզներից մեկում, 90-ականներին ռմբակոծությունների հետևանքով դաշնամուրի վրա արկի բեկորից բացված անցքն առ այսօր շարունակում է փակվել ոչ այլ ինչով, քան խաղալիք-տոնաձառով:

2021-ի տոնաձառը, հավատարիմ ծիսական գլխավոր խորհրդանիշների՝ աշխարհին ամբողջացնելու սկզբունքին, միավորեց համայնքը (ընտանիքի կամ համայնքի բոլոր անդամների այս կամ այն մասնակցությունը տոնաձառի հարդարմանը), ազգ-պետությունը (Եռագույնների ներկայությունը) և ընտանիք-պետությունը (զոհված/կենդանի զինվորների ներկայությունը):

2021-ի տոնաձառային պերֆորմանսը ինքնաբերականորեն հուշայնացրեց 1988-ից սկիզբ առած Ղարաբաղյան շարժումն ու Արցախյան պատերազմը՝ նրա երեք հիմնական փուլերով՝ Արցախյան ազատամարտ (1988-1994 թ. մայիսի 12), Քառօրյա պատերազմ (2016 թ. ապրիլի 2-5) և Արցախյան 44-օրյա պատերազմ (2020 թ. սեպտեմբերի 27 - նոյեմբերի 9)՝ հարելով անժամանակ մահվան ամենատարբեր առիթներով կազմակերպված *ինքնաբուխ հուշահամալիրների* շարքին:

2021-ի Ամանորը եկավ վերահաստատելու իր՝ թերևս առավել կենսունակ կապը վերականգնված նախատոնի հետ՝ ողջ հասարակությանը միավորելու իր կարողությամբ, միայն թե այս անգամ՝ կորստի և վշտի շուրջ: Այն դարձավ 44-օրյա պատերազմի տրավման և վիշտը կոլեկտիվ կերպով արտահայտելու և հուշայնացնելու թերևս առաջին պրակտիկան:

Գրականություն

- Աբրահամյան Լ. 2001, Ազգ-պետություն, թե՛ ընտանիք-պետություն. հայ ինքնության ընտանեկան առանձնահատկությունները, Ընտանիքի հետազոտման խնդիրները (խմբ.՝ Դ.Ս. Վարդումյան, Լ.Մ. Վարդանյան), Երևան, «Ակունք», էջ 12-16:
- «Գիտակից լուրջություն էր: Երևի սենց բաներից ա սկսվում վերափոխումը», կարդում ենք ֆեյսբուքյան մի գրառման մեջ. <https://www.facebook.com/smbat.hakobyan.3/posts/3680424415376268>, 1.01.2021 (ներբեռնման օրը՝ 25.03.2021):
- Դաշտենց Ա. 2021, Ամանորի գիշերը քար լուրջություն ամբողջ Հայաստանում, <https://hraparak.am/post/3b61b3616f576aafe4de219a678c5a57?fbclid=IwAR0N0cwrVx3UplY6nfB0HzClQrrsAUclNuWgf6oLHT53qBfnUf8RLMIEZ1s>, 1.01.21 (ներբեռնման օրը՝ 24.03.21):
- Խաչատրյան Մ. 2020, Ադրբեջանական ուժերը կիրառել են քիմիական զենքի տարրեր պարունակող ֆոսֆորային զինատեսակ, հայտնում է Արցախի ՊԲ-ն, <https://www.azatutyun.am/a/30922716.html>, 31.10.2020 (ներբեռնման օրը՝ 22.02.2021):
- Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, [Բեյրութ], տպ. Համազգայինի Վահե Սէթեան, 65 էջ:
- Ստեփանյան Գ. 2020, Նոր տարուց Վերջին զանգ. տոնական պրակտիկաներ, հիշողություն և վերակազմում, Երևան, ՀԱԻ հրատ., 432 էջ:
- Ստեփանյան Գ. 15.01.2021, ԴԱՆ, օնլայն հարցազրույց Ռուսաստանի Նիժնի Նովգորոդ քաղաքում բնակվող բանասացի հետ:
- Ստեփանյան Գ. 11.02.2021, ԴԱՆ, Երևան:
- «Փաստինֆո» գործակալություն 2021, Ադրբեջանցիները զինգրքույկները դրել էին ցեղֆանի մեջ <https://www.youtube.com/watch?v=Foi5pwlviZs>, 31.12.2021 (ներբեռնման օրը՝ 28.11.2022):
- Архипова и др. 2017, Война как праздник и праздник как война, Антропологический форум, N 33, с. 84-122.
- Асман А. 2014, Длинная тень прошлого. Мемориальная культура и историческая политика, Москва, «Новое литературное обозрение», 323 с.
- Душечкина Е. 2002, Русская елка: история, мифология, литература, СПб., «Норинт», 416 с.
- Иванов В. 1991, Астральные мифы. Мифы народов мира, т. 1, Москва, «Советская Энциклопедия», с. 116-118.
- Новак А. 2018, «Откуда пришла новогодняя ёлка?», <https://balamut4uma.livejournal.com/912869.html>, 28.11.2019 (ներբեռնման օրը՝ 15.03.2023):
- Сальникова А. 2011, История елочной игрушки или как наряжали советскую елку, Москва, «Новое литературное обозрение», 240 с.
- Топоров В. 1992, Праздник. Мифы народов мира, т. 2, Москва, «Советская Энциклопедия», с. 329-331.
- Chinga Choong-Los Angeles, Christmas / Best places to visit Չինգա Չունգ-Լոս Անջելես, Սուրբ Ծնունդ, <https://www.youtube.com/watch?v=5VbEbmMpu5M>, 31.12.2020 (ներբեռնման օրը՝ 20.04.2021):
- Santino J. 2001, Signs of war and peace. Social conflict and the uses of symbols in Public in Northern Ireland, Palgrave Macmillan, 156 p.
- Santino J. 2006, Spontaneous shrines, memmorialization, and the public ritualesque, Santino Jack, ed., Spontaneous Shrines and the public memorialization of death. New York: Palgrave MacMillan, 358 p.
- <https://www.panorama.am/ru/news/2021/01/01/>, 01.01.2021 (ներբեռնման օրը՝ 16.03.2023):
- <https://www.civilnet.am/news/2020/12/02/> (ներբեռնման օրը՝ 02.12.2020):
- <https://www.civilnet.am/news/2020/12/25/> (ներբեռնման օրը՝ 25.12.2020):
- <https://www.facebook.com/liana.nersisyan.7/posts/3684410201578152>, 4.10.2020 (ներբեռնման օրը՝ 26.01.2021):

<https://www.facebook.com/arsine.gaprelian/posts/10223801319090849>, 30.12.2020 (ներբեռնման օրը՝ 30.12.2020):

<https://www.facebook.com/photo?fbid=3545247765571583&set=a.194832227279837>, 1.01.2021, (ներբեռնման օրը՝ 25.03.2021):

<https://www.facebook.com/factor.am/posts/915768205636139>, 28.01.2021 (ներբեռնման օրը՝ 28.01.2021):

ՏՈՆԸ ԵՎ ԿՈԼԵԿՏԻՎ ՏՐԱՎՄԱՆ. 2021-Ի ԱՅԼ ԱՄԱՆՈՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Գոհար Ստեփանյան

Ամփոփում

2020 թ. 44-օրյա պատերազմով պայմանավորված կոլեկտիվ տրավմայի հուշայնացման թերևս առաջին հանրային մեծ ընդգրկում ունեցող ծեսը դարձավ Ամանորը: Տոնի և հատկապես ամանորյա տոնի գլխավոր՝ հասարակությանը միավորող գործառույթը հետպատերազմյան շրջանում հատուկ դեր ունեցավ պատերազմի տրավման վերապրելու գործում: Այն դրսևորվեց հայությանը Հայաստանում, Արցախում և Սփյուռքում կորստի և սգի շուրջ համախմբելու մեջ՝ միաժամանակ ակտիվացնելով պատերազմի անձնականացման և ազգ-ընտանիքի կոնցեպտները: Այս իմաստով, 2021-ի Ամանորը եկավ վերահաստատելու իր՝ թերևս առավել կենսունակ կապը վերականգնված նախատոնի հետ: Տոնական ծանոթ վիզուալ, ակուստիկ, համայն-հոտային ձևավորումների փոխակերպումները որդեգրվեցին հանրույթի կողմից լուռ համաձայնության շնորհիվ: Իսկ տոնի գլխավոր խորհրդանիշը՝ տոնածառը, հավատարիմ ծիսական խորհրդանիշների՝ աշխարհին ամբողջացնելու սկզբունքին, միավորեց համայնքը (ընտանիքի կամ համայնքի բոլոր անդամների այս կամ այն մասնակցությունը տոնածառի հարդարմանը), ազգ-պետությունը (Եռագույնների ներկայությունը) և ընտանիք-պետությունը (զոհված/կենդանի զինվորների ներկայությունը):

Բանալի բառեր՝ կոլեկտիվ տրավմա, սուգ, հետպատերազմյան Ամանոր, պատերազմի անձնականացում, ազգ-ընտանիք, ինքնաբերական հուշայնացում, տոնածառային պերֆորմանս:

ПРАЗДНИК И КОЛЛЕКТИВНАЯ ТРАВМА: ДРУГОЙ НОВЫЙ 2021 ГОД В АРМЯНСКОЙ СРЕДЕ

Гоар Степанян

Резюме

Новый 2021 год стал, пожалуй, первым масштабным публичным ритуалом мемориализации коллективной травмы, причиненной 44-дневной войной 2020 года. Основная объединяющая функция праздника, и особенно новогоднего праздника, сыграла особую роль в послевоенное время, одновременно активизируя концепции персонализации войны и нации-семьи. В этом смысле Новый 2021 год вновь подтвердил свою связь с восстановленным первобытным

праздником. Имевшие место трансформации привычных визуальных, акустических, вкусовых и обонятельных оформлений праздника были приняты публикой в результате молчаливого согласия граждан. А главный символ праздника – елка, объединила общину (то или иное участие всех членов семьи или общины в украшении елки), нацию-государство (наличие Триколора) и семью-государство (присутствие мертвых/живых солдат).

Ключевые слова – коллективная травма, скорбь, послевоенный Новый год, персонализация войны, семья-нация, спонтанная мемориализация, ёлочный перформанс.

FEST AND COLLECTIVE TRAUMA: *OTHER* NEW YEAR 2021 IN ARMENIAN ENVIRONMENTS

Gohar Stepanyan

Abstract

New Year's Eve was perhaps the first large-scale public ritual of memorialization of the collective trauma caused by the 44-day war in 2020. The main unifying function of the holiday, and especially the New Year holiday, played a special role in the post-war period in experiencing the trauma of the war. It manifested itself in the unification of the Armenians of Armenia, Artsakh and the Diaspora around loss and grief, while simultaneously activating the concepts of personalization of war and the nation-family. In this sense, the New Year 2021 has once again confirmed its perhaps most striking connection with the restored primitive festival. This article discusses the transformation of the habitual visual, acoustic, gustatory, and olfactory designs of the holiday, which were accepted by the public as a result of tacit consent. And the main symbol of the holiday, the Christmas tree, faithful to the principle of completing the world, united the community (participation of all family or community members in decorating the Christmas tree), the nation-state (the presence of the Tricolor) and the family-state (the presence of dead / living soldiers).

Key words – collective trauma, sorrow, post-war New Year, personalization of war, spontaneous memorialization, nation-family, Christmas tree performance.

ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐԻ ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆԻ ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԸ¹

Ինեսա Կարապետյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ nanakarap18@gmail.com

Արմինե Գաբրիելյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ arminegabriel.iae@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 27.01.2022, գրախոսվել է 10.04.2023, ընդունվել է տպագրության 11.04.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.1-268


Ներածություն

Կարճադրյուրի՝ անտիկ դարաշրջանի բնակավայրն ու դամբարանա-դաշտը գտնվում են Գեղարքունիքի մարզի Վարդենիսի շրջանի համանուն գյուղից 1,50 կմ դեպի արևելք: Դամբարանադաշտը 1971-1972 թթ. հայտնաբերել և պեղել է պ.գ.թ. Հ. Մնացականյանի ղեկավարած արշավախումբը, իսկ 1975-1991 թթ. բնակավայրում և դամբարանադաշտում համատեղ պեղումներ է պարբերաբար կատարել հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին Հայաստանի հնագիտության բաժնի արշավախումբը (ղեկ.՝ Ի. Կարապետյան):


Հզոր պարսպապատով շրջապատված անտիկ բնակավայրը զբաղեցնում է Սևանի ավազանի հարավարևելյան (նախկինում՝ լճի մեջ) բարձրադիր հրվանդանի ձևով մխրճված ափի հարթ մակերեսը: Բնակավայրն անցել է մեյիորացման և հողահարթեցման գործընթացների բովով, ուստի պեղումներն արվել են միայն դրա հարավարևելյան պահպանված մասում: Պեղումներով ձեռք բերված փաստերի հետազոտության շնորհիվ բացահայտվել է, որ բնակավայրը հիմնադրվել է մ.թ.ա. VI դ. կեսերին և գոյատևել է մինչև մ.թ. II դ. վերջը, երբ լճի ջրի մակարդակի բարձրացման պատճառով այն լքվել է և վերածվել դամբարանադաշտի²: Այս ուշ շրջանի դամբարանադաշտի թաղումները կատարվել են քառանկյուն և ձվաձիր կառուցվածքաձև ունեցող (աղ. 2, նկ. 3, 4) և կարասային (անոթային) դամբարանների մեջ:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A272 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

² Կարապետյան 2022, 343-344:



Աղ. 1. նկ. 1. Սևանի ավազանի անտիկ շրջանի կարասային թաղումների տեղորոշման քարտեզ՝ ըստ Արմինե Գաբրիելյանի (քարտեզի հիմքը՝ Դիմա Առաքելյանի, ձևավորումը՝ Անահիտ Գալստյանի), **նկ. 2.** Կարճադրյուր բնակավայրի կարասային թաղումների տեղադրությունը՝ ըստ Ինեսա Կարապետյանի (հատակագիծը՝ ճարտարապետ Ամինա Կանեցյանի, ձևավորումը՝ Անահիտ Գալստյանի)



Աղ. 2. նկ. 1. Երկկարասանի թաղում Նորատուփ (Լալայան 1931, նկ. 18), **նկ. 2.** Երկկարասանի թաղում Գառնիից (Хачатрян 1976, рис. 3), **նկ. 3.** Ձվածիր շարվածքով թաղում Կարճաղբյուրից (լուսանկարը՝ Ինեսա Կարապետյանի անձնական արխիվից), **նկ. 4.** Սալարկղային թաղում Կարճաղբյուրից (լուսանկարը՝ Ինեսա Կարապետյանի անձնական արխիվից), **նկ. 5.** Կարճաղբյուր բնակավայրի հարավային պարսպապատի տեսքը հարավ-արևելքից (լուսանկարը՝ Ինեսա Կարապետյանի անձնական արխիվից), **նկ. 6.** Անոթային թաղում Կարճաղբյուրից (լուսանկարը՝ Ինեսա Կարապետյանի անձնական արխիվից), **նկ. 7.** Օձաբերդի արտաքին բնակավայրի կարասային թաղումը (լուսանկարը՝ Միքայել Բադալյանի), **նկ. 8.** Կարմիր գյուղի կարասային թաղման կարասը (Շահբազյան Վ. 2004, էջ 366), **նկ. 9.** Կարմիր գյուղի կարասային թաղման կարասը (Շահբազյան 2004, էջ 366)

Կարճադրյուրի կարասային թաղումների հայտնաբերումը

Քննության առարկա անոթային թաղումները դաշտում պեղված 47 դամբարանների մեջ ամենաքիչն են՝ տասնչորսը (աղ. 1, նկ. 2): Բոլոր տեսակի դամբարանները, բացի մեկից, հիմնականում բացվել են արդեն լքված և ավերված բնակավայրի վերին՝ 20-70սմ հզորության հեղինիստական մշակութային շերտի մեջ, սենյակների անկյուններում և պատերին կից: Անկյուններում, ունենալով պատրաստի երկու պատ, դրանց դիմաց հավելելով ևս երկուսը, ստացվել է ուղղանկյուն քարարկո, իսկ պատերի միջնամասերին կցակառուցելով կլոր շարվածքներ՝ դամբարանի ձվաձիր կառուցածն է: Դամբարանի երրորդ՝ անոթային տեսակի համար կիրառել են տնտեսության մեջ օգտագործված կարասները, ծափերը և տարբեր չափերի կնունքներ, որոնց տեղադրման համար հիմնականում ընտրվել են սենյակների անկյունները:

Կարասային թաղումները երկուսն են: Առաջինը բացվել է բնակավայրի հարավային թևում վեր ձգվող բարձունքի գագաթը զբաղեցնող, բրոնզե դարից մինչև ուշհեղինիստական դարաշրջան օգտագործված դամբարանադաշտում: Այն իջեցուկ թաղում է՝ կատարված հեղինիստական դամբարաններից մեկի քարաշար ձվաձիր խուցի մեջ, գրավելով դրա ողջ տարածքը (երկ.՝ 1 մ 30 սմ, լայն.՝ 80 սմ, խոր.՝ 60 սմ): Թեև կարասը խիստ բեկորացված էր, բայց տեղում պահպանված կարասի պսակը և այն ծածկող քրեղանի մեծ բեկորը հուշեցին, որ կարասը դրված է եղել հորիզոնական դիրքով՝ հյուսիսարևելքից հարավ-արևմուտք: Կարասում դրված 12-13 տարեկան երեխայի³ խիստ քայքայված կմախքը խառնված էր անոթի բեկորների հետ և չունեւ ուղեկցող գույք: Համոզված ենք, որ այս իրավիճակը ստեղծվել է գանձախույզների այցելությունից հետո, որովհետև դամբանախուցի մեջ, որում կարասն էր, ևս նյութեր չհայտնաբերվեցին. դա անհնար է, քանի որ մյուս դամբարաններն ընձեռել են առատ և շատ ուշագրավ նյութեր:

Երկրորդ կարասը ևս գտել, բացել և կտրել էին գանձախույզները՝ այս անգամ արդեն լքված բնակավայրի 18-րդ սենյակի հյուսիսարևելյան անկյունում: Հայտնի չէ՝ կարասի մեջ արդյոք եղե՞լ են նյութեր: Կարասի ներքնամասը մնացել էր սենյակի տոփանված հատակի մեջ իր տեղում և հնարավորություն է տվել որոշելու կարասի թաղման ուղղահայաց դիրքը և հաշվարկելու չափերը: Կարասի շուրջը ցրված ոսկորները պատկանում էին մեծահասակի, որի գանգը ամենայն հավանականությամբ տարել էին⁴: Դատելով այս երկու կարասների պահպանված բեկորներից՝ դրանք մեծ չափերի (բարձր.՝ 1 մ 30 սմ - 1 մ 60 սմ, լայն.՝ 90-80 սմ, շուրթի տրամագիծը՝ 60 սմ, նստուկի տրամագիծը՝ 40 սմ), վառ կարմիրով պատած ու փայլեցրած արտաքինով անոթներ են: Հարթ կամ թմբիկավոր, 3 սմ լայնք ունեցող, դուրս ձգված շուրթերը դրված են ցածր, լայն վզի վրա, որն իր հերթին սահուն անցումով միանում է

³ Հնամարդաբանական նյութը որոշարկել է Ա. Փալիկյանը:

⁴ Սևանի շրջանում այդ տարիներին տեղացիները պեղումներով գտնված մարդկային գանգերից պատրաստում էին լուսամփոփներ:

անոթի լայնացող ուսերին: Իրանի կողերը գեղեցիկ ձևավորված ուռուցիկ վերնամասից դեպի հատակ նեղանալով իջնում և միանում են հարթ նստուկին: Այս կարասները՝ իրենց ձևակազմական, չափագրական և արտաքին հարդարման տվյալներով, Հայաստանի մայրաքաղաքներում, ամրոցներում, շարքային բնակավայրերում⁵ հայտնաբերված անտիկ դարաշրջանի տնտեսական խեցեղենի անքակտելի մասն են կազմում: Նմանատիպ տեղեկատվություն է հաղորդում նաև առաջին կարասի շուրթը ծածկող մեծ քրեղանթասի բեկորը: Այն ևս պատկանում է անտիկ դարաշրջանի խեցեգործության հայտնի ձևերից՝ թասքրեղանների խմբին: Այս թասերը լայնաբերան են. դուրս թեքված սրածայր շուրթը իրանին է միանում բարձր ներճկված (պրոֆիլավորված) կողով, իսկ իրանը հարթ նստուկին՝ կլորավուն անցումով (շուրթի տրամագիծը՝ 27 սմ, նստուկի տրամագիծը՝ 9 սմ): Դրանք պատրաստված են ավազախառն, բայց մանրահատ լավ հունցած կավից, մակերեսները պատած են վարդագույն, դարչնագույն, օքրայավուն լուծույթով: Այս թասերի նախատիպերը հանդիպում են մ.թ.ա. VII-VI դարերի՝ տեղական և ուրարտական խեցեգործական արտադրանքում, լայն տարածում ստանալով վաղ անտիկ խեցեգործության մեջ, շարունակվում են կիրառական մնալ հելլենիստական և ուշ անտիկ դարաշրջաններում⁶: Պետք է նշել նաև, որ թաղման անոթների բերանները մեկ այլ անոթով փակելու սովորույթը ևս ժառանգվել է կարասային թաղման ծիսակարգից (Իգդիրի, Նոր Արեշի կոլումբարիներ, նորահայտ ուրարտական դամբարան Երևանում, Արգիշթիխինիի աճյունասափորային թաղումներ)⁷ և զուգահեռաբար կիրառվել է սալերով փակելու հետ մինչև ուշ անտիկ ժամանակաշրջանի վերջը⁸:

Ծափերի⁹ մեջ կատարված թաղումները երեքն են: Առաջինը բացվել է բնակավայրի երկրորդ սենյակի հյուսիսարևմտյան անկյունում, երկրորդը՝ առաջին սենյակի հարավարևելյան անկյունում, իսկ երրորդը՝ բնակավայրի առաջին տեղամասի հարավարևելյան պատից դուրս սփռված տարածքից մեկորացիայի հետևանքով լրիվ բեկորացված վիճակում: Երեք դեպքում էլ անոթները տեղադրված էին ուղղահայաց դիրքով, և ամրակայելու համար անոթների ստորին մասը շուրջանակի առնված էր միջին և փոքր քարերի օղակի մեջ (աղ. 2, նկ. 6): Ծափերում հուղարկավորված էին 9-10 տարեկան երեխաներ՝ կծկված դիրքով և խիստ քայքայված կմախքով: Սրանք լայնաբերան, դեպի դուրս հակված բարակ շուրթեզրով (շուրթերի տրամագիծը տատանվում է 30-50 սմ-ի միջև, բարձրությունը՝ 60-80 սմ), կարճ վիզը ուռուցիկ ուսերին սահուն միացումով անոթներ են, որոնց իրանը, աստիճանաբար նե-

⁵ Տիրացյան 1974, 57, նկ. 3, 62, նկ. 4, Կարապետյան 1979, 273, աղ. I/1-4, աղ. IV/1, 2 3, Քոչարյան 1980, 281, աղ. III, Խաչատրյան 1981, 138, նկ. 28/1, 2, Есаян, Калантарян 1988, 51, 59, таб. XLVI/1, 2, 3, 4, Демирханян 2010, 18-20, таб. 15, 16:

⁶ Կարապետյան 2022, 375, նկ. 12/3, 376, նկ. 13/13:

⁷ Куфтин 1943, 4-16, Մարտիրոսյան, Մնացականյան 1958, 63-84, Մարտիրոսյան, Թորոսյան 1986, 223, Karapetyan, Yengibaryan 2010, 53:

⁸ Կարապետյան, Ենգիբարյան, Մելքոնյան 2008, 266:

⁹ Ծափ ենք անվանում մինչև մեկ մետր բարձրություն ունեցող կարասները:

ղանալով, միանում է հարթ նստուկին: Անոթների շուրթը և ողջ արտաքին մակերեսը ծածկված են բաց շագանակագույն կամ բաց օքրայավուն լուծույթով և կրում են փայլեցման հետքեր: Ծափերում թաղված անհատների հետ ուղեկցող գույք չի փաստագրվել:

Կճուճներով կատարված թաղումները ինն են, որոնք բացվել են թե՛ սենյակներում, թե՛ բնակավայրի հարավարևելյան պարսպապատի բեկման հատվածի անկյանը կից (անոթային թաղում թիվ 14, աղ. 2, նկ. 5), թե՛ այդ պարսպապատից դուրս սփռված 320 քմ տարածքի պեղման ժամանակ: Դրանք տարբեր չափերի՝ 30-45 սմ միջին բարձրության, լայնաբերան անկանթ կճուճներ են (շուրթի տրամագիծը 16-24 սմ): Անոթների՝ սրածայր, թմբիկավոր կամ թեք կտրած շուրթեզրով ավարտվող, դուրս թեքված պսակը գնդաձև կամ թեթև երկկոնիկ իրանին միանում է ուռուցիկ կամ ներճկված գոտիով: Գործառույթային առումով թաղման համար ընտրվել են կիրառությունից դուրս եկած անոթները: Հասկանալի է նաև, որ կճուճներով թաղված անհատները մանկական տարիքի են: Կարճադրյուրի անոթային թաղումները ուղեկցող գույք չունեն. դրանք կատարված են դիադրմամբ. անոթներում՝ հորիզոնական դիրքով, աջ կամ ձախ կողի վրա կճկված, իսկ ուղղահայաց դիրքով հող իջեցրած անոթներում՝ կքանստած:

Քննարկվող ուշ անտիկ դամբարանադաշտերում բացահայտվել է թաղման ծեսի մեկ ընդհանուր գիծ ևս: Կարճադրյուրի ուշ անտիկ դամբարանադաշտի պեղումների ժամանակ հայտնաբերվել է կճուճային երկու թաղում. մեկը՝ դրսից հաված շան կմախքով, իսկ մյուսը՝ լրիվ բեկորացված ու շան կմախքի ոսկորների հետ խառնված: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ շան ուղեկցությամբ թաղումներ հայտնաբերվել են Եվրոպայից մինչև Ասիա, Միջագետք և Հին Եգիպտոս¹⁰: Փոքր և Առաջավոր Ասիայում դրանք փաստված են շատ վաղ դարաշրջանների՝ Չաթալիոյուք, Ալաշախոյուք, Չայոնու, Օսմանկայասի, Իլիփինար և այլ հուշարձաններում¹¹: Հայաստանում ևս շների թաղումներ հայտնաբերվել են՝ սկսած վաղ բրոնզի դարաշրջանից մինչև ուշ անտիկ ժամանակաշրջանի դամբարանադաշտերից: Այս երևույթը հատկապես հանդիպում է Սևանի ավազանի վաղ դարաշրջանների դամբարաններում¹² և այդ դամբարանների մեջ հանդիպող մանկական կճուճային թաղումների հարևանությամբ (Պատաշարի թիվ 2 կուգան, Ղշլաղ գյուղի «Մանիչար» և «Աղբրի գլուխ» կոչված բրոնզեդարյան դամբարաններ)¹³: Անտիկ դարաշրջանի հուշարձաններից շան թաղումներ հայտնաբերվել են Շիրակի մարզում՝ Անտիկ Շիրակավանի, Ջրափիի, Բենիամինի դաստակերտի և բնակավայրի, Արաբատյան դաշտի Դվինի ուշ անտիկ, Արգիշթիխինիլիի հետուրարտական, Ար-

¹⁰ Van den Hout 1994, 37-76.

¹¹ Durgun 2017, 15-17.

¹² Լալայան 1931, 55, 62, 65, 84, 86:

¹³ Լալայան 1931, 84, 86, 87:

մավիրի ուշեղբնիստական և ուշ անտիկ դամբարաններում¹⁴: Այս տարածվածությունը անհրաժեշտություն է առաջացրել՝ պարզելու շան խաղացած դերը և նշանակությունը տարբեր հասարակությունների թաղման ծեսում: Ուսումնասիրողները շան հատուկ դերը տեսնում են նախևառաջ կյանքից հեռացողի հոգին դեպի ստորերկրայք ուղեկցելու մեջ: Հնագույն հավատալիքներում շունը հանդես է գալիս ծիսական արարողակարգի և՛ որպես սուրբեկտ, և՛ որպես օբյեկտ: Այն կարող է հանդես գալ որպես նոր կյանքի կանխագուշակ և միաժամանակ կարող է զոհաբերվել՝ մահացածի հոգին ստորերկրյա աշխարհի ուղեկցելու համար: Շան կերպարը կապված է խտոնիկ աստվածությունների հետ: Վ. Լիտվինսկին և Ա. Սեդովը, մանրամասն քննելով շան կերպարի «սրբազան» ընկալումը, ընդգծում են, որ «նա կարևոր դեր է խաղում բոլոր հնդեվրոպական ժողովուրդների մահվան և թաղման ծեսի հետ կապված հավատալիքների մեջ և ներկայացնում է պատկերացումների ամենահնագույն շերտը»¹⁵: Օրինակ՝ եգիպտական Անուբիսը ստորերկրայք իջնող հոգիների դատավորն էր, միաժամանակ բարության աստվածություն Օսիրիսի հավատարիմ զինակիցը և պանթեոնում ուներ բարձր կարգավիճակ: Իրանի հին հավատալիքներում շունն ուներ հատուկ տեղ, համարվում էր բարության ակունքի՝ Ահուրամազդի ստեղծագործություն, և պարսիկ մոգերը շների կյանքը գնահատում էին մարդկանց կյանքին հավասար¹⁶: Հունաստանում խտոնիկ աստվածուհի Հեկատեն գործում էր՝ շրջապատված շնատեսք ոգիներով¹⁷: Շատ ժողովուրդների հետ հայերը ևս հավատում են, որ շների ոհմակի մոտենալը տանը նշանակում է մահվան մերժեցում, եթե շունը հաչում է լուսնի վրա, մահվան նշան է, և կանխագգալով դժբախտությունը՝ նա, հանդես գալով որպես պահապան, խնդրում է աստծուն, որ այն անցնի իր վրա: Շունը գտնվում է կյանքի ու մահվան, այս և այն, մարմնավոր ու հոգևոր աշխարհների միջև: Այս թեման նախնադարյան պատկերացումների ամենաուշագրավ և բարդ հարցերից է և կարիք ունի առանձին խոր ուսումնասիրության:

Կարասային թաղումները Սևանի ավազանի անտիկ շրջանի թաղման ծեսի համատեքստում

Կարճադյուրի քննարկվող դամբարանները այս հատկանիշներով նույնական են Սևանի ավազանի (աղ. 1, նկ. 1), Լավարի, Լոռիի, Շիրակի և մյուս շրջանների դամբարանադաշտերում հայտնաբերված դիանոթային թաղումների հետ: Դեռևս հայ հնագիտության արշալույսին Ժ. Դե Մորգանը Լավարում, Եր. Լավայանը՝ Էլառում, Շրեշ բլուրում, Սևանի ավազանում իրենց կատարած պեղումների ժամանակ տարբեր դարաշրջանների՝ տարածն կա-

¹⁴ Тер-Мартirosов, Караханян 1998, 17-20, Կանեցյան 1981, 32-33, Եգանյան 2010, 43, Քոչարյան 1980, 277-283, Мартirosян 1974, 55:

¹⁵ Литвинский, Седов 1984, 161-169.

¹⁶ Луконин 1977, 96.

¹⁷ Day 1984, 21-22, Durgun 2017, 17.

ռուցվածք ունեցող դամբարանների հետ հայտնաբերել են նաև երկու տասնյակից ավելի դիանոթային դամբարաններ (Ախթալա, Նոր Բայազետ, Նորատուս, Պատաշար, Ղշաղ գյուղի «Մանիչար», «Աղներ», «Աղբրի գլուխ» վայրեր, Լճաշեն-Օրդաքլու)¹⁸: Նմանատիպ կարասային թաղումներ հետագա տարիների ուսումնասիրությունների արդյունքում և պատահաբար հայտնաբերվել են Ծակ քարի հելլենիստական բնակավայրի դամբանադաշտում, Լիճքում, Վերին Գետաշենում¹⁹, Գեղարքունիք գյուղում (նախկին անվանումը՝ Բաշքենդ), Կարմիր գյուղում (նախկին անվանումը՝ Ղուվալի, աղ. 2, նկ. 8, 9)²⁰, Ծովինար-Օձաբերդում²¹ (աղ. 2, նկ. 7): Դրանք կատարված են հողի մեջ հորիզոնական կամ ուղղահայաց դիրքով իջեցված կարասների, ծափերի և կճուճների մեջ, աջ կամ ձախ կողի վրա կծկված դիադրման ծեսով, հիմնականում առանց գույքի, երբեմն էլ՝ մեկ պուլիկի, թասի կամ ճրագի, մի քանի ուլունքի հետ: Անորթների ընտրությունը, կարծում ենք, թելադրված է եղել մահացածի հասակով և նրա հետ դրվող նյութի քանակով: Այս և մյուս դամբանակառուցածների մեջ թաղման ծեսի և արարողությունների տարբերություններ չեն դիտվում: Միակ բացառիկ երևույթը Նորատուս գյուղում ուղղահայաց դիրքով թաղված կարասներով բլրի ստորոտում հայտնաբերված երկկարասային թաղումն է (աղ. 2, նկ. 1)²²: Կարասները դրվել են հորիզոնական, շուրթ շրթի հաված: Հուղարկավորված մարդը, դեմքը հարավ ուղղված, իրանի վերնամասով վերին կարասում է, իսկ ստորին վերջույթներով՝ երկրորդում: Երկկարասային թաղման մեկ օրինակ էլ հայտնաբերվել է Գառնիի Մարտոյի բլրի անտիկ դամբանադաշտում (աղ. 2, նկ. 2)²³, որն ունի որոշ տարբերություններ: Այստեղ կարասների միացումը շուրթերով չէ, այլ նստուկը հեռացրած հիմնական կարասի ստորին հատվածին հաված է երկրորդ՝ ավելի փոքր կարասը: Անհատը թաղվել է մեջքի վրա, ձգված դիրքով, ձեռքերը որովայնի վրա, մարմնի մեծ մասը հիմնական կարասում է, իսկ ստորին վերջույթները՝ ծափում: Հանգուցյալի՝ մեջքի վրա ձգված, ձեռքերը որովայնի վրա դրած դիադրումը մեզ հուշում է, որ այս թաղումը մյուսներից ավելի ուշ շրջանի է և հավանաբար պետք է թվագրվի մ.թ. III-IV դարերով: Երկու թաղումն էլ առայժմ եզակի երևույթ են Հայաստանի համար: Նորատուսյան տեսակի մեկ և երկկարասային թաղումներ հայտնաբերվել են նաև խեթական հանրահայտ պաշտամունքային հուշարձան՝ Յազլիկայա տանող ճանապարհի եզրով խոյացող ժայռերի խոռոչներում: 1911 թ. դոկ. Վինկլերը, ապա 1952 թ. դոկ. Բիտտելը հայտնաբերել և պեղել են դիակիզման և դիադրման

¹⁸ Morgan 1889, 21, 22, Լալայան 1931, 55, 62, 68, 71, 73, 74, 76:

¹⁹ Խաչատրյան, Քալանթարյան 1972, 59, 62, 67:

²⁰ Կարմիր գյուղի բնակիչ Մարդոյան Վոլոդյան 1996 թ. իր այգում աշխատելիս հայտնաբերել է ուղղահայաց դիրքով դրված կարասային թաղում, որի մեջ, բացի անհատի լավ պահպանված ոսկորներից, եղել են նաև մի քանի ուլունքներ: Կարասը (բարձրությունը՝ 96 սմ, շուրթի տրամագիծը՝ 49 սմ) հանձնվել է Գավառի երկրագիտական թանգարանին, որտեղ էլ ցուցադրվում է մինչ այսօր:

²¹ Բաղայան և այլք 2022, 357, նկ. 22:

²² Լալայան 1931, 72, նկ. 18:

²³ Хачатрян 1976, 19, рис. 3.

ծեսով կատարված բազմաթիվ կարասային թաղումներ: Բխտտելը հայտնաբերել է 72 միակարաս, իսկ Վինկլերը՝ շուրթերով իրար միացրած թաղման կարասների շարքեր, որոնց մեջ եղել են դիակիզման մոխիր պարունակող կճուճներ: Շուրթ շրթի հաված երկկարասային, դիադրման ծեսով կատարված թաղումներով դամբարանադաշտեր բացվել են նաև Ալիշարում և Բողազքյոյում²⁴: Այս տվյալները վկայում են, որ մ.թ.ա. II հազարամյակում ապրող խեթերի համար կարասային թաղումները եղել են սովորական և կապված չեն թաղման ծեսի տեսակի՝ դիադրում թե՛ դիակիզում, և թաղվողի սոցիալական դիրքի հետ²⁵: Կարծում ենք, որ կարասային թաղումները Հայկական լեռնաշխարհում կարող էին տարածում ստանալ հենց հարևան խեթական աշխարհից, այստեղից էլ տարածվել դեպի Միջագետք, Իրան և այլուր:

Եզրակացություններ

Այսպիսով՝ մելիորացիայի և հողահարթեցման ենթարկված Կարճաղբյուր բնակավայրի՝ ոչ շատ մեծ չափով պահպանված մասի պեղումներով ձեռք բերված տվյալների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն հիմնադրվել է մ.թ.ա. VI դարի կեսերին և գոյատևել է մինչև մ.թ. II դարի վերջը, երբ բնակիչները լճի ջրի մակարդակի բարձրացման սպառնալիքի հետևանքով լքել են բնակավայրը: Ըստ երևույթին, հեռացել են ոչ շատ հեռու, քանի որ իրենց բնակավայրը դարձել է դամբարանադաշտ: Դամբարանադաշտի թաղումները կատարված են քառանկյուն քարարկղային, ձվաձիթ կառուցվածքով դամբարաններում և դիանոթների մեջ:

Կարասների, ծափերի և կճուճների մեջ կատարված նշյալ թաղումներից տասներեքը բացվել է լքված բնակավայրի վերին՝ 20-70 սմ թանձրության հեղինիստական մշակութային շերտի մեջ, իսկ մեկն էլ՝ դամբարանադաշտի հեղինիստական դամբարաններից մեկում: Այս թաղումներում չկա ուղեկցող գույք, և դրանք կատարված են միմիայն դիադրման ծեսով: Դիանոթները հողի մեջ ուղղահայաց իջեցված դեպքում հանգուցայի՝ կքանստած, իսկ հորիզոնական թաղված անոթի մեջ, կծկված դիրքով աջ կամ ձախ կողի վրա պառկեցրած, երկրի կողմերի նկատմամբ իրենց դիրքով, անոթի վերին մասը հեռացնելու և հետո իր տեղը վերադարձնելու եղանակով, թաղման ծեսին հոգեհացի և զոհաբերված կենդանիների ոսկորների մնացորդներով և այլ գծերով թվագրվում են մ.թ. II դարի վերջ և III դարերով և համահունչ են Սևանի ավազանի և Հայաստանի մյուս հայտնի հուշարձաններում հայտնաբերված կարասային թաղումներին:

Դիանոթային և մյուս դամբանակառուցածների մեջ կատարված թաղման ծիսակարգի և ուղեկից արարողությունների մեջ տարբերություններ չեն նկատվում, որն էլ փաստում է, որ դրանք պատկանում են միևնույն բնակա-

²⁴ Герни 1987, 147.

²⁵ Герни 1987, 147.

վայրի բնակչությանը: Այս հատկանիշները ժառանգված են նախորդ դարաշրջաններից: Օրինակ՝ աջ կամ ձախ կողքի, կծկված դիրքով պառկած և կքանստած դիրքով մարդկանց թաղման ձևերը զանգվածաբար հանդիպում են վաղբրոնզեդարյան դամբանախցերում, շարունակվում են երկաթի դարաշրջանի բոլոր փուլերի դամբարաններում, հասնում մինչև ուշ անտիկ ժամանակաշրջանի վերջը: Դիանոթային թաղումները շատ հաճախ առկա են իջեցված քարարկղային և ձվաձիր կառուցած համբանախցերում: Դա վկայում է այն մասին, որ բնակիչները կապերը չեն խզում իրենց նախկին բնակավայրի և ննջեցյալ նախնիների հետ: Այս երևույթները բնորոշ են ոչ միայն Սևանա լճի ավազանի, այլև Շիրակի (Բենիամին, Շիրակավան, Ջրափի), Արագածոտնի (Մաստարա²⁶, Ագարակ, Ներքին Նավեր), Արարատյան դաշտի և մյուս մարզերի՝ ուշ անտիկ դամբարանադաշտերի դիանոթներով թաղումներին: Այս դարաշրջանի թաղման մյուս կառուցածների հետ դիանոթների լայն տարածվածությունը, դրանցում իրականացվող ծիսակատարման և արարողակարգի միատեսակությունը հնարավորություն են ընձեռում պնդելու դրանց գաղափարախոսական հիմքի ընդհանրության և միևնույն մշակույթը կրող բնակչության մասին:

Գրականություն

- Բադալյան Մ., Միքայելյան Ա., Եղիազարյան Ա., Կյուրեղյան Հ., Հովսեփյան Ռ., Սիմոնյան Հ., Նահապետյան Ա., Օձաբերդի 2017-2019 թթ. պեղումների նախնական արդյունքները, Ծովային Հայաստան, Ուղտորի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը, Մ. Բադալյան, Բ. Մարտիրոսյան-Օլջանսկի, Ա. Բոբոխյան (խմբ.), Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., էջ 383-392:
- Եգանյան Լ. 2010, Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, Շիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ, թիվ 1, Երևան-Գյումրի, «Գիտություն», 224 էջ+ներդիր:
- Լալայան Ե. 1931, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, Մելքոնյան ֆոնդ հրատ., 234 էջ+200 նկար:
- Խաչատրյան Ժ. 1981, Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր (1971-1977 թթ. պեղումները), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 204 էջ:
- Կանեցյան Ա. 1981, Հին Ջրափիի պեղումները, ՀԱԻ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երևան, էջ 32-33:
- Կարապետյան Ի. 1979, Կարճադրյուրի պեղումները (1975-1978 թթ.), Պատմա-բանասիրական հանդես, N 3, էջ 262-277:
- Կարապետյան Ի., Ենգիբարյան Ն., Մելքոնյան Հ. 2008, Անտիկ դարաշրջանի կարասային թաղում Թալինից, «Հուշարձան» տարեգիրք, Դ-Ե, Երևան, էջ 260-267:
- Կարապետյան Ի. 2022, Կարճադրյուրի բնակավայրի հետազոտությունը, Ծովային Հայաստան, Ուղտորի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը, Մ. Բադալյան, Բ. Մարտիրոսյան-Օլջանսկի, Ա. Բոբոխյան (խմբ.), Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., էջ 370-382:
- Մարտիրոսյան Հ., Մնացականյան Հ. 1958, Նոր Արեշի ուրարտական կոլումբարին, Տեղեկագիր հասարակական գիտությունների, N 10, էջ 63-84:

²⁶ Karapetyan and all 2022, 93-104.

- Մարտիրոսյան Հ., Թորոսյան Ռ. 1986, Արգիշտիսինիլիի սարկոֆագը, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, N 3, էջ 221-227:
- Շահբազյան Վ. 2004, Կարմիրգյուղ. Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի (Ղուլալի) պատմությունը, Երևան, «Տոներ», 384 էջ:
- Տիրացյան Գ. 1974, Արմավիրի պեղումները, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 12, էջ 57-65:
- Քոչարյան Գ. 1980, Հելլենիստական դարաշրջանի դամբարանադաշտ Դվինում, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, N 2, էջ 277-285:
- Герни О. 1987, Хетты. По следам исчезнувших культур Востока, Москва, «Наука», 147 с.
- Демирханян А. 2010, Северо-восток Еревана в эпоху Арташесидов. Фрагменты материальной и духовной культуры по данным античного поселения в Аван-Ариндже (II в. до н.э. - I в. н.э), Ереван, «Гитутюн», 139 с.+99 табл.
- Есаян С., Калантарян А. 1988, Ошакан И. Основные результаты раскопок 1971-1983, Ереван, изд. Академии Наук Армянской ССР, 128 с.+СХХ таб.
- Куфтин Б. 1943, Урартский «колумбарий» у подошвы Арарата и Куро-Аракский энеолит, Вестник Гос. Музея Грузии, т. XIII-В, Тбилиси, 172 с.
- Литвинский Б., Седов А. 1984, Культура и ритуал Кушанской Бактрии, Москва, Главная редакция восточной литературы (ГРВЛ), 240 с.
- Луконин В. 1977, Искусство древнего Ирана, Москва, «Искусство», 232 с.
- Мартиросян А. 1974, Аргиштихинили, Археологические памятники Армении 8. Урартские памятники, вып. 1, Ереван, изд. Академии Наук Армянской ССР, 175 с.+LXI табл.
- Тер-Мартиросов Ф., Караханян Г. 1998, Раскопки поселения и некрополя античного Ширакавана, Научные труды 1, ИАЭ ЦАИШ НАН РА, Гюмри, «Гитутюн», с. 17-30.
- Хачатрян Ж. 1976, Гарни V, Античный некрополь, АРА 15, Ереван, изд. Академии Наук Армянской ССР, 134 с.
- Day L.P. 1984, Dog Burials in the Greek World, American Journal of Archaeology, vol. 88, issue 1, p. 21-22.
- Durgun P. 2017, Human-Animal Interactions in Anatolian Mortuary Practice, Institute for European and Mediterranean Archaeology press, p. 11-27.
- Karapetyan I., Yengibaryan N. 2010, A New Urartian Burial from Argishtihinili, Zeitschrift für Assyriologie und Vorderasiatischen Archäologie, Bd. 100, p. 53-63.
- Karapetyan I., Gabrielyan A., Melikyan V., Hakhverdyan A. 2022, The Jar Burials of the Classical Period of Mastara, Riview of Armenian Studies, N 2, p. 93-104.
- Morgan J. de 1889, Mission scientifique au Caucase, v. I, Paris, Ernest Leroux, 616 p.
- Van den Hout T.P.J. 1994, Death as a Privilege. The Hittite royal funerary ritual, in: Hidden Futures: Death and Immortality in Ancient Egypt, Anatolia, the Classical, Biblical and Arabic-Islamic World, J.M. Bremer et al. (eds.), Amsterdam University Press, p. 37-76.

ԿԱՐՃԱՂՔՈՒՐԻ ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆԻ ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԸ

Ինեսա Կարապետյան, Արմինե Գաբրիելյան

Ամփոփում

Կարճաղբյուրի՝ անտիկ դարաշրջանի բնակավայրը և դամբարանադաշտը գտնվում են Գեղարքունիքի մարզի Վարդենիսի շրջանի համանուն գյուղից 1,50 կմ դեպի արևելք: Դամբարանադաշտը հայտնաբերել և պեղել է պ.գ.թ. Հ. Մնացականյանի ղեկավարած արշավախումբը 1971-1972 թթ., իսկ 1975-1991 թթ. բնակավայրում

և դամբարանադաշտում համատեղ պեղումներ է պարբերաբար կատարել հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին Հայաստանի հնագիտության բաժնի արշավախումբը: Ուսումնասիրության առարկա թաղումները կատարված կարասների, ծափերի և կճուճների մեջ, հիմնականում բացվել են արդեն լքված բնակավայրի վերին՝ հելլենիստական մշակութային շերտի մեջ: Այդ թաղումներն ուղեկցող գույք չեն պարունակում, բայց անոթների ուղղահայաց և հորիզոնական դիրքերով, երկրի կողմերի նկատմամբ իրենց հաստատուն ուղղվածությամբ, անոթի մեջ անհատի կծկված դիրքով, տեղավորելու համար անոթի վերին մասը հեռացնելուց հետո իր տեղը վերադարձնելու եղանակով, թաղման ծեսի մյուս գծերով թվագրվում են մ.թ. II դարի վերջ և III դարերով և համահունչ են Սևանի ավազանի և Հայաստանի անտիկ շրջանի մյուս հայտնի հուշարձաններում հայտնաբերված կարասային թաղումներին:

Բանալի բառեր՝ Սևանի ավազան, Կարճադրյուր, հելլենիստական շրջան, ուշ անտիկ շրջան, կարասային թաղում, շան թաղում, թաղման ծես:

КУВШИННЫЕ ПОГРЕБЕНИЯ АНТИЧНОГО ПЕРИОДА В КАРЧАХБЮРЕ

Инеса Карапетян, Армине Габриэлян

Резюме

Карцахбюрское поселение и могильник античного периода расположены в 1,50 км к востоку от одноименного села Варденисского района области Гегаркуник. Могильник был обнаружен и раскопан к.и.н. О. Мнацаканяном в 1971-1972 гг., а в 1975-1991 гг. раскопки поселения и могильника производила экспедиция отдела археологии древней Армении Института археологии и этнографии АН АрмССР. Исследуемые погребения в карасах и кувшинах в основном были найдены в верхнем культурном слое уже заброшенного поселения, относящегося к эллинистическому периоду. Эти погребения не содержат сопутствующего инвентаря, а вертикальное и горизонтальное положения сосудов, их ориентация относительно сторон света, способ возвращения верхней части сосуда на место после его удаления с целью размещения в сосуде индивида в скорченном положении, а также другие особенности погребального обряда указывают на то, что погребения можно датировать примерно концом II–III вв. н.э. Они имеют сходство с кувшинными погребениями античного периода Севанского бассейна и других известных памятников Армении.

Ключевые слова – Севанский бассейн, Карцахбюр, эллинистический период, эпоха поздней античности, кувшинные погребения, погребение собаки, погребальный обряд.

THE JAR BURIALS OF THE CLASSICAL PERIOD AT KARCHAGHBYUR

Inesa Karapetyan, Armine Gabrielyan

Abstract

The settlement and the cemetery of Karchaghbyur are located 1.50 km east of the village of the same name in the Vardenis district of the region of Gegharkunik. The cemetery was discovered and excavated by Dr.H. Mnatsakanyan, in 1971-1972, and in 1975-1991 the excavations of the settlement and the cemetery were carried out by the expedition of the Department of Ancient Armenia of the Institute of Archaeology and Ethnography of the Academy of Sciences of the ArmSSR. The investigated burials, made in pithoi and jars, were mainly found in the upper cultural layer of an already abandoned settlement dating back to the Hellenistic period. These burials do not contain accompanying goods, but the vertical and horizontal positions of the jars, their orientation relative to the cardinal points, the method of returning the upper part of the vessel back after its removal in order to place the individual in a fetal position into the vessel, as well as other distinctive features of the burial rite date back to the late 2nd-3rd centuries AD and are similar to the jar burials of the Late Classical period of the Sevan basin and other the famous sites of Armenia.

Key words – Sevan basin, Karchaghbyur, Hellenistic period, Late Classical period, jar burials, dog burial, funeral rite.

ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Կարեն Բայրամյան

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՀՀ, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2

Էլ. հասցե՝ bayramyan_karen@yahoo.com

Հոդվածը ներկայացվել է 25.10.2022, գրախոսվել է 25.01.2023, ընդունվել է տպագրության 11.04.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.1-281

Ներածություն

1918 թ. մայիսի 28-ին Թիֆլիսում գործող Հայոց ազգային խորհուրդը ազդարարեց Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի մասին: Հայաստանի Հանրապետության ծնունդով նոր հեռանկարներ բացվեցին նաև գիտության և մշակույթի զարգացման համար: ՀՀ կառավարության 1919 թ. հունիսի 10-ի նիստում հանրային կրթության նախարարությունը վերակազմավորվում է կրթության և արվեստի նախարարության¹, որի հիմնական օղակներից մեկը դառնում է արվեստի և հնությունների բաժինը:

Հանրապետության ստեղծման առաջին ամիսներից սկսած՝ նախարարությունը ձեռնարկում է տարածքում գտնվող հնագիտական հուշարձանների և հնավայրերի պահպանության գործը: Որոշ ժամանակ անց հանրային կրթության և արվեստի նախարարության կառուցվածքում կազմավորվում է հնությունների պահպանության բաժինը, որի վարիչ է նշանակվում Աշխարհբեկ Քալանթարը:

Հնությունների պահպանության առաջին քայլերը

Անշուշտ, Աշխարհբեկ Քալանթարի ընտրությունը բնավ պատահական չէր. նա արդեն հայտնի անուն էր հնությունների պահպանության ոլորտում: Ժամանակ չկորցնելով՝ Քալանթարն անմիջապես գործի է անցնում: Նրա անմիջական հորդորով նախարար Նիկոլ Աղբալյանը 1919 թ. հոկտեմբերի 14-ին N 3298 գրությամբ դիմում է ՀՀ ներքին գործոց նախարարին. «Որպեսզի հնարավոր լինի այսուհետ գոնե խուսափենք այնպիսի ցավալի դեպքի կրկնությունից, ինչպիսին է Անիի հնադարանի և շինությունների կործանումը՝ նախքան հատուկ օրենք հրատարակելը հնությունների մասին, գլխավորապես վերաբերվող նրանց պահպանությանը, սրանով խնդրում եմ ձեզ չմերժել հրահանգել Ձեզ ենթակա բոլոր վարչական մարմիններին և պաշտոնական անձանց, որ արթուն հսկողություն ունենան հնության հուշարձանների (ավերակ, կիսավեր և կանգուն հին շինությունների, արձանի և այլն) պահպանության վերաբերյալ, նախազգուշացնեն տեղական ազգա-

¹ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 129:

բնակչությանը չքանդել հնություններն իբրև նյութ՝ ծառայեցնելով նոր շինությունների համար. մի հանգամանք, որ ներկա վերաշինության պահին կարող է սովորական երևույթ դառնալ և յուրաքանչյուր տեղի ունեցած դեպքի մասին անհապաղ տեղեկացնել Հանրային կրթության և արվեստի նախարարությանը»²:

Աշխ. Քալանթարի ջանքերի շնորհիվ հրապարակվում է կրթության նախարարի հատուկ հրամանը. «Հրաման. 16 դեկտեմբերի, 1919 թվական: Համաձայն նախարարական խորհրդի հունիսի 10-ի և հուլիսի 14-ի (1919) որոշումների՝ հնության հիշատակարանների պահպանության, ցուցակագրության, վերականգնման ու նորոգման, ինչպես հնագիտական նպատակներով կատարվող պեղումների վրա հսկելու և առհասարակ նրանց ուսումնասիրության աշխատանքների կանոնակարգման գործը վարում է հանրային կրթության և արվեստի նախարարության հատուկ՝ «Հնության պահպանության բաժին» միջոցով: Իսկ իրավիճակն իրապես անմխիթարական էր. «Թուրքերը հիմնահատակ ավերել և քարուքանդ էին արել Հնադարանն ու բնակության նոր շենքերը, ջարդոտել ու փչացրել էին թե հնադարանի և թե աստ ու անդ պեղման վայրերում ժողոված արձանները, որոնք պրոֆ. Մառի 15 տարվա պեղումների արդյունքն էին... հսկայական քանակությամբ մանրմունր հնությունները ծածկում էին ձորի ամբողջ լանջը...», - գրում էր «Յառաջ» թերթը 1919 թ. դեկտեմբերին³: Անիի հնադարանի մասին պատմող հոդվածով Աշխ. Քալանթարը հանդես եկավ նաև «Աշխատանք» թերթում. «Վիճակն անխտիր տխուր էր բոլոր հնությունների համար, լինել դա ամենակարևոր, կամ խուլ անկյունում ընկած՝ հեռու ուշադրությունից, - գրում է Քալանթարը: - Ահրիմանը իր վերջին և ամենաթանկագին զոհն էր պահանջում և այդ էլ ստացավ... Անին եղավ այդ զոհը: Սարսափելի է նույնիսկ մտածելը, որ գիտական Անին քարուքանդ... Նա, որ պրոֆ. Մառի 15 տարվա գերմարդկային ջանքերով վերակենդանացել էր ի տես և ի հիացումն հանուր լուսավոր աշխարհի, իբր կուլտուրական մի մեծ գործ, մի գերագույն դպրոց, գիտության վերջին խոսք՝ մեր միջավայրում ջարդ ու փշուր լինելու վիճակն ունեցավ...»⁴, - դառնացած գրում է Քալանթարը:

Հնության պահպանության բաժինը իր գործունեությունը շարունակեց մինչև 1920 թվականի կեսերը, երբ գործառույթները հանձնվեցին արդեն նոր կազմակերպված հնությունների պետական պահպանության կոմիտեին: Կոմիտեն թեպետ գործելու էր հանրային կրթության և արվեստի նախարարության ներքո, սակայն «ավտոնոմ էր լինելու իր գործունեության մեջ»⁵:

Հնությունների պահպանության կոմիտեի ստեղծման առաջին նախաձեռնողներից մեկը Աշխ. Քալանթարն էր. դեռևս 1920 թ. հունիսի 19-ին նա միացավ հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարին

² Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 131-132:

³ Յառաջ, 60, 1919:

⁴ Աշխատանք, 65, 1919:

⁵ Միրզոյան և ուրիշ. 1998, 372:

ուղղված Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի և Ալեքսանդր Թամանյանի դիմումին՝ հնությունների պահպանության կոմիտե կազմակերպելու համար⁶: Հնությունների պահպանությունը համարելով Հայաստանի պետական հոգաժության և առաջնահերթ կարևորության խնդիր՝ անվանի գիտնականները նամակ - դիմումում խնդրում էին միջնորդել «նախարարների խորհրդի առաջ կազմակերպելու վերոհիշյալ նպատակի համար հատուկ մարմին՝ «Հնությունների պետական պահպանության կոմիտե», և նրան վերապահել ամենայն իրավասություն հնությունների պահպանության և պաշտպանության վերաբերյալ»⁷: Որպես այդ գործի կազմակերպման առաջին քայլ՝ նախաձեռնող խումբը ներկայացնում է հնությունների պահպանության կոմիտեի օրինագիծը, կազմը, պարտականության ցանկն ու նախահաշիվը: 1920 թ. հուլիսի 7-ի օրենքով հաստատվում էր նաև նորաստեղծ՝ Հնությունների պետական պահպանության կոմիտեի կազմը՝ Հայաստանի գլխավոր ճարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյան և պրոֆեսորներ Գարեգին եպիսկոպոս և աշխարհագրագետ Լոռու-Մելիք-Քալանթար (Հանրային կրթության և արվեստի նախարարության հնությանց պահպանության բաժնի վարիչ)⁸:

Հնագիտական արշավախմբերը Առաջին հանրապետության տարիներին. Անիի հնադարանի խնդիրը

Ստանալով հանրային կրթության նախարարության համաձայնությունը և արդեն օրենքի ուժ ստացած իրենց լիազորությունները՝ նախաձեռնող խումբը Աշխ. Քալանթարի գլխավորությամբ անմիջապես ձեռնամուխ է լինում հնագիտական արշավախմբերի աշխատանքների կազմակերպմանը, հստակեցվում են արշավախմբերի անդամների պարտականություններն ու նրանց առջև դրված խնդիրները: Արդեն հնությունների պահպանության կոմիտեի կազմակերպման հաջորդ իսկ օրը՝ 1920 թ. հուլիսի 8-ին, հնագիտական արշավախումբ կազմակերպելու խնդրանքով նախաձեռնող խումբը կրկին դիմում է հանրային կրթության և արվեստի նախարարին⁹:

Նշված ուղղություններից բացի, ծրագրված աշխատանքների կատարումը դյուրացնելու նպատակով, նախատեսվում էր Հայաստանի տարածքը բաժանել պատմահնագիտական տասը շրջանների, որոնցից կարևորագույն համարվող հինգ շրջանում աշխատանքները պետք է սկսվեին արդեն 1920 թվականին, «քանի որ այդ շրջանները, բացի ընդհանուր հնագիտական բարձր նշանակություն ունենալուց, իրենց մեջ կենտրոնացրած ունեն մեր որմնանկարները, որոնք արագորեն փչանում-ոչնչանում են, և նորոգման կարոտ մի շարք հուշարձաններ, որոնք օրերով են ապրում այժմ», - ասվում էր գրության մեջ¹⁰: Ընդամին, իր մտահոգությունները ներկայացնելով նախա-

⁶ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 16, թ. 1: Բնագիր: Մեքենագիր:

⁷ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 16, թ. 1: Բնագիր: Մեքենագիր:

⁸ Միրզոյան և ուրիշ. 1998, 173:

⁹ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 17, թ. 1: Բնագիր: Ձեռագիր:

¹⁰ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 17, թ. 1:

րարին, խումբը միաժամանակ առաջարկում էր գործողությունների հստակ ծրագիր. «...Այդ խմբերից Անիինը կգործի շարունակ իր տեղում, որը լինելու է կենտրոնավայր և ընդարձակ վերանորոգման կարիք ունի, իսկ մյուս երկու խմբերը մի-մի շրջան ավարտելուց հետո կանցնեն հաջորդ շրջանները: Բոլոր շրջաններում էլ աշխատանքները լինելու են նկարագրական, ճարտարապետական, նորոգման, նկարչական, լուսանկարչական, էստամպաժային (նմանակությամբ)»¹¹, - ասվում էր գրության մեջ: Հավելենք նաև, որ նախաձեռնող խումբը չի սահմանափակվում միայն հնագիտական գործունեության շրջանակներով, այլ խնդիր էր դրել, այդ ամենին զուգահեռ, զբաղվել նաև հավաքած նյութերի մշակումով¹²: Ի դեպ, հարկ է նշել, որ Անիում կատարված հնագիտական աշխատանքների մասին Աշխ. Քալանթարը մանրամասն զեկուցագիր ներկայացրել էր ավելի ուշ՝ 1923 թվականին, թեպետ զեկույցը սխալմամբ տեղադրված էր հնությունների և հուշարձանների պահպանության կոմիտեի 1918-1920 թթ. ծավալած գործունեության մասին պատմող թղթապանակում. «Անիի 16-րդ հերթական կամպանիայից և Վանի 2-րդ հնագիտական էքսպեդիցիայից հետո, - գրում է Աշխ. Քալանթարը, - 1917 թվին, ինչպես նաև հաջորդ 1918-ին և նույնիսկ մեծ մասը 1919 թվի՝ Հայաստանում, շնորհիվ քաղաքական պայմանների, գրեթե բոլորովին տեղի չեն ունեցել հնագիտական աշխատանքներ»¹³: Աշխ. Քալանթարի զեկուցագրում հատկապես ընդգծվում է այդ տարիներին հնագիտական ժառանգության անմխիթար վիճակը. «Այդ խառն տարիները, - գրում է նա, - երբ երկրի մեծ մասը թշնամու ոտքի տակ էր, իսկ տեղական ազգաբնակչությունը կտրված էր հողից, աստանդական՝ անտեր-անտիրական էին մնացած նաև երկրի կուլտուրական մնացորդները՝ հուշարձանները, որոնք խնամքի կամ ուսումնասիրության նյութ դառնային, այլև նոցա գոյությունն այդ ժամանակ նույնչափ ծանր վտանգի մեջ էր, ինչպես և երկրի ժողովրդինը: Եվ փչացան ու կործանվեցին մի շարք հնություններ այս ու այն տեղում, թշնամու կամ այլ անգիտակից էլեմենտների ձեռքով: Բայց ամենածանր կորուստը, որ ունեցանք մենք, մեր հնագիտական հարստությունը, ամենամեծ հարվածը, որ հասավ գիտությանը, դա գիտական Անիի կործանումն էր՝ պրոֆ. Մառի 16-ամյա գիտական աշխատանքի արդյունքը»¹⁴, - դառնությամբ գրում է Քալանթարը: Սա դեռ ամենը չէր. Անիի հնագիտական ժառանգությանը ծանր հարված հասցվեց հատկապես 1918 թ. թուրքական արշավանքի ժամանակ. «Թալանն ու քարուքանդն Անիում տեղի է ունեցել մի քանի նվագ: Նախ՝ բնակելի տների վերաբերմամբ՝ Անին գրավելու առաջին շրջանում, իսկ ապա հնադարաններինը (1919-ի ապրիլ-մայիս), որ կատարել է թուրք և քուրդ խուժանը»¹⁵, - գրում է Քալանթարը: Եվ նույնիսկ այդ դժնդակ ժամանակներում

¹¹ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 17, թ. 2:

¹² Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 17, թ. 2:

¹³ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 10, թթ. 5-8: Ինքնագիր:

¹⁴ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 10, թթ. 5-8: Ինքնագիր:

¹⁵ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 10, թթ. 5-8: Ինքնագիր:

հնագիտական գործի հայ նվիրյալների ջանքերի շնորհիվ, ինչպես հաղորդում է Քալանթարը, հնարավոր է եղել «Անիի ընդարձակ հնադարանից, 1918 թվի ապրիլին, թուրքերի ներխուժման միջոցին, հազիվ 20-25 սնդուկ հնությանց բեկորներով և գրքերով, մեծ դժվարությամբ հաջողել էր ազատել և տեղափոխելով ի պահ դնել Սանահինի վանքում»¹⁶: Հավելենք, որ դեռևս 1918 թ. մարտի 18-ին հայոց ազգային խորհուրդը, խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանի ստորագրությամբ, հատուկ գրությամբ լիազորում է Աշխ. Քալանթարին «բոլոր անհրաժեշտ միջոցները կիրառելու՝ Անիից ողջ ունեցվածքը, որոնք պատմական-հնագիտական արժեք են ներկայացնում, տեղափոխել Սանահին գյուղ կամ Հաղպատ... և պահպանելով դրանց լիակատար անվտանգությունը...»¹⁷:

Թուրքական արշավանքից հատկապես տուժեցին Անիիում կառուցված երկու հնադարանները, որոնք այդքան դժվարությամբ ստեղծել էր Ն. Մառն իր աշակերտների հետ. «Երբ թուրքերը կրկին անգամ գրավում են Անին, պեղումների մասնակից, հնագետ Աշխարհբեկ Քալանթարը մի քանի զինվորների և հետագայում բազմավաստակ ուսուցիչ Հովսեփ Գալստյանի հետ, զենքը ձեռներին, թշնամու գնդակների տարափի տակ, Անիի հնադարանի իրերի մի մասը փոխադրեցին Խարկով գյուղը և փրկեցին կորստից»¹⁸, նկատում է Աշխ. Քալանթարի աշակերտ, նշանավոր հնագետ Կ. Ղաֆաղարյանը:

Անիի հնագիտական վայրի պահպանության խնդիրը հնարավոր է դառնում փոքր-ինչ բարելավել Առաջին հանրապետության հռչակումից հետո, թեպետ ինչպես Աշխ. Քալանթարն է տեղեկացնում իր զեկուցագրում. «Հայաստանի կառավարությունը միայն հունիսի վերջին միայն կարողացավ Անի ուղարկել Գարեգին եպիսկոպոսին, որը և առաջին անգամ տեղեկացրեց՝ տեղի ունեցած քարուքանդի մասին»¹⁹: Աշխ. Քալանթարի զեկուցագրում հայտնաձև տեղեկությունները հաստատվում են նաև Ալ. Թամանյանի՝ Գարեգին Հովսեփյանին հղած նամակում. «Խոստովանում եմ, որ թուրքերի մոտ ձեր գտնվելու ժամանակաընթացքում մենք բոլորս (ես, Աշխարհբեկն ու Թորամանյանը) ապրեցինք շատ տագնապալի ժամեր... Հույսով եմ, որ շուտով մենք կհանդիպենք և կկիսավենք մեր ստացած արդյունքների և տպավորությունների մասին: Աշխարհբեկին ես հիմա կգրեմ Ձեր անունից, որ և հաստատ համոզված եմ, որ նա բավականին ուրախ կլինի լսելով այդ ամենի մասին...»²⁰:

Այդ ընթացքում հնությունների պահպանության բաժնի վարիչ Աշխ. Քալանթարը և Հայաստան ժամանած ակադեմիկոս Ալ. Թամանյանը 1918 թ. հոկտեմբերի կեսերին երկրորդ այցելությունն են կատարում Անի. «...հասցրե-

¹⁶ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 10, թթ. 5-8: Ինքնագիր:

¹⁷ Սարգսյան 2006, 53:

¹⁸ Ղաֆաղարյան 1972, 33:

¹⁹ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 10, թ. 6:

²⁰ Ա. Թամանյանի նամակը Ս. Կասյանին 1969, 124:

ցինք կատարել նոր քանդածների մի քանի լուսանկարներ, իսկ Անիի դրության մասին մանրամասն զեկուցում է տրվել Հանրային կրթության մինիստրին»²¹, - հաղորդում է Քալանթարը: Նույն իրավիճակն է նկարագրված նաև հետագայում հայիեղկոմի նախագահ Ս. Կասյանին ուղղված Ա. Թամանյանի նամակ-զեկուցագրում. «1918 թվին տաճիկների՝ Ախուրյանի ափից հեռանալուց հետո, տեղական թուրքերն ու քրդերը, օգտվելով իշխանության բացակայությունից՝ ջարդ ու փշուր արին ու փչացրեցին Անի քաղաքի հնությունները... որոնք հանդիսանում էին պող. Մառի ամբողջ 15 տարվա գիտական գործունեության արդյունքը Անիում: Քարուքանդի ենթարկելով հնադարանները և բնակության տները՝ ինչքը կողոպտեցին, իսկ հնությունները կտոր-կտոր անելով շարտեցին Անիի ծորերը: ...ներկայումս թե Անիի և թե Տեկորի շրջանները գրավված լինելով տաճիկների կողմից, մենք անտեղյակ ենք հիշյալ շրջանների դրության, բայց սաստիկ անհանգիստ ենք Անիի նորից կործանման ենթարկվելու երկյուղով», - գրում է Ա. Թամանյանը²²: Աշխատելով այդպիսի ծանր պայմաններում՝ կոմիտեի անդամների հետ Աշխ. Քալանթարին հաջողվում է որոշ չափով առաջ տանել հնությունների պահպանության գործը. «Ընդամենը մի ամսվա ընթացքում (նոյեմբեր-դեկտեմբեր, 1919 թ.), - ասվում էր այնուհետև զեկուցագրում, - հնարավոր է լինում ի մի հավաքել հնությանց բոլոր բեկորները՝ Հնադարանի արժեքները, որոնք ցրված էին ամբողջ Ախուրյանի և Ծաղկոցաձորի լանջերի վրա, ուր շարտել էին քանդողները Հնադարանի երկու բաժիններից: Տեղավորելով իրենց նախկին տեղերում, կարգի է դրվում նաև Հնադարանի մի շենքը (մզկիթը), որին միայն խնայել էին քանդողները»²³:

1920 թ. հունիսին Հնությունների պահպանության բաժինը վերածվում է Հնությունների կոմիտեի՝ ակադեմիկոս Թամանյանի նախագահությամբ: Այն անմիջապես ձեռնամուխ է լինում պահպանման ենթակա հնավայրերի վերականգնման աշխատանքներին. զեկուցագրում այդ մասին մանրամասն ներկայացված է. «Անիի և Հայաստանի բոլոր հնությունների ռեգիստրացիան, հուշարձանների տեխնիկական և իրական պահպանության գործի կազմակերպումը սկսված է: Նույն թվի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին երեք տարբեր շրջաններում միաժամանակ աշխատում է կոմիտեի կազմակերպած ընդարձակ էքսպեդիցիան, որը ծրագրել էր... Անիում Թորամանյանի գլխավորությամբ մեծ մասամբ կատարվել են վերանորոգչական և շինարարական աշխատանքներ (հնադարանները կարգի բերել, աշխատողների և մշտական պահակի համար բնակարաններ է շինվել գյուղում, որը մտնում էր Անիի հնագիտական շրջանի մեջ և այլն): ...կատարել են հիշյալ շրջանների բոլոր հնությունների ռեգիստրացիան՝ մանրամասն նկարագրությամբ, չափագրությամբ, արձանագրությունների ընդօրինակումով, լուսանկարչությամբ,

²¹ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 10, թ. 6:

²² Ա. Թամանյանի նամակը Ս. Կասյանին 1969, 122:

²³ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 10, թ. 7:

էստամպահանությամբ և այլն»²⁴: Այդպիսով, թուրքերի արշավանքի պատճառով պեղումները դադարեցին. «Միայն 1891-1893 թթ. սկսած և հատկապես 1904-1917 թվականներին Անիի ավերակների գործը դրվեց գիտական հիմքերի վրա, երբ ակադ. Ն. Յա. Մառի նախաձեռնությամբ սկսվեցին պեղումները, որին տարբեր ժամանակներում մասնակցել են նաև Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին, Սմբատ Տեր-Ավետիսյանը, Տարագրոսը, Աշխ. Քալանթարը, Ն. Տոկարսկին և ուրիշներ:

Պատմական ողբերգական դեպքերն արգելք հանդիսացան Մառի և նրա աշակերտների «երազանքի՝ «Անիի հնագիտական ինստիտուտի» կազմակերպման համար»²⁵, - գրում է Գ. Շիրմազանյանը:

Հնությունների պահպանության համար պայքարի առանձին բնագավառ էր դարձել Վրաստանում գտնվող մեր հնությունների վերադարձման խնդիրը: Նորաստեղծ հանրապետության կրթության նախարարությունը 1919 թ. օգոստոսի 31-ին դիմում է Վրաստանի արտաքին գործոց նախարարին՝ Թիֆլիսի կովկասյան թանգարանում պահպանվող հայկական հնությունները Հայաստանին հանձնելու համար²⁶:

Ահա այսպիսի ծանր ճակատագիր էր վիճակված հնությունների պահպանության գործին Առաջին հանրապետության տարիներին, ուստի պարզից էլ պարզ էր, որ նման պայմաններում հնությունների պահպանության գործի իրական առաջընթացի կամ զարգացման մասին խոսելը, կարծում ենք, անիմաստ է և անհնարին: Կարծում ենք, որ այս պատճառով է բացատրվում նաև այն իրողությունը, որ 1918-1920 թթ. Հայաստանի հնությունների, առավել ևս հուշարձանների պահպանության մասին վկայող վավերագրերն այդքան սակավ են Հայաստանի ազգային արխիվում: Ավելին, Հայաստանի համար բավական աննպաստ Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերից հետո պատմական Անի մայրաքաղաքի հնագիտական ողջ ժառանգությունը բաժին հասավ քեմալական Թուրքիային²⁷:

Հնությունների պահպանության կոմիտեի կազմակերպումը. Աշխ. Քալանթարը՝ Երևանի պետական համալսարանի հիմնադիր դասախոս

Հայաստանի Առաջին հանրապետության խորհրդարանը իր գործունեության ավարտից ամիսներ առաջ՝ 1920 թ. հուլիսի 7-ին, ընդունեց հնությունների պահպանության կոմիտե կազմակերպելու մասին օրենքը²⁸: Օրենքում հաստատվում է նաև կոմիտեի կազմը, որի անդամներն էին ակադ. Ալ. Թամանյանը, Գարեգին եպս. Հովսեփյանը և Աշխարիբեկ Քալանթարը՝ որպես

²⁴ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 10, թ. 7:

²⁵ Շիրմազանյան, Հովսեփյան 1964, 40:

²⁶ Սարգսյան 1993, 111:

²⁷ Թուրքագետ Անուշ Հովհաննիսյանի հաշվումներով՝ 1915 թ. հետո մնացած 913 շինություններից 464-ը լիովին ոչնչացվել են, 252-ը՝ փլատակների վերածվել, 197-ը լուրջ վերականգնման կարիք ունեն: Տե՛ս Հովհաննիսյան 1990, 25:

²⁸ Միրզոյան և ուրիշ. 1998, 372:

հանրային կրթության և արվեստի նախարարության հնության պահպանության բաժնի վարիչ²⁹: Սակայն սոցիալ-տնտեսական ու քաղաքական այն ծանր իրավիճակը, որում հայտնվել էր հանրապետությունը, այդպես էլ թույլ չտվեց այդ ուղղությամբ զարգացնել ձեռնարկված աշխատանքները³⁰:

Հայաստանի ազգային արխիվում պահվող այս փաստաթուղթն էլ տեղեկացնում է, որ նույնիսկ այդ դժնդակ տարիներին Աշխ. Քալանթարը աշխատում է իր նպաստը բերել Երևանի նորաբաց պետական համալսարանի կայացման գործին. Հայաստանի լուսավորության նախարարին ուղղված 1920 թ. սեպտեմբերի 16-ի գրությունում համալսարանի ղեկավարը խնդրում էր «Երևանի համալսարանում Արևելքի պատմության ամբիոնում դոցենտի պաշտոնում աշխատանքի ընդունել Ա. Լորիս-Քալանթարին»³¹: Իսկ մինչև այդ՝ 1919 թ. սկզբին, Աշխ. Քալանթարը, որը համարվում էր Թիֆլիսի Անդրկովկասյան համալսարանի դոցենտ, ընդգրկվում է հայկական համալսարանի ստեղծման հանձնաժողովի կազմում, որի անդամներն էին նաև Ս. Ղամբարյանը, Դ. Զավրիյանը, Գ. Խարազյանը և Ռ. Աբրահամյանը: Փաստացի՝ Աշխ. Քալանթարը եղել է Երևանի պետական համալսարանի յոթ հիմնադիր դասախոսներից մեկը: Հենց այս խմբի ջանքերով էր, որ 1919 թ. մայիսի 16-ին վարչապետ Ալ. Խատիսյանը ստորագրում է Հայաստանի համալսարանի հիմնադրման մասին որոշումը³²: Որոշ ժամանակ անց՝ 1919 թ. հոկտեմբերի 28-ին, կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանի հրամանով ստեղծվում է պատմության և լեզվաբանության ֆակուլտետը, որի յոթ հիմնադիր դասախոսների թվում կարգում ենք նաև Աշխ. Քալանթարի անունը³³: Հետագայում՝ 1922 թ., Աշխ. Քալանթարի ջանքերով հիմնադրվում է նաև ԵՊՀ արևելքի պատմության և հնագիտության ամբիոնը, իսկ 1923 թ. նրա հեղինակությամբ հրատարակվում է «Հնագիտություն, մաս Ա., Հնագույն շրջան» դասագիրքը, որն առաջին դասագիրքն էր հնագիտություն առարկայի դասավանդման համար³⁴: 1929 թ. Աշխ. Քալանթարին շնորհվում է պրոֆեսորի կոչում և մինչև 1937 թ. համալսարանում վարում է «Հայոց պատմություն» (հին շրջան) և «Հին արևելքի պատմություն» դասընթացները՝ դաստիարակելով հնագետ-պատմաբանների մի ամբողջ սերունդ³⁵:

Եզրակացություններ

Այսպիսով, ըստ արխիվային վավերագրերի, ակներև է, որ, անկախ քաղաքական նախասիրություններից ու հանգամանքներից, Աշխ. Քալանթարն

²⁹ Միրզոյան և ուրիշ. 1998, 373:

³⁰ Տե՛ս Zeitlian Watenpaugh 2014, 528:

³¹ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 20, ց. 1ա, գ. 94, թ. 4:

³² Տե՛ս Քալանթար 2007, 19:

³³ Քալանթար 2007, 19:

³⁴ Քալանթար 1923:

³⁵ Սարգսյան 2006, 53:

ուժերի ներածին չափով փորձել է ոչ միայն նպաստ բերել հայրենական գիտության զարգացմանը, այլև առաջ տանել իր համար նվիրական դարձած Հայաստանի հնագիտական ժառանգության պահպանության կարևոր գործը:

Գրականություն

- Ա. Թամանյանի նամակը Ա. Կասյանին, 8 դեկտեմբերի 1920 թ. 1969, Բանքեր Հայաստանի արխիվների, հ. 3, էջ 123-124:
- Աշխատանք, 65, 1919:
- Հայաստանի ազգային արխիվ՝ ՀԱԱ, ֆ. 20, ց. 1ա, գ. 94, թ. 4, ֆ. 122, ց. 1, գ. 41, թ. 77, ֆ. 199, ց. 1, գ. 43, թթ. 129, 160-162, 131-132, ֆ. 1063, ց. 1, գ. 10, թթ. 5-8, գ. 16, թ. 1, գ. 17, թ. 1-2:
- Հովհաննիսյան Ա. 1990, Թուրքիա. մշակութային ցեղասպանություն, «Մշակույթ» ամսագիր, հ. 2-3, էջ 22-29:
- Ղաֆադարյան Կ. 1972, Հայաստանի թանգարանների պատմությունից, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 10, էջ 20-35:
- Միրզոյան Ա. և ուրիշ. (կազմ.) 1998, Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 506 էջ:
- Յառաջ, 60, 76, 1919:
- Շիրմազանյան Գ., Հովսեփյան Ա. 1964, Տպավորությունների երկու մատյան, «Էջմիածին» ամսագիր, N 2, էջ 37-50:
- Սարգսյան Ան. 1993, Հայաստանի հնությունների պահպանության պատմությունից (1919-1964), Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան, էջ 151-164:
- Սարգսյան Գ. 2006, Աշխարհբեկ Քալանթար, «Նոր ոճ» ամսագիր, հոկտեմբեր, N 6, էջ 52-54:
- Քալանթար Աշխ. 1923, Հնագիտություն, մաս Ա, Նախապատմական հնագիտություն, Երևան, Երևանի համալսարան, 82 էջ:
- Քալանթար Աշխ. 2007, Հայաստան՝ Քարե դարից միջնադար, երկերի ժողովածու, գիտական ժառանգություն, հ. 4, Երևան, «Գիտություն», 407 էջ:
- Носов Е. (ред.) 2009, Императорская археологическая комиссия (1859-1917). К 150-летию со дня основания. У истоков отечественной археологии и охраны культурного наследия, Санкт-Петербург, «Дмитрий Буланин», 1192 с.
- Токарский Н. 1946, Архитектура древней Армении, Ереван, изд. АН АрмССР, 381 с.
- Zeitlian Watenpugh H. 2014, Preserving the Medieval City of Ani: Cultural Heritage between Contest and Reconciliation, Journal of the Society of Architectural Historians, N 73/4, p. 528-555.

ԱՇԽԱՐՀՐԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Կարեն Բայրամյան

Ամփոփում

Հայաստանի Հանրապետության ծնունդով նոր հեռանկարներ բացվեցին նաև գիտության և մշակույթի զարգացման համար: ՀՀ նախարարների խորհրդի 1919 թ. հանրային կրթության և արվեստի նախարարության հիմնական օղակներից մեկը դառնում է արվեստի և հնությունների բաժինը (վարիչ՝ Աշխարհբեկ Քալանթար), որը

1920 թ. կեսերին վերակազմավորվեց Հնությունների պահպանության կոմիտեի (գիտնական քարտուղար՝ Աշխ. Քալանթար): Ստեղծման առաջին ամիսներից սկսած՝ կոմիտեն ձեռնարկում է հանրապետության տարածքում գտնվող հնագիտական հուշարձանների պահպանության գործը: Աշխ. Քալանթարի ջանքերի շնորհիվ նախ հնարավոր է դառնում ոչնչացումից փրկել թուրքական արշավանքի հետևանքով հիմնահատակ ավերված Անիի հնադարանը, պեղումներ են սկսվում Զվարթնոցում և պատմահնագիտական կարևորություն ներկայացնող այլ վայրերում: Ունենալով ֆինանսական և նյութական չափազանց սուղ միջոցներ՝ Հնությունների պահպանության կոմիտեն Աշխ. Քալանթարի գլխավորությամբ ձեռնամուխ է լինում հնագիտական արշավախմբերի կազմակերպմանը, հստակեցվում են արշավախմբերի առջև դրված խնդիրները: Իհարկե, այդ տարիներին կատարված հսկայածավալ աշխատանքների մասին պնդելը, կարծում ենք, տեղին չէ, սակայն Աշխ. Քալանթարի և կոմիտեի մյուս անդամների նվիրական աշխատանքի շնորհիվ հնարավոր դարձավ փրկել հնագիտական արժեք ներկայացնող մի շարք վայրեր, որը, անշուշտ, գնահատելի է: Որպես հիմնադիր դասախոս՝ Աշխ. Քալանթարը գնահատելի ավանդ ունի նաև Երևանի պետական համալսարանի ստեղծման մեջ:

Բանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետություն, Աշխ. Քալանթար, Հնությունների պահպանության կոմիտե, թուրքական արշավանք, արշավախմբերի կազմակերպում, Անիի հնադարան, պեղումներ:

ДЕЯТЕЛЬНОСТЬ АШХАРБЕКА КАЛАНТАРА В ГОДЫ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Карен Байрамян

Резюме

С рождением Первой Республики Армения в мае 1918 г. открылись новые перспективы для развития науки и культуры. Образованный в 1919 г. отдел искусств и древностей (заведующий Ашхарбек Калантар) стал одним из основных звеньев Министерства народного просвещения и искусства правительства Армении, и в середине 1920 г. он был реорганизован в Комитет по охране древностей.

С первых месяцев своего образования Комитет по охране древностей организовал работу по сохранению древних памятников на территории республики. Благодаря усилиям ученого секретаря комитета Ашх. Калантара удалось спасти от полного уничтожения в результате турецкого вторжения в 1918 г. археологический памятник Ани. Были начаты раскопки в Звартноце и других местах, имеющие историческое и археологическое значение. При наличии крайне ограниченных финансовых и материальных ресурсов под руководством Ашх. Калантара вскоре были организованы археологические экспедиции. Благодаря самоотверженной работе Ашх. Калантара и других членов комитета по охране древностей удалось сохранить ряд памятников, представляющих историческую и археологическую ценность. В качестве лектора-основателя Ашх. Калантар также

внес свой ценный вклад в создание Ереванского государственного университета.

Ключевые слова – Республика Армения, Ашх. Калантар, Комитет по охране древностей, турецкое вторжение, организация экспедиций, музей Ани, раскопки.

ACTIVITIES OF ASKHARHBЕК KALANTAR IN THE YEARS OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA

Karen Bayramyan

Abstract

The birth of the First Republic of Armenia in May 1918 opened up new prospects for the development of science and culture. Formed in 1919, the Department of Arts and Antiquities (headed by Ashkharbek Kalantar), became one of the main units of the Ministry of Public Education and Art of the Government of Armenia, which in the mid of 1920 was reorganized by the Committee for the Protection of Antiquities.

From the first months of formation, the Committee for the Preservation of Antiquities organized works to preserve ancient monuments on the territory of the Republic. Thanks to the efforts of the scientific secretary Ashkh. Kalantar from complete destruction in the aftermath of the Turkish invasion in 1918 were saved archaeological collections of Ani, the excavations in Zvartnots and other places of historical and archaeological significance started. With extremely limited financial and material resources, under the leadership of Ashkh. Kalantar archaeological expeditions were organized, their main tasks were specified. Thanks to dedicated works of Ashkh. Kalantar and other members of the Committee number of places of historical and archaeological value were saved and protected. As founding lecturer, Ashkh. Kalantar also made a valuable contribution to the creation of the Yerevan State University.

Key words – Republic of Armenia, Ashkh. Kalantar, Committee for the Protection of Antiquities, Turkish invasion, organization of expeditions, Ani Museum, excavations.

ՀՐԱՎԻՐԱՏՈՄՍԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՎԿԱ (ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ՆՈՐՈՒՅԹ)

Գալյա Դավիդովա

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան

ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Արաքս, Դանիել Բեկ Փիրումյան փող. 1

Էլ. հասցե՝ galya.davidova.60@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 16.12.2021, գրախոսվել է 04.03.2023, ընդունվել է տպագրության 11.04.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.1-292

Ներածություն

Հայոց ազգագրության թանգարանի (ՀԱԹ) հարսանյաց հրավիրատոմսերի հավաքածուն հնարավորություն է տալիս ծանոթանալու XIX դ. վերջի, XX և XXI դդ. հրավերքի մշակույթին, ինչպես նաև ստանալ արժեքավոր տեղեկություններ ազգաբանության, մշակութաբանության և լեզվաբանության (նաև գրելաոճի) մասին: Հոդվածը հրավիրատոմսի՝ որպես հետազոտության առարկայի ուսումնասիրության առաջին փորձն է հայոց ազգագրության բնագավառում և արժևորվում է թե՛ գեղագիտական ճաշակի և թե՛ մշակույթի այս տարատեսակին՝ հրավերքի վարվելակարգին հաղորդակցվելու տեսակետից:

ՀԱԹ-ի հավաքածուում կան այլևայլ ոլորտների հրավիրատոմսեր, որոնք ուսումնասիրել և ամփոփել ենք սույն թեմային առնչվող կատալոգում¹: Հավաքածուում հատկապես ուշագրավ են հարսանեկան հրավիրատոմսերն² ու ամուսնության վկայականները, որոնք պահպանվում են «Փաստաթուղթ» ֆոնդում: Հրավիրատոմսերը ոչ միայն ունեն մշակութային արժեք, այլ նաև բացահայտում են ազգային և ազգաբանական (ազգակցական հարաբերություններ, խնամիական կապեր) կարևոր հարցեր, սովորույթներ՝ կապված անցումային ծեսերի հետ:

Հրավիրագրերի պատմությունը ներկայացնում ենք սկսած միջնադարից մինչև մեր օրերը: Գրավոր հրավերներն ավանդաբար օգտագործվել են զանգվածային միջոցառումների՝ հարսանիքների, տարեդարձերի, ծննդյան օրերի կամ նորածիններին առնչվող իրադարձությունների հետ կապված: Այսօր հարսանեկան հրավիրատոմսերը գրեթե յուրաքանչյուր հարսանեկան արարողության անբաժանելի մասն են կազմում: Նրբագեղ, փոքրիկ բացիկները ոչ միայն հարգանքի տուրք են արարողակարգին և հյուրերին, այլև ներկայացնում են տոնակատարության թեման և որոշ չափով բնութագրում

¹ Դավիդովա 2022:

² Հրավերք, հյուրասիրություն, ճաշկերույթ, խնջույք: Հրավիրատոմս-տոմսակ՝ գրություն, որով մեկին հրավիրում են մի տեղ, հմմտ. Աղայան 1976, 905:

նորապսակներին: Ներկայացնենք հրավիրատոմսի ծագման և հրավիրատոմս բաժանելու սովորույթի պատմությունը:

Հրավերի պատմությունից

Հին Հռոմում ազնվականների համար ընդունված վարքաձև էր միմյանց խնջույքի հրավիրելը: Ընթրիքի կանչելու անհատական հրավերները փոխանցվել են բանավոր զրույցի ժամանակ կամ նամակի միջոցով՝ գրված մագաղաթի կամ թղթի վրա, որը տեղ է հասցրել սուրհանդակը: Առաջին հարսանեկան հայտարարությունը թերթում տպագրվել է 1605 թ.: Գրելու արվեստին տիրապետել են միայն ընտրյալ մարդիկ, հիմնականում՝ հոգևորականները: Հարուստ ընտանիքները նամակների տեքստերը գրել հանձնարարել են վանականներին³, որոնք այդ նամակները գրել են գեղագրության և վայելչագրության կանոններով:

Պաշտոնական միջոցառումների գրավոր հրավերները հայտնի են դեռ միջնադարից: Առաքումը իրականացրել է հանձնակատարը: Առաքման համար հրավիրատոմսը մի քանի տակ ծալել են, մի քանի տեղ կնքել ծալված հատվածներում, կապել քուղով և դրել ծրարի մեջ: «Աղավնիների փոստը» քաղաքակրթությանը հայտնի է դեռևս անտիկ շրջանից և օգտագործվել է ընդհուպ մինչև XIX դ. վերջը: XIX դարը փոխեց նաև հրավիրատոմսերի ձևը: Կիրառության մեջ մտան կրկնակի ծրարները (այս ավանդույթը մինչ օրս պահպանվել է Եվրոպայում, իսկ Հայաստանում կիրառության մեջ է մտել միայն XXI դարում): Փոփոխության ենթարկվեց նաև հրավերը տեղ հասցնելու ձևը:

XX դարում հատկապես գնահատվել են ծննդյան հոբելյանական (30-րդ, 50-րդ) տարեդարձերին նվիրված հրավիրատոմսերը: XXI դարում արդեն ընդունված են հարսանեկան արարողությունների համար նախատեսված փուլիկներով յուրօրինակ հրավերները, որոնք դարասկզբի նորամուծություններից են:

Հարսանեկան հրավիրատոմսի գույնի և ձևի ընտրությունը կախված է առիթից և ամուսնացող զույգի նախասիրություններից ու հնարավորություններից: Այսօր գեղագիտորեն ձևավորված, բարձրարժեք հրավիրատոմսերը հասանելի են ոչ բոլորին, քանի որ հրավիրվածների թիվը անցնում է 200-ից⁴:

Հարսանեկան ծիսական արարողությունները էթնիկ ցուցիչ են: Հարսանիքը մշակույթի մի յուրօրինակ հանրագիտարան է, որտեղ արտացոլված են ազգային մշակույթի տարբեր համալիրներ⁵: Ծեսը պատմական ու ազգագրական իրողություն է և հանդես է գալիս մարդու կյանքի ամենակարևոր անցումային փուլերում՝ ծնունդ, հասունացում, ամուսնություն, թաղում: Ամուսնությունը հայոց մեջ ընկալվել է իբրև ընտանիք կազմելու, վերարտադրվելու՝ սերնդաճը ապահովելու միակ միջոց, որն ամրագրվել է պսակադրությամբ և հարսանիքով: Հարսանեկան արարողակարգն ապահովում է տղամարդու և կնոջ կապի հարատևությունն ու ամրությունը:

³ <http://www.my-marriage.ru/org/things/istoriya-svadebnih-priglasheniy.html>

⁴ Դավիթյան 2017: Նշենք, որ մեր օրերում ձևավորված ամենաէժեք հրավիրատոմսը արժե 2000 դրամ:

⁵ Նահապետյան 2004:

Հարսանյաց ծեսը պատմաագագրական կարևոր աղբյուր է ժողովուրդների էթնիկ պատմության, հասարակական կարգի, ամուսնության ավանդական ձևերի, հավատալիքների ու կրոնական պատկերացումների, ինչպես նաև բուն հարսանյաց ծեսի պատմության հետազոտության ժամանակ⁶: Հարսանիքը ծիսական ներկայացումների մի ամբողջություն է, որտեղ մասնակից-դերակատարներից յուրաքանչյուրն անցնում է նվիրագործման խորհրդածիսական փուլը, այն զանգվածային, մեծ տոն է, որը ներառում է ժողովրդական տոների ամբողջ համակարգը: Պսակադրությունից հետո՝ եկեղեցուց դուրս գալիս, նորապսակների գլխին քաղցրավենիքի հետ ցորեն են լցրել՝ որպես առատության խորհրդանիշ, իսկ հարսի կոշիկների մեջ՝ ցորեն, գարի, որպեսզի հարսի ոտքը բարեբեր լինի այդ տանը: Տեառնընդառաջի տոնին խարույկի վրայից թռչելիս նորապսակների գլխին նույնպես ցորեն են շաղ տվել: Կարելի է թվարկել հարսանեկան ծեսերի մի քանի բաղադրիչներ՝ կապված տոների հետ. Այսպես, «փեսայի ծառը» զարդարել են կարմիր ձվով, որը Զատիկի խորհրդանիշն է, հարսանիքի նախօրյակին փեսացուի տան առաստաղը նախշել են այլուրով, որը հիշեցնում է Ամանորը: Ուսումնասիրության ենթակա առարկան՝ հարսանեկան հրավիրատոմսը, ծիսաշարի մի փոքր, բայց շատ խոսուն բաղադրիչ է, վկա, որի տողերում ամփոփվում է ազգային բազմաբովանդակ նկարագիրը:

Հրավերի մշակույթը հայոց մեջ

Հայաստանի պատմաագագրական շրջաններում ավանդական հարսանիքի հրավերները շատ բազմազան են: Դերսիմում հրավիրատոմսը բաժանել են փեսան և մակարապետը: Այն բաղկացած է եղել զույգ մեղրամոմից, փոքրիկ փաթեթով խնկից ու մի կարմիր խնձորից⁷: Այս հրավերի կապակցությամբ տարածված է «Կարմիր խնձոր չի՛մ դրկեր», «Ետևիցդ խունկ ու մոմ դրկեցի՞», որ եկար» ժողովրդական արտահայտությունները: Ժողովրդական բառախոսքի համն ու հոտը ավելի լավ են պահպանվել հարսանեկան արարողակարգում:

Ամբողջ գյուղին հրավիրելու գաղափարն արտացոլվել է այն ժամանակ, երբ հնչել է «Սահարին»՝ հրավեր-կանչի պարեղանակը: Զուռնայի կանչը ազդարարել է հարսանիքի սկիզբը: Դերսիմում նվագածուները շրջում էին գյուղամիջում՝ պարի կանչելով գյուղացիներին: Բազմության միջից մեկը ստանձնում էր հրավեր կատարողի դերը, առաջ գալով գոռում էր. «Հե՛յ, գեղը գեղվորով, տունը տնվորով, մեծով ու պուճուրով, շաբաթ իրիկուն հարսնիքի էկե՛ք»⁸: Հանձնակատարը խոսքի վերջում տալիս էր հրավիրողի տոհմանունը: Վասպուրականում հարսանիքից մեկ օր առաջ մի մարդ էին ուղարկում տնետուն շրջելու՝ հարսանիքի հրավիրելու նպատակով: Նա մի փունջ ծաղիկ ու արգասաբերությունը խորհրդանշող որևէ միրգ (խնձոր կամ

⁶ Лобачева 1981, 36.

⁷ Շազոյան 2011, 185:

⁸ Շազոյան 2011, 181:

նույն) էր տալիս հրավիրյալին՝ դրա դիմաց նրանից ստանալով որևէ ընծա: Քաղաքում հարսանիքից ութ օր առաջ փեսացուի հայրը հարսնացուի հորը նամակով հայտնում էր հարսանիքի օրը: Քաղաքային կենցաղում թղթի վրա գրված՝ մեզ հայտնի առաջին հրավիրատոմսը կիրառվել է Վանում, որտեղ հրավիրագրի հետ մի գլուխ շաքար էին ուղարկում քավորին⁹:

Նոր Բայազետի գավառում «եզմորթեքի» (մսացուի մորթի) ժամանակ փեսացուի տնից մի տարեց կին կամ երկու երիտասարդ շրջում էին գյուղում՝ համագյուղացիներին հարսանիքի հրավիրելու նպատակով¹⁰: Այստեղ հրավերը կոչվում էր «խնդրանք», իսկ հրավիրողը՝ «խնդրակ»: «Խնդրակներն» իրենց հետ վերցնում էին օղի, նախապես հաշված գդալներ, փայտե չոփեր (ծողիկներ) կամ լուցկու հատիկներ, որոնք տալիս էին հրավիրվողին: Բաժանված փայտե չոփիկների քանակով որոշում էին, թե քանի հոգու համար պետք է սեղան բացել: Հրավերն ընդունողները խմում էին մեկ կամ երկու բաժակ օղի՝ մաղթանքներ հղելով նորապսակներին և տալիս մասնակցության համաձայնությունը: Նոր Բայազետ քաղաքում հրավիրատոմսի դեր էր կատարում թղթե կտրոնը՝ հրավիրյալի անունով: Եթե հրավիրյալն ընդունում էր հրավերը, իր անվան դիմաց գրում էր «բարի է», իսկ հրաժարվելիս՝ «շնորհակալ եմ»: «Խնդրակներին» չոր միրգ կամ մետաղադրամ՝ «սև փող» էին նվիրում՝ որպես համաձայնության նշան¹¹:

Ագուլիսում հրավիրելու համար ընտրվում էր հատուկ մեկը, որը մետաքսե թաշկինակի միջից չորացած ծաղիկներ էր բաժանում հրավիրվածներին, իսկ ավարտելուց հետո թաշկինակը պահում էր իրեն՝ որպես վարձ:

Բասենում քավորը և փեսան միասին՝ զուռնայի նվագակցությամբ, շրջում էին տնետուն՝ հարազատներին հարսանիքի հրավիրելու նպատակով: Յուրաքանչյուր ընտանիքի ավագ, ընդունելով հրավերը, ի նշան համաձայնության վայելում էր նրանց ձեռքից վերցրած օղին: Շիրակի գյուղերում դիմազուռնայի նվագակցությամբ փեսացուն և մականները (ազապները) շրջում էին տնետուն՝ բարեկամներին հարսանիքի հրավիրելու: Հրավերն ընդունելու դեպքում փեսացուի պարանոցին կապում էին մետաքսյա մի հասարակ թաշկինակ՝ «կոսպանդ»¹²: Քաղաքում հարսանիքից մի քանի օր առաջ բարեկամներին ուղարկում էին հրավիրագրեր:

Հադրութում (Արցախ) հարսանիքի առավոտյան փեսացուի մերձավոր ազգականներից մեկը տնետուն բաժանում էր հարսանիքի հրավիրված հյուրերի անուն-ազգանունները կրող թղթեր¹³: Գանձակում¹⁴, Բորչալում¹⁵, Սիսիա-նում փեսացուի տնեցիների բերած նվագողները¹⁶ տան կտուրում հնչեցրել

⁹ Լալայան 1910, 149:

¹⁰ Լալայան 1907, 18:

¹¹ Լալայան 1907, 19:

¹² Մխիթարեանց 1901, 243:

¹³ Լիսիցյան 1981, 45:

¹⁴ Լալայան 1988, 358:

¹⁵ Լալայան 1903, 227:

¹⁶ Լալայան 1898, 224:

են դիոլ-գուռնան՝ տղամարդկանց հրավիրելով հարսանեկան ընթրիքի: Դա կոչվում էր «կանչ»: Հայաստանի որոշ շրջաններում հարսանիքի նախօրյակին, որպես հարսանեկան հրավիրատոմս, հաց կամ գաթա էին տանում հարազատ-ազգականներին, դրկից-հարևաններին: Արաբկիրում հարսանիքի նախօրյակին նախշած տափակ հաց՝ «բաջուկ» էին ուղարկում բարեկամներին¹⁷, իսկ Սեբաստիայում՝ իբրև հրավերի նշան, թխում էին հատուկ գաթա՝ «գաթախատիք»¹⁸: Հարսանեկան ծեսերում գաթան և՛ ինքնատիպ հրավիրատոմս էր, և՛ ամուր ընտանիքի խորհրդանիշ:

Նոր Նախիջևանում հարսանեկան գաթան «թել» գաթա են անվանել: Մակարներից 2-3 հոգի, գաթան խուրջիներում լցրած, շրջում էին բարեկամների տներով և բաժանում այն՝ որպես հարսանիքի հրավեր:

Գամիրքում¹⁹, Ամասիայում գյուղին դիոլ-գուռնայով ազդարարում էին հարսանիքի սկիզբը²⁰, իսկ ազգականների տները գնալը և հայտնելը կոչվում էր «տուն ձենել»:

Գողթան գավառում փեսացուի տատները, թաշկինակի մեջ ծաղիկներ դրած (ծմռանը՝ չորացած, ամռանը՝ թարմ), շրջում էր տնից տուն և նրանց մի-մի փնջիկ տալով՝ հրավիրում հարսանիքի²¹:

Բաղեշում²², Աշտարակում՝ կոչնակները²³, իսկ Վայոց ձորում՝ կանչողներն էին հարազատ-բարեկամներին հրավիրում հարսանիքի²⁴:

Վերոշարադրայից կարող ենք եզրակացնել, որ ամեն մի շրջան (նույնիսկ կողք կողքի գյուղերը) ուներ հրավերի իր ծեսը: Սա փաստում է այն մասին, որ վերաբնակվածները պահպանել են իրենց վաղեմի սովորույթները:

Եվրոպայում (Գերմանիա, Անգլիա) հրավերներն առաքվել են ձիով: Նմանատիպ պատմության հանդիպում ենք Ղզլարում²⁵, որտեղ հրավիրատոմսերը բաժանելու համար հատուկ ձիավոր-ցրիչ էին վարձում:

Ինչպես խնամախոսության ժամանակ միջնորդ կինը, այնպես էլ հրավիրատոմս բաժանողն անպայման վարձատրվում էր փեսացուի կամ հարսնացուի հարազատների կողմից: Հրավիրատոմսում նշվում էր, թե որ եկեղեցում պիտի տեղի ունենար պսակադրության հանդեսը, և հրավիրվող պարոնն ու տիկինը իրենց ներկայությամբ պիտի հարգեին պսակի հանդեսը և մասնակից լինեին հարսնախնջույքին՝ նշված հասցեում:

¹⁷ Հայոց լեզվի բարբառային բառարան 2001, 165:

¹⁸ Հմմտ. Հայոց լեզվի բարբառային բառարան 2001, 228:

¹⁹ Թեմուրճյան 1970, 115:

²⁰ Հմմտ. Բարբառային բառարան 2002, 401 (ծենտուք-հարսանիքի, խնջույքի հրավեր):

²¹ Լալայան 1905, 125:

²² Հայոց լեզվի բարբառային բառարան 2001, 148:

²³ Հայոց լեզվի բարբառային բառարան 2001, 140:

²⁴ Լալայան 1906, 152:

²⁵ Գևորգյան 1980, 49:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Նոր Նախիջևանում²⁶, Վանում հարսանիքի էին հրավիրում տպագրված հրավիրատոմսակներով²⁷:

Պսակը ամուսնության գլխավոր խորհուրդներից մեկն է: Ամուսնությունն այլ կերպ անվանում են պսակ (ամուսնացել է, պսակվել է): Եկեղեցում կատարվող պսակադրության ժամանակ նորահարսի ու նորափեսայի գլխին թագ կամ պսակ էր դրվում: Շիրակում փեսացուն պսակադրության ժամանակ կրում էր թագի պատկերով արծաթյա գոտի: Նմանատիպ գոտի ներկայացված է ՀԱԹ-ի ցուցադրությունում: Գոտու ճարմանդի վրա առկա է թագի զարդապատկերը և Պ.Վ. մակագրությունը (նկ. 1): Հավանաբար, դա փեսացուի կամ պսակվող զույգի անվանատառերն են²⁸: Գոտին՝ որպես մոգական շրջանակ, ունեցել է հմայական պահպանակի նշանակություն և կրողին պահպանել է չարից²⁹:

Ավանդական հարսանիքում հարսին ու փեսային անվանում էին «թագուհի-թագավոր»։ հարսանիքում ծագած վեճերը նրանք են լուծել: Փեսան տուգանել է բոլոր անհնազանդներին և կարգազանցներին, իսկ հարսն իրավունք է ունեցել տուգանել միայն աղջիկների խմբին: Հարսանիքի օրը նորապսակները կրել են թագավորական բազմաթիվ տարբերանշաններ՝ թագ, գավազան, քող, նարոտ, ոսկապ, ծաղիկ: Նույն թեմայի դրսևորումը տեսնում ենք հարսանյաց հրավիրատոմսերի ձևավորման մեջ: ՀԱԹ-ի «Փ» 190/6252/15 հաշվառանիշի հրավիրատոմսի (Նոր Նախիջևան, 1875 թ.)³⁰ գլխամասում պատկերված է թագ (նկ. 2): Ավանդական հարսանիքների ժամանակ պսակադրված զույգերի վրա եկեղեցուց դուրս գալիս ցորենի հատիկներ են շաղ տվել՝ ակնկալելով առատություն, բարիք, սերնդած և պտղաբերություն: Որոշ հրավիրատոմսերի գեղազարդման մեջ կան ցորենի հասկեր:

Հրավիրատոմսերի աշխարհագրությունը տարածաշրջանային ընդգրկման առումով լայն է՝ Երևան, Թիֆլիս, Արցախ, Նախիջևան, Դոնի Ռոստով, Եկատերինոդար: Դրանց մեծ մասը թանգարանը ձեռք է բերել 1985 թ. Դոնի Ռոստովի գիտարշավից:

Հրավիրատոմսերն աչքի են ընկնում ոչ միայն ձևի և բովանդակության բազմազանությամբ, այլև պարունակող տեղեկատվությամբ, որը վերաբերում է ոչ միայն բուն հարսանյաց հանդեսին, այլ նաև այնպիսի ոլորտների, ինչպիսիք են ազգակցական հարաբերությունները, ամուսնացողների կամ խնամիացող ընտանիքների սոցիալական վիճակը, կրթական մակարդակը և այլն: Հրավիրատոմսերի մեծ մասը երկլեզու է կամ ռուսերեն: Կիրթ ու մտավորական մարդիկ տիրապետել են եվրոպական մի քանի լեզուների:

²⁶ Շահագիզ 1901, 87:

²⁷ Լալայան 1910, 149:

²⁸ Նույն ցուցադրությունում ներկայացված են սափոր և սկուտեղ, որոնց վրա եղած մակագրություններից տեղեկանում ենք, որ դրանք նվիրել է փեսացուի հայրը իր որդուն՝ հարսանիքի կապակցությամբ:

²⁹ Ստեփանյան 2007, 16-20:

³⁰ Հրավիրատոմսի համարակալումը ՀԱԹ-ի «Փաստաթուղթ» ֆոնդին է:


Այս տեսանկյունից առանձնանում են Դոնի Ռոստովի, Նոր Նախիջևանի XIX դարի վերջի և XX դարասկզբի մի քանի հրավիրատոմսեր, որոնք հազվագյուտ տեղեկատվություն են պարունակում հայ իրականության մասին, թե՛ վերոհիշյալ բնակավայրերում ինչ ազգատոհմեր են ապրել, խնամիացել ու բարեկամացել, ամուսնացողները միաժամանակ կրել են և՛ մայրական, և՛ հայրական ազգանունները, ինչպես՝ Նեկտարինե Կարապետյան-Մնացականյան, Միքայել Հայրապետյան-Մելգումյան և այլն:



1



2



3



4

Նկ. 1-4. Հրավիրատոմսերի օրինակներ Հայոց ազգագրության թանգարանից

Հրավիրատոմսերում նշվում էին հարսի ու փեսայի անուն-ազգանունը, եկեղեցին, որտեղ կատարվելու էր պսակադրությունը, այնուհետև հարսանյաց խնջույքի տարեթիվը, ժամը (առավոտյան, երեկոյան), հասցեն և պարահանդեսի տեղը, երբեմն՝ նույնիսկ կայարանը, որտեղից հարսանեկան թափորը տեղափոխվելու էր այլ վայր:

Որոշ հրավիրատոմսեր պարունակում են տվյալներ միայն պսակադրության, եկեղեցու վայրի և ժամի մասին: 193/6285/34 հաշվառանիշի հրավիրատոմսից տեղեկանում ենք, որ պսակադրությունը տեղի է ունեցել Նա-

խիջևանի Սուրբ Աստվածածին եկեղեցում: Պսակադրություններ են կատարվել նաև Նոր Նախիջևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Համբարձում, ինչպես նաև Եկատերինոդարի հայկական եկեղեցիներում:

Ուշագրավ է 268/8118 հաշվառանիշով հրավիրատոմսը, որից տեղեկանում ենք, որ Արցախյան հերոսամարտի մասնակից, Հայաստանի Հանրապետության և Արցախի ազգային հերոս (1996) Մոնթե Մելքոնյանի (Ավո, 1957-1993) և Սեդա Գպրանյանի Սուրբ պսակի խորհուրդը կայացել է Ս. Գեղարդի եկեղեցում՝ 1991 թ.:

Որոշ հրավիրատոմսեր նշանադրության հրավերի հետ մեկտեղ տեղեկություն են հաղորդում նշանվողի՝ որդեգիր լինելու մասին: 6252/190/11-ից տեղեկանում ենք, որ Միքայել Բարսեղյան և Աննա Հովհաննիսյան-Բեշքենյանները հրավիրում են իրենց որդեգրուհու՝ Պետրոնիա Հովհաննիսյան-Չերկեսյանի և Գևորգ Կարապետյան-Խորճյանի պսակադրությանը (նկ. 3): Ըստ 190/6283/14-ի (Դոնի Ռոստով, 1896)՝ պրն. Լուսեղյան-Բադրյանը հրավիրում է դստեր՝ Վարդուհու և Մկրտիչ Հարությունյան-Արմաքեշյանի նշանահանդեսին:

Նշանդրեքի արարողության հրավերների հանդիպում ենք ոչ միայն XIX, այլ նաև XX դ. հրավիրատոմսերում (209/6650/59 հաշվառանիշ, Ալավերդի, 1956): Կան երկու խնամիացող բարեկամների համատեղ հրավերով հրավիրագրեր: 6252/190/18 հաշվառանիշի հրավիրաթղթի առաջին էջում նշված է, որ Եվդոկիա Արտեմովնա Կեչեջևան հրավիրում է իր որդու՝ Կարպ Եգորովիչի, մյուս էջում՝ Աննա Վլադիմիրովնա Կորոտկովան իր դստեր՝ Եվդոկիա Իվանովնայի պսակադրությանը:

Հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Բանանց գյուղի (Գարդման-Ուտիք) Տեր-Ավետիքյանների հրավիրաթուղթը (1903)՝ նշված են բուն հարսանիքի օրերը՝ հինգշաբթիից կիրակի (4 օր): Սա ևս փաստում է այն իրողությունը, որ հայոց մեջ ավանդական հարսանիքը նշել են «յոթ օր յոթ գիշեր»³¹: Կիլիկիայում ամուսնացող աղջիկները բուսական և թռչնային մոտիվներով համակցված յոթ ճերմակ շուշաններով զարդարված, սպիտակ ժանյակե ժապավենի վրա պատրաստված օղակաձև թագ են կրել³²: Այս դեպքում թագը խորհրդանշում է զուգավորում, արգասավորություն, բեղմնավորություն:

XIX դ. հրավիրատոմսերը պատրաստված են գեղագիտական բարձր ճաշակով: Մեծ մասը փղոսկրագույն է՝ հարդարված ժանեկանման կտրտված հավելումով, դրոշմազարդ ծաղիկներն ավարտվում են զույգ ամուսնական մատանիների կամ թռչունների պատկերներով: Մեկ այլ՝ «Փ»190/6252/12 հաշվառանիշի հրավիրագրի (Նոր Նախիջևան, 1905) վրա պատկերված է տնակ՝ ծաղկանոցով, որը փաստում է նորապսակներին ուղղված ցանկությունների մասին՝ տանիք, տուն ունենալու միտմամբ: Այսպիսի ժողովրդական

³¹ Շադոյան 2011, 194, Նահապետյան 2004, 151, Մխիթարյան 20018, 164:

³² Փափազյան 2002, 19:

բարեմադրանք կա՝ ուղղված աղքկան. «Տուն-տանիքով տղի ռաստ գաս (հանդիպես)»³³:

Այսպիսով, կարող ենք ասել, որ հրավիրատոմսերը հայ իրականության մեջ քաղաքային մշակույթի բարձրարժեք փաստաթղթեր են, որոնք բացահայտում են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ տեղեկություններ ազգի, ընտանիքի, ամուսնահարսանեկան ծեսերի, ժառանգորդության մասին:

XX դ. հրավիրատոմսերը ձևավորված են զույգ մատանիների («Փ» 126/4257/1, «Փ» 126/4857/2, «Փ» 130/4975/2), զույգ ծաղիկների և համանման այլ պատկերներով³⁴: Դրանց բնորոշ են նորապսակների անուն-ազգանունները, զույգերի լուսանկարը («Փ» 110/4601/1, 3, 9), երբեմն էլ հանդիպում են պտղաբերության խորհրդանիշներ: XX դ. 50-60-ական թթ. Որոշ նմուշներ ձեռագիր են՝ գրված աշակերտական տետրից կտրված թղթի վրա (Փ» 209/6650/59 հաշվառանիշ, Ալավերդի, 1956):

Խորհրդային տարիներին ընդունված էր մեծ շուքով՝ թողնելով ու ծոռնելով, ամբողջ գերդաստանով նշել ծնողների հոբելյանական հարսանիքները (25, 30, 50): Այդ առիթով ևս հրավիրատոմսեր են բաժանել: Հավաքածուում ընդգրկված են արձաթյա՝ «25» տարի (104/4515 հաշվառանիշով Սիրանուշ-Վաղարշակ՝ 1936-1961) և ոսկյա՝ «50» տարի, (103/4514 հաշվառանիշով՝ Մերի-Սարգիս) գրություններով օրինակներ:

Յուրաքանչյուր ընտանիք ունի իր պատմությունը, որը հաճախ սկիզբ է առնում հարսանեկան խնջույքից: Այս գեղեցիկ արարողության մասին որպես իրական հուշ են մնում հրավիրատոմսն ու լուսանկարները, որոնք պահպանվում են որպես ընտանեկան մասունք՝ վկայելով այդ հիշարժան օրվա մասին:

Ժամանակի ընթացքում փոխվել է նաև հրավիրաթղթի ձևը: Ներկայումս տարածված են լազերային կտրվածքով, քրաֆթային ոճով՝ ծրարով և կապարե կնիքով (այս տիպը հիշեցնում է միջնադարյան հրավիրատոմսերը), ինչպես նաև այլ հրավիրատոմսեր: Հարսանեկան սովորույթները ևս կրել են զգալի փոփոխություններ: Փոխվել են նաև ավանդական ծեսերը: Ծեսը մեզ չի հասել իր սկզբնական բովանդակային ձևով: Ավանդական հարսանեկան ծիսաշարքից պահպանվել են միայն որոշ ծեսեր: Օրինակ, եթե անցյալում ափսե դրել են միայն փեսացուի ոտքի տակ, որպեսզի նա մեկ հարվածով կտորի այն, ապա այժմ երկու ափսե են դնում. փեսացուի և հարսնացուի ոտքերի տակ՝ միաժամանակ կտորելու համար: Վերապրուկային այս ծեսով փորձում են հասկանալ, թե ով իշխող դիրք կունենա ընտանիքում: Ակնում, Արաբկիրում, Աղձնիքում սկեսուրը հարսին դիմավորել է հետևյալ խոսքերով. «Հարսս, ոտքդ երջանկաբեր, գլուխդ՝ բախտավոր լինի», և սկեսրայրի կամ կնքամոր հետ տան շեմքի մոտ ձեռքերով կամար են կապել, որ հարսն ու փեսան անցնեն դրա տակով՝ ի նշան հնազանդութ-

³³ Դավիդովա 2017, գ. Նոր Արտագերս, բանասաց՝ Շուրա Ավյան:

³⁴ Դավիդովա 2017, գ. Արաքս, բանասաց՝ Սուսան Մխիթարյան:

յան: Դրա արձագանքը հաճախ տեսնում ենք XX դ. հրավիրատոմսերի (նկ. 4) դիմերեսի պատկերներում, որոնց վրա հարսնացուն ու փեսացուն պատկերված են կամարի տակ:

Հարսանեկան ծեսերից մի քանիսում քիչ թե շատ պահպանվել են ավանդականի որոշ բաղադրիչներ՝ հարմարեցնելով ներկա ժամանակներին, ինչպես՝ հարսին հագցնելը, զույգերին լավաշներով դիմավորելը, տան շեմին ափսե կոտրելը, հարսի հոր տնից նորապսակների ելքը խանգարելը, պսակադրության ժամանակ թագադրվելը, եկեղեցու բակում աղավնիներ թռցնելը: Այս ամենը ցայսօր կիրառվում է:

Եկեղեցուց դուրս գալիս նորապսակների վրա վարդի թերթիկներ, բրինձ, չամիչ, ընկուզեղեն են ցանում (արդեն մոռացվում է ցորեն շաղ տալը):

XXI դ. առաջին տասնամյակին դաշտային ազգագրական մի ուշագրավ նյութ է գրանցվել. փարիզահայ ընտանիքի հարսնացուն հարսանիքի ժամանակ նվիրել են ցորենի հասկափուն՝³⁵: Այս իրողությունը ապացույց է այն բանի, որ ոչ նյութական մշակութային ժառանգության ավանդները դեռևս ապրում են մեր ծնողների հիշողության մեջ և երբեմն ենթագիտակցորեն, ակամա դրսևորվում: Հասկափունջն արդեն վերադարձ է դեպի ավանդականը՝ դեպի արմատները:

Եզրակացություններ

Այսպիսով, կարելի է ասել, որ հարսանյաց արարողակարգում որոշ չափով պահպանվել են հրավիրատոմսի ձևավորումն ու բովանդակությունը, այն առաքելու ձևը (գրավոր կամ բանավոր, նույնիսկ հեռախոսով, XXI դ. Գերմանիայում լայն տարածում ունեն տեսահոլովակները, պատկերներում ներկայացվում են հրավերի մասին մանրամասն տեղեկություններ): Այսօր էլ հարսանեկան հրավիրատոմսերը հարսանյաց արարողությունների, հարսանեկան վարվելաձևի անբաժան մասն են կազմում և պարզապես դարձել են հեռավոր անցյալից մեզ հասած գեղեցիկ ավանդույթ:

Գրականություն

- Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-2, Երևան, «Հայաստան», 925 էջ:
- Գևորգյան Գ. 1980, Ղզլար, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 10, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 8-67:
- Դավիդովա Գ. 2017, Դաշտային ազգագրական նյութեր, Արմավիր:
- Դավիդովա Գ. 2022, Հայոց ազգագրության թանգարանի հրավիրատոմսերի հավաքածուի կատալոգ, Երևան, տպ. Հայկ Հովսեփյանի, 161 էջ:
- Թեմուրճյան Վ. 1970, Գամիրքի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 5-141:
- Լալայան Ե. 1898, Սիսիան, Ազգագրական հանդես, գք. III, տպ. Մ.Դ. Ռոտինեանցի, էջ 207-270:

³⁵ Պապիկյան 2010, 427:

- Լալայան Ե. 1903, Բորչալուի գավառ, Ազգագրական հանդես, գք. X, Արագատիպ Ա. Մարտիրոսեանցի, էջ 197-246:
- Լալայան Ե. 1905, Գողթան գավառ, Ազգագրական հանդես, գք. XII, Արագատիպ Ա. Մարտիրոսեանցի, էջ 109-173:
- Լալայան Ե. 1906, Վայոց ձոր, Ազգագրական հանդես, գք. XIII, տպ. Հերմէս, էջ 139-166:
- Լալայան Ե. 1907, Նոր Բայազետ, Ազգագրական հանդես, գք. XVI, տպ. Հերմէս, էջ 9-68:
- Լալայան Ե. 1910, Վասպուրական, Ազգագրական հանդես, գք. XX, Էլեկտրաշարժ տպարան Ն. Աղանեանցի, էջ 196-212:
- Լալայան Ե. 1988, Երկեր, հ. 2, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., էջ 5-505:
- Լիսիցյան Ս. 1981, Լեռնային Ղարաբաղի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 9-143:
- Հակոբյան Գ. 1974, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, «Հայաստան», 396 էջ:
- Հայոց լեզվի բարբառային բառարան 2001, խմբ.՝ Սարգսյան Ա., Հովհաննիսյան Լ., հ. Ա, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 427 էջ:
- Հայոց լեզվի բարբառային բառարան 2002, խմբ.՝ Սարգսյան Ա., Հովհաննիսյան Լ., հ. Բ, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 427 էջ:
- Մխիթարյան Ա. 2018, Պսակը և հարսանիքը հայոց մեջ՝ ըստ մատենագրական աղբյուրների (V-XVIII դդ.), Երևան, «Նաիրի», 336 էջ:
- Մխիթարեանց Աղ. 1901, Փշրանք Շիրակի ամբարներից, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, Գ. Սանտյանի հրատ., 338 էջ:
- Նահապետյան Ռ. 2004, Աղծնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, ԵՊՀ հրատ., 258 էջ:
- Շագոյան Գ. 2011, Յոթ օր, յոթ գիշեր, հայոց հարսանիքի համայնապատկեր, Երևան, «Գիտություն», 616 էջ:
- Շահագիզ Ե. 1901, Նոր Նախիջևանը և նախիջևանցիք, Ազգագրական հանդես, գք. VII և VIII, տպ. Ա. Մարտիրոսեանցի, էջ 5-102:
- Պապիկյան Ս. 2010, Խաչվինջերը երկրագործական հավատալիքների համակարգում, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, խմբ.՝ Աբրահամյան Լ., Թադևոսյան Ա., Հայրապետյան Թ., Երևան, «Գիտություն», 594 էջ:
- Ստեփանյան Ա. 2007, Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 22, Երևան, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., էջ 16-20:
- Փափազեան Հ. 2002, Հայկական տարազ, Պոռոսյան Ս., Հայկական տարազի համալիրները, Երևան, «Տիգրան Մեծ», էջ 13-27:
- Лобачева Н. 1981, Свадебный обряд как историко-этнографический источник, Советская этнография, Москва, N 2, с. 36-50.
- <http://www.my-marriage.ru/org/things/istoriya-svadebnih-priglasheniy.html> (01.02.2013) (ներբեռնման օրը՝ 24.02.2023, 14:02).

ՀՐԱՎԻՐԱՏՈՄՍԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՎԿԱ (ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ՆՈՐՈՒՅԹ)

Գալյա Դավիդովա

Ամփոփում

Հայոց ազգագրության թանգարանի հրավիրատոմսերի հավաքածուն ներառում է 250 թանգարանային առարկա (XIX-XX դդ.): Դրանց շարքում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում հարսանեկան հրավիրատոմսերն ու ամուսնության

վկայականները: Հարսանեկան հրավիրատոմսերը մատնացույց են անում ոչ միայն հարսանեկան խնջույքի, այլ նաև հարսանիքը վավերացնող պսակադրության վայրը, հասցեն, հարսանեկան խնջույքի տեղն ու ժամը և այլ մանրամասներ: Հրավիրագրերը որոշ չափով արտացոլում են ազգակցական հարաբերություններ (ազգատոհմերի, խնամիական կապերի) և մշակութային արժեքներ: Դրանք պատմական տվյալներ են պարունակում Հայաստանի տարբեր պատմաազգագրական շրջաններում ավանդական հարսանիքների և հարսանեկան հրավիրատոմսերին առնչվող վարվելակարգի վերաբերյալ: Հրավիրատոմսերը հարկ է դիտարկել ոչ միայն որպես մշակութային արժեքներ, այլ նաև ազգային և ազգաբանական խնդիրների տեսանկյունից, քանի որ կապված են անցումային ծեսերի հետ: Հրավիրատոմսերի տեղեկությունները վերաբերում են ոչ այնքան բուն հարսանեկան խնջույքին, որքան այնպիսի ոլորտների, ինչպիսիք են, մասնավորապես, նորապսակ զույգի ազգակցական կապերը և սոցիալական վիճակը:

Բանալի բառեր՝ հրավիրատոմս, հրավերք, հարսանիք, ծես, ավանդույթ, խորհրդանիշ, հավաքածու:

ПРИГЛАСИТЕЛЬНЫЙ БИЛЕТ КАК СВИДЕТЕЛЬ СВАДЬБЫ (ТРАДИЦИЯ И СОВРЕМЕННОСТЬ)

Галя Давидова

Резюме

Коллекция свадебных документов Национального музея этнографии армян состоит из 250 музейных предметов (XIX-XX вв.). Среди них особый интерес представляют свадебные приглашения и свидетельства о браках. Свадебные билеты указывают не только на место проведения свадебного пиршества, но и на место, адрес регистрации семейного союза. Исследование пригласительных билетов выявляет родовые отношения (семейно-родовые, сватовские связи). В работе представлены исторические данные о традиционных свадьбах и культуре этикета свадебного приглашения разных историко-этнографических регионов Армении. Пригласительные билеты выявляют важные национальные и этнологические вопросы и обычаи, связанные с переходными ритуалами. В пригласительных билетах содержится информация не только о самом свадебном пиршестве, но и о родственных связях и социальном положении свадебной пары.

Ключевые слова – пригласительный билет, приглашение, свадьба, ритуал, традиция, символ, коллекция.

INVITATION CARD AS A WITNESS OF WEDDING (TRADITION AND NOVELTY)

Galya Davidova

Abstract

The museum of Armenian Ethnography houses 250 museum items of the XIX-XX centuries included in the collection of documents related to marriage. Wedding invitation cards and certificates are of special interest. Wedding invitation cards reveal the venue, address, church, week day, hour and other details not only of the wedding feast, but of the wedding ceremony as well. Invitation cards reflect the family ties (family, in-laws) and cultural values to some extent. They give historical information on traditional weddings and etiquette of wedding invitation in different historical-etnographic regions of Armenia. Invitation cards should be studied not only as cultural values, but as important national and ethnographic issues connected with transitional rites. Invitation cards give information mainly on the family ties and social status of the wedding couple.

Key words – invitation card, invitation, wedding, ritual, tradition, symbol, collection.

ՕՐԳՈՎԻ ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԵՎ ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԵՐԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԱԽՄԲԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ¹

Հենրիկ Դանիելյան

Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի կրտսեր գիտաշխատող
ՀՀ, Երևան, Էրեբունի 38

Էլ. հասցե՝ henrikh.danielyan@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 20.04.2022, գրախոսվել է 01.04.2023, ընդունվել է տպագրության 11.04.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.1-305

Ներածություն

Օրգովի հնագիտական հուշարձանախումբը գտնվում է Արագած լեռան հարավային լանջին Ամբերդի գետահովտում տարածվող բլուրներին, հրվանդաններին և սարահարթերին (աղ. 1): Այստեղ առկա մեգալիթյան հուշարձանները ներկայացված են ինչպես «կիկլոպյան» ամրոցներով, այնպես էլ դամբարաններով, «սրբազան» ժայռափոր ճանապարհներով, վիշապ և մենաքար կոթողներով: Ներկայացվող համալիրները ժամանակագրական առումով ընդգրկում են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններից մինչև վաղ և զարգացած միջնադար: Այս տարածքի ուսումնասիրությունը սկսվել է խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո՝ XX դ. 20-ական թթ. կեսերին՝ Հնությունների պահպանության կոմիտեի աշխատակից Ա. Քալանթարի նախաձեռնությամբ²: 1930-ական թթ. վերջից սկսվեցին նաև Աշտարակի շրջանի նյութական մշակույթի տարածամանակյա հուշարձանների հաշվառման և քարտեզագրման աշխատանքները, որոնք իրականացրեց Վ. Աբրահամյանը: Նա հաշվառեց նաև Օրգով 1 ամրացված բնակատեղին³:

1975 թ. ԽՍՀՄ Ժողովուրդների պատմության և մշակույթի հուշարձանների համահավաքը ստեղծելու ծրագրով աշխատող Արվեստի ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի և ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի միացյալ հնագիտական արշավախումբը (ղեկ.՝ Գ. Արեշյան, անդամներ՝ Կ. Ղաֆադարյան, Հ. Սիմոնյան, Գ. Տիրացյան, Ա. Քալանթարյան Գ. Սարգսյան և Հ. Օհանյան) ձեռնամուխ եղավ Արագածի հարավահայաց լանջի հնագիտական հուշարձանների ուսումնասիրությանը և հաշվառմանը⁴:

¹ Հոդվածը հրապարակվում է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի ՀՀ ԿԳՄՍ նախարարության գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 3-6/1 համարով «Ուրարտագիտական հետազոտությունների սեկտորի ստեղծում» գիտական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի շրջանակում:

² Քալանթար 1925, 207-232:

³ Աբրահամյան 1940, 23:

⁴ Արեշյան և այլք 1977, 91, Арешян 1978, 99-103:

Նշված ժամանակահատվածում տարածքում հնագիտական այցեր և վերգետնյա ուսումնասիրություններ են կատարում նաև Հ. Սիմոնյանը և Հ. Երանոսյանը⁵:

2012 թ. սկսած՝ մինչև օրս Արագածի հարավային լանջի բարձր լեռնային գոտիների հնագիտական հուշարձանների հայտնաբերմամբ և ուսումնասիրությամբ է զբաղվում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիշապաքարեր հետազոտող արշավախումբը (ղեկ.՝ Ա. Բոբոխյան): 2016-2017 թթ. արշավախումբը հետազոտեց ինչպես Օրգով գյուղի, այնպես էլ Գայլի բլուր հնավայրի հնագիտական համալիրները՝ չափագրելով և քարտեզագրելով դրանք:

Դիրքը և նկարագրությունը

Օրգովի հնագիտական համալիրը կազմված է երկու հատվածից: Առաջինը գտնվում է ժամանակակից գյուղի արևմտյան եզրին վեր խոյացող բարձրադիր հրվանդանի գագաթին, որտեղ տեղադրված է Օրգով 1 ամրացված բնակատեղին⁶: Այն զբաղեցնում է մոտ 4 հա մակերես (աղ. 2, նկ. 1):

Խորհրդային և հետխորհրդային տարիներին ամրոցը մեծ վնաս է կրել հատկապես ամրոցի և բնակատեղիի տարածքում կատարված թաղումների հետևանքով: Ընդհանուր առմամբ պաշտպանական համակարգը լավ է պահպանված:

Հրվանդանը (բ.ճ.մ.՝ 1702.5 մ) կազմված է հարթ կամ հարթեցված վերնամասից: Արևելյան, հարավային, հյուսիսային լանջերը դժվարհասանելի են: Գագաթի հարթ վերնամասը օղակված է հրվանդանի ռելիեֆը կրկնօրինակող ձվաձիր (մոտ 0,44 հա) հատակագիծ ունեցող ամրոցով (աղ. 4, նկ. 1):

Շրջապարիսպը, որի լայնությունը հասնում է 2,18 մ-ից մինչև 3,5 մ, կառուցված է մանր որձաքարի միջնալիցքով երկերես շարվածքով (աղ. 3, նկ. 3): Ամրապարիսպները արևելյան և հարավային հատվածում պահպանվել են 5-6 մ⁷, իսկ մնացյալ հատվածներում՝ մինչև 2 մ բարձրությամբ (աղ. 3, նկ. 1): Ամրոցը համեմատաբար մատչելի է արևմտյան և հյուսիսային կողմերից: Դեպի ամրոց ընթացող համեմատաբար հեշտ հասանելի հատվածը գտնվում է հրվանդանի արևմտյան հատվածում, որտեղ եղել է մուտքը: Այն 3,5 մ լայնությամբ բացվածք է՝ թեքահարթակի տեսքով: Ավելի փոքր՝ 1,5 մ լայնությամբ մուտք է բացված ամրոցի արևելյան պարսպում⁸: Ամրոցի արևմտյան հատվածը հզորացված է 12x14 մ աշտարակով⁹, որը փաստորեն հսկողության տակ էր պահում դեպի ամրոց տանող մուտքը, և հնարավոր ռազմական գործողությունների դեպքում հակառակորդի կուտակումները մուտքի և

⁵ Սիմոնյան, Երանոսյան 1977, 47-57:

⁶ Հուշարձանն ընդգրկված է Հուշարձանների պետական ցուցակում [(2002 թ. Արագածոտնի մարզ, Օրգով 2.114/1 (ամրոց), 2.114/1 (դամբարանադաշտ)]:

⁷ Կիրակոսյան, Աղաջանյան 2013, 77:

⁸ Կիրակոսյան, Աղաջանյան 2013, 77:

⁹ Կիրակոսյան, Աղաջանյան 2013, 77:

արևմտյան համեմատաբար հեշտ հասանելի հատվածում կողային մարտավարությամբ ջախջախելու գործառույթ ունեն:

Հրվանդանի գագաթին՝ ամրոցից ներս, կենտրոնական հատվածում նկատելի են մշակված ժայռային հարթակներ: Կարելի է ենթադրել, որ հնում ամրոցի ներսում տեղակայված են եղել ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ շինություններ¹⁰:

Հրվանդանի հյուսիսային լանջին՝ ստորոտին մոտ, պահպանվել է ամրոցի գետնուղին: Այն մի մասն է պաշտպանական համալիրի, որով պաշարումների ժամանակ ջուր է բերվել: Փորված է ժայռի մեջ, գետնի մակերեսից մի քանի մետր խորությամբ: Գետնուղին տանում է դեպի բնական աղբյուրները¹¹: Նմանատիպ գետնուղիներ հայտնի են նաև Սևանի ավազանից, մասնավորապես Սևանի արևմտյան ափին գտնվող Բերդի գլուխ¹² և Հայրիվանի ամրոցներից¹³:

Բնակատեղին կազմված է ներքին ու արտաքին բնակավայրերից (աղ. 2, նկ. 1): Ներքին բնակավայրը ամրոցի ներսում է, կազմված է հիմնականում ուղղանկյուն (2,4x3 մ, 5,2x2,2 մ, 4,5x3 մ) և մեկ դեպքում՝ բազմանկյուն (75x7x3 մ) հատակագծով կառույցներից: Արտաքին բնակավայրը տարածվում է ամրոցից դուրս, հարավարևմտյան և հյուսիսարևմտյան լանջերին ու ստորոտին, որոշ կուտակումներ կան դեպի մուտք ընկած ճանապարհին: Այստեղ նկատվում են հիմնականում ուղղանկյուն (6x12 մ, 11x10 մ, 11x17 մ), բազմանկյուն (23x7x13 մ, 5x18x6 մ) և կլոր հատակագծով (չորամագիծը 12,2 մ, 15,3 մ), որոշ դեպքերում՝ բազմասենյակ կառույցների հիմնապատեր: Կացարանները պատկանում են ամրոցի ակտիվության հիմնական շրջանին¹⁴:

Ամրացված բնակավայրի տարածքից հավաքված վերգետնյա նյութերի մեջ գերակշռող մաս են կազմում Ք.ա II հազարամյակի վերջի և Ք.ա I հազարամյակի սկզբի, անտիկ շրջանի և միջնադարին վերաբերող խեցեղեն գտածոները¹⁵:

Օրգով 1 ամրացված բնակատեղին ունեցել է նաև իր պահակակետ ամրոցը (մեր համարակալումով՝ Օրգով 2), որի հսկողության տակ էին Արարատյան դաշտավայրից, մասնավորապես Վաղարշապատից դեպի Օրգով 1 և Արագած լեռան բարձրլեռնային գոտիներ ընթացող ճանապարհները: Օրգով 2-ը գտնվում է Օրգով 1-ից մոտ 1 կմ հարավ-արևմուտք, Աղծք-Օրգով ճանապարհից մոտ 450 մ ձախ Ամպառ գետակի ձախ ափին¹⁶ (աղ. 1):

¹⁰ Арешян 1978, 100.

¹¹ Арешян 1978, 100, Կիրակոսյան, Աղաջանյան 2013, 77:


¹² Միքայելյան 1968, 19:

¹³ Միքայելյան 1968, 22:


¹⁴ Арешян 1978, 99.

¹⁵ Арешян 1978, 99.


¹⁶ Հուշարձանն ընդգրկված է Հուշարձանների պետական ցուցակում [2002 թ. Արագածոտնի մարզ, Օրգով 2.114/2 (Ամրոց), ժամբարանադաշտ (նորահայտ); բնակավայր (նորահայտ)], Ք.ա II-I հազարամյակի ամրոց:



Աղ. 1. Օրգովի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի հնագիտական հուշարձանները
(հանույթը՝ Հ. Դանիելյանի)




Աղ. 2. նկ. 1. Օրգով 1 ամրացված բնակատեղիի տեղագրական հանույթը, **նկ. 2.** Օրգով 3 ամրացված բնակատեղիի տեղագրական հանույթը, **նկ. 3.** Օրգով 5 ամրացված բնակատեղիի տեղագրական հանույթը (հանույթները՝ Հ. Դանիելյանի)



Աղ. 3. նկ. 1 հատված Օրգով 1 պարսպաշարի կտրվածքից, **նկ. 2.** հատված Օրգով 2 պարսպաշարի կտրվածքից, **նկ. 3.** հատված Օրգով 1 պաշտպանական համակարգից, **նկ. 4.** Օրգով 4-ի տարածքից հայտնի երկրաչափական զարդանախշերով մենհիրը (չափագրությունները՝ Հ. Դանիելյանի)



Աղ. 4, նկ. 1. Օրգով 1 ամրացված բնակատեղին, **նկ. 2.** Օրգով 2 ամրոցը (լուսանկարները՝ Հ. Դանիելյանի)



Աղ. 5, նկ. 1. Օրգով 4 բլուրներից 2-ը, **նկ. 2.** Օրգով 4 բլուրներից առաջինի ժայռափոր ճանապարհը, **նկ. 3.** Օրգով 4 դամբարանադաշտը, **նկ. 4.** Օրգով 4-ի տարածքում ուղղանկյուն հատակագծով կառույցների հետքեր (լուսանկարները՝ Հ. Դանիելյանի)



Աղ. 6, նկ. 1. Օրգով 3 ամրացված բնակատեղին, **նկ. 2.** Օրգով 5 ամրացված բնակատեղին, **նկ. 3.** Օրգով 6 աշտարակատիպ կառույցը (լուսանկարները՝ Հ. Դանիելյանի)

Հրվանդանը (բ.ժ.մ.՝ 1565,9 մ) կազմված է հարթ կամ հարթեցված վերնամասից՝ օղակված թեք լանջերով: Գագաթի հարթ վերնամասը օղակված է ձվածիր (մոտ 0.1 հա) հատակագծով ամրոցով (աղ. 4, նկ. 2):

Ամրապարիսպները զուրկ են աշտարակներից և որմնահեցերից: Դրանք համեմատաբար լավ են պահպանվել արևմտյան և հարավարևմտյան կողմում: Արևելյան շրջապարիսպն ունի 1,5-2,0 մ հաստություն, որը շարված է իրար մոտ կիպ դրված երկերես պարսպաքարերով, միջին չափսի որձաքարե լիցքով: Համեմատաբար լավ պահպանված հատվածում ամրապարիսպների բարձրությունը մոտ 2,5 մ է (աղ. 3, նկ. 2): Քարերը շարված են մշակված ժայռաեղուստների վրա: Հյուսիսարևելյան և արևելյան հատվածներում հրվանդանի պարագծով ձգված պարիսպները պահպանվել են բավական վատ: Մուտքը հավանաբար եղել է ամրոցի հյուսիսարևմտյան կողմում:

Բնակավայրը տարածվում է ամրոցից դուրս՝ հյուսիսարևմտյան կողմում, նկատվում են հիմնականում ուղղանկյունաձև հատակագծով կառույցների հիմնապատերի ուրվագծեր: Դամբարանները տարածվում են հրվանդանի հյուսիսարևմտյան կողմում և հիմնականում ներկայացված են կրոմլեխներով ու դամբանաթմբերով:

Հնագիտական հուշարձանների երկրորդ հատվածը տարածվում է Օրգով գյուղից դեպի հյուսիս, Տիրինկատար ընթացող ճանապարհին: Այս տեղանքը բաղկացած է երկու հատվածից Օրգով 4 (Ղուռթ թափա/Գայլի բլուր) և Էրմանի դուռ¹⁷ միավորներից: Օրգով 4-ը սարահարթ է, որտեղ վեր են խոյանում ոչ շատ բարձր երեք քարքարոտ բլուրներ, որոնց շուրջը տարածվում են ինչպես դամբարաններ (կրոմլեխներ, դամբանաթմբեր և դոլմենատիպ շինություններ) (աղ. 5, նկ. 1)¹⁸, այնպես էլ բլուրների գագաթներին փորված «սրբազան» ժայռափոր ճանապարհներ (մոտ 2-3 մ լայնությամբ), որոնք ձգվում են ողջ բլրի գագաթով, որոնցով կարծես թե բլուրները կապվում են մեկը մյուսի հետ (աղ. 5, նկ. 2): Դամբարանները հիմնականում քարահողային դամբանաբլուրներ են, որոնց տրամագիծը հասնում է մինչև 15 մ (աղ. 5, նկ. 3)¹⁹:

Առանձնահատուկ տեղ է գրավում քարքարոտ բլուրներից առաջինը, որի լանջերին և հարթավայրում պահպանվել են կիկլոպյան չոր շարվածքով պատեր, որոնց գործառույթը բավական դժվար է հասկանալ: Օրգով 4 հնավայրի տարածում առկա է երկրաչափական զարդանախշ ունեցող մենաքար հիշեցնող կոթող [Ժամանակագրությունը դեռևս պարզ չէ] (աղ. 3, նկ. 4): Դրանից քիչ հեռու տեղակայված էր վիշապ քարակոթողը: Մեգալիթյան այս համալիրների շուրջը պահպանվել են բնակավայրերի հետքեր, որոնք հիմնականում ներկայացված են քարակուտակումների տեսքով²⁰, մի քանիսն ունեն ուղղանկյուն հատակագիծ (աղ. 5, նկ. 4): Բլուրների շրջակայքում

¹⁷ Քալանթար 1925, 214, 215, 218, 224:

¹⁸ Քալանթար 1925, 214, Արեշյան և այլք 1977, 91:

¹⁹ Սիմոնյան, Երանոսյան 1977, 54:

²⁰ Քալանթար 1925, 218:

գտնվող ուղղանկյուն հատակագծով մոտ 2 մ բարձրությամբ 10 աշտարակատիպ շինությունների պատերը շարված են միջին մեծության ճեղքված որձաքարից, մանր որձաքարի լիցքով²¹:

Օրգով 4-ից դեպի հյուսիս-արևմուտք՝ Տիրինկատար ընթացող ճանապարհին է տարածվում Էրմանի դուզ ցամաքած լիճը²², որտեղ գտնվում է հսկայական հեկտարներ գրավող դամբարանադաշտը՝ կրոնիկներ և դամբանաթմբեր: Էրմանի դուզ տեղանքի արևելյան սահմանին՝ Օրգով գյուղից 3 կմ հյուսիս՝ «Սպիտակ քարափի գլուխ» կոչվող տեղանքի «Կաթնով աղբյուր» լավային ծագմամբ անդեզիտաբազալտային ժայռոտ լեզվակին՝ Ամբերդի գետի կիրճի անմիջական եզրին է գտնվում Օրգով 3 ամրացված բնակատեղին²³: Հուշարձանախումբը զբաղեցնում է ավելի քան 0,75 հա մակերես (աղ. 6, նկ. 1):

Հրվանդանը (բ.ժ.մ.՝ 2023.5 մ) գրեթե անհաղթահարելի է՝ բացառությամբ հյուսիսային հատվածի: Ամրոցի հարավային, արևելյան և արևմտյան մասերում պաշտպանական գործառույթ են կատարում ուղղաձիգ լանջերը: Հյուսիսային կողմը ամրացված է հզոր պարսպաշարով: Ամրոցը զբաղեցնում է մոտ 0,13 հա տարածք (աղ. 2, նկ. 2):

Արտաքին բնակատեղին տարածվում է ամրոցից հյուսիս: Կացարաններն ունեն ուղղանկյուն տեսք (6x5,3 մ, 3,2x6 մ, 5,4x6,6 մ): Կառուցված են որձաքարից, ունեն փոքր քարերով երկերես շարվածք՝ մանր որձաքարի միջնալիցքով: Դամբարանադաշտը տարածվում է բնակավայրից դուրս՝ հյուսիսային կողմում:

Էրմանի դուզ տեղանքը ավարտվում է Օրգով 5 նորահայտ ամրոցով (աղ. 2, նկ. 3): Այն գտնվում է Օրգով գյուղից մոտ 5 կմ հյուսիս-արևմուտք, դեպի Տիրինկատար տանող ճանապարհին՝ ոչ բարձր անդեզիտաբազալտային ծագմամբ հրվանդանի գագաթին: Ամրապարիսպները գրեթե չեն պահպանվել, տեսանելի են միայն մշակված ժայռահիմքերը, պարիսպներից տեղ-տեղ մնացել է մեկ քար: Ամրոցի մակերեսը 0,20 հա է, հատակագիծը՝ կլոր: Դամբարանադաշտը և բնակատեղին քարհավաքի հետևանքով բավական ավերվել են (աղ. 6, նկ. 2):

Օրգով հուշարձանախմբի մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Օրգով գյուղից 4 կմ հյուսիս-արևելք՝ Տիրինկատար ընթացող ճանապարհին գտնվող Օրգով 6 նորահայտ տաճարական համալիրը (չափսերը՝ 21x17 մ) (աղ. 6, նկ. 3): Այն հարթավայրում վեր խոյացող միջին և մեծ քարերով կառուցված ձվաձև հատակագծով աշտարակատիպ կառույց է: Ցավոք, պահպանվել է թափված քարերի տեսքով: Տաճարի շուրջ տարածված հարյուրից ավելի դամբանաթմբերի տրամագիծը հասնում է մինչև 17 մ-ի:

²¹ Սիմոնյան, Երանոսյան 1977, 55:

²² Քալանթար 1925, 220:

²³ Ընդգրկված է Հուշարձանների պետական ցուցակում (2002 թ. Արագածոտնի մարզ, Օրգով 2.114/3 ամրոց «Կաքավաքեր», 2.114/3.1 դամբարանադաշտ), Ք.ա II-I հազարամյակի ամրոց:

Եզրակացություններ

Ի մի բերելով առկա տվյալները և այն քարտեզագրելով GIS համակարգով՝ պարզ է դառնում, որ Ք.ա. II-I հազարամյակներում Ամբերդի գետահովտում գտնվող Օրգովի հուշարձանախումբը ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի այն ծաղկուն գոտիներից մեկն էր, որտեղ դամբարանադաշտերի կուտակումը, ամրացված բնակավայրերի և ծիսական լանդշաֆտի առկայությունը վկայում են տարածքի բավական զարգացած լինելու մասին: Այս գոտու դիտարկումը ռեգիոնալ համատեքստում կարող է նոր որակ ապահովել բրոնզեդարյան, հատկապես, նախաուրարտական և ուրարտական շրջանների Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածների հնագույն պատմության լուսաբանման համար:

Գրականություն

- Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ., Սիմոնյան Հ., Տիրացյան Գ., Քալանթարյան Ա. 1977, Հնագիտական հետազոտություններ Հայկական ՍՍՀ Աշտարակի և Նաիրիի շրջաններում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 4, Երևան, էջ 77-92:
- Կիրակոսյան Լ., Աղաջանյան Ա. 2013, Ղազարավանի և Օրգովի ամրոց-բնակատեղիները (Պաշտպանական համակարգի և ճարտարապետության շուրջ), Հուշարձան տարեգիրք, Ը, Երևան, «Հուշարձան», էջ 71-82:
- Միքայելյան Գ. 1968, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 1, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 65 էջ, 80 աղ.:
- Սիմոնյան Հ., Երանոսյան Հ. 1977, Ամբերդի ավազանի պատմական հուշարձանները, Երևանի համալսարան, N 3 (29), Երևան, էջ 47-57:
- Քալանթար Ա. 1925, Քարե դարը Հայաստանում, Նորք, N 5-6, Երևան, Պետական հրատ., էջ 207-232:
- Аресян Г. 1978, Вопросы типологии населенных пунктов Армении позднего бронзового и раннего железного веков, Государственный музей искусства народов Востока, Научные сообщения, N X, Москва, с. 91-108.

ՕՐԳՈՎԻ ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԵՎ ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԵՐԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐԶԱՆԱԽՄԲԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ

Հենրիկ Դանիելյան

Ամփոփում

Օրգով հնագիտական հուշարձանախումբը գտնվում է Ամբերդի գետահովտում: Այստեղ առկա մեզայիթյան հուշարձանները ներկայացված են ինչպես «կիկլոպյան» ամրոցներով, այնպես էլ դամբարաններով, «սրբազան» ժայռափոր ճանապարհներով, վիշապ և մենաքար կոթողներով: Համալիրը կազմված է երկու հատվածից: Առաջինը գտնվում է ժամանակակից գյուղի արևմտյան եզրին խոյացող բարձրադիր հրվանդանի գագաթին, որտեղ ամրակայված Օրգով 1 ամրացված բնակատեղին ունեցել է իր պահակակետ ամրոցը՝ Օրգով 2-ը: Հուշարձանների երկրորդ հատվածը տարածվում է համանուն գյուղից հյուսիս՝ դեպի Տիրինկատար ընթացող ճանապարհին: Այս տեղանքը բաղկացած է երկու հատվածից՝ Օրգով 4 (Ղուռթ թափա/Գայլի

բլուր) և Էրմանի դուռ միավորներից: Օրգով 4-ը հարուստ է դամբարաններով, որոնց մեջ ուշադրություն է գրավում երկրաչափական զարդանախշերով մենաքարը, դրանից քիչ հեռու տեղակայված է վիշապ քարակոթողը: Օրգով 4-ից դեպի հյուսիս-արևմուտք, Տիրինկատար տանող ճանապարհին է գտնվում Էրմանի դուռ ցամաքած լիճը, որի եզրին է Օրգով 3 ամրացված բնակատեղին: Էրմանի դուռ տեղանքը եզրափակվում է Օրգով 5 նորահայտ ամրոցով: Օրգով հուշարձանախմբի մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Օրգով 6 նորահայտ տաճարական համալիրը, որը ձվաձիր հատակագծով աշտարակատիպ կառույց է:

Բանալի բառեր՝ Արագած լեռ, Օրգով, ուշ բրոնզի դար, վաղ երկաթի դար, ամրացված բնակատեղի, ամրոց-պահակակետ, աշտարակատիպ կառույց:

КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ ГРУППЫ ПАМЯТНИКОВ ОРГОВА В ПОЗДНЕМ БРОНЗОВОМ И РАННЕМ ЖЕЛЕЗНОМ ВЕКАХ

Генрих Даниелян

Резюме

Группы археологических памятников Оргов расположена в долине реки Амберд. Мегалитические памятники здесь представлены как «циклопическими» крепостями, так и могильниками, «священными», выдолбленными в скале дорогами, каменными стелами-вишапами и менгирами. Археологический комплекс Оргова состоит из двух частей. Первая часть находится на вершине высокого мыса, возвышающегося над западной окраиной современного одноименного села, где локализовано укрепленное поселение Оргов 1, имевшее свою сторожевую крепость Оргов 2. Вторая часть археологических памятников простирается на север от села Оргов в сторону Тиринкатар. Этот комплекс состоит из Оргов 4 (Кур тапа/Гайли блур (*Волчий холм*)) и Эрмани дуз. В местности Оргов 4 имеется множество могильников, в их границах расположен менгир с геометрическим орнаментом, неподалеку от которого стоял вишап. На северо-запад от Оргова 4, по направлению к Тиринкатару находится высохшее озеро Эрмани дуз, на краю которого расположено укрепленное поселение Оргов 3. В местности Эрмани дуз находится Оргов 5 – недавно обнаруженная крепость. В группе памятников Оргова особое место занимает нововыявленный храмовый комплекс Оргов 6. Он представляет собой башнеобразное сооружение, имеющее в плане овальную форму.

Ключевые слова – Гора Арагац, Оргов, поздний бронзовый век, ранний железный век, укрепленное поселение, сторожевая крепость, башнеобразное сооружение.

CULTURAL LANDSCAPE OF THE ORGOV ARCHAEOLOGICAL SITE CLUSTER DURING THE LATE BRONZE AND EARLY IRON AGES

Henrik Danielyan

Abstract

The Orgov cluster of archaeological sites is located in the Amberd River valley. Megalithic monuments here are represented by both "cyclopean" fortresses and burial grounds, "sacred" roads carved into the rock, vishaps and menhirs. The archaeological complex of Orgov consists of two parts. The first part is located on the top of a high cape, rising above the western outskirts of the modern village of the same name, where the fortified settlement of Orgov 1 is located, which had its own guard fortress Orgov 2. The second part of archaeological sites extends north from the village of Orgov towards Tirinkatar. This complex is formed by Orgov 4 (Kur Tapa / Gaili Blur (Wolf Hill)) and Ermani duz units. The area of Orgov 4 is rich in cemeteries, within their borders there is a menhir with a geometric ornament, not far from which there was a vishap. To the north-west of Orgov 4, towards Tirinkatar, there is a dried-up lake Ermani duz, on the edge of which there is a fortified settlement of Orgov 3. Orgov 5, a recently discovered fortress, ends the Ermani duz place. In the group of sites of Orgov, the recently discovered temple complex of Orgov 6 occupies a special place. It is a tower-like structure with an oval shape in plan.

Key words – Mount Aragats, Orgov, Late Bronze Age, Early Iron Age, fortified settlement, guarding fortress, tower-like structure.

**ԱՐՑԱԽ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԵՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ
ԽՈՍՈՒՅԹՈՒՄ ԱՆՏԵՍՎԱԾ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ**

Ալեքսանդր Մանասյան

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր

Երևանի պետական համալսարան

ՀՀ, Երևան, Աթոլյան 15

Էլ. հասցե՝ manasyan-a22@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 05.08.2022, գրախոսվել է 08.08.2022, ընդունվել է տպագրության 11.04.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.1-317

Ներածություն

2020 թ. 44-օրյա պատերազմում մենք պարտվել ենք: Փաստը դառն է, բայց այն ստիպված ենք ընդունել: Սակայն դրանով հարցը չի փակվում: Հակառակը՝ այն առաջադրում է խնդիրներ, որոնց ազնիվ պատասխանները միայն կարող են լույս սփռել պարտության՝ մեզնից եկող պատճառների (մեր վրիպումների ու սխալների) վրա, գնահատել ներկա կացությունը, հաղթահարել պարտության հետևանքները: Սրանք մեր առջև ծառացած կենսականորեն կարևոր խնդիրներ են, որ թվարկվեցին մի հերթականությամբ, որտեղ առանց նախորդի պատասխանն ունենալու չի կարելի լուծել հաջորդը: Կարևորագույնը այդ շարքում երրորդն է՝ պարտության հետևանքների հաղթահարման նախագծերի մշակումը, որն անհնար է առանց մեր թույլ տված սխալների և ներկա ճգնաժամի քաղաքական իմաստավորման: Նման ամեն մի փորձի հաջողություն պայմանավորված է ընտրված մեթոդաբանությամբ, որ կանխատրվում է բուն վերլուծությանը և երաշխավորում նրա ընթացքը դեպի ճշմարտություն:

2020 թ. 44-օրյա պատերազմում մեր պարտության պատճառների վերլուծությանն ու դրա հետևանքների հաղթահարմանը կանխատրվող դրույթներ

Խնդրո առարկա հարցում կարելի է առանձնացնել հետևյալ երեք կանխադրույթները:

Առաջին: 44-օրյա պատերազմը մենք տանուլ ենք տվել ազգովին, ամեն մեկս և բոլորս միասին¹: Զինվորից բացի, տանուլ են տվել բոլորը՝ նախորդ և ներկա իշխանությունները, բարձրագույն սպայական կազմը, դիվանագետները, քաղաքական ուժերը, Գիտությունների ազգային ակադեմիան և պե-

¹ Սա այն դրույթն է, որով ես սկսել եմ իմ ելույթը 2021 թ. նոյեմբերի 25-ին ՀՀ Ազգային ժողովի՝ Արցախյան հիմնախնդրին նվիրված լուսմաներում:

տական համալսարանը, մտավորականությունը, Սփյուռքը, օլիգարխները, որոնք դոլակներ կառուցելուց առաջ պետք է մտածեին պետական սահմանի ամրության մասին: Վերջապես, պարտվել են քաղաքագետներն ու վերլուծաբանները, որոնց թվում և ես: Միայն այսպիսի մոտեցմամբ է հնարավոր դուրս գալ փոխադարձ մեղադրանքների արատավոր շրջանից ու ֆեյսբուքային ժխտից, որում հայտնվել ենք, թոթափել քաղաքական կարծրատիպեր, ձեռք բերել սթափություն և մոտենլ հանրային լուրջ խոսույթի դաշտ՝ գտնելու համար հրատապ հարցերի ճշմարիտ պատասխանները:

Երկրորդ սկզբունքային դրույթը վերաբերում է միջազգային դաշտում մեր քաղաքական վարքին: Ակնհայտ է, որ կոնֆլիկտային բախումների գլխավոր բնագծերը անցնում են գերտերությունների միջով, որոնք և ձևավորում են ռազմաքաղաքական գլոբալ ուժադաշտը՝ դրա միաբևեռ, երկբևեռ կամ բազմաբևեռ լինելը: Գերտերություններն անմիջական բախման մեջ մտնում են ծայրահեղ դեպքերում, երբ սպառվում են հարաբերությունները պարզելու այլ միջոցներ: Մինչ այդ նրանք սովորաբար միմյանց հակադրվում են անուղղակի ձևով՝ երրորդ երկրներում ծագած կամ հենց իրենց հրահրած կոնֆլիկտներում: Արցախյան 44-օրյա պատերազմը և ռազմական բախումները Սիրիայում և Ուկրաինայում դրա ապացույցներն են: Աշխարհաքաղաքական սալերի միջակայքում գտնվող երկրներից դա հատուկ զգուշություն է պահանջում: Մենք գտնվում ենք Արևմուտք-Ռուսաստան ռազմաքաղաքական խզվածքներից մեկի վրա, և դա մեզ արգելում է կատարել անզգույշ քայլեր: ՀՀ երկրորդ նախագահի օրոք որդեգրված կոմպլեմենտարության (լրացության) արտաքին քաղաքական ուղեգիծը, որը մոռացության է տրվում, թերևս ամենից շատ էր համապատասխանում աշխարհի քաղաքական քարտեզի վրա եղած մեր դիրքին: Երրորդ նախագահի՝ այդ ուղղությամբ արած քայլերի շնորհիվ 2021 թ. մարտին ուժի մեջ մտավ ԵՄ-ի և ՀՀ-ի միջև *Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը*: ԵԱՏՄ-ի և ԱԴՀ-ի անդամ ՀՀ-ն ստացավ այդ հակընդդեմ կազմակերպություններին ինտեգրվելու հնարավորություն և դառնալու նրանց կապող օղակը, նրանց հնարավոր երկխոսության հարթակն ու խաղաղության խաչմերուկը: Նոր իշխանությունները, ինչպես երևում է, չեն գիտակցում այդ նախագծի քաղաքակրթական ներուժն ու հեռանկարները, և վերջին պատերազմում մեր պարտության վրա, ցավոք, շատերն են տեսնում այդ ուղեգծից շեղվելու ստվերը:

Վերջապես, *երրորդ* կարևոր դրույթը վերաբերում է մեր աչքի առաջ տեղի ունեցող աշխարհակարգի վերակազմավորմանը: Արդեն իսկ ակնհայտ է, որ աշխարհը գտնվում է անցումային մի շրջանում, երբ միջազգային իրավունքը կորցնում է գլոբալ գործընթացների կարգավորման՝ իրեն վերապահված, բայց վերջին տասնամյակներում անընդհատ թուլացող գործառույթը՝ տեղը զիջելով անսքող բիրտ ուժի գործոնին: Աշխարհը, թվում է, նահանջում է դեպի անդառնալի անցյալ համարվող մի շրջան, երբ չկար միջազգային իրավունք, և երբ պետություններն առանց բացատրությունների կարող էին սկսել ծավալապաշտական արշավանքներ:

Սրանք այն գաղափարներն են, որոնք անհնար է շրջանցել, երբ խոսքը մեր թույլ տված սխալների, մերօրյա ներքին ճգնաժամի ըմբռնման ու կրած պարտության հետևանքների հաղթահարման մասին է: Ստորև շարադրվող վերլուծությունը վերաբերում է թվարկված հարցերից առաջինին՝ Արցախյան հարցում մեր թույլ տված վրիպումներին ու սխալներին: Ինչ-որ իմաստով դրանք գուցե և անխուսափելի էին, քանի որ ԽՍՀՄ-ի իրավաքաղաքական ու գաղափարախոսական միջավայրում հայտնված Խորհրդային Հայաստանը չէր կարող ունենալ միջազգային հարաբերությունների ու գործընթացների բարդությանը համարժեք ազգային քաղաքագիտական միտք: Հետահայաց վերլուծությունը պարզ ցույց է տալիս, որ այդ պատճառով Ղարաբաղյան շարժման մեջ մենք մոտել ենք անպատրաստ: Ժողովրդի արդար պոռթկումը 1988-ին համարժեք քաղաքագիտական ապահովում չունեին ու հետագայում այդպես էլ չստացավ: Հրապարակ նետվող և զանգվածային գիտակցության մեջ ներդրվող կարգախոսների մեծ մասը անմշակ և հաճախ ուղղակի սխալ էին՝ պատմական ու իրավական հայտնի փաստերն անտեսելու կամ դրանց քաղաքական իմաստները չըմբռնելու պատճառով: Տասնամյակների հեռավորությունից թվում է՝ դրանք մնացել են անցյալում և արդեն կորցրել են հրատապությունը: Ավա՛ղ: Դրանց մի զգալի մասը դաջված է մնում մեր ազգային գիտակցության մեջ և այսօր էլ պայմանավորում է մեր քաղաքական մտածելակերպն ու վարքը: Կոնֆլիկտի՝ իր առարկային ու բնույթին համարժեք իմաստավորումը և տեքստի (ասել է, թե՛ տեղեկատվության) ձևով այն միջազգային հանրությանը ներկայացնելը նրբին, քաղաքական ճշգրտություն ու դիվանագիտական բարձր արվեստ պահանջող խնդիր է: Այն ենթադրում է, թե պետք է հաշվի առնել, որ օգտագործվող բոլոր «եզրույթները զգայուն են» (իր ելույթներից մեկում Ղարաբաղյան հակամարտության մասին վերջերս հենց այդպես է արտահայտվել է ԵՄ նախագահ Ժոզեֆ Բորելը): Եթե խնդիրը արդեն իսկ եզրույթների/բառերի մակարդակով է պահանջում բարձրարվեստ դիվանագիտություն, ապա կարելի է պատկերացնել, թե ինչ ճշգրտություն են ենթադրում արտաքին քաղաքական ուղեգիծը ներկայացնող բանաձևերն ու տեքստերը: Ցավոք, մեր փորձագետներից ու արտաքին քաղաքականության համար պատասխանատուներից շատերը դրանցում բառախաղեր էին/են տեսնում՝ չգիտակցելով, որ բարձր դիվանագիտության մեջ հնչեցված ամեն բառի ու բանաձևի մեջ հայեցակարգ ու դիրքորոշում են դրված: Տեղեկատվությունն այն զգեստն է, որում ներկայանում է քաղաքականությունը: Կոնֆլիկտի էության ու բնույթի մասին մեր արտաբերած անհայանպաստ ամեն մի բառ ու բանաձև խնդրի սխալ ըմբռնման դրսևորում է, որն ի վերջո առարկայանում է արտաքին քաղաքական մեր իսկ որդեգրած ոչ հայանպաստ քայլերում: Արձանագրել է պետք, որ Արցախյան հարցում մեր պաշտոնական ըմբռնումներն ու տարվող քաղաքականությունը ներկայացնող տեքստերն ու հայտարարությունները լի են խնդրի քաղաքական, դիվանագիտական, պատմական ու իրավական էությունը խեղող բանաձևերով:

Դրանց վերլուծությունը մեծածավալ հետազոտության նյութ է: Ստորև կանդորադառնանք դրանցից մի քանիսին:

Վրիպում, որ վկայում է Արցախի աշխարհագրությունից մեր թույլ գիտելիքների մասին

Ձևակերպման մեջ «մերը», հասկանալի է, վերաբերում է Ղարաբաղյան հիմնախնդիրը աշխարհին ներկայացնելու մեր պատասխանատուներին, որոնք հենց սկզբից սայթաքեցին, ինչպես ընդունված է ասել, հարթ տեղում՝ չընդդիմանալով *Լեռնային Ղարաբաղ* աշխարհագրական տարածքը ԼՂԻՄ վարչաքաղաքական միավորի հետ նույնացնելու՝ Բաքվից մատուցված գաղափարին: Տասնամյակներ շարունակ մենք չէինք հերքում կամ գոնե չէինք վիճարկում լայն շրջանառության մեջ գտնվող «*Լեռնային Ղարաբաղի շուրջ գրավյալ² տարածքներ*» բանաձևն այն դեպքում, երբ մեր ազատագրած հողերը ոչ թե Լեռնային Ղարաբաղի շուրջ, այլ հենց աշխարհագրական Լեռնային Ղարաբաղում էին, այն հողերում, որ 1920-ական թվականներին ապօրինաբար դուրս էին թողնվել մարզի սահմաններից³: Պարտաճանաչ աշակերտի պես մենք կրկնում էինք «Լեռնային Ղարաբաղի շուրջ» բառակապակցությունը և փորձում շտկել այն «*գրավյալ տարածքները՝ անվտանգության գոտի*» բանաձևով, որը բովանդակայնորեն ավելի վտանգավոր էր, քանի որ ջնջում էր այդ տարածքների նկատմամբ մեր իրավունքները: Ազատագրել կարելի է միայն սեփական տարածքը և այն չի կարելի որակել որպես *անվտանգության գոտի*, որով ենթադրվում է, որ այն իրավունքով ուրիշի տարածք է: Անկասկած, մեր պատասխանատուների աշխարհագրական թույլ գիտելիքներից չէր բխում Բաքվի հրամցրած «Լեռնային Ղարաբաղի շուրջ» չարաբաստիկ ձևակերպման կողքով անտարբեր անցնելը կամ դրա մեջ բառախաղեր տեսնելը: Գլխավոր պատճառը պետք է տեսնել մեր քաղաքական գիտակցության մեջ տասնամյակներով արմատներ ձգած այն կարծրատիպում, որ Լեռնային Ղարաբաղը հենց ԼՂԻՄ-ն է, և ԼՂԻՄ-ն էլ հենց Լեռնային Ղարաբաղն է: Անհարմար է ասել, բայց մինչև օրս էլ շատերը, այդ թվում՝ քաղաքական գործիչները, այդպես են մտածում: Օրինական հարց է ծագում՝ մենք ի՞նչ կարող էինք պահանջել միջնորդներից, երբ ինքներս էինք մեր ազատագրած տարածքները «գրավյալ տարածք» կամ «անվտանգության գոտի» անվանում:

² Լավագույն դեպքում մենք դա փոխարինում էինք *Լեռնային Ղարաբաղի շուրջ ազատագրված տարածքներ* բառակապակցությամբ:

³ Դա բխում է նույնիսկ մեզ համար ամենաաննպաստ փաստաթղթից՝ Կովբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումից, որով լայն մարզային ինքնավարություն պետք է տրվեր ողջ Լեռնային Ղարաբաղին, այլ ոչ թե նրա մի մասին, ինչպես դա, ի խախտումն հենց Կովբյուրոյի որոշման, արվեց 1923 թ. հուլիսի 7-ի Ադրիեդկոմի դեկրետով՝ մարզի սահմաններից դուրս թողնելով հենց այն տարածքները, որ ԼՂՀ-ի Պաշտպանության բանակը ազատագրել է 1991-1994 թթ.: Այստեղ մի կողմ ենք թողնում Կովբյուրոյի որոշման օրինականության հարցը, որով հենց ողջ Լեռնային Ղարաբաղն է բռնությամբ օտարվել Խորհրդային Հայաստանից:

Վրիպում, որ վկայում էր պատմությունից մեր անգրագիտության մասին

Հարցն աշխարհին ճիշտ ներկայացնելու կարևորության նույն անգիտության մեծ կոնֆլիկտի սկիզբ հռչակեցինք 1988 թ. փետրվարը, երբ պատմությանը քիչ թե շատ ծանոթ ամեն ոք գիտե, որ նրա սկիզբը 1918 թվականն է, երբ թուրքական բանակի հիմնած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը նախ թուրքերի, իսկ հետո նաև տարածաշրջան մտած անգլիացիների օգնությամբ փորձել է իրեն ենթարկել Արցախը, բայց բախվել է նրա զինված դիմադրությանը: 1918-ի հոկտեմբերին արցախցիների կողմից Մամնայի մոտ թուրքական զորագնդի ջախջախումը այդ դիմադրության փառավոր դրսևորումն էր: Այնպես որ Բաքուն ստիպված է տվել իր համաձայնությունը վեճը Խաղաղության փարիզյան վեհաժողովի քննությանը հանձնելուն և 1919 թ. օգոստոսին այդ մասին Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների VII համագումարի հետ ժամանակավոր համաձայնագիր կնքելուն⁴: Կոնֆլիկտի սկիզբը տեղափոխելով 1988-ի փետրվար, որ իրականում բաց բախումների տեսքով նրա **վերսկսման** տարեթիվն է, մենք թե՛ տեղեկատվական շրջանառությունից, թե՛ բանակցային խոսույթից դուրս թողեցինք ու մինչև օրս շարունակում ենք դուրս թողնել խնդրի իրական պատմությունը՝ մեր իսկ մասնակցությունը բերելով դրա կերպարի խեղմանը⁵: Ցավոք, 1988-ից տասնամյակներ անց փորձագետների ու արտաքին քաղաքականության համար մեր պատասխանատուների զգալի մասը այս հարցում համառությամբ 1988-ն է համարում Ադրբեջան-Արցախ կոնֆլիկտի սկիզբը: Իմանալ է պետք, թե այլ կոնֆլիկտների դեպքում կողմերը ինչ նշանակություն են տալիս հարցին, և ինչ կատաղի վեճեր են ծավալվում դրա շուրջ: Իմանալ է պետք, բայց չգիտեինք: Իսկ հիմա գիտե՞նք:

Անգիտություն փախստականության հարցում

Նույն անփութությամբ տարիներ շարունակ օգտագործել և այժմ էլ օգտագործում ենք *ադրբեջանցի փախստականներ* եզրույթը, երբ փախստական ադրբեջանցի, որպես այդպիսին, չկա: Հայտնի է, որ ՀԽՍՀ-ի ադրբեջանցիների մեծ մասը սումգայիթյան դեպքերից հետո շահեկան բնակարանափոխությամբ է թողել Հայաստանը, իսկ մյուս մասը Ադրբեջան է մեկնել Սպիտակի երկրաշարժից հետո՝ փոխհատուցում ստանալով բնական տարերքով

⁴ Нагорный Карабах в международном праве и мировой политике 2008, 364-366.

⁵ ԵԱՀԿ-ն և նրա հիմնած Մինսկի խումբը, բնական է, դեմ չէին 1988-ը հակամարտության սկիզբ համարելու, քանի որ նրանց ձեռնադր էր հնարավորինս բեռնաթափել հիմնախնդիրը իրավական ու պատմական «մանրամասներից»: Բաքուն նույնիսկ դրան էր դեմ: Ղարաբաղյան հիմնախնդրին նվիրված Դարսմուտյան խորհրդատուական Ադրբեջանական Հանրապետության նախկին արտգործնախարար Թոֆիկ Ջուֆուզարովը փորձում էր հակամարտության սկիզբը տեղափոխել 1992 թվական, երբ, ինչպես ինքն էր ասում, «հայերը գրավել են Շուշին»: Նպատակը պարզ էր՝ բանակցային քննարկումներից դուրս թողնել դարասկզբի իրադարձությունները, սումգայիթյան ցեղասպանությունը և որպես դրա շարունակություն՝ ողջ հանրապետությունում հայերի դեմ իրագործած եղեռնագործությունները, վերջապես անտեսել 1991-ին ԼՂՀ-ի հռչակման օրինականության հետ կապված հարցերը:

ավերված տների համար: Նրանք, ինչպես ընդունված է ասել, փախստական չեն ըստ սահմանման, քանի որ փախստականը, միջազգային իրավունքի համաձայն, այն **խաղաղ բնակիչն է, որն իր կյանքին սպառնացող վտանգի պատճառով լքում է իր քաղաքացիության երկիրը** և հայտնվում օտարության մեջ: Ո՛չ ԼՂԻՄ-ը, ո՛չ էլ Լեռնային Ղարաբաղի մարզի հարակից տարածքները թողած ադրբեջանցիները չեն կարող համարվել փախստականներ, քանի որ նրանք խաղաղ բնակիչներ չեն՝ Արցախի դեմ սանձազերծած պատերազմին և նրա շրջափակմանը զանգվածաբար մասնակցելու փաստի ուժով: Բացի դրանից, Արցախից հեռանալուց հետո նրանք ապրել են Ադրբեջանական Հանրապետությունում, որը համարել են իրենց քաղաքացիության երկիրը: Ղարաբաղյան հակամարտության համատեքստում ադրբեջանցի փախստական չի եղել ու չկա: Նրանք բոլորը Բաքվի իսկ սանձազերծած պատերազմի մասնակիցներ և այդ պատերազմի հետևանքով իրենց բնակության վայրը փոխած (ուրեմն՝ **տեղափոխված**) մարդիկ են:

Ի դեպ, միջնորդները, նկատելով մեր կրավորական դիրքորոշումը փախստականության հարցում, իրենց առաջարկություններում «փախստական» և «տեղափոխված անձինք» եզրույթներն օգտագործում էին այնպիսի անորոշությամբ, որ պարզ չլինի, թե ում մասին է խոսքը: Դրանում համոզվելու համար բավական է այդ փաստաթղթերը ուղղակի աչքի անցկացնել, որովհետև այդ փաստը նկատելի է անգամ անզեն աչքով: Ավելին՝ թե՛ հակամարտության մասին հրապարակային խոսույթում, թե՛ առաջարկությունների տեքստերում ակնարկ անգամ չկա ողջ Արևելյան Անդրկովկասից զանգվածային ջարդերով, ըստ էության, ցեղասպանական ակտերով դուրս մղված և աշխարհով մեկ սփռված հայերի մասին, որոնք, միջազգային իրավունքի համաձայն, իրապես փախստականներ էին: Միջազգային կազմակերպությունները հայկական իշխանություններին հորդորում էին ինտեգրել Հայաստանի Հանրապետությունում հանգրվանած այդ մարդկանց⁶ և աչք էին փակում այն իրողության վրա, որ Բաքուն հատուկ վրանային բնակավայրեր էր սարքել պատերազմի պատճառով տեղափոխված անձանց փախստական ներկայացնելու համար: Միջազգային իրավունքից քիչ թե շատ տեղեկացված ցանկացած փորձագետի համար անվիճելի էր, որ Ղարաբաղյան հակամարտության համատեքստում կան միայն հայ փախստականներ: Բայց մեր դիվանագիտությունը այս ակնհայտ փաստին հասու չեղավ և ոչինչ չարեց, որ Մինսկի խմբից ներկայացվող փաստաթղթերում այն ինչ-որ կերպ արտացոլվի, որ նրա ներկայացրած տեքստերում «փախստական» ու «տեղափոխված անձինք» հասկացություններն օգտագործվեն հասցեական: Որպես ԼՂՀ փորձագետ՝ ինքս 2005 թ. մասնակցել եմ Մինսկի խմբի շրջանակում տարվող բանակցություններին և վստահաբար կարող եմ պնդել, որ դա հնարավոր էր

⁶ Оксана Мусаелян. Беженцы из Азербайджана как новый вид граждан-изгоев в Армении <https://hetq.am/ru/article/89271>

անել: Բայց դրա համար փաստական նյութին տիրապետել էր պետք, և հարկ էր բարձր դիվանագիտությամբ դրանք ներբերել բանակցային խոսույթ: Չարեցինք: Չկարողացանք անել, և դա արտացոլվեց նաև զանգվածային լրատվության մեր միջոցներում, որոնցում լրագրողներն ու հարցի նրբություններին անհաղորդ փորձագետները, ականջի ծայրով լսելով, որ պետք է խուսափել Արցախից ու Հայաստանից դուրս եկած ադրբեջանցիներին որպես փախստականներ որակելուց, «տեղափոխված ադրբեջանցիների» փոխարեն մամուլը լցնում էին «տեղահանված ադրբեջանցիներ» բառակապակցությամբ՝ չիմանալով, որ դրանով իսկ իրենք դրանց դարձնում են փախստական, քանի որ տեղահանությունը ենթադրում է բռնության կիրառում: Բաքվում նման բան հնարավոր չէր/չէ, քանի որ այնտեղ այդ հարցում կար ու հիմա էլ կա պետական դիրքորոշում ու նաև ներսում տարվող քաղաքականություն, որի հետևանքով տեղեկատվական դաշտում գործող փորձագետների ու լրագրողների լեզուն չէր տարբերվում պաշտոնատար անձանց լեզվից: Մեզ մոտ ամեն մեկը ասում էր իր խելքի կտրածը, երբ մեզ շատ հարցերում սովորական գրագիտության վրա հենված միակարծություն էր պետք:

Բիշքեկյան կոպիտ սխալը

Վերը նշված մեր վրիպումները չափազանց հասարակ, չափազանց պարզ հարցերում էին թույլ տրվել: Բավական էր, օրինակ, բացել աշխարհագրության դասագիրքը կամ ուղղակի նայել քարտեզին կամ վերջապես ուշադիր կարդալ 20-ական թվականների փաստաթղթերը՝ հասկանալու համար, որ ԼՂԻՄ-ը աշխարհագրական Լեռնային Ղարաբաղի մի մասն է միայն, և որ Քարվաճաղը, օրինակ, Լեռնային Ղարաբաղ է, և մենք Լեռնային Ղարաբաղի շուրջը եղած տարածքներ չենք գրավել: Հայ ժողովրդի պատմության ցանկացած ուսուցիչ կարող էր հուշել, որ Ղարաբաղյան հակամարտության սկիզբը 1918 թվականն է, այլ ոչ թե 1988-ը: Վերջապես, միջազգային իրավունքի ցանկացած մասնագետ կարող էր հուշել, որ Շուշիից ու Աղդամից Ստեփանակերտը հրետակոծող կամ ԼՂԻՄ-ի շրջափակմանը զանգվածաբար մասնակցող Բերձորի (Լաչինի), Վարանդայի (Ֆիզուլիի) կամ Քարվաճաղի ադրբեջանցիները չեն կարող փախստականներ համարվել: Հասկանալի է դառնում, որ մեր արտաքին քաղաքականության համար նման պարզ հարցերում վրիպող մեր պատասխանատուները փոքր-ինչ ավելի գիտելիք պահանջող հարցերում հեշտությամբ կարող էին սայթաքել: Այդ կարգի մեկ սխալ չէ, որ մենք թույլ ենք տվել: Դրանք շատ են, բայց դրանց մեջ առանձնանում է 1994 թ. մայիսին բիշքեկյան փաստաթղթի տակ իր ստորագրությունը դնելու ՀՀ իշխանության համաձայնությունը, որի հետևանքները զգում ենք ցայսօր: Մինչև բիշքեկյան ակտը միջազգային հանրությունն ուներ հիմնավոր համոզմունք, որ ՀՀ-ն հակամարտության կողմ չէ, և ըմբռնումով էր ընդունում Արցախի հարցում նրա դիրքորոշումը: Պատահական չէ, որ 1993 թ. ԼՂՀ պաշտպանության բանակի կողմից Քարվաճաղը վերցնելու մասին ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1993 թ. ապրիլի 6-ին ընդունած թիվ 822

բանաձևում ընդգծվում էր *տեղական ուժեր* եզրույթը⁷, իսկ նույն տարվա նոյեմբերի 12-ի բանաձևում⁸ ՀՀ իշխանություններին կոչ էր արվում օգտագործել իրենց ազդեցությունը ԼՂՀ իշխանությունների վրա, որպեսզի վերջիններս կատարեն ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշումները: Եվ այսպես, միջազգային հանրությունն ընդունում էր, որ ՀՀ-ն կոնֆլիկտի կողմ չէ, և ըստ այդմ էլ Ռուսաստանի Դաշնությունից Մինսկի խմբի համաձայնագրի վրա Կազմիրովը հրադադարի մասին փաստաթուղթը կազմել էր Ստեփանակերտին և Բաքվին ներկայացնելու համար: ՀՀ-ն փաստաթղթին միացել և այն ստորագրել է Հեյդար Ալիևի խնդրանքով⁹: Գիտակցել են արդյոք Երևանում, որ Ալիևին հաճոյանալու այդ քայլով ՀՀ-ն դառնում է հակամարտության կողմ: Դժվար է ասել: Բայց դրանից շատ չանցած՝ հակամարտության մասին Բաքվի բառամթերքը և բանակցային վարքը կտրուկ փոխվեցին: Նա ստացել էր ԼՂՀ-ի հետ բանակցելուց հրաժարվելու և Հայաստանը՝ որպես իր տարածքների զավթիչ ներկայացնելու հնարավորություն: Բաքուն հրաժարվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում բանակցել ԼՂՀ-ի հետ, երբ արդեն ՀՀ առաջին նախագահը պաշտոնանկ էր արվել, և իշխանության դեկը անցել էր Ռոբերտ Քոչարյանին: Առաջին նախագահը և իրեն սատարող կուսակցությունը՝ ՀՀԾ-ն, շտապեցին խնդիրը ներկայացնել այնպես, կարծես թե Արցախը բանակցային գործընթացից դուրս է մղված Ռոբերտ Քոչարյանի մեղքով՝ դրանով քողաձածկելով իրական սայթաքումը՝ Բիշքեկում հակամարտության կողմ դառնալու անհեռատես քայլը: Սակայն սեփական սխալը ուրիշի վրա բարդելով՝ խնդիրը չէր սպառվում: Կար ավելի նուրբ հարց, որ երկրորդ նախագահն ու նոր քաղաքական ընտրախավը չնկատեցին: Բաքվի կողմից ԼՂՀ-ի հետ բանակցային նույն սեղանի շուրջ նստելուց հրաժարվելը բնավ չէր նշանակում, որ Ստեփանակերտը դուրս է մղված բանակցային գործընթացից: Բաքուն բանակցային գործընթացի՝ Մինսկի խմբի ձևաչափի սահմանողը չէր և չէր կարող լինել: Նա կարող էր ԵԱՀԿ-ի կողմից առաջարկվող այդ հարթակն ընդունելի կամ անընդունելի համարել իր համար¹⁰, կարող էր կոնֆլիկտի կողմերին առաջարկել նոր ձևաչափ, բայց չէր կարող չեղարկել հակամարտությունների կարգավորման բանակցային հարթակներ ստեղծելու և դրանցում կոնֆլիկտի կողմեր ճանաչելու ԵԱՀԿ-ի որոշումները: Մինսկի

⁷ Организация Объединенных Наций. Резолюция Совета Безопасности 822 (1993 г.) S/RES/822, <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N93/247/73/PDF/N9324773.pdf?OpenElement>

⁸ Организация Объединенных Наций. Резолюция Совета Безопасности 884 (1993 г.) S/RES/884, <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N93/631/22/PDF/N9363122.pdf?OpenElement>

⁹ Հրադադարի փաստաթուղթը նախապատրաստող Վլ. Կազմիրովի վկայությունն այդ մասին տե՛ս, <https://www.youtube.com/watch?v=FFDILPQ4ALA>, <http://www.un.org/russian/document/scresol/res1993/res874.htm>

¹⁰ Բաքվում 2022 թ. հուլիսի 16-18 թթ. կայացած «Սպառնալիքներ գլոբալ աշխարհակարգին» միջազգային համաժողովում Իլհամ Ալիևը, անարդյունավետ որակելով Մինսկի խմբի 28 տարվա գործունեությունը, հայտարարեց, որ Ադրբեյջանը ինքնուրույն լուծել է Դարաբաղյան հիմնախնդիրը, որ Մինսկի խումբը այլևս գոյություն չունի, ինչն անիմաստ է դարձնում ԵԱՀԿ-ի կազմավորած այդ հարթակի գոյությունը, որին պետք է ասել «Մնաս բարով»: Պաշտոնական Երևանը կողմնակից է Մինսկի խմբի գործունեության վերսկսմանը, որի ճակատագիրը կախված է այն բանից, թե Եվրոպան կենթարկվի՞ արդյոք Բաքվի ճնշմանը:

խմբի ձևաչափը սահմանված էր ԵԱՀԿ-ի կողմից, որը 1993-ին Ստեփանակերտին և ոչ թե Երևանին էր դիտարկում որպես հակամարտության կողմ: Բայց Բիշքեկում և դրան հաջորդած տարիներին Բաքուն պարզ քայլերով Հայաստանի Հանրապետությանը դարձրեց կոնֆլիկտի կողմ և տարիների ընթացքում համապատասխան դիվանագիտական և տեղեկատվական գործունեությամբ հասավ այն բանին, որ պատերազմի այդ պատկերացումը կայունանա միջազգային հանրության մեջ: 2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում ադրբեջանական զինված ուժերի կողմից ինքնիշխան Հայաստանի Հանրապետության տարածք մտնելը Բաքուն փորձում է արդարացնել հենց այն փաստարկով, որ հակամարտության միակ իրական կողմը Հայաստանի Հանրապետությունն է: Ահա թե ինչ գին ունեցավ Բիշքեկում հրադարարի վերաբերյալ փաստաթղթի տակ առանց որևէ վերապահումի ՀՀ-ի անունից դրված ստորագրությունը:

Թերըմբոնում Արցախի ինքնորոշման իրավունքի հարցում

Նախ որոշ դիտարկումներ ժամանակակից պետականակենտրոն աշխարհակարգում ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի շուրջ ձևավորված իրողությունների մասին: Այդ իրավունքը միջազգային հիմնարար փաստաթղթերում ամրագրված իրավական նորմ է, որը պետություններին պարտավորեցնում է աջակցել ինքնորոշման համար պայքարող ժողովուրդներին¹¹: Տարընթերցումներ բացառող հստակությամբ այն ամրագրված է 1974 թ. հոկտեմբերին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընդունած՝ *Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն՝ պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում*: Բայց այդ փաստաթղթերն ընդունած միջազգային հարաբերությունների գլխավոր սուբյեկտների՝ պետությունների վերաբերմունքը իրավական այդ նորմի նկատմամբ միանշանակ չէ: Սովորաբար նրանք բաց տեքստով չեն հերքում ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավական նորմի հիմնարար բնույթը և հրապարակավ ընդունում են սեփական ճակատագիրը տնօրինելու և իրենց հիմնած պետական կազմավորման քաղաքական ու տնտեսական կարգը ինքնուրույն որոշելու նրանց անկապտելի իրավունքը: Սակայն հարցը

¹¹ Հռչակագրում ասված է. «Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ ամրագրված՝ ժողովուրդների հավասար իրավունքների և ինքնորոշման սկզբունքի ուժով, բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատորեն, առանց արտաքին միջամտության որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը և հետամուտ լինելու իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը, և յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այս իրավունքը՝ համաձայն Կանոնադրության դրույթների: Յուրաքանչյուր պետություն պարտավոր է համատեղ և անհատական գործողությունների միջոցով նպաստել ժողովուրդների հավասար իրավունքների և ինքնորոշման սկզբունքի իրագործմանը՝ համաձայն Կանոնադրության դրույթների, և աջակցել Միավորված ազգերի կազմակերպությանը իրեն Կանոնադրությամբ վերապահված պարտականությունների կատարման գործում՝ կապված այս սկզբունքի իրականացման հետ...», տե՛ս Declaration on the Principles of International Law Concerning Friendly Relations and Cooperation among States in Accordance with the Charter of the United Nations <https://digitallibrary.un.org/record/202170?ln=ru>

հրապարակային հայտարարություններով չի սպառվում: Բանն այն է, որ ինքնորոշման սկզբունքը իր բնույթով երկսայր է: Նրա մեջ ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի հետ միաժամանակ ներդրված է բազմազգ պետությունների տրոհման իրավական հնարավորության գաղափարը: Այստեղից էլ բացատրելի է դառնում պետությունների (հատկապես բազմազգ պետությունների) վարքը միջազգային իրավական այդ նորմի գործնական կիրառության հարցում: Նրանք, եթե ազատ արտահայտվենք, չեն սիրում այդ սկզբունքը և վճռականորեն չեն հանդուրժում դրա գործադրումը իրենց նկատմամբ: Բայց նույն վճռականությամբ նրանք կարող են հանդես գալ ինքնորոշման իրավական նորմի գործադրման օգտին, եթե խոսքը մի այլ պետության մասին է, որի տրոհումը կամ վերամիավորումը իրենց ձեռնտու է, ինչպես դա եղավ Հարավսլավիայի, ԽՍՀՄ-ի կամ Գերմանիայի դեպքում: Հասկանալի է դառնում, թե ինչու մոլորակի գերտերությունները, որ սովորաբար բազմազգ են լինում, իրավական այդ նորմը դարձրել են քաղաքական գործիք և, հակառակ ինքնորոշման ձգտումներում ժողովուրդներին պաշտպանելու ստանձնած հանձնառությանը, նորանկախ պետություններին ճանաչում են ընտրողաբար՝ քաղաքական նպատակահարմարության իրենց չափանիշներով: Միջազգային իրավունքի խախտումներով անկախության հայտ ներկայացնող կազմավորումը (օրինակ՝ Ադրբեյջանը կամ Կոսովոն) կարող է արժանանալ խոշորների բարեհաճությանը, իսկ այդ իրավունքին բժախնդիր հետևողը և իր իրավունքը ռազմի դաշտում պաշտպանողը (օրինակ՝ Արցախը)՝ ոչ: Բայց, դրանով հանդերձ, գերտերությունները ամեն կերպ աշխատում են ներկայանալ որպես միջազգային իրավունքի պահապաններ և սովորաբար որպես իրենց իրավական բարեվարքության ապահովման գործիքներ են օգտագործում միջազգային իրավունքի բաց տեղերը, իրավական սկզբունքների ճշմարտանման, բայց ոչ ճշմարիտ մեկնաբանությունները, որ հաճախ դժվար է լինում նկատել նրանց հայտարարություններում կամ ներկայացրած փաստաթղթերում:

Արցախի հարցում նման հնարախաղեր կիրառվեցին ԵԱՀԿ-ի շրջանակում տարվող բանակցություններում: Մեզ համար դրանցից ամենավտանգավորը հենց ինքնորոշման հարցում մեր դեմ լարած թակարդն էր, որի մեջ մենք ընկանք և որից դուրս գալու միտք ցայժմ չունենք: Բայց ամեն ինչի մասին հերթով: Հենց սկզբից մենք որդեգրել էինք, թվում էր, ճիշտ այն դիրքորոշումը, որ ՀՀ-ի պայքարը միջազգային հարթակներում տարվում է հանուն Լեռնային Ղարաբաղի (Արցախի) ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման: Իշխանությունները բազմաթիվ առիթներով հանրությանը վստահեցնում էին, որ խնդիրը ինքնորոշման իրավունքի դաշտ տեղափոխելը ամենից իրատեսական ու հեռանկարային մոտեցումն է: Առաջին հայացքից ամեն ինչ մտածված էր թվում: Բայց դա՝ միայն առաջին հայացքից: Խորքային վերլուծությունը բացահայտում է, որ, արդեն սկսած 1991-ից, մենք չըմբռնեցինք Արևմուտքի կողմից խնդիրը աշխարհաքաղաքական նպատակներով օգտագործելու ծրագրերը և չունեցանք դրանց հակադարձելու համարժեք տեսա-

կան պատրաստականություն և փորձառություն¹²։ Ո՛չ 1988-ին, ո՛չ էլ հետագայում մեզ համար չպարզեցինք, թե ինչու 1988 թ. սեպտեմբերին Եվրախորհրդարանի հատուկ բանաձևով¹³ «Խորհրդային Սոցիալիստական Հայաստանի հետ վերամիավորվելու հայ փոքրամասնության պահանջը» պաշտպանող Եվրոպան 1991-ին մոռացավ իր այդ դիրքորոշումը և որոշեց Ադրբեջանական Հանրապետությունը ճանաչել Լեռնային Ղարաբաղով հանդերձ, երբ Բաքվի ձեռքերին դեռ չէր չորացել ցեղասպանական վայրագությունների արյունը։ Արևմուտքը ԼՂՀ-ն չճանաչեց նույնիսկ այն բանից հետո, երբ Արցախը իր անկախությունը պաշտպանեց ռազմի դաշտում։ Նրա վարքը դարաբաղյան հարցում պարզ էր, ուղղակի մեզ պետք էր այն ճիշտ հասկանալ։ 1988-ին նա մեզ խրախուսում էր թեժ պահել Ղարաբաղյան շարժման կրակը ԽՍՀՄ-ի կազմաքանդման գործընթացը շարունակելու համար, իսկ 1991-ի դեկտեմբերին, այդ գործընթացի վերջնագծում, երբ տարածաշրջանում ձեռնարկում էր նոր մեծ խաղեր, մեր կարիքն արդեն չուներ։ Հատկապես հակառուսական իր ծրագրերում Անդրկովկասը նրան պետք էր որպես հնարավոր լարվածության օջախ, որ կարող էր օգտագործել ըստ անհրաժեշտության ու նպատակահարմարության։ Սակայն նկատել է պետք, որ ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավական նորմի մեկնաբանության շուրջ գերտերությունների հնարախաղերը, պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը ինքնորոշման իրավական նորմին արհեստականորեն հակադրելը¹⁴ մեծ հաշվով պատմական ընթացքի վրա չեն ազդում։ XX դարը ինքնորոշման համար ժողովուրդների ծավալած պայքարի և գաղութային տերությունների փլուզման դար էր՝ հակառակ այն բանի, որ խոշոր տերություններն ամեն կերպ փորձում էին զսպել այդ անկասելի ընթացքը։ Այնպես որ գլոբալ քաղաքական զարգացումներում ամեն ինչ չէ, որ տեղի է ունենում գերտերությունների կամքով, և ժողովուրդների ազատ ինքնորոշման հարցում վերջին խոսքը պատկանում է պատմական օրինաչափություններին։ Հակա-

¹² Մենք Ռուսաստանին չենք դատում հետխորհրդային տարածքում նորանկախ պետությունների ճանաչման գործընթացի կարևոր դերակատար, քանի որ 1991-ին նա զբաղված էր ԽՍՀՄ-ի փլատակների վրա իր անկախության ապահովման հարցերով։ Հետխորհրդային տարածքների «կարգավորման» գործը Արևմուտքի ձեռքում էր։

¹³ St' u Official Journal of the European Communities, No. C 94/117, July, 1988:

¹⁴ Պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է միջպետական հարաբերություններին և արգելում է մի պետության կողմից մեկ այլ պետության տարածքի զավթումը։ Միջազգայնորեն ճանաչված սահմանների խախտումը կապ չունի ժողովուրդների ինքնորոշման իրավական նորմի հետ։ Բազմազգ պետության ժողովուրդներից մեկի ինքնորոշման շնորհիվ նրա տարածքի ու սահմանների փոփոխությունը չի նշանակում նրա տարածքային ամբողջության խախտում։ Եթե դա այդպես լիներ, ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքը իրավաբանորեն անիմաստ ու ավելորդ կլիներ։ Սակայն ինքնորոշման իրավական նորմը տարածքային ամբողջականությանը անհիմն կերպով հակադրելու և այդ ձևով այն արժեզրկելու հարցում շահագրգիռ պետությունների ղեկավարները առիթը բաց չեն թողնում դա անելու։ Ամենաթարմ օրինակը Ղազախստանի նախագահ Կասըն Ժորմատ Քեմելիչի ելույթն էր 2022 թ. հունիսի 15-18 Սանկտ-Պետերբուրգի XXV միջազգային տնտեսական համաժողովում, որտեղ նա ինքնորոշման ակտով Ուկրաինայից իրենց անկախությունը հռչակած Դոնեցկի և Լուգանսկի հանրապետությունները որակեց որպես կեղծ/կվադի պետություններ։ St' u <http://kremlin.ru/events/president/news/68669>

ռակ բոլոր արգելքներին՝ ժողովուրդները շարունակում են պայքարը իրենց լիիրավ ինքնորոշման համար և այդ պայքարը մղում են ոչ միայն զենքով: Նրանց համար բաց են մնում տեղեկատվական, քաղաքական ու դիվանագիտական գործունեության դաշտերը: Այդ տեսակետից դիտարկելով Արցախյան հարցը՝ պետք է նկատել, որ այն կարող է դասական օրինակ ծառայել այն բանին, որ հակառակ միջազգային իրավունքի տեսակետից 1991 թ. իր կայացման անբասիր լինելուն և ռազմի դաշտում անկախ պետականություն ունենալու իր իրավունքի պաշտպանությանը, Արցախը չճանաչվեց գերտերությունների կողմից¹⁵: Եթե առանց անհարկի նրբանկատության իրերը կոչենք իրենց անուններով, պիտի փաստենք, որ զանազան շրջահոսելի, հստակությունից զուրկ ու հաճախ նաև կեղծ բանաձևերի քողի տակ Արևմուտքն իրականում բռնություն գործադրեց Արցախի ժողովրդի նկատմամբ և հաշվեհարդար՝ միջազգային իրավունքի նկատմամբ: Բայց խնդիրը չի հանգում միայն Արցախի հարցում խոշորների ցուցաբերած վերաբերմունքին: Մեր հարցը մենք պիտի առաջ տանեինք: Եվ այդ տեսակետից այն դարձյալ դասական օրինակ է, թե ինչ անփութությամբ են վատնվել կամ անտեսվել քաղաքական, դիվանագիտական ու տեղեկատվական այն հնարավորությունները, որ պատմական հանգամանքների բերումով կային հայկական կողմերի տրամադրության տակ: Բազմաթիվ իրավական ու քաղաքական բնույթի փաստեր, որ ձևակերպված ու դրված էին հրապարակում, չորդեգրվեցին պաշտոնական քաղաքականության կողմից, մնացին իբրև անձնական տեսակետներ ու նույնիսկ իրենց այդ կարգավիճակով չներդրվեցին միջազգային տեղեկատվական հոսքերում ու փորձագիտական շրջանակներում, անելիք, որ ոչ թե առանձին հետազոտողի, այլ պետության գործը պիտի լիներ¹⁶: Հանիրավի անուշադրության մատնված այդ հարցերից մեկը հենց ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման խնդիրն էր:

Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի մասին պաշտոնական երևանն ու Ստեփանակերտը տասնամյակներ շարունակ խոսում էին այնպես, կարծես 1988-ին այն առաջին անգամ էր հայտնվել միջազգային օրակարգում, կարծես 1991 թվականին ԼՂՀ-ն կայացել էր ինքնորոշման առաջնային ակտով: Մեր պաշտոնական քաղաքականության որդեգրած գաղափարն այն էր, որ ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդները, այնպես էլ Արցախի ժողովուրդն ունի միջազգայնորեն երաշխավորված լիակատար ինքնորոշման իրավունք՝ ընդհուպ անկախ պետականության հռչակումը: Թվում է՝ դարձյալ ամեն ինչ ճիշտ էր ասված: Բայց նման հարցադրումը անբացահայտ ձևով պարունակում է այն միտքը, որ ԼՂ ժողովրդի այդ իրավունքը մինչև 1991 թվականը երբևիցե չի ճանաչվել: Փոխանակ միջազգային հանրությանը

¹⁵ Պատճառներն, ինչպես նշվեց, պետք է փնտրել գլոբալ ուժադաշտի գլխավոր դերակատարների ծրագրերում: Արցախյան խնդրի աշխարհաքաղաքական ենթախորքի հարցը առանցքային է դրա համարժեք ըմբռնման համար և պահանջում է առանձին քննություն:

¹⁶ Դեռևս պետք է հատուկ հետազոտություն կատարել այն հարցով, թե ինչպես այդ բոլոր հարթակներում մենատիրությունը հանձնեցինք Բաքվին՝ կեղծարարության իր հզոր մեքենայով հանդերձ:

հղած մեր ուղերձներում անընդհատ շեշտեինք, որ ԼՂ ժողովուրդը աշխարհի բոլոր ժողովուրդների նման, միջազգային իրավունքի համաձայն, ունի ինքնորոշման իրավունք, մենք պետք է որպես հերթապահ բանաձև հնչեցնեինք այն դրույթը, որ **այդ իրավունքը արդեն երիցս ճանաչվել է**: Խորհրդային Ադրբեջանն այն ճանաչել է դեռևս 1920 թ. դեկտեմբերի 1-ի հռչակագրով, իսկ Խորհրդային Միությունը, որի իրավահաջորդը Ռուսաստանի Դաշնությունն է՝ 1990 թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու մասին հարցերի լուծման մասին» և նույն թվականի ապրիլի 26-ին «ԽՍՀ Միության և դաշնության սուբյեկտների իրավասությունների սահմանազատման մասին»¹⁷ ԽՍՀՄ օրենքներով: Այս վերջին օրենքով ԽՍՀՄ-ը վերահաստատում էր, որ ԼՂԻՄ-ի կազմավորումը կատարվել է ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման հիմքի վրա: Դրանով նա հավելյալ իրավական հիմնավորում էր տալիս նախօրեին՝ ապրիլի 3-ին ընդունված ԽՍՀՄ օրենքին, որով ճանաչվում էր ԽՍՀ Միության ինքնավար կազմավորումների կողմից անկախ պետություն հռչակելու իրավունքը միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու պարագայում:

Կարևոր է ընդգծել այն հանգամանքը, որ ԼՂԻՄ-ի հռչակման համար ԽՍՀՄ օրենքներում ամրագրված զուտ իրավական բնույթի այդ փաստարկները երկրի իրավաքաղաքական դաշտում նորություններ չէին: Դրանք իրենց արմատներն ունեին դեռևս 1920-ականներին ընդունված փաստաթղթերում: ԼՂ ժողովրդի այդ իրավունքը ճանաչվել է Կովբյուրոյի՝ 1921 թ. հուլիսի 4-ի որոշմամբ, ըստ որի՝ նրան էր վերապահվում երկրամասի կարգավիճակի մասին հանրաքվեի իրավունքը: Կարող է անհավանական թվալ, բայց այդ իրավունքը ճանաչվել է նույնիսկ Կովբյուրոյի հուլիսի 5-ի այն որոշմամբ, որով Լեռնային Ղարաբաղը, հակառակ մեկ օր առաջ ընդունված բանաձևի, մտցվել է Ադր. ԽՍՀ-ի սահմանների մեջ: Լեռնային Ղարաբաղին մարզային լայն ինքնավարություն տրամադրելու մասին Կովբյուրոյի որոշումը Խորհրդային տիպի պետականություն ունենալու մասին ԼՂ-ի հայության իրավունքի ճանաչման ակտ էր: Ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքին վերաբերող մեր տրամադրության տակ եղած փաստարկների այդ ամբողջ տրցակը, որով հաստատվում էր արցախահայության ինքնորոշման իրավունքի արդեն իսկ ճանաչված լինելու փաստը, մենք շուրջ երեք տասնամյակ լռության ենք մատնել: Միջազգային հանրությանն ուղղված մեր ուղերձներով, Մինսկի խմբի շրջանակում հնչեցվող մեր հայտարարություններով մենք արժեզրկում էինք արցախահայության՝ որպես ինքնորոշման իրավունքով օժտված սուբյեկտի՝ 1920-ականների և 1990-ականների ահեղ մարտերում նվաճած ձեռքբերումը: Եվ դրանք վերաբերում էին ոչ միայն ինքնորոշման իրավունքի ճանաչմանը, այլև այդ իրավունքի գործնական իրականացմանը: Լռության

¹⁷ Օրենքն հաստատում է, որ «ինքնավար հանրապետությունները, ինքնավար կազմավորումները միութենական հանրապետությունների կազմ են մտնում ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի հիման վրա», հմմտ. <https://cutt.ly/g3CvxU2>

մատնելով ղարաբաղյան խնդրի՝ 1988-ին նախորդած ողջ պատմությունը և շրջանառությունից իսպառ հանելով այդ շրջանի ծանրակշիռ իրավական փաստերը՝ աշխարհին ուղղած մեր դիմումներով մենք խնդրում էինք ճանաչել Արցախի ինքնորոշման իրավունքը, փոխանակ պահանջեինք **հարգել ԼՂ ժողովրդի արդեն ճանաչված իրավունքը**:

Իրավական անկասելի փաստարկներ, որոնք լուրջյան մատնեցինք մենք

Արցախահայությունը XX դարում երկու անգամ իրացրել է ինքնորոշման իր իրավունքը իրենից բացի ոչ մեկին (ոչ մեկ այլ պետության) չպատկանող տարածքներում: Նա իր այդ իրավունքը գործադրել է 1918 թ. հուլիսին երկրամասի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարի անունից՝ երկրամասը հռչակելով Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս, երբ Ռուսաստանը բոլշևիկյան հեղաշրջումից հետո դուրս էր եկել Անդրկովկասից, իսկ Թբիլիսիում հռչակված Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը քաղաքական իրողություն չէր դարձել: Երկրորդ անգամ դարձյալ իրենից բացի ոչ մեկին չպատկանող տարածքներում Արցախը ինքնորոշվել և համաժողովրդական հանրաքվեով անկախություն է հռչակել 1991 թ. դեկտեմբերին, երբ Ադրբեջանական Հանրապետությունը 1991 թ. օգոստոս-հոկտեմբերին հրաժարվել էր Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից և վերականգնել 1918-1920 թթ. գոյատևած, Ազգերի լիգայի անդամակցության մերժումը ստացած¹⁸ և առանց փաստացի հաստատված կամ ճանաչված սահմանների պատմությունը լքած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության պետականությունը: Մենք այդպես էլ իր նշանակությանը համարժեք հնչեղություն չտվեցինք իրավական այն փաստին, որ 1991 թ. սեպտեմբերին ԼՂՀ-ն իր անկախությունը հռչակել է մերօրյա Ադրբեջանական Հանրապետությանը չպատկանող տարածքներում՝ այն պարզ հիմնավորումով, որ հրաժարվել է լինել Ադր. ԽՍՀ-ի իրավահաջորդը և վերականգնել առանց սահմաններ ձեռք բերած և Ազգերի լիգային անդամակցելու մերժումը ստացած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը¹⁹: Մենք պաշտոնապես ընտրեցինք ավելի թույլ բանաձև այն մասին, որ Լեռնային Ղարաբաղը երբեք չի եղել անկախ Ադրբեջանի կազմում:

Ի դեպ, 1991 թ. սեպտեմբերի 2-ին ընդունված ԼՂՀ-ի անկախության հռչակագրում մոռացության չի տրված այդ պատմությունը: Նրանում, ըստ էության, թվարկված են գրեթե այն բոլոր իրավական հիմքերը, որոնցով մենք կարող ենք փաստարկել ԼՂՀ-ի հռչակման լեգիտիմությունը Բաքվի հետ մեր կոնֆլիկտային իրավաքաղաքական խոսույթում և միջազգային հանրությանն

¹⁸ League of Nations 1920, 173-174.

¹⁹ Ի դեպ, հենց Ադր. ԽՍՀ-ի իրավահաջորդությունից հրաժարվելու, 1918 թ. թուրքերի կողմից հիմնադրված և առանց հաստատված սահմանների պատմությունը 1920 թ. լքած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության վերականգման փաստարկն է առաջինը հիշատակվում 1991 թ. սեպտեմբերի 2-ի ԼՂՀ-ի անկախության հռչակագրում: Տե՛ս <http://president.nkr.am/ru/nkr/nkr1>

ուղղած ուղերձներում: Հատկանշական է, որ այդ իրավական հիմքերի շարքում առաջինը նշված է մերօրյա Ադրբեջանական Հանրապետության կողմից Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից հրաժարվելու և 1918-1920 թթ. գոյատևած և առանց փաստացի հաստատված կամ ճանաչված սահմանների պատմությունը քաժ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության պետականության վերականգման փաստը, որից և անմիջապես բխում է վերը բերված մեր այն դրույթը, որ ԼՂՀ-ն կայացել է մերօրյա Ադրբեջանական Հանրապետությանը չպատկանող տարածքներում:

Մենք անդրադարձանք այն պատմաիրավական փաստերի ու փաստարկների միայն մի մասին, որ կային մեր տրամադրության տակ, և մեր իսկ կողմից մնացին անուշադրության մատնված տեղեկատվական առճակատումներում ու բանակցային խոսույթում²⁰: Ծառացող «ինչո՞ւ» հարցի ամենահավանական պատասխանն այն է, որ մեր պատասխանատուները չգիտակցեցին տեղեկատվական գործոնի դերը ժամանակակից գլոբալ կոնֆլիկտային դաշտերում:

Եզրակացություններ

Մինչև 1991 թ. դեկտեմբերի 12-ը, երբ եվրոպական համայնքը հայտարարեց ԽՍՀՄ նախկին միութենական հանրապետությունների հիմքի վրա հետխորհրդային տարածքում նորանկախ հանրապետությունների անկախությունը ճանաչելու իր որոշման մասին, «Ադրբեջան» անունը իրեն վերագրած երեք պետություններից ոչ մեկը չէր կայացել օրինական ձևով՝ ինքնորոշման ակտով և անկախության հանրաքվեի արդյունքով: Այս փաստը անիմաստ է դարձնում «Ադրբեջանական Հանրապետության տարածքային ամբողջականություն» և «Ադրբեջանական Հանրապետության լեգիտիմ սահմաններ» հասկացությունները, քանի որ ժողովրդի հիմնած պետության սահմանների լեգիտիմության օրինական հիմքը որոշակի տարածքի վրա նրա ինքնորոշումն է համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Մնացած դեպքերում խոսք կարող է լինել խոշոր դերակատարների «նվիրած» կամ զավթած տարածքների և այդ հիմքով ստեղծած սահմանների մասին:

Մենք տեղեկատվական շրջանառության մեջ չդրեցինք այն իրավական փաստարկը, որ Բաքվում ընդունված կամ «Ադրբեջան» անունը կրած որևէ պետության վերաբերյալ ընդունված միջազգային ոչ մի փաստաթղթում որևէ հղում, հիմք կամ հիմնավորում չկա *Ադրբեջան* անունն իրեն վերագրած, մեկը մյուսի իրավահաջորդությունից հրաժարված այդ պետությունների սահմանների մասին: Երրորդ երկրների կողմից այդ սահմանների ճանաչումը դրանք չի դարձնում օրինական, քանի որ ճանաչումը քաղաքական, այլ ոչ թե իրավական ակտ է:

²⁰ Մենք չանդրադարձանք քաղաքական փաստարկների հայկական փաթեթին, որը հատուկ վերլուծության նյութ է:

Գրականություն

- Կազմիրով 1993, 90-ականներին Ադրբեջանը բանակցում էր անձամբ Ղարաբաղի հետ. <https://www.youtube.com/watch?v=FFDILPQ4ALA>, <http://www.un.org/russian/document/scresol/res1993/res874.htm> (ներբեռնման օրը՝ 04.10.2022):
- Пленарное заседание Петербургского международного экономического форума <http://kremlin.ru/events/president/news/68669> (ներբեռնման օրը՝ 20.06.2022).
- Закон СССР о разграничении полномочий между Союзом ССР и субъектами Федерации <https://cutt.ly/g3CvxU2> (ներբեռնման օրը՝ 22.04.2022).
- Официальный сайт Республики Арцах <http://president.nkr.am/ru/nkr/nkr1> (ներբեռնման օրը՝ 02.07.2022).
- Нагорный Карабах в международном праве и мировой политике 2008, т. 1, Москва, «Кругъ», 943 с.
- Оксана Мусаелян. Беженцы из Азербайджана как новый вид граждан-изгоев в Армении <https://hetq.am/ru/article/89271> (ներբեռնման օրը՝ 02.02.2022).
- Организация Объединенных Наций. Резолюция Совета Безопасности 822 (1993 г.) S/RES/822 <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N93/247/73/PDF/N9324773.pdf?> (ներբեռնման օրը՝ 25.06.2022).
- Declaration on the Principles of International Law Concerning Friendly Relations and Cooperation among States in Accordance with the Charter of the United Nations <https://digitallibrary.un.org/record/202170?ln=ru> (ներբեռնման օրը՝ 12.02.22).
- League of Nations 1920, The Records of the First Assembly. Meetings of the Committees II. Geneva, p. 173-174.
- Official Journal of the European Communities, No. C 94/117, July, 1988.

ԱՐՑԱՒ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԵՎ ԲԱՆԱԿԾԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ ԱՆՏԵՍՎԱԾ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ

Ալեքսանդր Մանասյան

Ամփոփում

Հակամարտող կողմերից ամեն մեկը, որպես կանոն, աշխատում է տեղեկատվական դաշտում ձևավորել կոնֆլիկտի՝ իր համար նպաստավոր կերպար և այն ներդնել հանրային գիտակցության մեջ: Դա հաճախ վճռորոշ նշանակություն է ստանում բանակցային գործընթացում և այն առաջարկություններում, որոնք միջնորդները ներկայացնում են կողմերին: Տեղեկատվական առճակատման հիմնական բնագծերը սովորաբար անցնում են հակամարտության էությանն ու առարկային վերաբերող բանալի հասկացություններով: Այդ հարցում մանրուքներ չեն լինում, և կողմերից պահանջվում են ոչ միայն ֆինանսական, այլև մտավոր ներդրումներ: Ղարաբաղյան հակամարտության շուրջ ԵԱՀԿ-ի հովանու տակ բանակցային գործընթացի՝ մոտ երեսուն տարվա փորձը ցույց է տալիս, որ հայկական կողմերին չի հաջողվել հետ մղել հակամարտության էության խեղաթյուրման՝ Բաքվի քարոզչական կեղծարարության մեքենայի գրոհները այնպիսի կարևոր թեմաներում, որոնք վերաբերում են հակամարտության սկզբին, հակամարտության կողմերին, փախստականությանը, ժողովուրդների ինքնորոշման իրավունքին (և սրանք դեռ բոլորը չեն): Այդպես մենք ինքներս

նպաստեցինք հակամարտության անհայանպաստ կերպարի ձևավորմանը: Դրանք անցյալում չեն մնացել, և այսօր էլ դրանց ճշգրտումը դեռևս հրատապ է:

Բանալի բառեր՝ Լեռնային Ղարաբաղ, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, հակամարտության սկիզբ, ինքնորոշման իրավունք, անկախության հանրաքվեն՝ որպես սահմանների լեգիտիմության իրավական հիմք, քաղաքական վարք, Ղարաբաղյան հիմնախնդրի իրավական փաթեթ:

АРЦАХ: НЕУЧТЕННЫЕ АРГУМЕНТЫ В ИНФОРМАЦИОННОЙ ВОЙНЕ И ПЕРЕГОВОРНОМ ДИСКУРСЕ

Александр Манасян

Резюме

Как правило, каждая из конфликтующих сторон работает над созданием благоприятного для себя образа конфликта в информационном поле и внедрением его в общественное сознание. Часто это приобретает решающее значение в переговорном процессе и в рекомендациях, которые посредники представляют сторонам. Информационное противоборство обычно касается ключевых понятий о сути и предмете конфликта. В этом вопросе мелочей не бывает, и от сторон требуются не только финансовые, но и большие интеллектуальные вложения. Опыт почти тридцатилетнего переговорного процесса под эгидой ОБСЕ по карабахской проблеме показывает, что армянским сторонам не удалось отразить атаки бакинской пропагандистской фальсификационной машины, искажающей суть конфликта в таких важных вопросах, как начало конфликта, стороны конфликта, беженцы, самоопределение народов (и это не все). Таким образом, мы сами способствовали формированию неблагоприятного для нас образа конфликта. Они не остались в прошлом, и их уточнение актуально и сегодня.

Ключевые слова – Нагорный Карабах, Нагорно-Карабахская автономная область, начало конфликта, право на самоопределение, провозглашение независимости как правовое основание легитимности границ, политическое поведение, правовой пакет Карабахской проблемы.

ARTSAKH: NEGLECTED ARGUMENTS IN INFORMATION WARFARE AND NEGOTIATION DISCOURSE

Alexander Manasyan

Abstract

As a rule, each of the conflicting parties is working on creating a favorable image of the conflict in the information field and introducing it into the public consciousness. This often becomes decisive in the negotiation process and in the recommendations that the mediators present to the parties. Glazed frontiers of informational confrontation usually come out on key concepts about the essence and subject of the conflict. There are no

trifles in this matter, and the parties are required not only financial, but also large intellectual investments. The experience of almost thirty years of negotiation process under the auspices of the OSCE on the Karabakh problem shows that the Armenian parties failed to repel the attacks of the Baku propaganda machine of falsification, which distorts the essence of the conflict in such important topics as the beginning of the conflict, the parties to the conflict, refugees, self-determination of peoples (that's not all). Thus, we ourselves contributed to the formation of an unfavorable image of the conflict for us. They have not remained in the past, and their clarification is relevant today.

Key words – Nagorno-Karabakh, Nagorno-Karabakh Autonomous Region, the beginning of the conflict, the right to self-determination, the declaration of independence as a legal basis for the legitimacy of borders, political behavior, the legal package of the Karabakh problem.

БИОГРАФИИ УЧЕНЫХ В ДОКУМЕНТАХ

СЕНЕКЕРИМ ТЕР-АКОПЯН



Из архива С. Тер-Акопяна, хранящегося в Матенадаране

Видный арменовед, востоковед, филолог, археолог, этнограф и педагог Сенекерим Тер-Акопян (Челепи, Гюмушханеци) родился в 1882 г. в семье служащего в г. Гюмушхане Трапезундского вилайета. Начальное образование получил в местной школе. В 1896-1903 гг. учился в Эчмиадзинской семинарии Геворкян, затем – в Берлинском университете (1905-1910 гг.) на философском факультете. Возвратившись на Кавказ, в 1903-1917 гг. занимался педагогической деятельностью в школах Тебриза, Еревана, Александрополя, Шуши, Нахичевана, Тифлиса, Баку и в семинарии Геворкян. В 1915-1917 гг. по поручению Кавказского человеколюбивого общества С. Тер-Акопян принимал участие в научных экспедициях с целью сбора и описания этнографических материалов из сборных пунктов западноармянских беженцев. В 1917-1921 гг. был помощником заведующего Эчмиадзинского музея. Когда декретом Ревкома и Наркомпроса ССРА 5 февраля 1921 г. был создан первый в Советской Армении научно-исследовательский институт-Эчмиадзинский культурно-исторический, Тер-Акопян вошел в состав научной коллегии института (заведовал матенадараном). 26 мая 1921 г. этот институт был реорганизован и переименован в Эчмиадзинский научный институт. С 6 января 1922 г. Тер-Акопян был утвержден на пост заместителя председателя института. До 1937 г. он занимал должность директора Эчмиадзинского матенадарана. Являлся одним из членов-учредителей Комитета охраны древностей Армении.

С. Тер-Акопян был приглашен на съезд востоковедов Германии, состоявшийся в Мюнхене 6-9 октября 1924 г., где выступил с докладами «О выполняемых работах в пользу востоковедения в Советской Армении» и «Остатки доармянской материальной культуры в Советской Армении» (Национальный архив Армении, ф. 1, оп. 4, д. 26, л. 7-7 об.).

Как член общества востоковедов Германии, он был приглашен также на востоковедческий съезд в Гамбург в конце сентября 1926 г., где выступил с докладом о проделанных историко-археологических работах в Советской Армении за последние годы, а также установил связи с соответствующими научными учреждениями Германии (НАА, ф. 1, оп. 6).

В годы культа личности Сталина С. Тер-Акопян стал невинной жертвой репрессий. 23 сентября 1937 г. он был арестован. 3 марта 1938 г. было вынесено постановление о предъявлении ему обвинения с изменением статьи 68 на статью 58а УК АрмССР. Заседание Особой тройки НКВД АрмССР от 4 октября 1938 г. постановило: Тер-Акопяна Сенекерима Хачатуровича расстрелять, что было приведено в исполнение 13 октября 1938 г. Определением Военного трибунала Закавказского военного округа на заседании от 3 января 1956 г. решение Тройки НКВД Армянской ССР от 4 октября 1938 г. в отношении Тер-Акопяна С.Х. было отменено, дело о нем прекращено за отсутствием состава преступления, и он был реабилитирован (НАА, ф. 1191, оп. 2, д. 979-981, л. 4-5, 68, 74-75 об. Подробнее см.: А. Адамян. Архив Сенекерима Тер-Акопяна. - Вестник общественных наук, 1971, N 12, с. 87-88; Закарян А. Письма, направленные Сенекериму Тер-Акопяну. - Вестник общественных наук, 1985, N 1, с. 83-91; Утуджян А. Сенекерим Тер-Акопян. - Христианская Армения, 2008, июль, Б, N 14; её же. Сенекерим Тер-Акопян. - Именитые семинаристы, 2009, выпуск Б, Первопрестольный Св. Эчмиадзин, с. 437-442. Все на армянском языке).

Ниже впервые публикуются документы из жизни и деятельности Сенекерима Тер-Акопяна.

СТЕПАН ГАРИБДЖАНЯН

Кандидат исторических наук

N 1

Письмо председателя Российской академии истории материальной культуры Н.Я. Марра в Армянский научно-исследовательский институт

6 октября 1923 г.
Петербург

В Российской академии истории материальной культуры при разряде греко-римского искусства образована Комиссия по изучению искусства и археологии эгейского периода в бассейне Средиземного моря и в прилегающих областях. Первоочередной задачей этой Комиссии является регистрация и исследование

памятников культуры, известной под названием «трипольской». Так как памятники «трипольской культуры» близко соприкасаются с памятниками древностей Передней Азии и Закавказья, которые как в своих Алагецких могильниках, так и в находках нижних районов б. Эриванской губернии и на границах с Грузией дали несомненно родственные образцы керамических изделий (Варнак, Килил-Ванк и др), то, естественно, что работы Комиссии теснейшим образом связываются с работами [научных] учреждений Армении и для планомерного осуществления своего задания нуждаются в содействии со стороны Армянского научно-исследовательского института.

Поэтому Российская академия истории материальной культуры обращается в Институт с предложением и просьбой содействовать выполнению предпринятой научной работы, каковое содействие может выразиться и в сообщении новейшей литературы по затронутому вопросу и в присылке фотографических снимков с предметов древностей указанного типа как старых, так и новых находок. Желательна также организация подобной же исследовательско-регистрационной работы и на местах по взаимному соглашению с Академией. Равным образом представляется вполне своевременным теперь же приступить к обсуждению вопроса о возможной поддержке на местах научной экспедиции, которая в тех целях может быть организована Академией в Армению при содействии материальными средствами также со стороны Республики Армении, в части, касающейся работ местных [научных] учреждений и отдельных научных работников, примкнувших к означенной экспедиции.

Академия надеется, что Институт примет на себя инициативу по поддержке работ Академии и войдет в сношение по этому поводу с другими заинтересованными учреждениями Армении.

Председатель Академии Н. Марр
Управляющий делами В. Миханкова

НАА, ф. 1063, оп. 1, д. 10, л. 3-4. Подлинник. Машинопись.

N 2

**Սենեքերիմ Տեր-Հակոբյանի դիմումը ՀՍԽՀ լուսավորության ժողկոմին՝ իրեն
Լենինգրադ գործուղելու խնդրանքով**

21 սեպտեմբերի 1924 թ.
Երևան

Վերջին չորս խորհրդային տարիներում Հայաստանի գիտական ինստիտուտի Էջմիածնի հիմնարկներում անընդհատ տարած [առանց արձակուրդների բացակայելու] իմ աշխատանքների փորձը լրացնելու համար խնդրում եմ դյուրությամբ ընձեռել ինձ առաջիկա հոկտեմբեր ամսից գեթ երկու ամսով գործուղվելու Լենինգրադ, այնտեղ պարապելու և ծանոթանալու նոր հիմունքներով վերակազմված թանգարանային և մատենադարանային հիմնարկների հետ: Այս մա-

սին, Էջմիածնում իմ աշխատություններին ծանոթացած ակադեմիկ Մառի¹ կարծիքն է նույնպես, որ ստիպողական անհրաժեշտություն է ինձ համար Լենինգրադում ծանոթանալ և հետևել «Российская Академия Истории Материальной Культуры»-ի² տարած աշխատանքներին:

**Վարիչ Հայաստանի գիտական ինստիտուտի
Ձեռագրատուն-Մատենադարանի և թանգարանի՝
Սենեքերիմ Տեր Հակոբյան**

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 122, ց. 1, գ. 233, թ. 82: Բնագիր:

N 3

**ՀՍԽՀ լուսժողկոմատի Հնությունների պահպանության կոմիտեի կողմից
Սենեքերիմ Տեր-Հակոբյանին տրված մանդատ**

26 դեկտեմբերի 1924 թ.
Երևան

Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի անդամ, Հայաստանի գիտական ինստիտուտի վարիչ ընկ. Սենեքերիմ Տեր-Հակոբյանը մեկնում է Ղամարլուի շրջանը հնագիտական նպատակով:

Խնդրում ենք բոլոր պետական հաստատություններին և պաշտոնական անձանց ցույց տալ ընկ. Սեն. Տեր-Հակոբյանին լիակատար աջակցություն իր կատարելիք գիտական գործը հաջողությամբ ավարտելու համար:

**Նախագահ կոմիտեի Ա. Թամանյան³
Գիտնական քարտուղար Ա. Քալանթար⁴**

¹ **Մառ Նիկողայոս (1864-1934)** - արևելագետ, հայագետ, լեզվաբան, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, փոխնախագահ: Ուսումնասիրել է Կովկասի ժողովուրդների հնագիտությունն ու ազգագրությունը: Մասնակցել է և ղեկավարել հին հայկական բնակավայրերի պեղումները, մի քանի արշավախմբերով մանրամասն ուսումնասիրել է Անին:

² Российская академия истории материальной культуры (РАИМК) была создана 18 апреля 1919 г. на базе существовавшей с 1859 г. Археологической комиссии. С 1959 г. - Институт археологии АН СССР. С 1919 по 1934 г. Академию возглавлял Н.Я. Марр.

³ **Թամանյան Ալեքսանդր (1878-1936)** - ՀԽՍՀ ժողովրդական ճարտարապետ (1926), Ռուսաստանի կերպարվեստի ակադեմիայի փոխնախագահ (1914): 1923 թ. հրավիրվել է Հայաստան, ընտրվել ՀԽՍՀ կերպարվեստի աշխատողների ընկերության նախագահ: 1923 թ. դեկտեմբերի վերջից դարձել է ՀՍԽՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ: Կոմիտեին, որը ստեղծվեց կառավարության 1923 թ. դեկտեմբերի 18-ի դեկրետով իբրև հանրապետական գիտական-վարչական իրավասու օրգան, վերապահված էր «Հանրապետության մեջ ամենուրեք սիֆոված նյութական կուլտուրայի բազբահազար մնացորդների իրական և տեխնիկական պահպանության, նաև նրանց սիստեմատիկ ուսումնասիրության գործը»:

⁴ **Քալանթար (Լոռու Մելիք-Քալանթար) Աշխարիբեգ (1884-1942)** - Հնագետ, արևելագետ, պատմաբան, հուշարձանների պահպանության գործի կազմակերպիչ, Երևանի պետական համալսարանի հիմնադիր դասախոս: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Սանկտ-Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրացական բանասիրության և պատմության

ՀՀ կառավարությանն առընթեր Մ. Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, թղթ. 76, վավ. 93: Բնագիր, ձեռագիր:

N 4

**Письмо Сенекерима Тер-Акопяна Непременному секретарю
Всесоюзной академии наук Сергею Феодоровичу Ольденбургу⁵**

январь 1926 г.

Ереван

Оторванность последних лет и нерегулярное получение нами новой научной литературы сильно отразилось на научно-исследовательской работе у нас, где единственным центром, обслуживающим таковые нужды, являлась (да и теперь еще продолжает быть) Эчмиадзинская библиотека. Чтобы пополнить эти просьбы, прошу сделать распоряжение о присылке нам изданий Академии наук [...].

При сем присылаю все издания Эчмиадзинского научного института и уведомляю, что склад всех эчмиадзинских старых изданий находится в нашем ведении и, если[у] Академии наук будет потребность в них, то при первом же Вашем требовании будут присланы Вам.

Примите уверения в совершенно[м] к Вам уважении и преданности.

Директор Эчмиадзинского института и заведующий библиотекой и музеем.

Матенадаран, Архив канцелярии, папка 76, документ 67, л. 1. Копия.

բաժինը: Դեռ ուսանողական տարիներից Նիկողայոս Մառի ղեկավարած արշավախմբի կազմում մասնակցել է Անիի պեղումներին, 1917 թ. Նիկողայոս Ադոնցի հետ՝ Վանի երկրորդ հնագիտական արշավախմբին, հավաքել և վերծանել է ուրարտերեն շուրջ 50 արձանագրություն: 1921 թ. հրավիրվել է Երևանի պետական համալսարան՝ որպես դոցենտ, ապա պրոֆեսոր: Հիմնել է Արևելքի պատմության և հնագիտության ամբիոնը, ստեղծել հնագիտական աշխատանոց, 1923 թ. հրատարակել է հնագիտության հայերեն առաջին դասագիրքը: 1923 թ. ղեկոնդեմբերից մինչև 1932 թ. եղել է ՀՍԽՀ լուսժողովմատի հնությունների պահպանության կոմիտեի գիտնական քարտուղարը: Ստալինյան բռնաճնշումների զոհերից է: Ձեռքակալվել է 1938 թ. մարտի 19-ին կեղծ և հնարովի՝ «Պրոֆեսորների ու դասախոսների գործով»՝ իբրև 1923-24 թթ. Երևանի համալսարանում ստեղծված «անլեզալ դաշնակցական հակախորհրդային ազգայնականորեն տրամադրված մտավորականության կազմակերպության» պարագլուխ (ղեկավար): Մի շարք դատական հետաքննություններից ու քաշքշուկներից հետո ԽՍՀՄ ՆԳԺԿ հատուկ խորհրդակցության 1941 թ. սեպտեմբերի 3-ի որոշմամբ դատապարտվել է բանտարկության ուղղիչ-աշխատանքային ճամբարում՝ 8 տարի ժամկետով: Վախճանվել է 1942 թ. հուլիսի 2-ին, աքսորի ճանապարհին, Չելյաբինսկի մոտ: 1955 թ. ապրիլի 2-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանի ռազմական կոլեգիայի որոշմամբ լիովին արդարացվել է՝ հանցակազմի բացակայության պատճառով:

⁵ **Ольденбург С.Ф. (1863-1934)** - востоковед, академик Императорской академии наук с 1900 г. Один из основателей русской индологической школы. С 1904 по 1929 г. – непременный секретарь АН. В 1917 г. был министром просвещения Временного правительства. В 1930-1934 гг. – директор Института востоковедения АН СССР.

N 5 Մանդատ

6 հունիսի 1928 թ.

Սույնը տրվում է Հնությունների պահպանության կոմիտեի անդամ ընկ. Սենեքերիմ Տեր-Հակոբյանին առ այն, որ նա գործուղվում է կոմիտեի կողմից Լենինական՝ ստուգման ենթարկելու Մարմաշենի ավազուտներում մամոնտի մնացորդների գտնված վայրը և ստանալու [անընթեռնելի - Ս.Ղ.] վարչությունից ու այլ հաստատություններից մամոնտի և այլ նախապատմական կենդանիների այն մնացորդները, որոնք գտնված են նույն վայրում աշխատանքների միջոցին:

Կոմիտեն խնդրում է խորհրդային բոլոր հաստատություններին ցույց տալ ընկ. Տեր-Հակոբյանին ամենայն աջակցություն:

Նախագահ Ա. Թամանյան
Գիտնական քարտուղար Ա. Քալանթար

ՀՀ կառավարությանն առընթեր Մ. Մաշտոցի անվան Հին Ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, թղթ. 76, վավ. 95: Բնագիր, ձեռագիր:

N 6 Հնությունների պահպանության կոմիտեի գրությունը Լենինական՝ Երկաթուղու վարչությանը

6 հունիսի 1928 թ.
Երևան

Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեն խնդրում է Երկաթուղային վարչությանը աջակցություն ցույց տալ կոմիտեի անդամ ընկ. Սենեքերիմ Տեր-Հակոբյանին՝ ապահով կերպով փոխադրելու երկաթուղով Լենինականից Երևան հնագիտական արժեքավոր իրեր, որոնց փոխադրությունը կատարվում է լուսժողկոմի կարգադրությամբ:

Նախագահ Ա. Թամանյան
Գիտնական քարտուղար Ա. Քալանթար

Մատենադարան, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, թղթ. 76, վավ. 96: Բնագիր, Ձեռագիր:

N 7

**Письмо директора Московского Государственного театрального музея имени
Алексея Бахрушина директору Эчмиадзинской государственной библиотеки
Сенекериму Тер-Акопяну**

29 августа 1928 г.
Москва

Государственный театральный музей им. А. Бахрушина, ввиду наступающего 100-летия со дня смерти А.С. Грибоедова, приступил к организации выставки, посвященной этому писателю, и к собиранию материалов, касающихся его жизни и творчества.

Осведомившись через т. Г.В. Бебутова об имеющихся в распоряжении Эчмиадзинской библиотеки ряда документов и книг, имеющих отношение к Грибоедову, и о Вашей готовности предоставить их интересующимся Грибоедовым учреждениям, Музей обращается к Вам с убедительной просьбой взять на себя труд по розыску этих материалов, снятию с них копий, а также сфотографированию тех документов, которые Вы признаете этого заслуживающими. Все расходы по снятию копий и переводу их на русский язык, по фотографированию, пересылке и проч. Музей, конечно, принимает на себя и вышлет Вам необходимую сумму по первому Вашему требованию.

Со своей стороны Музей с полной готовностью берет на себя содействие в пополнении Вашей библиотеки нужными Вам изданиями, как Академии наук, так и других научных учреждений, и просит выслать ему список таковых.

Ввиду близости юбилейных дней и желательности использовать к ним все материалы, Музей просит Вас о возможно скором исполнении его просьбы, о результатах которой просит не отказать ему своим уведомлением.

Директор Музея [подпись]

Матенадаран. Архив канцелярии, папка 76, документ 91, л. 52. Подлинник. Машинопись.

N 8

**ՀԱՄԵՆ Հոլտորայի պատմության ինստիտուտի պատմական հուշարձանների
պահպանության բաժնի վարիչ Հ. Թումյանի գրությունը Սենեքերիմ
Տեր-Հակոբյանին**

7 հուլիսի 1935 թ.
Երևան

Մոտ ժամանակներս Արագած է ուղարկվելու հատուկ էքսպեդիցիա՝ Ձեր առաջարկությամբ տեղափոխելու այստեղից վիմական հնությունը և ը. Ձ. Կորկոտյանի հայտնաբերած այծագրերը ուսումնասիրելու և նկարահանելու:

Խնդրում եմ ուղարկեք ինձ շտապ էքսպեդիցիայի մարշրուտը և նախահաշիվ կազմի համար:

Ձեր մասնակցությունը էքսպեդիցիային անհրաժեշտություն է:

Հ. Թումյան

Մատենադարան, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, թղթ. 76, վավ. 102: Բնագիր:

N 9

Письмо Сенекерима Тер-Акопяна в дирекцию Института истории материальной культуры, языка и литературы народов Закавказья Грузинского филиала АН СССР

Середина 1930-х гг.

Согласно Вашего отношения от 5 сентября с. г. за N 5/9 о подготовке текста истории (Тимур Ленг) Тома [Товма – С.Г.] Мецобеци⁶, настоящим сообщая Вам о моем согласии на подготовку упомянутого текста. Работа эта должна выполняться много на основе 15 экземпляров и фрагментов. Вторая часть этой работы должна содержать тексты мемориальных записей, относящихся к Тимур Ленгу и его ближайшим преемникам.

Кроме того, даю мое согласие также на подготовку к публикации 3-х фрагментов XI в. из истории М. Хоренского.

Вся эта работа будет выполнена мною на условиях, предложенных Вами вышеупомянутым отношением.

(С.Х. Тер-Акопян)

Институт древних рукописей им. М. Маштоца (Матенадаран) при правительстве РА. Архив Сенекерима Тер-Акопяна, папка 76, док. 85. Рукопись.

⁶ **Товма Мецобеци (1378-1446)** - культурно-общественный деятель, историограф, педагог. Автор сочинения «История Ленг-Тимура и его преемников», изданного в Париже на армянском языке в 1860 г. Он, как очевидец, описывал военные походы, опустошения, пленение населения, тяжелое налоговое бремя, борьбу армянского народа против завоевателей-тюркизированного монгольского полководца, эмира Тимурленга (1336-1405) и его преемников, а также деятельность школ и учителей.

N 10

Աստղագետ Լևոն Սեմյոնովի⁷ գրությունները Սենեքերիմ Տեր-Հակոբյանին

16 մարտի 1936 թ.
Երևան

Մեծարգո Սենեքերիմ

Մեր գործը ընկել է Ձեզ, և ես հույս ունեմ, որ դուք մեզ չեք մերժի:

